



Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ

ԹՈՒՐԻՔԻԱ

Անվտանգության ու պաշտպանության հիմնախնդիրները



Վերլուծական նյութեր
Թողարկում 1

32(56)

p-98

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ
թղարկում 1

ԹՈՒՐՔԻԱ

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

4205



Երևան
«Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ

2007

ՀՏԴ 32.001:327
 զՄԴ 66+66.4
 Թ 988

**Թ 988 - Թուրքիա. անվտանգության ու պաշտպանության հիմնա-
 խնդիրները** - Եր.: Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ,
 2007.-196 էջ:

Խմբագրական կոլեգիա՝ Հ. Ավետիսյան, Ա. Այվազյան,
 Լ. Անդրիասյան, Ա. Արշակյան, Հ. Ասրյան, Հ. Դեմոյան,
 Ա. Եղիազարյան, Գ. Իսազուլյան, Ա. Մինասյան, Ն. Փանոսյան,
 Վ.Սարգսյան, Գ. Սաֆարյան, Ռ. Սաֆրաստյան

զՄԴ 66+66.4

Ժողովածուն իր մեջ ընդգրկում է Թուրքիայի անվտանգության, ռազմա-
 կան համակարգի եւ ռազմաքաղաքական խնդիրների վերլուծական
 ուսումնասիրություններ, որոնք հիմնված են ժամանակակից տեղե-
 կատվական-վերլուծական լայն բազայի վրա: Մանրամասն ներկայացված
 են թուրքական հանրապետության ազգային անվտանգության, պաշտպա-
 նության հայեցակարգերն ու ռազմավարական գնահատումները, անվ-
 տանգության կառույցները, զինված ուժերը, ռազմաարդյունաբերության եւ
 ԶՈՒ արդիականացման ռազմավարական ծրագրերը, հատուկ ծառայու-
 թյունները, ինչպես նաեւ Թուրքիայի եւ Իսրայելի միջեւ ռազմաքաղաքա-
 կան համագործակցությունը, զարգացման հեռանկարներն ու դրա ազդե-
 ցությունը տարածաշրջանային անվտանգության խնդիրների վրա:
 Ժողովածուն նախատեսված է մասնագետների, ինչպես նաեւ Թուրքիայի
 անվտանգության, ռազմաքաղաքական խնդիրներով հետաքրքրվող լայն
 շրջանակների համար:

ISBN 978-99941-2-083-3

Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ, 2007 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Միխայիլ Աղաջանյան
 ԹՈՒՐԹԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ.
 ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐՆ ՈՒ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ 5

Լևոն Հովսեփյան
 ԹՈՒՐԹԻԱՅԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՆ
 ՈՒ ՈԱԶՄԱԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ
 ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ 27

Միխայիլ Աղաջանյան
 Լևոն Հովսեփյան
 ԹՈՒՐԹԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԸ37

Սերգեյ Մինասյան
 ԹՈՒՐԹԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԸ51

Լևոն Հովսեփյան
 ԹՈՒՐԹԻԱՅԻ ՈԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԽՐԻ
 ԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ
 ՈԱԶՄԱԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ.....78

Սերգեյ Մինասյան
 ԻՍՐԱՅԵԼԻ-ԹՈՒՐԹԱԿԱՆ ՈԱԶՄԱԿԱՐԱԿԱՆ
 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ
 ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
 ՀԻՄՆԱՆՆԴԻՐՆԵՐԻ ՎՐԱ103

Սերգեյ Մինասյան
 ԻՍՐԱՅԵԼԻ ԵՎ ԹՈՒՐԹԻԱՅԻ
 ՈԱԶՄԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ.
 ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՆՈՒՆԿԱՐՆԵՐԸ 128

Արսեն Հարությունյան
 ԹՈՒՐԹԱԿԱՆ ՀԱՏՈԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ
 ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅՈՒՆԸ
 ԱՐԴԻ ՓՈՒՈՒՄ 158

SUMMARIES 181

ԹՈՒՐԹԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐՆ ՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Միխայիլ Աղաջանյան

ԳԼՈՒԽ 1

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Թուրքիայում պետության ազգային անվտանգության հայեցակարգի համակարգված մշակումը կարելի է սկսված համարել 1950-ական թվականներից, երբ Թուրքական պետությունը սկսեց առնչվել աշխարհում միաբևեռ համակարգին բնորոշ երկու գերտերությունների միջև «սառը» հավանարության ընդհանուր մարտահրավերների և վտանգների հետ՝ անընդհատ զարգացնելով և որոշակիացնելով միջազգային և տարածաշրջանային խնդիրներում սեփական նախաձեռնությունները:

Հարկ է նշել, որ այդ ժամանակահատվածից ընդհուպ մինչև 1990-ական թվականները միջազգային աշխարհաքաղաքական բևեռում տեղի ունեցող տեղաշարժերը, Թուրքիայի ազգային անվտանգության հայեցակարգային մշակումները ազգային անվտանգության և պաշտպանության ոլորտում, օրգանապես ներդաշնակվում էր տարածաշրջանում գլխավոր դերակատարներից մեկի՝ ՆԱՏՕ-ի կոլեկտիվ անվտանգության ինստիտուցիոնալ-կազմակերպչական համակարգի մեջ՝ չխախտելով «գերեզդինալ» հարցերում նրա աշխարհառազմավարական և ռազմաքաղաքական շահերը¹:

Թուրքիայի ներկայիս արտաքին քաղաքականության առանձնահատկությունն այն է, որ այն որոշակիորեն տարբերվում է տասնամյակներ առաջ այդ պետության ունեցած քաղաքականությունից: Թուրքական արտաքին քաղաքականության հայտնի հետազոտող Ջիյա Օնիսը (Ziya Onis) բնութագրել է 1990-ական թվականների Թուրքիան որպես «պարտադրված ռեզիոնալ ուժ»²:

1992թ. գլխավոր շտաբի պետ Դոգան Գյուրեշը (Dogan Gures) հայտարարեց, որ «Թուրքիան զինվորական պետություն» է³:

Այդ ընթացքում Թուրքիան դիտվում էր որպես արտաքին քաղաքականությունում ուժի կիրառման, ուժի պարտադրման և այլ հավանարությունների վրա հակազդեցության պատրաստ սուբյեկտ: Այդ ֆոնի վրա արտաքին քաղաքականություն իրականացնող մնաց վերնախավի մի փոքր խումբ, որը սովոր էին շրջապատող աշխարհին նայել ազգային անվտանգության ապահովման հեռանկարներից:

1990-ական թթ.-ի սկզբում և կեսերին աներիկյան որոշ զինվորական վերլուծաբաններ ընդգծում էին Մերձավոր Արևելքի անվտանգության հարցերում Թուրքիայի հեռանկարը որպես «իսկային»⁴: Ամերիկյան այլ վերլուծաբաններ, արտահայտելով նույն մտահոգությունը, ավելի հեռուն էին գնում ցույց տալով, որ Թուրքիայի և ԱՄՆ-ի զինվորական համագործակցությունը բերում է «դեմոկրատացման համատեքստում, մարդու իրավունքների և տնտեսական ասպեկտում հակասությունների աճի, որոնք որոշում են միջազգային

համակարգում Արևմուտքի շահերը «հետաառջատերազմյան» շրջանում»:

90-ական թթ.-ի Թուրքիայի քաղաքականության բնորոշ ցուցանիշներից մեկն այն էր, որ անվտանգության հայեցակարգը դարձավ ավելի բազմա- կողմ և բարդեցված: Այլ երկրներից բխող անվտանգության ավանդական հարցերի կողքին Թուրքիան առնչվեց անվտանգության նոր տեսակի խնդիրներով՝ կազմակերպված հանցագործություն, անօրինական միգրացիա, անօրինական զենքի առևտուր, փողերի վաճուռ:

Այս «ոչ հայեցակարգային» վտանգների ամենաձեական հետևանքը եղավ այն, որ արտաքին քաղաքականության պլանավորման գործում անխտափելիորեն ներգրավվեցին զինվորականները, Արտաքին գործերի նախարարությունը, այլ կառույցներ: Այդ կառույցներում ներկայացված էին ժանդարմերիան, Ներքին գործերի նախարարությունը, սոցիալական անվտանգության ծառայությունները՝ ջիտեղով արդեն ոչ պետական կազմակերպությունների մասին: Արդյունքում ոչ միայն բազմաթիվ պետական կառույցներ ներգրավվեցին անվտանգության հարցերի հետ կապված քաղաքականության ձևավորման ոլորտում, այլ նաև այդ նոր վտանգների բնույթը կանխորոշեց, որ այդ կառույցները կամավոր, երբեմն ոչ գիտակցված, ավելի համախ մասնակից լինեն տարածաշրջանային բազմակողմա- նի նախագծերում, համագործակցության ֆորումներում»:

90-ական թթ.-ի սկզբից Թուրքիայում խնդիրներ առաջացան տարածաշրջանային և գլոբալ մասշտաբի հարցերում ինքնուրույն և ինքնաբա- կարատ տեղի փնտրումների: Այդ խնդրի լուծման եղանակները, որոնք կանխատեսում են անվտանգության հարցերի և զինվորական շինարարության նախկին «կաչուին» խնամակալներից ազատվել, շարունակվում են մինչև այսօր:

Թուրքիայի ներկայիս ղեկավարությունը, մեր տեսակետով, իրեն հաշիվ է տալիս տարածաշրջանային և գլոբալ բնույթի, հայեցակարգային մա- կարդակի ռազմավարական խնդիրների առաջնային ձևավորման անհրա- ժեշտությանը, թեկուզ դրանցից շատերի իրականացումը, որոնք հայեցա- կարգում նշված են որպես գերակայելի, տեսանելի ապագայում օբյեկտիվ նախադրյալներ չունեն:

Պաշտոնական Անկարան իր ժամանակակից անվտանգության հայե- ցակարգը կառուցում է այն օբյեկտիվ «հետաառջատերազմյան» դրույթ- ների և այժմյան անկայուն գլոբալիզացիային բնորոշ միջազգային հարա- բերությունների վրա, որը կանխատեսում է իր հստակ տեղը այդ հարաբե- րություններում և Թուրքիայի այդ տեղի ընկալումը միջազգային հարաբե- րությունների մյուս դերակատարների այնպիսի տերմիններում, ինչպիսին է «աշխարհաքաղաքական անվիտարիստիկություն», «աշխարհատնտեսա- կան և տրանզիտ-տրանսպորտային արդյունավետություն», «ռազմաքա- ղաքական ինքնուրույնություն» և «ռազմական անպարտելիություն»:

Այս կապակցությամբ էականորեն աճում են Թուրքիայի նոր դերի հա- մար օբյեկտիվ նախադրյալները: «Թուրքիայի անվտանգությանն աջակող- վտանգներն ու ռիսկերը «սառը պատերազմի» ավարտից հետո բավա- լան տարբերվում են նախկինից: Թուրքիան գտնվում է անկայուն տարա- ժաշրջանի կենտրոնում և այդ պատճառով նրա քաղաքականությունը ազ- գային անվտանգության շրջանակներում նպատակաուղղված է տարա- ծաշրջանում լարվածության թուլացմանը, զինված հակամարտություննե-

րի կանխարգելմանը, դեմոկրատիայի և իրավունքի նկատմամբ հարգանքի խթանմանը, անվտանգության խաղաղ և կայուն պայմանների ստեղծմանը: Աշխարհառազմավարական և բնառազմավարական տեղակայման շնորհիվ Բալկաններ, Կովկաս, Մերձավոր Արևելք եռանկյան կենտրո- նում, որտեղ կուտակվում են նոր վտանգներ և ռիսկեր, գտնվելով բնական ռեսուրսներից ոչ հեռու և առևտրական ճանապարհների խաչմերուկում օրեօր աճում է Թուրքիայի դերը: 21-րդ դարի սկզբի իրականությանը թե- լադրված, Թուրքիայի պաշտպանական քաղաքականության հիմնական նպատակներն են՝ նրա վերածումը տարածաշրջանային գերտերության և տարածաշրջանային հավասարակշռության էլեմենտի, երկրի, որն իր ներդրումը կունենա տարածաշրջանում խաղաղության և կայունության ապահովման գործում, համապատասխան ռազմավարություն և անվտան- գություն մշակելով, պետությունների համագործակցությանը և մերձեց- մանն ուղղված զարգացման ծրագրերի առաջարկության և իրականաց- ման նպատակներով»:

Ոչ վաղ անցյալի Թուրքիայի ընդիմախոսների կողմից օրինաչափու- թյուն է այն, որ «...ազգային անվտանգության ապահովման հարցերում ցանկացած նոր նրբություն, այնպիսի պետության, ինչպիսին է Թուրքիան, գտնվելով ռազմավարական կարևոր և անկայուն տարածաշրջանում, մեզ համար ներկայացնում է /նկատի ունի ռուսական կողմը - հեղ-ի կողմից / աճող հետքերություն»:

Պատրվելով կոմպեմենտարությունը նոր ձևավորվող թուրքական քա- ղաքականության մեջ կապված սեփական ազգային հետաքրքրություննե- ի համատեղումով գլխավոր տարածաշրջանային և գլոբալ դերակատարների հետաքրքրությունների հետ իր մեջ պարունակում է ռազմավարական խն- դիրների և նրանց լուծման միանշանակ առաջնություն «...ազգային անվ- տանգությունը բոլոր ասպեկտներով ապահովելու համար /ռազմական, տն- տեսական, էներգետիկ, քաղաքական/, հասկանալով նրա տարածաշրջա- նային ուժեղացման նշանակությունը, Թուրքիան ակտիվացրել է բազմա- վեկտորյալ հարձակվողական արտաքին քաղաքականությունը: Այդ քաղա- քականությունը ԱՄՆ-ի հետ ռազմավարական գործընկերոջ, Ռուսաստանի և Իսրայելի հետ բազմակողմ համագործակցության, ԵՄ մտնելու գործըն- թացին զուգահեռ նախատեսում է նաև բազմանախորհուրդ հարաբե- րությունների զարգացում արաբական երկրների, Իրանի, հարևան պետու- թյունների, նախկին ԽՍՀՄ-ի թուրքալեզու հանրապետությունների, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության մուսուլմանական տարբերակների հետ»:

Թուրքիայի ազգային անվտանգության ապահովման հայեցակարգային մշակումները ներկայում պահին չեն կարող իմնվել միայն սեփական պե- տության առաջնահերթ խնդիրների վրա՝ բազմակողմանի բնույթի մի շարք օբյեկտիվ պայմանների շնորհիվ: Դա բերում է Թուրքիայի բարձրագույն քաղաքական շրջանակներում սեփական արտաքին քաղաքական ուղու- ճային զուգորդման անհրաժեշտության գիտակցմանը՝ ռազմա-քաղաքա- կան դաշնակիցների կողմից հայտարարված գաղափարախոսական հանձնարարականների, քայք, միաժամանակ, գիտակցվում է նաև միջերո- դական, կապակցող և աղաչատուցող ուղղորդման սեփական դերի շեշ- տադրումը տվյալ գաղափարախոսական հանձնարարականների իրա- գործման ճանապարհին: Նշվածը հատկապես ուրվագծված դիտարկվում

է գաղափարախոսական և քաղաքական հազեցվածության իրողությունում, պարտադրված «Մեծ Մերձավոր Արևելք» գլոբալ նախագծի դերակատարի կողմից: Ինչպես այդ առիթով ամփոփականորեն նշել է Թուրքիայի վարչապետ Ռ. Երդողանը. «Անկարան ավելի վաղ է հստակ ձևակերպել մերձավոր արևելյան խնդիրների վերաբերյալ իր տեսակետը, քան «Մեծ Մերձավոր Արևելք» նախաձեռնությունը դարձավ բերթերի հողվածների և հետևատարմանը մեղսակցի սիրված թեմա: Մեր երկիրը հանդես է գալիս ավելի դեմոկրատական, ազատ, բաց և խաղաղ Մերձավոր Արևելքի համար, որը պետք է դառնա արդյունավետ ղեկավարման և տնտեսության տարածաշրջան: Դա անհիմն գաղափար չէ: Թուրքիայի ազգային շահերը պահանջում են, որ հարևանները լինեն խաղաղ և կայուն պետություններ, որոնց հետ նա կվարդղանա փոխգործակցել բոլոր մակարդակներով: Այսպիսով, Թուրքիայի նպատակները համաձայնեցված են «Մեծ Մերձավոր Արևելք» նախագծի դրական խնդիրների հետ»: ...ՇՈՌԻԿԻ իր յուրահատուկ աշխարհագրական դիրքին Թուրքիան կարող է դառնալ քաղաքական, տնտեսական և մշակութային բուխքի սահմանակից տարածաշրջանների և Արևմուտքի միջև ամբողջապես: ԵՄ մտնելու Թուրքիայի գործընթացի առաջնադասումը կհեշտացնի նրա այդ դերի կատարումը»¹⁰:

Երկրի ազգային անվտանգության ապահովման ոլորտում ծրագրային վերջին փաստաթուղթը, որն ընդունվել է Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդում (Milli Güvenlik Kurulu - MGK) 2005 թ. -ի հոկտեմբերի 24-ին, Ազգային անվտանգության հայեցակարգն է (Milli Guvenlik Siyaset Belgesi - MGSB) : Համաձայն նախորդ փաստաթուղթը Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի (ԱԱՄ) / նիստի կողմից համաձայնեցվել և հաստատվել էր 1997 թ. -ին: Չնայած այն բանին, որ 21-րդ դարի սկզբին ձևավորված միջազգային դիրքությունը պահանջում էր Թուրքիայի շուրջ և նրա ներսում ընդհանուր իրադրության նոր ընկալում բուրքական ներքին և արտաքին քաղաքականության առաջնահերթություն և նրա ռեսուրսային ապահովման հնարավորություն, հատկապես 2001թ. -ի սեպտեմբերի 11-ի դեպերին հետևած ենթատեսքստում, 1997թ. -ի հայեցակարգը պահպանում է իր ակտուալությունը և շատ սկզբունքային դրույթներ համադրվում է Թուրքիայի հանրապետության ներկայիս քաղաքական ուղղվածության հետ:

Նախորդ 1997 թ. -ի հայեցակարգից պահպանված ներքին և արտաքին քաղաքական պահանջարկի սկզբունքային դրույթները կարելի է ներկայացնել հետևյալ կերպ: Թուրքիայի ազգային անվտանգության քաղաքականությունն իր հիմքում պարունակում է միջազգային հարաբերություններն «հետերկրկեն» շրջանի նոր իրողություններ, որոնք ամփոփվում են նրանում, որ. 1/ Թուրքիայի համար հատուկ նշանակություն ստացավ միջազգային թատերաբեմում մի շարք ինքնիշխան տարեկան գործողությունները, ինչպես նաև առանձին անկախները և ամբողջ իսլամական և թյուրքական տարածաշրջաններ՝ այս կամ այն կերպ առնչվելով Թուրքիայի պատմության հետ; 2/ Արևմուտքի ծրագրերում սկսեցին հայտնվել սկզբունքային նոր քաղաքական գործողություններ Թուրքիայի համար՝ Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի պետությունների նկատմամբ; 3/ նախաձեռնվեցին փորձեր վերափոխումադրելու Թուրքիայի դերը ՆԱՏՕ-ում՝ բարձրացնելով նրա արժեքը, օբյեկտիվ գնահորական Պոլսի դերը «հայտարարագրված» երկրորդ բանկը ՆԱՏՕ-ում/ և աշխար-

հաջադրական, ինչպես նաև աշխարհատնտեսական /ռազմավարական հիքրքը, տրանզիտ ճանապարհների դերը/ փաստարկներով: Թուրքիային հարևան և հարակից տարածաշրջաններում ծայր առած տարբեր տեսակի հակամարտությունների արդյունքում նա հայտնվեց միջազգային լարվածության և անկայունության էպիկենտրոնում, վերածվելով ՆԱՏՕ-ի եզրային երկրից՝ «մերձազանձակապային պետության»¹¹:

Պետության ազգային անվտանգության հայեցակարգի իրականացման ռազմա-քաղաքական որոշակի ուղղությունները, որոնց առջև խնդիր կա անվտանգության ողջ համակարգ արդյունավետորեն հարմարեցնել արտաքին բնույթի վտանգներին և մարտահրավերներին, կարող են հավասարեցվել հետևյալ ընդհանուր դրույթներին. 1/ Թուրքիան հետադարձանորեն վարում է զինված ուժերի ռազմական հզորության աճի քաղաքականություն հարվածային և կրակային հզորության շարժուն աճի շնորհիվ, որը տեղավորվում է զինված ուժերի կրճատման ընդհանուր ծրագրի շրջանակներում՝ զուգահեռաբար ավելացնելով միավորումներ արտունակությունը և ավելացնելով նրանց հնարավորությունը «արագ արձագանքման» մեխանիզմների ենթատեսքստում. 2/ առնչվելով ներքին և արտաքին ռազմաքաղաքական խառը վտանգների հետ /քրդական հարց/, Թուրքիան իրականացնում է ժամկետային բանակի ձևավորմանն ուղղված ծրագրային աճ՝ միաժամանակ ավելացնելով նրանց գործողությունների ծանրակշիռությունը թուրքական պետության տարածքային ամբողջականության վտանգներին արդյունավետ հակազդելու ենթատեսքստում¹². 3/ ազգային հետախուզության և ռազմա-մոբիլիզացիոն ծավալման համակարգերի արդյունավետության բարձրացում՝ որպես զինված ուժերի մարտունակության և քաղաքացիական պաշտպանության հնարավորությունների բարձրացման անհրաժեշտ պայման:

Թուրքիայի համար ռազմաքաղաքական վտանգները և մարտահրավերները, մեր տեսանկյունից, ավելի արդիական են, որոնք կանխատեսում են երկրի ազգային անվտանգությունն ապահովող ռազմաքաղաքական գործունե սերտ փոխկախվածություն անվտանգության ոլորտն ապահովող այլ ճյուղերի և ուղղությունների հետ: Այդ փոխկախվածությունն առավել ընդգծված երևում է, երբ զուգահեռականներ են անցկացնում Թուրքիայի ազգային անվտանգության ապահովմանն ուղղված 90-ական թթ. -ի քաղաքականության և 21-րդ դարի սկզբի քաղաքականության միջև:

Ազգային անվտանգության ապահովման քաղաքական նպատակները, որոնք կարող են ընդհանուր առմամբ որոշվել պետության ներքին կայունության, տարածքային միություններում դիրքերի ամրապնդմամբ, գործընկերների և մրցակիցների հետ փոխհարաբերություններում քաղաքական կշռի ամրացմամբ, համակցվում են արդյունաբերական ներուժի աճի տնտեսական նպատակներով, արտաքին հումքային աղբյուրներից լայնածավալ օգտվելու հնարավորությամբ, ազգային արտադրանքի իրացման համար շուկայի ընդարձակմամբ, աստիճանաբար Արևմուտքից ֆինանսական կախվածության թուլացմամբ:

Ընդհանուր միջազգային բնույթի քաղաքական և տնտեսական նպատակների կողքին ոչ պակաս կարևոր նշանակություն ունեն տարածաշրջանային նպատակները՝ հենվելով Թուրքիայի տարածաշրջանում ռազմավարական առավելության ենթատեսքստին և այդ առավելությունների

քանակական և որակական արդյունքների անընդհատ ակնկալվող և հետևողական աճին:

Թուրքիայի տարածաշրջանային քաղաքական նպատակներին կարելի է վերադրել: 1/ անդամակցությունը ԵՄ-ին, 2/ ՆԱՏՕ-ի հարավային թևի առաջատար դերի պահպանումն և այդ դերի հետևողական ամրապնդում, 3/ Բալկաններում և Եվրոպայի հարավ-արևելյան /Բոսնիա և Հերցեգովինա, Ալբանիա, Կոսովո, Մակեդոնիա, Ռումինիա, Բուլղարիա/ շրջաններում, Կիպրոսում մուսուլմանական համայնքների ամրապնդում, 4/ գաղափարական ճնշման հետևողական աճ հարևան երկրների և գլոբալ դերակատարների վրա, որն ամփոփվում է որպես ներկայումս գոյություն ունեցող և հնարավոր տարածաշրջանային հակամարտություններում կանխարգելող սեփական դերի և ամենահարմար միջնորդի¹³, 5/ վերջ նշված «գաղափարական» ճնշման «նյութական» լիցքավորում սեփական քաղաքական, տնտեսական դերում և ռազմական ներուժում, տարածաշրջանային և ոչ տարածաշրջանային մաշտաբով, 6/ տարածաշրջանում և նրան հարակից շրջաններում թուրքական պետությունների և ձևավորվող պետական միավորումների վրա սեփական ազդեցության ուժեղացում /Ալբանիա, Բոսնիա և Հերցեգովինա, Ադրբեյջան, Կենտրոնական Ասիայի պետություններ, Աֆրիա, Ղրիմի թուրքական համայնքներ, Չադաուզիա, թյուրքական հանրապետություններ Ռուսաստանի Դաշնությունում/, 7/ տարածաշրջանային բնույթի ինտերտուօրինալ կառույցների ձևավորում և զարգացում, որոնք իրենց գործողություններում ակնկալում են Թուրքիայի գաղափար դերը:

Թուրքիայի տարածաշրջանային տնտեսական նպատակներն ամփոփվում են հետևյալում: 1/ երկրի տնտեսական հզորության ավելացում, կողմնորոշված ոչ միայն այդ հզորացման անհրաժեշտ տարածաշրջանային պարամետրեր ստեղծելով, այլ նաև նախադրյալներ ստեղծելով տարածաշրջանից դուրս տնտեսական էքսպանսիայի համար, 2/ կայուն էներգետիկ աղբյուրների մատչելիություն և սեփական տարածքի վերածումը գլոբալ դերակատարների համար տարածաշրջանային և ոչ տարածաշրջանային էներգետիկ աղբյուրների մատչելի տրանզիտ-տրանսպորտային կանալի, 3/ սեփական տարածքով ապրանքների և հեռանկարում նաև տեղեկատվական հոսքերի անցման կողմնորոշում, 4/ տարածաշրջանային շուկայում սեփական արտադրանքի իրացման ընդլայնում:

Երկրորդ և երրորդ հազարամյակների կիզակետին Թուրքական հանրապետության առաջ դրված նպատակները հաջողությամբ իրականացնելու համար երկրի ռազմաքաղաքական ղեկավարությունը որոշակիացրեց ազգային շահերին վնասող պոտենցիալ վտանգների շրջանակը այն իր հերթին բաժանելով ներքին և արտաքին վտանգների: Գլոբալ բնույթի արտաքին վտանգներն արտահայտում են զարգացող երկրներում միջուկային պոտենցիալի պահպանման և նրա օգտագործման լայն հնարավորությունները, հակամարտությունների սրում «ՆԱՏՕ-ռադիկալ տրամադրված մուսուլմանական երկրներ» համակարգում, աշխարհում զանգվածային ոչնչացման զենքի տարածման և այն տեղ հասցնելու միջոցները, տարածաշրջանային և լոկալ հակամարտությունների վերաճումը լայնածավալ պատերազմի և Թուրքիայի ներքաշումը այդ պատերազմում, բնական, տեխնոգեն և այլ գլոբալ բնույթի աղետներ:

Տարածաշրջանային բնույթի արտաքին վտանգները դիտվում են բալ-

կանյան հակամարտությունների, Եվրոպական երկրներից թուրքերի զանգվածային ռեմիգրացիայի, արևմտյան ներդրումների կրճատման, կիպրոսյան պրոբլեմի, սահմանակից երկրներում հակամարտությունների սրման, որն աճում է տեղական հակամարտությունից տարածաշրջանային պատերազմի, Ռուսաստանի տարածքում զինված խմբավորումների առկայության, մրցակիցների կողմից Թուրքիային դուրս մղման ենթատեքստում:

Ներքին վտանգները, որոնք վերաբաժանված են տնտեսական, սոցիալական, զինվորական և բնապահպանական, գնահատվում են ըստ վտանգավորության աստիճանի. արտաքին հումքային շուկաների կորցնելը, արտասահմանյան տնտեսական և զինվորական օգնության ծավալների կրճատումը, բյուջեի դիֆիցիտը և ինֆլյացիայի աճի տեմպը, գործազրկության, հանցագործության, ահաբեկչության աճը, բրդերի պայքարը անջատվելու և անկայն Քուրդիստան պետություն ստեղծելու ցանկությունը, ազգային միասնության տրոհումը հասարակության զարգացման արևմտամետ և իսլամամետ ուղղությունների կողմնակիցների միջև, Թուրքիայի սահմանները տարածքներում քայքայիչ գործողությունների սրումը Թուրքիայի ներքաշումը իր ազգային շահերին հակառակ հակամարտությունների մեջ, ներդրումների շրջանում բնապահպանական աղետները¹⁴: Թուրքիայի ազգային անվտանգության ռազմավարության ապահովման ընդհանուր սկզբունքները պաշտպանապես հանգում են չորս հիմնական դրույթների, որոնց ժառանգականությունը հատկապես ակնհատ է «Հայեցակարգ 1997- Հայեցակարգ 2005» համադրման առաջին երեք սկզբունքներով և էական նորոյթ է չորրորդ սկզբունքի նկատմամբ, որոնց սկզբունքայնությունը այդ երկրի համար անհամեմատ աճել է 2001 թ-ից հետո.

«1. Պահող ուժի առկայությունը՝ պահպանելու համար առկա իսլամաարևելյանությունը և ազգային շահերի շուրջ սպառնացող սիմետրիկ վտանգը, 2. Տարածքային ամբողջականությունը, ազգային միասնությունը և գործող վարչակարգին սպառնացող վտանգի դեպքում անհրաժեշտ միջոցների կիրառումը.

3. Կիպրոսում իրավունքի և շահերի պաշտպանություն, որը կազմում է երկրի Միջերկրածովյան արևելյան մասի անվտանգության հիմնական կետը,

4. Նոր միջազգային ռիսկերի և ասիմետրիկ վտանգների կամխորոշում, մասնավորապես երկրում միջազգային ահաբեկչության գործունեության և երկրից դուրս նրա պատճառած վտանգները երկրի շահերին»¹⁵:

Տարածաշրջանում անվտանգության համակարգի ապահովման Թուրքիայի նոր դերը շեշտավորվում է նրա անզնահատելի և շատ դեպքերում անփոխարինելի ներուժով, տարածաշրջանային մակարդակով ընդհանուր անվտանգության կառուցման էֆեկտիվ ճարտարապետությամբ, ընդ որում տարածաշրջանի շրջանակները դիտվում են հնարավորին լայն, ընդգրկելով իր մեջ աշխահզարակալ տարածքներ սակասած արևելյան Եվրոպայից մինչև Մերձավոր Արևելքի երկրներ, անվտանգության մեխանիզմների «նոր տեխնոլոգիաների» արդյունավետ տարածման ներուժով, այդ տարածքներում վստահության և անվտանգության ամրապնդումով: Այս առումով նշվում է, որ «Թուրքիան, հետևելով իր ծայրամասերում խաղաղ գոտու ստեղծման ուղղությամբ ակտիվ քաղաքականությանը, անվտանգության դիրտում հանդես է գալիս որպես զարգալարների կրող և տարածքային համագործակցության շարժիչ ուժ: Թուրքիան, որպես Կ-

տահուրթյան և Անվտանգության Ամրակազմող Գործոնի /ՎԱԱԳ/, իր դերը տեսնում է հետևյալ կերպ. «տարածաշրջանում հարևան և այլ երկրների հետ ընդգծված մեջ չմտնելով, զարգացման փոխադարձ վստահության և տարածաշրջանային երկարաժամկետ համագործակցության ուղղությունները, հենվելով ընդհանուր շահերի վրա, այսինքն՝ անվտանգության ընդհանուր ձգտման վրա»: Այդ գործոնի ոգով մինչև օրս տարածաշրջանային մակարդակով իրականացվել է ՎԱԱԳ-ի գործունեության ապահովումը Հարավ-Արևմտյան Եվրոպայում՝ հաղադրության Պակտի միջոցով և Սև ծովի շրջանում ռազմա-ծովային անվտանգության և վստահության ամրակողման Բիջոցների մասին Փաստաթղթով, իրականացված է ՎԱԱԳ-ի շրջանակներում երկկողմ միջոցառումներ Բուլղարիայի, Մակեդոնիայի, Ալբանիայի հետ: Շարունակվում են աշխատանքները Հունաստանում¹⁶, Միդիայում և Վրաստանում ՎԱԱԳ-ի թեմիի ստեղծման ուղղությամբ¹⁷:

Անվտանգության ապահովման տարածաշրջանային մեխանիզմների գաղափարական ընդհանրության գործընթացում, ժամանակակից վտանգների և մարտահրավերների հետ կապված շահագրգիռ պետությունների հրամայականով, կա Թուրքիայի նախաձեռնությունը երկբևեռ հավանարությունների շրջանի համար ոչ բնորոշ այնպիսի ինստիտուցիոնալ կառույցի ձևավորման և զարգացման գործում, ինչպիսին այժմ հանդիսանում է Սևծովյան ռազմա-ծովային համաձայնության խումբը՝ «BLACKSEAFOR»: Համաձայնությունը ստորագրվել է 2001 թ.-ի ապրիլի 2-ին՝ Մասնբերում: «Համաշխարհային փորձառության մեջ առաջին անգամ սևծովյան ավազանի վեց պետություններ՝ Ռուսաստանը, Թուրքիան, Բուլղարիան, Վրաստանը, Ռումինիան և Ուկրաինան, պայմանավորվեցին ստեղծել ձկուն գործողության բազմազգ ռազմածովային խումբ Սև ծովում արտակարգ իրավիճակների դեպքում կիրառելու համար: Ռուսական կողմը, ինչպես և Թուրքիան, բարձր են գնահատում այդ համաձայնագիրը¹⁸: Սևծովյան ավազանի երկրների նավատորմերի տարածաշրջանային համագործակցության այդ լիարժեք նոր ձևը հնարավորություն է տալիս համատեղ անցկացնել քաղաքական և զինվորական խորհրդատվություններ, փնտրողա-փրկարարական և հումանիտար օպերացիաներ, ծովային ակնազեղում, համատեղ գորավարություններ, բնապահպանական ծննդախորհրդ: Դրա կողքին հայտնվող նոր մարտահրավերներն ու վտանգները «BLACKSEAFOR»-ի առջև նոր լրացուցիչ խնդիրներ են դնում ակադեմիայական, զանգվածային ոչնչացման զենքի անօրինական շրջանառության, թմրադեղերի դեմ համատեղ պայքարի կազմակերպում: Թուրքական փորձագետները գտնում են, որ այսօր խնդիր կա այդ կառույցի հարմարավելուն այնպիսի կարևոր տարածաշրջանում վտանգներին և մարտահրավերներին արագ արձագանքման գործում, մասնավորապես, էներգառեսուրսների տեղափոխման տեսանկյունից, ինչպիսին սևծովյան տարածաշրջան է¹⁹:

Նախաձեռնությունները, կապված ունիվերսալ բնույթի կոլեկտիվ անվտանգության ընդհանուր կադապարում Թուրքիայի օրգանական ներդրումանը, տվյալ պահին կառուցվում են բավական հավակնորդ նախագծերի շուրջ՝ իր թեկնածության ինքնագովազդի միջոցով 2009-2010 թթ.-ին ՄԱԿ-ի Անվտանգության Խորհուրդի կազմում տեղ գրավելու հռանկավորում²⁰: Ընդ որում, դրա համար որպես օրբեկտիվ նախադրյալներ Թուրքիայի կողմից ներկայացվում է նաև այն, որ անընդհատ աճում է նրա

ակտիվ դերն անվտանգության ոլորտի քաղաքականություն իրականացնող այնպիսի միջազգային կառույցներում, ինչպիսիք են ՆԱՏՕ-ն, ԵԱՀԿ-ն, հավասարապես նաև տարածաշրջանային այլ կառույցների, և մշտապես կատարում է իր առջև դրված միջազգային պարտավորությունները:

Նշենք 2005թ. Թուրքիայի անվտանգության Հայեցակարգի ընդհանուր դրույթները: Ակնհայտ է, որ այդ դրույթների վերլուծությունը կրում է ենթադրյալ բնույթ՝ հաշվի առնելով հետազոտվող փաստաթղթի գաղտնիությունը և այստեղից հետևող բավական սկզբունքային թեզիսների գաղտնիությունը ստեղծելով Թուրքիայի «կարմիր գրքի» ժամանակացույցի: Մասնավոր երեքն են հայտնվող 2005 թ-ի հայեցակարգի առանձին դրույթներ, լուսաբանում են ներկայիս Թուրքիայի քաղաքական ղեկավարության սկզբունքային մտտեցումների գիտակցումը պետության ազգային անվտանգությանն ուղղված ժամանակակից վտանգներին և մարտահրավերներին, որը ենթադրում է երկրի ազգային անվտանգության համակարգի հարմարվելն այդ վտանգներին և մարտահրավերներին և նրանց կատարելագործմանը:

Նոր հայեցակարգի առանձնահատկությունն այն է, որ այժմ Թուրքիայի անվտանգության հարցերը դիտարկ են ոչ միայն նրա այլ երկրների հետ միջպետական հարաբերություններով, այլ նաև Թուրքիային և նրա շահերին սպառնացող առկա տարածաշրջանային պոտենցիալ վտանգներով, տարածաշրջանային հակամարտություններով և տարբեր ռադիկալ կազմակերպությունների գործունեությունով: Փաստաթղթի նախագծում բացակայում է այն երկրների ցանկը, որոնք կարող են վտանգ հանդիսանալ Թուրքիայի համար, թեև նրանք հեշտությամբ ձևանալու են: Վերջնական տարբերակում ներկայացված են ոչ միայն «տարածաշրջանները պոտենցիալ ռիսկներով», այլ նաև նրանց հետ կապ ունեցող երկրներ, ինչպես նաև պետություններ, որոնց հետ հարաբերությունները Թուրքիայի համար առաջնային են²¹:

«Թուրքիայի քաղաքագետները հայեցակարգի դրույթների վերլուծության ընթացքում առաջին հերթին հատուկ ուշադրություն են դարձրել փաստաթղթի այն հարցերի մեկնաբանություններին, որոնք ուղղակի կամ անուղղակի կապված են Թուրքիայի ԵՄ լիիրավ անդամ դառնալուն ուղղված քանակությունների գործընթացին: Դա Կիպրոսի հարցի կարգավորման թուրք-հունական հարաբերությունների խնդիրներն են, հայելի ցեղասպանությունը, քրոական հարցը: Այսպես փաստաթղթի վերջնական տարբերակում ամրագրված է այն դրույթը, որ Թուրքիան կարող է որակավորել որպես «casus belli» /պատճառ պատերազմ հայտարարելու համար/ Հունաստանի կողմից էգեյան ծովում տարածքային ջրերը մինչև 12 մղոն ընդարձակելը: Հայեցակարգում նույնպես նշված է, չի կարելի ոչ մի գիշերում կատարել այդ ծովում վիճելի ավելի քան հարյուր կղզիների հարցում, այլ անհրաժեշտ է ազգային շահերի պաշտպանության հարցում ընդարձակ քաղաքականություն վարել: Հատկանշական է, որ «կարմիր գրքում» բացահայտված է թուրքական այդպիսի կոշտ քաղաքականության պատճառները: Այն կայանում է հունական պաշտպանության 1994, 1996 և 1998 թթ-ին ընդունված երեք որոշումներով, որոնցում, մասնավորապես, ձևանալու է Օսմանյան կայսրության կողմից հայերի ցեղասպանությունը: Փաստաթղթում նշվում է, որ Թուրքիայի դիրքորոշումը վերը նշված հարցերում կարող է դեպի մեղմացում վերանայվել միայն Հունաստանի պաշտպանության այդ

որոշումները չեղյալ հայտարարելուց հետո²²: Ինչ վերաբերում է կիպրոսյան հարցին, նոր հայեցակարգում ձևակերպված է միանշանակ դրույթ այն մասին, որ Կիպրոսը կարող է ճանաչվել Անկարայի կողմից, իսկ նրա նախնի և օդանավերի համար Թուրքիայի նավահանգիստներն ու օդային տարածքները կբաժանվեն միայն կղզու խնդիրների բազմակողմանի և արդար լուծումից հետո:

«Գաղտնի սահմանադրությունում» պլուտենցյա ռազմական ռիսկերի ևս մի շրջան է անվանվում հյուսիսային Իրաքը: Այստեղ հետաքրքրություն է ներկայացնում այն փաստը, որ քրդական պետության ստեղծման հնարավորությունը փաստաբար չի նույնացվում ռազմական գործողությունների սկսման մոտիվի հետ: Այնուհանդերձ, նոր հայեցակարգում ընդգծվում է, որ Քիրկուկում քրդական խմբակցությունների գործողություններն ընդդեմ հյուսիսային Իրաքի թուրքմենների, որը մերձարևելյան տարածաշրջանում կարող են ստեղծել լուրջ խնդիրներ կայունության և անվտանգության հարցերում:

Իր վրա ուշադրություն է հրավիրում այն, որ փաստաթղթում առաջին անգամ, ներկա իրականությունից ելնելով, հատուկ նշվում է այն նոր վտանգների և մարտահրավերների հաջորդականությունը, որոնք Թուրքիայի համար վտանգ են հանդիսանում: Ըստ վտանգավորության աստիճանի դրվում են հետևյալ կերպ. անջատողական և կրոնական գործունեություն, միջազգային ահաբեկչական և կրոնա-ծայրահեղական կազմակերպություններ, նարկոթաֆիլը, մարդկանց հախչատակություն և անօրինական միգրացիա: Թուրքական փորձագետներն ուշադրություն են հրավիրում այն փաստի վրա, որ 1997 թ-ի նմանատիպ փաստաթղթի հետ համեմատած վտանգների անվանացանկից բացակայում են ծայրահեղ աջ ազգայնական կազմակերպությունները: Ըստ որում, փաստաթղթում նշված է, որ «Թուրքիան գտնվում է միջազգային ահաբեկչության վտանգի ներքո, որն օժանդակություն է գտնում թուրքական տարածքի մի մասում»: Այստեղ նշվում է Քուրդիստանի Բանվորական կուսակցությունը /ԲԲԿ/, որն «Ալ-Քաիդայի» և «Հըզբուլլահի» /«Հըզբալլահի» թուրքական տարբերակը/ հետ միասին մտցված են «կարմիր գրքում» շարադրված վտանգները և մարտահրավերները մարմնավորող կազմակերպությունների մեջ:

Փաստաթղթում առաջին անգամ մտցված է ազգային անվտանգության տնտեսական ապահովում հասկացությունը, որը համարվում է պետության կարևորագույն գործողություններից մեկը: Այդպիսով, նշվում է այդ խնդրի լուծման ուղղություններից մեկը, հաշվի առնելով Թուրքիայի աշխարհագրական և աշխարհաքաղաքական դիրքը, հանդիսանում է նրա վերածումը էներգակիրների տեղափոխման և պահպանման համաշխարհային տրանսպորտ կետի»²³:

Եվրոպական Հանձնաժողովի ժամանակացույցով վերջին միջանկյալ զեկույցում, նվիրված ԵՄ մտնելու ճանապարհին Թուրքիայի նվաճումներին, նշվում է, որ «Թուրքիայի Ազգային Անվտանգության և Խորհրդի Օրենքի 2-րդ հոդվածը²⁴ նախատեսում է ազգային անվտանգության լայնածավալ որոշումներ: Ոչ մի միջոց ձեռք չի առնել, որպեսզի ավելացվի ժամադրությունների նվաճումանք քաղաքացիական վերահսկողությունը: Կերքինս բանակի մաս է կազմում և աշխատում է գլխավոր շտաբի ղեկավարության ներքո, ինչպես նաև ներքին գործերի նախարարության որպես իրավապաշտպան պարտականություններ իրականացնողի»²⁵:

ՂԱՌԻՏ 2

ԹՈՒՐԻՔԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՈՒ ՍԿԶՔՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ, ԱԶԳԱՅԻՆ ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԿՂԿՄԱՆ ԵՎ ԵՎՐՍԻՆՏԵԳՐԱՆ ԱՎԱՆՂԱԿԱՆ ՀԱՄԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պետության ազգային անվտանգության արդյունավետ ապահովման ներատեսչություն, Արևմուտք և Արևելք հանգույցակետում իր ռազմավարական դիրքի առավելություններից առավելագույնս օգտվելու, ծրագրավորված և աստիճանական ձևավորվող և ինքնուրույն գարգացող թուրքական քաղաքական ուղղության առջև բարդ խնդիրներ են կանգնած: Երկրի ներքա ներքաղաքական և արտաքին քաղաքական ուղղությունների համատեղումը, որոնց կարելի է համապատասխանաբար վերագրել ներպետական կայունությունը, երկրի հարավ-արևելյան շրջաններում անջատողական միտումների կատեգորիա է ԵՍ, որպես լիիրավ անդամ մտնելու ավելի շատ կրում է չհամաձայնեցված բնույթ: հակասությունների մեծ բաժին պարունակելով: Անջատողականության ճնշման բնագավառում «հաջողությունները» ինքնատիպության բերում են եվրահիտեգրման ուղղությամբ կուրսառնելի և հակառակը, եվրոհիտեգրման ուղղությամբ լրացուցիչ «միավորներ» կարելի է հավաքել մարդու իրավունքների պաշտպանության հավակածությանը: Այդ դեպքում տուժում է ներքաղաքական նախաձեռնող բնույթի բաղադրիչը անհատական մակարդակով մարդու իրավունքների բարձրացումն ու երաշխավորումը թուրքական իրականության մեջ նշանակում է ճնշված ազգային փոքրամասնությունների կոլեկտիվ իրավունքների, գուցե և, անվերադարձ աճ պետությունում:

«Թուրքիայի ԵՄ-ին լիիրավ անդամագրվելու ընդմիջմանը հենվում են տնտեսական²⁶ և մշակութային փաստարկների վրա: Ընդհակառակը, ԵՄ-ի մեջ Թուրքիայի մտնելու կողմնակիցները մյուս կողմից, ցույց են տալիս եվրոպական անվտանգության հարցերում Թուրքիայի համագործակցությունը, նրա աշխարհառաջավարական առ-լիճելի դիրքը: Միաժամանակ բավական վիճելի է ներկայացված այն հարցը, թե եվրոպական անվտանգության բնագավառում համագործակցությունը ապագայում Թուրքիային կդարձնի ԵՄ-ի լիիրավ անդամ, թե՞ կսահմանափակվի գործընկերության ներկայիս պարտություններով: Թուրքիայի ԵՄ-ին անդամակցելու օգտին ուժեղագույն փաստարկները կապված են անվտանգության ոլորտի հետ համագործակցությունը անվտանգության և պաշտպանության ոլորտի եվրոպական քաղաքականության շրջանակներում²⁷ կիեշտացնելի ԵՄ-ի տրանսֆորմացիան անվտանգության ոլորտում որպես գլոբալ դերակատարի, կօզնի ԵՄ-ին դուրս գալ Մերձավոր Արևելքի երկրներ իր առաքելությամբ և օրինակ կծառայի այդ երկրների զարգացման համար: Սակայն ավելի ուշադիր հայացքը դեպի ԵՄ և Թուրքիա, որպես քաղաքական դերակատարի, ցույց են տալիս, որ այդ փաստարկներն անբավարար են: Թուրքիայի դերը եվրոպական անվտանգության ապահովման հարցում արդյունավետ կարող է լինել, եթե միայն նա իսկապես ընդունի ազատության, դեմոկրատիայի, օրենքի գերակայության և մարդու իրավունքների պրոթեկցիոն: Չնայած սահմանադրական և օրենսդրական մի շարք փոփոխություններին, Թուրքիան ցանկալի ուղղու-

թյամբ շատ բանի չի հասել՝ բարեփոխումների ու օրենսդրության հարմունի-
ան իրականացումն են ընտրությանը»²⁸:

Թուրքական բարձրաստիճան գինվորականները, հիմնավորելով Թուր-
քիայի մասնակցության անհրաժեշտությունը եվրոպական պաշտպանական
և անվտանգության օրագրերին, և կապելով այդ հարցը ԵՄ-ի լիիրավ անդա-
մի կարգավիճակի ձեռքբերման հետ, շեշտադրում են, մասնավորապես,
հետևյալ փաստարկները. «Որպես ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիան արդեն իսկ
ստիպաբարձր է սպասարկման բոլոր տեսակի բանկարժեք ենթակառուցված-
քին, ԵՄ պաշտպանության անհրաժեշտ արդյունավետ ռազմական գործու-
թյուններին համար: Այդ պատճառով, Թուրքիայի մուտքը ԵՄ չի պահանջի
ոչ մի ծայրահեղ միջոց կամ անվտանգության ապահովման ուղորդի բանկար-
ժեք փոփոխություններ: Շատ նոր անդամներ ԵՄ-ի պաշտպանական համա-
կարգում հարմարվելու խնդիրներ են ունենում այն պատճառով, որ տիրա-
պետում են սովետական զենքի հին համակարգերին և ուսուցման ստան-
դարտներին: Ունենալով համագործակցության երկարատև փորձ և օգտա-
գործելով պաշտպանական նույն դոկտրինաները, զենքի տեսակները, ու-
սուցման գործընթացը և արդեն ՆԱՏՕ-ի շրջանակներում հաստատված
ստանդարտները՝ Թուրքիան կարող է եվրոպական անվտանգությունում և
պաշպանական համակարգում բազմապատկել դրական արդյունքը»²⁹:

Որոշակի տեղաշարժեր Թուրքիայի պահպանողական բարձրագույն
գինվորական շրջաններում, կապված երկրի ազգային անվտանգության
պահպանման հարցերի ավանդական ուղիների գիտակցմամբ, նկատելի է և
հիմնականում կենտրոնանում է ժամանակ առ ժամանակ վերականգնվող
բանավեճերում Թուրքիայի եվրախնտեզրման առավելությունների և թերու-
թյունների մասին: Ընդհանուր առմամբ, բարձրագույն գինվորականության
դիրքորոշումը հայտնի է. Թուրքիայի լիիրավ անդամությունը ԵՄ-ին, փոխ-
ծեռնուու ուղղություն է Թուրքիայի ազգային անվտանգության ապահովման
համար, մասնավորապես, և ողջ եվրոպական անվտանգության համար,
ընդհանրապես: Ընդամենը երեք, չորս տարի առաջ այդ թեզի միանշանակ
լինելը ոչ բոլորի կողմից էր ընդունվում³⁰, ընդ որում, որն մեծահետևաք-
քիչին է, հոռետեսությունը բացահայտ և ոչ այնքան հինչում էր պետության ազ-
գային անվտանգության ուղիտի բարձրաստիճան պատասխանատուների
բերանից: Դրա վառ ապացույցը դարձավ Թուրքիայի ԱՄՆ-ի Գլխավոր
քարտուղար գեներալ Թունցեր Քիլինցի (Tuncer Kilinc) խոսքերը Ստամբու-
լում /մարտ, 2002/ գլխորական միջազգային կոնֆերանսի ժամանակ այն
մասին, որ ԵՄ-ն «քրիստոնեական ակումբ» էր և, որ այն կար որպես «ոչ գա-
ղութային ուժ, վճռական Թուրքիայի մասնատման հարցում»: Նա կողմ ար-
տահայտվեց ԵՄ-ին անդամակցության հարցում ջանքերը դարաբեցնելու և
այլ ուղիներ փնտրելու, ընդհուպ Ռուսաստանի և Իրանի հետ սերտ հարաբե-
րություններ հաստատելուն: Նրա հակասական արտահայտությունները
բուռն հասարակական-քաղաքական բանավեճերի ափք դարձան: Գլխա-
վոր շտաբի պետ Հուսեյին Քիլիքոզյուն (Huseyin Kivrikoglu) հավաստիաց-
նում էր հասարակությանը, որ գեներալ Քիլինցն արտահայտել է իր սեփա-
կան կարծիքը, նաև ընդօժեյ, որ գինվորականության համար անդամակցու-
թյունը ԵՄ-ին համարվում է աշխարհաազգավարական նպատակա՞:

2003 թ-ի մայիսին նույն միջազգային կոնֆերանսի անցկացման ժամա-
նակ Գլխավոր շտաբի պետի տեղակալ Յաշար Բյույուքանըը (Yasar

7205

Buyukanit) հետևյալ հայտարարությունն արեց. «Ես հերթական անգամ
հայտարարում եմ Թուրքիայի գինված ուժերի դիրքորոշումը. Թուրքիայի
գինված ուժերը չեն կարող դեմ լինել ԵՄ-ին, քանի որ ԵՄ-ն հանդիսանում
է աշխարհաքաղաքական և աշխարհաազգավարական վերջնական պա-
յաման այն արդիականացման իրականացմանը, որը թուրք ազգի համար
ընտրել էր Սուրաթա Քեմալ Աթաթյուրը»³²:

Թուրքիայի Գլխավոր շտաբի ներկայիս պետի վերջին թեզիսում դրված
են հայեցակարգային հակասություններ, որոնց կոշտության աստիճանն
այն ժամանակ այնքան էլ չէր գիտակցվում, բայց ներկայիս փոփոյն ավելի
ցայտուն է երևում: Հայեցակարգում սովայների հակասությունը կայանում
է նրանում, որ Թուրքիայի հանրապետության հիմքերը, որոնք հիմնվում են
Քեմալ Աթաթյուրի հայտարարած ազգայնական սկզբունքների վրա, կար-
ող է «վղղվել» երկրի հետագա եզրայինտեզրման ընթացքում:

«Արևմտյան դիվանագետները և արևմտամետ տրամադրությամբ
թուրք փորձագետներն ավելի հաճախ խոսում են այն մասին, որ ազգա-
նականությունը, ինչպես նաև «ազգային պետություն» դերը ժամանակա-
կից Թուրքիայի կյանքում, պոտենցիալ խոչընդոտ է հանդիսանում երկրի
եվրոպիստեզրման ճանապարհին: Բյույուքանյան և Անկարայում ազգայնակա-
նությունը հաճախ տարբեր կերպ է մեկնաբանվում, և դրա պատճառը
պատմական այն տարբեր պայմաններն են, որոնցում ծնվել են եվրոպա-
կան հասարակությունը և ժամանակակից Թուրքիան: ԵՄ հիմնադիրները
1950-ական թթ.-ին ստեղծում էին միություն, որի նպատակն էր հաղթահա-
րել եվրոպայն բզկտող ագրեսիվ ազգայնականությունը, որը 20-րդ դարի
առաջին կեսին երկու համաշխարհային պատերազմի և ավերածություն-
ների պատճառ հանդիսացավ եվրոպական մայրցամաքում: Ինչ վերաբե-
րում է Թուրքիային, ապա ազգայնականությունն առանցքային դեր խաղաց
ժամանակակից թուրքական պետության պատմությունում: Ժամանակա-
կից Թուրքիայի հիմնադիր-հայր Քեմալ Աթաթյուրը ստեղծեց նոր ազգ և իր
թուրքական ազգային նույնականությունը: Հենց 1920-ական թթ.-ին հայտն-
վեց թուրքական ազգայնականության ավանդապատումը, և այդ ժամանա-
կից մինչ այսօր ազգայնականությունը շարունակում է կարևոր դեր խաղալ
Թուրքիայի հանրապետության ամրապնդման գործում:

Թուրքիայի ճնշող մեծամասնությունը և, որ ավելի կարևոր է, թուրքական
գինված ուժերի հրամանատարությունը պահպանում են հավատարմու-
թյունն Աթաթյուրի ազգայնամոլական ժառանգությանը: Կենցաղային իր
ճառերից մեկում թուրքական ցամաքային ուժերի գլխավոր հրամանա-
տար գեներալ Բյույուքանըը հայտարարեց, որ «մեր հասկացությունը ազ-
գայնականությունը»: «Anatolia» գործակալությունը հաղորդում էր նաև գե-
ներալի հետևյալ խոսքերը. «Հասկանալի է, որ մենք կփորենք մեր ժողովր-
դին և կատներեց նրան, ովքեր մեզ չեն սիրում»: Ազգեցիկ թուրք գեներալ-
ները շարունակում են կապվածանքով վերաբերվել եվրոպայի ծառույնմե-
րին: Եվրոպան «ցանկանում է փոխել մեր ազգային մշակույթը, պարտադ-
րել օտար արժեքներ,նորածություն և լեզուներ, որոնք չեն համապատաս-
խանում թուրքական սովորություններին և ավանդույթներին», - 2005 թ.-ին
բողոքում էր թուրքական գլխավոր շտաբի պետ գեներալ Հյւմի Օզքյոքը
(Hilmi Ozkok): Միասնական եվրոպական նույնատիպություն ստեղծելու

ծգտող ԵՄ ղեկավարության այդպիսի տրամադրությունները չեն կարող չանհանգստացնել: Բացի այդ, այն խորացնում է ԵՄ-ի մեջ մտնող որոշ մայրաքաղաքներում գոյություն ունեցող կասկածն այն հարցում, կարող է արդյոք Թուրքիան, իր բազմաթիվ բնակչությանը և մշակութային ավանդույթներով, առանց ղեկավարության ինտեգրվել միությանը»³³:

«Լուրջ խոչընդոտներ ԵՄ-Թուրքիայի ճանապարհին մնում են ինչպես Թուրքիայում, այնպես էլ Եվրամիությունում: Ասկայն, այնուամենայնիվ, ամենալուրջ խոչընդոտները ոչ թե ԵՄ-ի ղեկավարության և Եվրոպայի երկրների քաղաքական մեջ է, այլ հենց Թուրքիայի: Թեև վերջին շրջանում մարդու իրավունքները նկատելի լավացել են, Եվրոպական չափանիշներից դեռ հեռու են: Այդ իմաստով հետաքրքիր է թուրքական քանակի գլխավոր շտաբի պետի ելույթը, որում նա հայտարարեց, որ Թուրքիան ազգային շահեր ունի Հյուսիսային Կիպրոսում, որ 1915 թ. հայերի ցեղասպանության մեղադրանքներն անհիմն են, որ ամերիկացիները բավականաչափ կոշտ չեն հետապնդում քուրդ ահաբեկիչներին Հյուսիսային Իրաքում: Պետք է մոռանալ, որ քանակը չարունակում է կարևոր դեր խաղալ Թուրքիայի քաղաքական կյանքում: Գեներալներն աջակցում են ԵՄ մտնելը, բայց դա այնքան ժամանակ, քանի դեռ այն չի խախլել գոյություն ունեցող կարգը, իսկ դա այնուհասակ է, քանի որ ԵՄ-ի սկզբունքներն ու ժամանակակից թուրքական վարչակարգն անհամատեղելի են»³⁴:

«Զինված ուժերը բավական ազդեցություն ունեն դատական իշխանության և քաղաքական օրակարգի վրա: Դրա օրինակներից մեկը «Շեմսինլիի» (Semdinli)³⁵ գործն է, երբ 2005 թ. 9-ի ղեկավարների դատախազը հեռացվեց, որովհետև նա մեղադրում էր ցամաքային զորքերի հրամանատար գեներալ Բույուրանը թին, երկրի հարավ արևելքում հուզումներ հրահրելուն ուղղված մի շարք պայթյուններ նախապատրաստելու համար անօրինական կանխորոշումներ կազմակերպման մեջ: Պայթյունները Թուրքիայի այդ տարածաշրջանում ապստամբություն առաջացրին: ԵՄ ընդարձակման հարցերով կոմիսար Օլլի Ռենն այդ գործի կապակցությամբ նշեց, որ «դեպքը կասկածի տակ դրեց ոչ միայն երկրի զինված ուժերի Քորդական բանակի կուսակցության դեմ ուղղված պայքարի մեթոդները, այլ նաև Թուրքիայի դատական իշխանության անկախությունը»³⁶:

«Երբ հարցազրույցի ընթացքում հիշեցվեց, որ զինվորականները աշխարհականացման և դեմոկրատիայի երաշխիքներ են եղել, Օլլի Ռենն ասաց. «ԵՄ-ն չի ուզում դրդել Թուրքիայում իսլամիստներին: Տե՛ս ծագ այդ երաշխավորումն են»: Նա հիշեց նույնպես, որ թուրքական զինված ուժերի նախկին փորձերը, ուղղված Թուրքիայում իսլամական դպրոցների տարածման կանխարգելմանը, ծախողվեցին»³⁷:

«Զինվորականները համաձայնվեցին ԵՄ մտնելու համար անհրաժեշտ բարեփոխումների անցկացմանը, քանի որ նրանք հավատում են, Միությանն անդամագրումը կապահովի Թուրքիայի համար անհրաժեշտ շատ հարցերի լուծումը, ընդհուպ քրդական հարցը, որը «հաջողություններ է արձանագրում», և տնտեսական ղեկավարություններ: Միաժամանակ ԵՄ-ի պահանջը բարեփոխումների անցկացման գործընթացում ներգրավել հասարակության տարբեր շերտեր, զինվորականների համար մարտահրավերի բնույթ է կրում, վտանգում է երկրի միասնությունը, որի պաշտպաններն են զինվորականները և, մասնավորապես, սեփական շարքերը: Չին-

վորականներն ավելի ճկուն և պրագմատիկ էին, քան այդ սովորաբար ընկալվում է արտասահմանում, և ընդունակ անընդհատ կատարելագործել քննալիզային սկզբունքները: Եթե Թուրքիայի զինված ուժերը լիարժեք կիսանովյան, որ ԵՄ-ն կփոխարինի իրենց որպես Թուրքիայի կայունության պաշտպանի, ապա նրանք կարող են ցաշվել «հետին պլան»: Բայց, եթե ԵՄ ճանապարհին կուժեղանա քրդական անջատվողական ահաբեկչությունը կամ իսլամիստները չափից ավելի տեղեր կստանան պետական հաստատություններում, ապա այդ դեպքում թուրքական գլխավոր շտաբը կարող է հրաժարվել թողնելու իր ներկայիս լիազորությունները»³⁸:

Թուրքիայի քաղաքական մշակույթի կարևորագույն ասպեկտներից մեկն այն է, որ արտաքին աշխարհն իր մեջ թաքցնում է պետության քաջայման և մասնատման նախագծեր, այդ հանգամանքը դարձնելով քաղաքական կյանքին ինտեգրված մաս, միաժամանակ առնչվելով Թուրքիայի մոտեցումներին սեփական ազգային անվտանգության ապահովման հայեցակարգային կտրվածքին: Ներկայացնելով ոչ վաղ անցյալ այն պատկերացումներն վրա, որ Թուրքիան թշնամիներով չըրապատված պետություն է, որոնք շատ գործնական են և կարող են գործել համատեղ, իր ակտուալությունը չի կորցրել և այսօր: Այդ ֆենոմենը հաճախ անվանում է «Սևրաֆորիս»³⁹: Իր էությունը այն անհնազանդություն է արտահայտում, որ կարող է վերածնվել 1920 թ. Սևրի պայմանագիրը: «Սևրաֆորիս» շատ մոտ ասոցացվում է աշխարհընկալման երկարատև թուրքական ավանդույթների «realpolitik» հեռանկարով:

«Սևրաֆորիս» կարևոր դարձավ ոչ միայն այն բանի համար, որ այն նախագծված է ֆիլտրի սկզբունքով, որի միջով անցնում է աշխարհընկալում, այլ նաև այն բանի համար, որ քաղաքական վերնախավը հնարավորություն ստացավ մանևրելով տվյալ ֆենոմենը, արտաքին աշխարհի մասին հասարակական հարաբերությունները ձևավորել և ուղղել «անհրաժեշտ» ուղղությամբ: Այդ ձևով ազգային անտանգությունը որոշվում է նրա ապահովման իրականացվում է հաշվի առնելով իրական և մտացածին վտանգները, որոնք կարող են քայքայել Թուրքիայի տարածքային ամբողջականությունը: Ինչպես նշել է թուրք փորձագետներից մեկը, «տարածքների կորուստի վախն ամենուր է»⁴⁰:

Թուրքիայում զինվորականները որոշակի դեր են խաղում «Սևրաֆորիս» հավերժացման գործում: Ազգային անվտանգության թուրքական մշակույթը, որը գտնվում է զինվորական հաստատությունների իսլամական ազդեցության տակ, մինչև այժմ ընդգծում է «սևրաֆորիսով» բարդացած մտածողություն և վերլուծություն: Միաժամանակ Թուրքիայում կարծիք կա, որ թուրքական քաղաքական մշակույթում «Սևրաֆորիս» և այլ «ֆորիսներ» ավանդականության մոտեցման բարդույթներ են հանդիսանում, որոնք անհրաժեշտ է փոխել կամ, նվազագույնը, վերահամաստվորել: «Սևր» առաջին բանն է, որ թուրք երիտասարդությունն ուսումնասիրում է դպրոցում: Եվ նա երդվում է «ոչ մի դեպքում Սևր»: Հին Թուրքիային մարտահրավեր է նետում նախապաշարունակներից գուրկ թուրքերի նոր սերունդը, որոնք մինչև կոկորդը կուշտ են ավանդական վերնախավի «իսլամաֆորիսայից», «բուրլուաֆորիսայից» և «սևրաֆորիսայից»⁴¹:

1 Թուրքիայի բոլոր կառավարությունների օրոք Անկարայի ու Վաշինգտոնի, Անկարայի ու ՆԱՏՕ-ի միջև հարաբերությունները մտնում էին թուրքական արտաքին քաղաքականության անկյունաքարը: (А.А. Родионов [Чрезвычайный и Полномочный Посол СССР в Турции в 1974-1983 гг.], Турция – перекрёсток судеб. Воспоминания посла, М., 2006, с. 148).

2 Ziya Onis, Turkey and the Middle East after September 11; The Importance of the EU Dimension // Turkish Policy Quarterly, Vol. 2, No. 4 (Winter 2003), pp. 84-85.

3 Cizre Sakallioğlu, The Anatomy of the Turkish Military's Autonomy // Comparative Politics, Vol. 29, No. 2, 1997, pp. 157-158.

4 Jed Snyder, Turkey's Role in the Greater Middle East, JFQ Forum (Autumn 1995), www.dtic.mil/doctrine/jef/jfq_pubs/1609.pdf.

5 Michael Robert Hickok, Hegemon Rising: The Gap Between Turkish Strategy and Military Modernization // Parameters, Vol. 30, No. 2, Summer 2000, pp. 105-106.

6 Kemal Kirişci, Turkey's Foreign Policy in Turbulent Times, Institute for Security Studies (European Union), September 2006, http://www.iss.europa.eu/chailot/cha92.pdf.

7 Альманах «Турция 2005»:

http://www.byegm.gov.tr/YAYINLARIMIZ/kitaplar/turkey2005/index.htm.

8 А.А.Гурьев, Региональный аспект национальной безопасности Турции, http://turkey-info.ru/observers/national_security.html. 27.12.2005.

9 Նույն տեղում:

10 Реджеп Тайип Эрдоган, Широкий взгляд на Большой Ближний Восток // «Россия в глобальной политике», № 4, июль-август 2004.

11 «Սկսելով Միջին և Մերձավոր Արևելքի արաբական աշխարհի ուժային վերակառուցումը, պատերազմներն Աֆղանստանում և Իրաքում, ԱՄՆ-ը մեծ քերեց կայունության ու բարեկեցության կենսական շահագործությունը Արևելյան Միջերկրածովյան տարածքում: Այս կապակցությամբ Թուրքիայի աշխարհաքաղաքական դերը կրկին առանցքային դարձավ: Միացյալ Աստիճանների ծգտումը նմարավորին արագ կերպով հավասարության նշան դնել Եվրամիության ու ՆԱՏՕ-ի կազմերի միջև /ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության միջոցով/, ԱՄՆ-ին հնարավորություն կտա Եվրոպայից պահանջել կիսել Վաշինգտոնի հետ պատասխանատվությունը արաբական աշխարհում, Միասնվոր Արևելքում իրավիճակի զարգացման համար, լրջագույն դեղատարրություն ստանձնել Կովկասում ու Կենտրոնական Ասիայում» (Александр Рытов, Разделенный остров Афродиты. Кипр после интеграции в ЕС: новая еврореальность и старые проблемы // Вестник Европы, 2005, № 13-14, http://magazines.russ.ru/vestnik/2005/13/ry12.html).

12 Ժամդարմերիայն իր պարտականությունները կատարում է զավթային ու շրջաօսային կենտրոնների մուսիցիպալիտետների սահմաններից դուրս, որոնք գտնվում են ուստիկանության պատասխանատվության գոտում, ինչպես նաև այն զավթային կենտրոններում, ուր չկան ուստիկանական ստորաբաժանումներ: Ժամդարմերիայի պատասխանատվության գոտում բնակվում են Թուրքիայի բնակչության 35 տոկոսը, որը կազմում է 24 միլիոն քաղաքացի: Ամառային ամիսներից այդ քանակն ավելանում է մինչև 48 միլիոն /85 տոկոսը/: Ժամդարմերիայի ներքին անվտանգության ստորաբաժանումները, որոնք հիմնական նպատակը հասարակական կարգի ու անվտանգության ապահովումն է, ունեն Թուրքիայի վարչատարածքային բաժանմանը համապատասխան կառուցվածք: Ժամդարմերիայի զվարճող հրամանատարությունը ներքին անվտանգության ստորաբաժանումների կառավարումն իրականացնում է իրեն ենթակա տարածքային հրամանատարությունների օգնությամբ: Կախված անվտանգության ու հասարակական կարգի վիճակից, տեղանքի օբյեկտից ու ձմապայտիային պայմաններից, ժամդարմերիայի տարածքային հրամանատարություններին ենթակա են զավթային հրա-

մանատարությունների տարբեր ջանակներ: Թուրքիայի բոլոր շրջաններում կան ժամդարմերիայի նահանգային հրամանատարություններ: Դրանց կազմի մեջ մտնում են զավթական հրամանատարությունները՝ կախված զավթների քանակից, ինչպես նաև ըստ անհրաժեշտության ստեղծված տարբեր օբյեկտների պաշտպանության, բանտերի պաշտպանության, հատուկ նշանակության ու «Կոնանդո» ստորաբաժանումներ: Այն իրավիճակներում, երբ Թուրքիայի վարչատարածքային բաժանմանը համապատասխան տեղակայված ներքին անվտանգության ժամդարմերիայի ստորաբաժանումների ուժերն ու միջոցներն անբավարար են, ապա նաև իրավիճակներում օգտագործելու համար ստեղծված են ժամդարմերիայի հատուկ նշանակության ու «Կոնանդո» ստորաբաժանումները» (Альманах «Турция 2005»:

http://www.byegm.gov.tr/YAYINLARIMIZ/kitaplar/turkey2005/index.htm.).

13 Ներկայիս իրավիճակը Մերձավոր Արևելքում և Թուրքիայի ազգային անվտանգության նոր հայեցակարգը վկայում են, որ Անկարան գրագետ և ձկուն ձուկ է պատասխանում տարածաշրջանում ու աշխարհում տեղի ունեցող փոփոխություններին, որոնք բարձրացնում են մի շարք փաստացիները/երկրորդությունները՝ նրա հետ վստահելի երկխոսության զարգացման համար: Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Իսրայելի, արաբական ու եվրոպական մի շարք երկրների մայրաքաղաքներում, ինչպես նաև Իրանում հասկանում են, որ մերձավորարևելյան քաղաքականության երկար շրջայում թուրքական օղակը կատարում է կարևոր դերերից մեկը: Դա այն օղակն է, որը «բաշելիս» կարելի է «դուրս հանել» սեփական քաղաքականության հիմնական ուղղությունները տարածաշրջանում: Ամբողջ հարցը կայանում է նրանում, թե այդ գործընթացի մասնակիցներին ի՞նչ ծավալով և ի՞նչ աստիճանի կիսգործի պահպանել ու ավելացնել սեփական շահերը» (А.А.Гурьев, Региональный аспект национальной безопасности Турции, http://turkey-info.ru/observers/national_security.html, 27.12. 2005).

14 С.М.Задковский, Роль военного фактора во внутренней и внешней политике Турции // Армия и власть на Ближнем Востоке: от авторитаризма к демократии (сборник статей), М., 2002, с. 360-364.

Վերջին դրույթն՝ ներուցների գոտում բնակապահական արեւելի պոտենցիալ վտանգի, առումով կարելի է նշել սևծովյան ներուցների անխափան գործունեության մեջ առավել շահագրգիռ երկրների՝ Ռուսաստանի ու Թուրքիայի միջև այս հարցում առկա շարունակող լարվածության մասին: 2005 թ.-ի ապրիլի վաղերի Ռուսաստանի տրանսպորտի նախարարությունում տեղի ունեցավ այդ հաստատության կոլեգիայի նիստ, որի ժամանակ ելույթ ունեցավ դրա ղեկավար Իգոր Լիկոտե: Նախարարը նշեց, որ օտասակն կառավարությունում աճում է անհանգստությունը Ռուսաստանի իրավիճակի շուրջ, որը կապված է թուրքական նշանակության գործողությունների հետ, որոնք ուղղված են ներուցներում նավագնացության սահմանափակմանը: Նախարարի կարծիքով դա պայմանավորված է նրանով, որ սևծովյան նավահանգիստներով է արտահանվում օտասակն նավի 30 տոկոսը: Ներուցներով նավի տեղափոխման իմնասխմանից պահանջում է համալիր ու հասնակարգային մոտեցում, որի ուղղություններից մեկը հանդիսանում է սևծովյան ներուցները շրջանցող այլընտրանքային ուղիների մշակումը: Սևծովյան ներուցներով նավագնացության ինտենսիվացման, նավերի չափսերի ու նավի և նավթամթերքների տեղափոխման անի հեռանկարով պայմանավորված, Թուրքիան 1994 թ.-ին, իսկ հետագայում նաև 1998 թ.-ին միակողմանի ձևով գործածության մեջ մտցրեց ներուցներով նավագնացության կարգը, որը նախատեսում էր խոշոր նավթակիր նավերի նավագնացության էական սահմանափակումներ: 2002 թ.-ի հոկտեմբերին Թուրքիայում ընդունվեցին նոր ցուցանիշներ ներուցներում նավագնացության նոր կարգի վերաբերյալ: Ըստ թուրքական իշխանությունների քաջատրությունների, այդ գուտ ներջին օգտագործման փաստաթղթի պահանջները ընդամենը ճշտում ու մանրամասնում են արդեն իսկ առկա կանոնների

կարգը և ուղղված չեն դրանց խտասցանը: Սակայն, ծուսական նավատերերից ստացված տեղեկությունների համաձայն, այդ ցուցումների գործածումը հանգեցրել է ներուցներում զգալի հերթերի գոյացմանը. ժամանակի ու ֆինանսների էական կորստի: Այսպես, ըստ Ռուսաստանի տրանսպորտի նախարարության տվյալների, ներուցով անցման համար յուրաքանչյուր նավի լրացուցիչ ժախտնը միջին հաճվել կազմում են 80 հազ. դոլար: Տվյալ ցուցումներով մտցված սահմանափակումներից առավել էականը հանդիսանում է «միանձնյա» անցման կիրառման սկզբունքը, հատկապես վտանգավոր բեռեր տեղափոխող նավերի դեպքում: Լճան նավերի անցման դեպքում ներուցներով հանդիպակաժ շարժումն արգելված է: Բուժօրո ներուցի պարագայում 200 մետրից ավելի երկարությամբ նավերի նավարկությունը հնարավոր է միայն ցեղանկ ժամերին: Այդ ամենը հանգեցրել է նրան, որ ներուցների մուտքի մոտ կոտակվում և սահմանափակ ջրային տարածքում մանրնրեք են իարակաճացնում տասնյակ նավեր՝ հաճախ վտանգավոր բեռով: Լույսինակ պարզ եղանակի պայմաններում Բուժօրի մուտքի մոտ հերթում սպասում են մինչև 40 նավեր: Բացի նյութական կորուստը, դա բարենպաստ պայմաններ է ստեղծում ահաբեկչական գործողությունների համար, որոնք հղի են ծանր հետևանքներով... Վերջին տարիներին համաշխարհային հանրությունը էլ ավելի մեծ ուշադրություն է դարձնում ծովային միջավայրի պահպանմանը: Այդ մասին են մասնավորապես վկայում Եվրոմիության կողմից ընդունված փաստաթղթերը՝ կապված «Պրետսիֆ» նավի կործանման հետ: Պետություններն իրենց տնտեսական գոտիներում և ներուցներում դիմում են նավագնացության ազատության որոշակի սահմանափակումների: Այս առումով, սևծովյան ներուցներում նավագնացության կանոնակիրման, ծովային միջավայրի պահպանության ու ներուցների հարակից քաղաքների բնակչության շահերի պաշտպանությանն ուղղված Թուրքիայի ջանքերը ընկալվում են Ծովային Միջավայրի կազմակերպության նշված միտումներին ու խնդիրներին համապատասխան: Ռուսական կողմի փաստարկներն ու պահանջները 1936 թ.-ի Սոնտրեի Կոնվենցիայի դրույթների անվերապահ պահպանման օգտին, որոնք նախատեսում են ներուցներում առևտրային նավերի ազատ, առանց սահմանափակումների, օր ու գիշեր նավարկությունը, բացի սանիտարական հսկողությունը, վերջին ժամանակներս քաղաքար պակցություն չեն ստանում ոչ վերոհիշյալ ծովային տեղությունների, ոչ էլ սևծովյան երկրների կողմից՝ (A.A. Гурьев, О судоходстве в черноморских проливах, www.iimes.ru., 29 апреля 2005 г.).

15 Альманах «Турция 2005»: <http://www.byegm.gov.tr/YAYINLARIMIZ/kitaplar/turkey2005/index.htm>.

16 Թուրքիայի Վիսայի Ետարի պետ 3. Բյուրյուքանըը պաշտոնական այցով մեկնեց Հունաստան /2006 թ.-ի նոյեմբերի 1-4/: Հունաստանի պաշտպանական գերատեսչության ղեկավարի հետ հանդիպման ժամանակ կողմնորոշված կարծիքներ փոխանակեցին փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ և քննարկեցին փոխադարձ վստահությունն ու համաձայնությունը բարձրացնող ուղղությունները: Մասնավորապես, շրջափակեց Բալկանյան թերակղզու երկրների պաշտպանական գերատեսչությունների ղեկավարների մակարդակով Կոմիտեի սեստոման հարցը, որը պետք է պարբերաբար միատեղ գումարի տարածաշրջանային անվտանգության պահպանման միջոցների առաջխաղացման ու ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցերի ջնմարկման համար: Տվյալ Կոմիտեի առաջին նիստը մասնատեսվում է անցկացնել 2007 թ.-ի սկզբին Սալոնիկում: <http://www.tsk.mil.tr/eng/release/2006/pr05.htm>.

17 Альманах «Турция 2005»: <http://www.byegm.gov.tr/YAYINLARIMIZ/kitaplar/turkey2005/index.htm>.

18 «Տվյալ փնտրել կտրուկ տարբերվում է 90-ական թ.-ների սկզբից, երբ Ռուսաստանը Թուրքիան դիտարկում էր առաջին հերթին որպես ԱՄՆ-ի մտերմ դաշնակ

քի և իր ժազմավարական այնպանի հետխորհրդային Եվրասիայում: 1990-ական թ.-ների Թուրքիան և Ռուսաստանը նախադարձ դիրքեր գրավեցին մի շարք կարևորագույն հարցերի շուրջ, ինչպիսիք էին Բոսնիան, Կոսովոն և Չեչենյան, ինչը բացատրվում է Թուրքիայի սերտ պատմական կապերով տարածաշրջանի մահմեդական ժողովուրդների հետ և իր տարածքում խոշոր քաղկասյան ու կովկասյան համայնքների ներկայությամբ: ՆԱՏՕ-ում Թուրքիայի դիրքորոշումը և Արևելյան Եվրոպայից դուրս դեպի հսկային խորհրդային հանրապետությունները դաշինքի ընդդեմնակ պատմալիցը խորացրեցին Ռուսաստանի զրգավածությունը: Բոլոր այդ գործոնները հանգեցրին երկկողմանի հարաբերություններում սրության ի հայտ գալուն: Ռուսաստանը նախապատվությունը տալիս էր ԱՄՆ-ի, Եվրոպայի և ՄԱԿ-ի երկրների հետ հարաբերությունների, այն դեպքում, երբ Թուրքիան մտահոգված էր ԱՄՆ-ի հետ ժազմավարական գործընկերությամբ, Հունաստանի ու Կիպրոսի հետ հարաբերությունների անկայունությամբ, և ջանքեր էր գործադրում ԵՄ կազմի մեջ մտնելու համար: 1990-ական թ.-ների զրեք ամբողջ ընթացքում Ռուսաստանը և Թուրքիան քաղաքական անտարբերություն էին ցուցաբերում միմյանց նկատմամբ, սակայն առևտրային հարաբերությունները նրանց միջև ակտիվորեն զարգանում էին: Ինչպե՞ս բացատրել իրավիճակի փոփոխությունն այսօր: Մեծծեցման առավել քաջահայտ գործոնները էներգետիկ հարաբերություններն են և առևտրային ու զբոսաշրջիկային հոսքերի անը և երկու երկրների միջև: Եթե խոսենք այնտարածաշրջանավարական չափումով, ապա մեծծեցման հիմնական մտովի ամենամիակամակամոթյան հանդիսանում է Արևմտային նկատմամբ իրաքապայության ընդհանուր զգացումը: Սկսած 2003 թ.-ից ԱՄՆ-ի և Եվրոպայի նկատմամբ պատրանքի կորուստը երկու երկրների կողմից և Կովկասի ընդհանուր սահմանային գոտում ամերիկյան ու եվրապական միջամտությունից խուսափելու անող ցանկությունը, ինչպես նաև հավազդեցությունը ԱՄՆ-ի մեծավարակեցյան քաղաքականությանը բացատրում են Ռուսաստանի ու Թուրքիայի դիրքորոշումների ընդհանրությունը:

Ինչ վերաբերում է անվտանգության ոլորտին, երկու երկրների միջև առկա փնտրակեի հարցեր ստացան իրենց լուծումը, ինչը ճանաչարի հարցեք հետա մեծծեցման համար: Ռուսաստան-ՆԱՏՕ խորհրդի ստեղծումը թուլացրեց ՆԱՏՕ-ի ընդլայնմամբ պայմանավորված հարվածը Ռուսաստանի վրա, իսկ 2003 թ.-ի մարտին Թուրքիայի հրաժարումը իր տարածքը որպես դրադաշտ տրամադրելով ԱՄՆ-ի զինված ուժերին Իրաքի հյուսիսային ճակատում պատերազմի համար ցույց տվեցին, որ Թուրքիան դադարել է լինել ԱՄՆ-ի հավատարիմը տարածաշրջանում: Ռուսաստանը և Թուրքիան չշինան եզերել գտան նաև Միջին Արևելքում՝ հաճախ ԱՄՆ-ի տարածաշրջանային քաղաքականությանը քաջահայտ անադրանմար: Աշխարհագրական դիրքի և Իրաքում ու Իրանում էներգետիկ և առևտրային զգալի շահերի բերումով, Ռուսաստանը և Թուրքիան բոլոր ջանքերը գործադրեցին այդ երկու երկրների հետ տնտեսական հարաբերությունների պաշտպանման համար՝ չնայած ԱՄՆ-ի կողմից տարվող ճնշմանը: Չնայած տարբեր պատմաոնեքով, սակայն երկու պետությունները հանդես եկան Իրաքում ամերիկյան գործողությունների դեմ և հանդես են գալիս Իրանի վրա ԱՄՆ-ի հավանական հարձակման դեմ՝ (Филона Хилл, Омер Таспинар, Россия и Турция на Кавказе: сблжение ради сохранения статус кво?, Institut Francaise des Relations Internationales - IFRI (Французский Институт Международных Отношений), январь 2006: http://www.ifri.org/files/Russie/hilltaspinar_russe.pdf).

19 A.A. Гурьев, Ситуация в Турции: август 2006 г., www.iimes.ru.
 20 2008 թ.-ին ԱՄՆ-ի Վիսայի Ասամբլայի 63-րդ նստաշրջանի ընթացքում նախատեսված ընտրությունների ժամանակ Թուրքիան հանդիսանում է ԱՄՆ-ի Անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամի տեղի հավանորոշ 2009-2010 թթ.-ի ժամանակաշրջան՝ Արևմտաեվրոպական և այլ պետությունների հսկի կող

միջ: Թուրքիան ՄԱԿ-ի Անվտանգության և Կարգի կոմիտեի ոչ մշտական անդամ է հանդիսացել 1951-1952 թթ.-ին, 1954-1955 թթ.-ին և 1961 թ.-ին:

“Քաղաքացիական հանրապետության հանրության մեջ Թուրքիան իրականացնում է թափանցիկ արտաքին քաղաքականություն, որը հաշտեցնում է Արևմուտքը Արևելքի հետ, և Հյուսիսը Հարավի հետ: Լինի դա Բալկաններում և Միջերկրածովյան Արևելքում, Մերձավոր Արևելքում, Կովկասում, Կենտրոնական Ասիայում, Թուրքիայի թափանցիկում և թափանցիկ արտաքին քաղաքականությունը և անվտանգության քաղաքականությունը կշարունակվի ՄԱԿ-ի զորքալ ընդին համայնակ: Տվյալ մտքերից էլ ենթյով Թուրքիայի կառավարությունը Անվտանգության կոմիտեի կազմում իր թեկնածությունն առաջարկեց 2009-2010 թթ-ի ժամանակահատվածում: Մասնակցելով կազմաթիվ միջազգային կազմակերպություններում, որոնք տարբեր տարածքներ են մշակութային են ներկայացնում, և փորձ մեջ բերելով այդ մասնակցությունից, Թուրքիան շահեկան դիրք է զբաղվում միջազգային խաղաղության և անվտանգության և քաղաքականությունների միջև միասնության պահպանման շուրջ ՄԱԿ-ի հետ համագործակցության համար” (Turkey’s Priorities for the 60th Session of the United Nations General Assembly: <http://www.mfa.gov.tr/MFA/ForeignPolicy/InternationalOrganisations/UN/priorities.htm> , - официальный сайт МИД Турции).

21 Հատկաշահական է, որ Թուրքիայի վարչապետը ԱՄՆ-ի նիստի հաջորդ օրը՝ հոկտեմբերի 25-ին, աշխատանքային այցով Քուվեյտ, Յեմեն և Մեծ Բրիտանիա մեկնելիս ներ լրագրողական շրջանակում շոշափեց “կարմիր գրքի” գաղտնիության բեման: Պատմականորեն լրագրողների հարցերին կառավարության ղեկավարը փաստեց “փաստաթղթում նշված են Թուրքիային հարևան և ոչ հարևան երկրները: Առկա են ներքին և արտաքին քաղաքականության հետ կապաված ռիսկներ, որոնք առնչվում են նաև այդ երկրներին: Այդ ռիսկները կարող են նրանց անհանգստացնել: Հետևաբար, ազգային շահերի տեսանկյունից այդ փաստաթուղթը պետք է գաղտնի լինի” (А.А. Гурьев, «Красная книга»: у Турции новая концепция национальной безопасности, www.centrasia.ru, 08.11.2005).

22 Ներկայումս հայտնի է Թուրքիայի անհաշտ դիրքորոշումը 1915-1922 թթ-ի հայոց Ցեղասպանության ճանաչման հարցում: Այստեղ միայն հարկ ենք համարում մեջբերել մի հետևյալ երկրի զինվորական ղեկավարության քաղաքականական ներկայացուցիչներից մեկի զեկույցից /Գլխավոր Շուսափ պետի տեղակալ, ցամաքային զորքերի հրամանատար/, որը որոշակի պատկերացումներ կտա թուրքական բարձրաստիճան զինվորականության կողմից ինքնին հայոց Ցեղասպանության ճանաչման կամ չճանաչման հարցի քննարկումների մասին՝ ներկայիս Թուրքական հանրապետության ազգային անվտանգության պաշտպանության դիրքերից, նրա տարածքային ամբողջականության պահպանության դիրքերից. “Մեր հարևան երկր” Հայաստանի մոտեցումները մեզ անհանգստացնում են: Թուրքիան ցանկանում է կարգավորել հարաբերությունները Հայաստանի հետ: Ասկայն, ... Հայաստանը չի ճանաչում Թուրքիայի տարածքային ամբողջականությունը և շարունակում է միջազգային ասպարեզում իրականացնել իր ջանքերը, այսպես կոչված, հայերի ցեղասպանության ճանաչման ուղղությամբ... Այդ անհիմն մեղադրանքների իրավական և քաղաքական բնույթի վերաբերյալ բանավեճերը փակված են դեռևս Լոզանի պայմանագրով և համաձայն այդ պայմանագրի Թուրքական հանրապետությունը չի ժառանգել որևէ պատասխանատվություն” (lucheon Remarks by General Ilker Basbug, Strategic Overview on Defence and Security Affairs, 6 June 2005: http://www.tsk.mil.tr/eng/konusma/gknurilncibsk_atckonusmasi_eng_06062005.htm), 23A.A. Гурьев, «Красная книга»: у Турции новая концепция национальной безопасности, <http://www.centrasia.ru>, 08.11.2005.

24 “Ազգային անվտանգությունը – սահմանադրական կարգի, ազգային գոյության և ամբողջականության, բոլոր քաղաքական, սոցիալական, մշակութային և տնտեսական շահերի պահպանումն ու պաշտպանությունն է միջազգային աբեմայում,

ինչպես նաև պետության դեմ ուղղված ցանկացած ներքին ու արտաքին սպառնալիքների”:

25 Commission Staff Working Document, Turkey 2006 Progress Report (COM(2006) 649 final, Brussels, 8 November 2006.

26 “Հետաքրքիր է, որ Թուրքիայում գոյություն ունի տնտեսական ու քաղաքական լոբբի, որը պնդում է, թե թուրքական տնտեսությունը էլ ավելի կշսի, եթե ազատ առևտրի մասին համաձայնագրի ստորագրի այնպիսի երկրների հետ, ինչպիսիք են Ուկրաինան, Իրանը, Չինաստանը և Հնդկաստանը, քան թե կառուցի իր արտաքին առևտրային քաղաքականությունը ԵՄ-ի հետ առկա մաքսային միության հիմքերի վրա”։ (Фiona Хилл, Омер Таспинар, Россия и Турция на Кавказе: сближение ради сохранения статус кво?, Institut Français des Relations Internationales - IFRI (Французский Институт Международных Отношений), январь 2006: http://www.ifri.org/files/Russie/hilltaspinar_russe.pdf). Այս դիրքորոշման շարադրանքը տես թուրք մեկնաբան Հասան Ունալի մոտ “Turkey would be better off outside the EU” Financial Times, 17 December 2004.

27 European Security and Defense Policy (ESDP).

28 Maria Dermendjeva, Turkey’s EU Membership From A Security Point Of View // Security Focus and Security Sector Watch, Vol. 4, No. 14, June 2006: http://www.gcmarsshall.bg/site/security/index_en.shtml.

29 Isik Biren (вице-адмирал в отставке), Turkey and EU Security, Zaman, 12 December 2004:

<http://www.zaman.com/?b=whyturkey&alt=allarticles&hn=14658>.

30 Պրա հետ մեկտեղ հարկ է նշել, որ թուրքական բարձրաստիճան զինվորականները ևս, որոնք կանգնած են պետության աշխարհիկ ու ժողովրդավարական արժեքների պաշտպանության դիրքերում, ժամանակ առ ժամանակ հաշվի են առնում քաղաքական կոնյուկտուրայի դինամիզը և հանդես են գալիս հայտարարություններով, որոնք չեն կարող դիտարկվել որպես միանշանակ “եվրամիզ”:

31 Kemal Kirisci, Turkey’s Foreign Policy in Turbulent Times, Institute for Security Studies (European Union), September 2006, <http://www.iss.europa.eu/chailot/cha92.pdf>.

32 www.tsk.mil.tr/genelkumay/bashalk/konusma/saremsaremaciskonusmasi_290503.htm.

33 Игорь Торбаков, Поддержка турецким обществом интеграции страны в ЕС ослабевает, <http://www.eurasianet.org/russian/departments/insight/articles/eav112105ru.shtml>, 7 января 2005.

34 The Economist, 12 May 2005.

35 Շեմոլինի քաղաքը գտնվում է Թուրքիայի հարավ-արևելյան Հաքքարի նահանգում, որտեղ խաչվում են Իրաքի, Իրանի ու Թուրքիայի սահմանները: Մի շարք պայթյուններ իրականացվեցին 2005 թ.-ի աշնանը: ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության ճանապարհին առաջընթացի վերաբերյալ եվրոպական Հանձնաժողովի միջանկյալ զեկույցում նշվում է, որ “Թուրքիայի խորհրդարանի 2006 թ.-ի մարտի զեկույցը “Շեմոլինի” գործի քննության մասին ցույց տվեց, որ գոյություն ունի զարդնի փաստաթուղթ “Անվտանգության, հասարակական կարգի ու աջակցության կառույցների մասին” /տվորաբար անվանում են “EMASYA”/: 1997 թ. Գլխավոր Շուսափ և ներքին գործերի նախարարությունը կողմից ստորագրված այդ արձանագրությունը թույլատրում է զինվորական գործողությունները, որոնք կարող են որոշակի պայմաններում իրականացվել ներքին անվտանգության նպատակներով՝ առանց քաղաքացիական իշխանությունների հարցման: Համաձայն տվյալ արձանագրության, զինված ուժերը կարող են տեղեկություններ հավաքել սպառնալիքների մասին պետության ներքին անվտանգությանը” (Commission Staff Working

Document, Turkey 2006 Progress Report (COM(2006) 649 final, Brussels, 8 November 2006).

36 William Chislett, Turkey's EU Accession Negotiations: On the Rocks (Working Paper 19/2006), 15 September 2006:

<http://www.realinstitutoelcano.org/documentos/255.asp>.

37 Olli Rehn, Our relations with Ankara are schizophrenic // *Hurriyet*, 2 November 2006, <http://www.hurriyet.com.tr/english/5356191.asp>.

Թուրքիայի ներկայիս ներքին քաղաքականության ոլորտում փորձագետները հատուկ ուշադրություն են դարձրել երկու ուղեծրերի վրա, որոնցով Թուրքիայի ժողովրդի աջակցությունը կարող է ընդհատվել Ա Սեզերը և երկրի ԶՈՒ-ի Գլխավոր Հտտաի պետ՝ բանակային զենեղալ Բ. Բյուրեքանը Թուրքական հանրապետության ստեղծման 83-րդ տարեիցի նախարակին, որը երկիրը նշում էր հոկտեմբերի 29-ին: Պետության ու բանակի երկու բարձրաստիճան ղեկավարները ուշադրություն են սեռեցնում Հանրապետության համար կրոնական հետադիմական էքստրեմիզմի առկա վտանգի վրա, որը հիմնված է լաիցիզմի վրա: Ընդ որում, երկրի ղեկավարը մասնավորապես հատուկ շեշտեց, որ պետք է հստակ տարանջատում կատարել հավատացյալ մարդկանց և նրանց միջև, ովքեր փորձում են կրոնը օգտագործել իրենց նպատակների համար:

Այդ հիմնախնդրի շուրջ երկուսն ծավալված սուր բանավեճի հետ կապված Թուրքիայի առաջատար զանգվածային լրատվամիջոցները իրապարակեցին մի գեկույցի տվյալներ, որը նախապատրաստվել էր վարչապետի աշխատակազմին կից կրոնի հարցերով Գլխավոր վարչությունում: Ղրանջ վկայում են այն, որ իշխանության ղեկին Արդարություն ու զարգացում կրթականության գտնվելու տարիների ընթացքում՝ 2002 թ.-ի նոյեմբերից մինչև այժմ, Թուրքիայում լրացուցիչ կարգով քայլվել են Ղուրանի ուսումնասիրման 1000 դասընթացներ: Ընդհանուր առմամբ երկրում պաշտոնապես գործում են նման 7886 դասընթացներ, որոնց ամեն տարի հաճախում է 1 մլն. մարդ: Ձեկույցում ընդգծվում է, որ Թուրքիայի հարավ-արևելքում նման դասընթացների կազմակերպման խնդրանքով դիմումների 90 տոկոսը անվտանգության տեսանկյունից ցի բավարարվում կրոնի հարցերով Գլխավոր վարչության կողմից՝ (A.A. Гурьев, Ситуация в Турции: октябрь 2006 года, www.imes.ru).

38 William Chislett, Turkey's EU Accession Negotiations: On the Rocks (Working Paper 19/2006), 15 September 2006:

<http://www.realinstitutoelcano.org/documentos/255.asp>.

39 Գոյություն ունեն մաս տվյալ երևույթի այլ տերմինաբանական տարբերակներ՝ "Սերասիդոզում", "Սերաբարդույթ":

40 Pinar Bilgin, Turkey's Changing Security Discourse: the Challenge of Globalisation, *European Journal of Political Research*, Vol. 44, No. 1, January 2005, p. 184.

41 Mustafa Akyol, Forum: Unveiling Turkish conspiracies // *The Washington Times*, 27 March 2005,

<http://www.washingtontimes.com/commentary/20050326-103550-2968r.htm>.

ԹՈՒՐԹԻԱՅԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՅՏԵՍԱԿԱՐԳ ՈՒ ՈՒՂՄԱԿԱՐՈՒԹՅՈՒՆ. ՀԱՅՏԵՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

Լևոն Հովսեփյան

Սառը պատերազմի ավարտից հետո Թուրքիայի քաղաքական եւ հատկապես զինվորական շրջանակները կանգնեցին արտաքին քաղաքականության, անվտանգության եւ պաշտպանական քաղաքականության ոլորտում իրենց ռազմավարության վերանայման եւ հստակեցման անհրաժեշտության առջեւ: Սառը պատերազմի ավարտով սկսված աշխարհաքաղաքական փոփոխություններն ու զարգացումները ստիպեցին Թուրքիային առավել զգուշորեն եւ հետետղականորեն հստակեցնել միջազգային ու տարածաշրջանային, անվտանգության ու պաշտպանական քաղաքականության գերակայություններն ու նոր մարտահրավերները:

Հյուսիսատլանտյան դաշինքին Թուրքիայի անդամակցումը և Սառը պատերազմի սկիզբը այդ երկրի անվտանգության ու պաշտպանական ռազմավարության առումով նոր փուլ բացեցին: ՆԱՏՕ-ին անդամակցումով Թուրքիան դարձավ այդ ուժային համակարգի ռազմաքաղաքական շահերի կրողն ու հետետղորդ: Սառըպատերազմյան ժամանակաշրջանում թուրքական ռազմական ուժերը հստակ դերակատարություն ունեին ՆԱՏՕ-ի հարավային գծի պաշտպանության գործում, կանխելով խորհրդային Միության մուտքը միջերկրածովյան շրջաններ եւ Մերձավոր Արևելք՝ այդպիսով իրականացնելով դաշինքի «զսպման ռազմավարությունը»: Թուրքիայի տարածքը բացառիկ հարթակ էր սովետական միջմայրցամաքային բախտիկ հրթիռների (ICBM) արձակումները, փորձարկումները հետեւելու եւ էլեկտրոնային հեռախոսություն ապահովելու համար: Սառըպատերազմյան շրջանի Թուրքիայի անվտանգության ու պաշտպանական ռազմավարությունն ամբողջովին տեղավորվում էր Հյուսիսատլանտյան դաշինքի եւ հատկապես ԱՄՆ-ի ռազմաքաղաքական հայեցակարգի ու ռազմավարության համատեքստում:

ՆԱՏՕ-ի ռազմական պլանավորման հիմքում դրված էր այն մտեցումը, թե ԽՍՀՄ եւ Կարշավայի պայմանագրի կազմակերպության ռազմական ուժերի հարձակման դեպքում Թուրքիան որ տարածքները պետք է պաշտպանի եւ ինչպես ետ մղի թշնամու հարվածային ուժը մինչև դաշինքի (այն է՝ ՆԱՏՕ-ի) զորքերի ռազմական գործողությունների մեջ մտնելը:

Թուրքիայի ռազմական պլանավորողները ենթադրում էին հավանական թշնամու հարվածային ուժն ընդունել հենց երկրի սահմանին, այնուհետեւ համակարգված նահանջով ետ քաշվել դեպի երկրի խորքերը: Այդ ժամանակաշրջանի Թուրքիայի պաշտպանական հայեցակարգը կրում էր զուտ պաշտպանողական բնույթ՝ հենվելով սովորական սպառազինությանը ռազմական գործողություններ իրականացնելու մարտավարության վրա: Որազմական գործողությունների դեպքում միջուկային զենքի օգտագործումը գտնվում էր միայն ՆԱՏՕ-ԱՄՆ լայն իրավասության ներքո:

Փաստորեն, սառըպատերազմյան շրջանի հետ կապված խոսել Թուրք-

Թուրքիա

Անվտանգության և պաշտպանության հիմնական հիմնքեր

քիայի առանձին պաշտպանական հայեցակարգի մասին ճիշտ չի լինի, քանի որ այն կրում էր ՆԱՏՕ-ԱՄՆ ռազմական հայեցակարգի ողջ ազդեցությունն ու տրամաբանությունը:

1990-ական թթ. սկզբին Սառը պատերազմի ավարտը հանգեցրեց աշխարհաքաղաքական նոր վերածելունների, ինչի արդյունքում փոխվեց տարբեր երկրների անվտանգության ու պաշտպանական հայեցակարգերի ողջ ռազմավարությունը: Հետաառապատերազմյան նոր ժամանակաշրջանի սկիզբը որոշ անորոշությունների առաջ կանգնեցրեց պաշտոնական Անկարային իր արտաքին և հատկապես անվտանգության քաղաքականության հետագա ուղեգծի սահմանման և նոր ռազմավարության որդեգրման առումով: Թուրքիայի համար օրակարգային խնդիր դարձավ նախ և առաջ տարածաշրջանային, անվտանգության և պաշտպանական քաղաքականության հրամայականների վերաիմաստավորումը: Թուրքիայի քաղաքական և զինվորական շրջանակների մոտ մտավախություն կար, որ Սառը պատերազմի ավարտով Թուրքիան կկորցնի իր ռազմավարական նշանակությունը Արևմուտքի և ԱՄՆ-ի հասար և կհայտնվի տարածաշրջանային մեկուսացման վտանգի առջե: Թուրքիայում անհնազառություն այն էր, որ իր անմիջական հարեանների կողմից կարող է ընդունվել կասկածանալի քայլեր և նույնիսկ թշնամաբար: Սառը պատերազմի ավարտը Թուրքիային ստիպեց ներգրավվել իր անմիջական տարածաշրջանային գործընթացներում, քանի որ այն Թուրքիայի համար և նոր հեռավորներ էր բացում, և նոր մարտահրավերներ: Չընդունվելով Մերձավոր Արևելքի արաբական, իսլամական երկրների կողմից և մերժվելով Եվրոպայից՝ Թուրքիան սկսեց որոնել արտաքին քաղաքականության ավելի հաստատական ռազմավարություն:

Արևմուտքի, առաջին հերթին ԱՄՆ-ի նկատմամբ իր ռազմավարական նշանակությունը, թուրք-ամերիկյան ռազմավարական հարաբերությունները հիմնավորելու և մերձավորարևելյան տարածաշրջանում իր ակտիվ ներգրավվածությունն ապահովելու համար կարելու գործն էր Օսցի առաջին պատերազմում ԱՄՆ-ին Թուրքիայի կողմից ցուցաբերած ռազմական աջակցությունը: Հատկանշական է, որ Թուրքիան քայլեր էր ձեռնարկում դուրս գալ ավանդական քենայական «ձեռնասցաման-չեզոքության և հավաքական անվտանգության» ուղեգծից և ավելի դինամիկ դերակատարություն ստանձնել մերձավորարևելյան տարածաշրջանում: Իսկ Թուրքիայի համար տարածաշրջանից բխող մարտահրավերների ու ռիսկերի գնահատականներն ու ըմբռումները, այդ երկրի Ջինվալ ուժերի (ՋՈՒ) ՉԻՄԱԿ-ի Շտաբի համար որպես երկրի տարածքային ամբողջականության պահպանման, անվտանգության առաջադրանք էր դիտվում երկրի բազմաձևակա պաշտպանությունը:

1990-ական թթ. կեսերին Թուրքիայի պաշտպանական հայեցակարգը հիմնվում էր տարածաշրջանային մարտահրավերներին դիմակայելու միջոցով երկրի տարածքային ամբողջականությունն ապահովելու տրամաբանության վրա: Սառը պատերազմի ավարտից հետո դադարելով լինել երկու ուժային համակարգերի միջե, «ռազմավարական պատմեշ» Թուրքիան փոխաբեց իր սահմանի անմիջական հարեանությամբ «ստացավ լարվածության օջախներ և թեժ կետեր, որոնք դիտարկվում էին այդ երկրի անվտանգության ուղեգծում մարտահրավերներ»:

պատասխանատուները Ռուսաստանը, Հունաստանը, Իրաքը, Իրանը և Սիրիան դիտում էին որպես Թուրքիայի հիմնական սպառնալիքներ՝ էլենելով այդ երկրների կողմից Թուրքիայի նկատմամբ տարածքային հավակնություններից և թուրքական սահմանին զինված ուժեր կենտրոնացնելու նրանց ռազմական կարողություններից:

Նախկինում Թուրքիայի արագորոմանաբարության քարտուղարի տեղակալ և Վաշինգտոնում այդ երկրի դեսպան Շյուբրյու էլեքրալն, ամենայն հավանականությամբ, արտահայտելով զինվորականության մոտեցումները, Թուրքիայի հարևաններից Հունաստանը և Սիրիան դատում էր որպես սպառնալիք ներկայացնող երկրներ, որոնք տարածքային հավակնություններ ունեն Թուրքիայից: Ըստ նրա սառըպատերազմյան շրջանի համեմատ Թուրքիան 90-ականների սկզբին գտնվում է բազմակողմ ռազմական գործողությունների մեջ ներքաշվելու սպառնալիքի առջև և պետք է պատրաստ լինի անհրաժեշտության դեպքում իր հարևաններին որևէ մեկի հետ ռազմական գործողությունների մեջ մտնել: Հուսալի և ամուր պաշտպանությունն ստիպում էր Թուրքիային ընդունել էզեյան և հարավային ճակատներում միաժամանակ համարժեք, ուժեղ պաշտպանական և արագորոմ վերականգնվողվելու ունակ ռազմական ուժերի վրա հիմնված ռազմավարություն: 1990-ական թթ. Թուրքիայի ռազմական հայեցակարգը կառուցված էր այսպես կոչված «երկու և կես» պատերազմի ռազմավարության հիման վրա: Այդ հայեցակարգի համաձայն, Թուրքիան պետք է պատրաստ լինի լայնածավալ ռազմական գործողություններ մղել միաժամանակ երկու ճակատներում՝ էզեյան և հարավային, ինչպես նաև երկրի ներսում¹⁰: Դատելով այդ ժամանակաշրջանի իրավիճակից՝ ամենայն հավանականությամբ նկատի էին առնվում հունական և սիրիական ճակատները: Երկրի ներսում ռազմական գործողությունների իրականացումն ուղղված էր թուրք զինյալների դեմ՝ Բողակաբ բանվորական կուսակցության (Partiya Karkaren Kurdistan) գորհայիններին: Պաշտպանական հայեցակարգի համաձայն՝ թուրքական զինված ուժերը պետք է լինեին լավ մարզված, կազմակերպված և սպառազինված և իրենց առջև ունենային երկու կարևոր խնդիր: Նախ՝ Թուրքիայի ցամաքային գործերն ու օդուժը պետք է ի վիճակի լինեին կանգնեցնել հրետանային հզոր հարձակումները երկու ուղղություններից, այնուհետև անցնեին ամուր պաշտպանության: Իսկ գործառնավորումներն ու ժանդարմական ուժերն, արագ արձագանքման ուժերի վրա հիմնվելով, իրականացնեին բջճագործողություններ երկրի ներսում: Դազմական նման պլանավորման համատեքստում նավատորմը պետք է Բոսֆորի նեղուցում հսկողություն և նախնական պաշտպանություն իրականացնե: Ենթադրվում էր, որ պատերազմը վարվելու է բուն Թուրքիայի տարածքում և զինված ուժերից պահանջվում էր մարտավարական շարժունակություն, մինչդեռ բջճամու երկրի խորքերը հասնելու մարտավարությունը վճռական չէր համարվում¹¹:

1990-ական թթ. վերջին Թուրքիայի ՋՈՒ-ի ցամաքային զորքերի հրամանատար Հուսեյն Քիլիճըռլուն (որպես ՋՈՒ-ի ԳԿ-ի 23-րդ պետ պաշտոնավարել է 1998 թ. օգոստոսի մինչև 2002 թ. օգոստոս) սահմանեց Թուրքիայի նկատմամբ մարտահրավերները՝ տարածաշրջանային և էթնիկ հակամարտությունները, զանգվածային ոչնչացման գեների (ՋՈՂ) տարածումը, կրոնական ծայրահեղականությունը, թմրամյուրեթի շրջանառությունը և միջազ-

գային ահաբեկչությունը: Խուսափելով տալ կոնկրետ երկրների անուններ որպես Թուրքիային ուղղված պատճառաբանությունների աղբյուր բարձրաստիճան գինվորական ընդգծել է, որ երկրի բանակը պետք է ի վիճակի լինի «գործել արտաքին և ներքին սպառնալիքների դեմ, որոնք վտանգում են Թուրքիայի տարածքային ամբողջականությունը ու հանրապետական կարգը»: Թուրքական պաշտպանական հայեցակարգում 1990-ական թթ. վերջին սկզբունքային նոր ռազմավարություն հայտնվեց, ըստ որի երկրի գինված ուժերը պատրաստ են լինելու կանխել Թուրքիայի դեմ հարձակումներն ու սպառնալիքները մինչև թուրքական տարածքին հասնելը: Անվարայի պաշտպանական հայեցակարգի «առաջնային հարձակման» (forward engagement) ռազմավարությունը ենթադրում էր ռազմական գործողությունների սկսման դեպքում դրանք կանխել երկրի սահմաններից դուրս՝ գինված զործողություններն իրականացնել թշնամու տարածքում¹²:

Թուրքիայի ներկայիս պաշտպանական հայեցակարգի հիմքում դրված է այն սկզբունքը, որ Թուրքիան պետք է պատրաստ լինի վարել «մեկ ու կես պատերազմի ռազմավարություն»՝ նախկինում դրված «երկու և կես պատերազմի ռազմավարական» մոտեցման փոխարեն: Այն ենթադրում է միաժամանակ պատերազմել մի որևէ պետության հետ և պայքարել իր երկրում ահաբեկչության դեմ՝ նկատի ունենալով թուրք գինյալների: Գնահատելով իրենց շրջապատող պետությունները, նրանցից բխող վտանգները՝ Թուրքիայում եկել են այն եզրակացության, որ երկու ճակատով Թուրքիային պատերազմ չի սպառնում: Ի տարբերություն նախկին մոտեցումների, Թուրքիան իրական սպառնալիք չի տեսնում ոչ Բալկաններից, ոչ էլ Կովկասից: Ներկայումս թուրք-հունական հարաբերությունները բավականին բարելավված են, և Թուրքիայի համար հավանական վտանգ են համարվում Հյուսիսային Իրաքում ներկա զարգացումները¹³:

Երկրենե աշխարհակարգի ավարտից հետո Բալկաններում, Կովկասում և Մերձավոր Արևելքում ուժային վիճակում մեծացրեց գլոբալ հավակնություններն ու այդ տարածաշրջանների աշխարհաքաղաքական խոցելիությունը: Թուրքիան, որը գտնվում է Կովկասի, Մերձավոր Արևելքի և Բալկանների նման անկայուն տարածաշրջանների կենտրոնում, պաշտպանական քաղաքականության հիմքում ունում է ազգային անվտանգության, տարածքային ամբողջականության և երկրի կենսական շահերի պահպանությունը¹⁴: Ներկայիս Թուրքիայի պաշտոնական պաշտպանական քաղաքականության հռչակած հիմնական նպատակներն են՝ դառնալ տարածաշրջանային տերություն և տարածաշրջանային հավասարակշռության գործոն, տարածաշրջանում խաղաղության և կայունության ապահովման գործում ներդրում ունեցող երկիր, մշակել իր սեփական ռազմավարությունն ու անվտանգությունը, տարբեր պետությունների հետ համագործակցությանն ու մերձեցմանն ուղղված նախաձեռնությունների առաջընթացում և իրականացում: Ազգային անվտանգության քաղաքականության նպատակներն են՝ տարածաշրջանում լարվածության թուլացմանը նպաստելը, հավանարտությունների խաղաղ կարգավորմանն աջակցելը, ժողովրդավարության ու օրենքի նկատմամբ հարգանքի ընդլայնումը, անվտանգության և կայուն իրավիճակի հաստատումը¹⁵:

Գնահատելով ստեղծված նոր աշխարհաքաղաքական պայմանները, միջազգային ու տարածաշրջանային անվտանգության նոր հրահայտական

ները, անվտանգության համաչափ և անհամաչափ, բազմաչափ և բազմակողմ սպառնալիքները՝ Թուրքիայի գինվորականությունը հստակեցրեց Թուրքիայի անվտանգությանն առնչվող այդ ռիսկերը: 2005 թ. Թուրքիայի ՋՈՒ-ի ԳԿ-ի այլև նախկին պետ Հլիմի Օզթյոքը (2002-2006թթ.) թուրքական գինվորական մի ամսագրին տված իր հարցազրույցում անդրադարձել էր երկրի համար սպառնալիք ներկայացնող մարտահրավերներին: Դրանք են՝ անջատողական և հետադիմական գործողությունները, միջազգային ահաբեկչությունը, թմրամիջոցի շրջանառությունը և անօրինական միգրացիան որպես անհամաչափ և հարևան երկրներում հնարավոր անկայունությունները, Հյուսիսային Իրաքում անցանկալի իրադարձությունները¹⁶, Կովկասում անկայունությունը, ջրի հիմնախնդիրը Մերձավոր Արևելքում և ՋՈՋ-ի տարածումը¹⁷ որպես համաչափ սպառնալիքներ¹⁸:

Պաշտպանական քաղաքականության հռչակած վերջ հիշատակած նպատակներին հասնելու համար Թուրքիայի ռազմական ռազմավարությունը հիմնվում է չորս հիմնական սկզբունքների վրա.

1. **Հավաստում**. այնպիսի գինված ուժերի պահպանում, որն ի վիճակի է ետ մղել Թուրքիայի անկայունության ու անորոշության շրջակայքից բխող սպառնալիքները.

2. **Հավանարտությունների կաշտավորմանը ռազմական մասնակցություն**, օժանդակություն և հակամարտություններին միջամտություն. ներգրավածություն Թուրքիայի անվտանգությանն առնչվող հավանարտություններին, անհամաձայնությունների խաղաղ լուծում դիվանագիտական, տնտեսական և այլ միջոցներով, թուրքական գինված ուժերի պատրաստություն լարվածությունների թուլացման, դրանք գինված բախման վերածվելու կանխում և ազդեցորի սահմանափակում.

3. **Առաջնային պաշտպանություն**. հավանական հարձակման շուտափույթ կանխում և արտաքին սպառնալիքի չեզոքացում.

4. **Հավաստական անվտանգություն**. ակտիվ մասնակցություն և ներգրավվածություն միջազգային և տարածաշրջանային դաշինքներում, կազմակերպություններում՝ ՆԱՏՕ-ի և Արևմտավրոպական միությանն առաջնորդությամբ: Այս դրույթը ենթադրում է նաև Թուրքիայի արտաքին քաղաքականությանն ու ազգային անվտանգության սկզբունքներին համապատասխան իր ռազմական ուժերի միջոցով օժանդակություն ցուցաբերել միջազգային կազմակերպություններին, դաշինքներին և առանձին պետություններին, ռազմական ոլորտին առնչվող համագործակցության, տեխնիկական և կրթական օժանդակության ապահովման շարունակականությունը¹⁹:

Ընդհանուր առմամբ, Թուրքիայի պաշտպանական հայեցակարգն ու ռազմավարությունը ենթադրում են այնպիսի անվտանգության համակարգի առկայություն, որն ի վիճակի լինի առավել արդյունավետ արձագանքել և հակադրված տալ ժամանակակից մարտահրավերներին և արտաքին վտանգներին: Թուրքական ՋՈՒ-ի բարեփոխումների շրջանակում հետևողականորեն իրականացվում է ՋՈՒ-ի մարտական հզորության օժանդակում ռազմավարություն, բանակի շարժունակության, կրակային և հարվածային ուժի բարձրացման հիման վրա: Բանակի ստորաբաժանումների բարեփոխումների արդյունքում նախատեսվում է կրճատել ցամաքային ուժերի թվաքանակը՝ միաժամանակ բարձրացնելով նրա մարտունակությունը և արագ արձագանքման հնարավորությունը:

Թուրքիան, որպես սեփական պաշտպանական ռազմավարության բաղադրիչ, լուրջ ուշադրություն է դարձնում տարբեր հակամարտություններում խաղաղարար գործողությունների իրականացմանն ու ներգրավվածությունը: Թուրքական ՋՌԻ-ն խաղաղարար ուժերի շրջանակում սկսած 1950 թ-ից մասնակցել են հետևյալ գործողություններին՝ 1950 թ.-ին կորեական պատերազմին, 1993 թ.-ին Սոմալիում, Բոսնիա-Հերցեգովինայում, 1999 թ.-ին Ալբանիայում, 2001 թ.-ին Մակեդոնիայում, 2006 թ.-ին Լիբանոնում: Ներկայումս Թուրքիան ակտիվ մասնակցություն է ցուցաբերում Բոսնիա և Հերցեգովինայում (ALTHEA), Կոսովոյում (KFOR), Աֆղանստանում (ISAF), Սուդանի Դարֆուրի շրջանում իրականացվող խաղաղարար գործողություններում, ինչպես նաև ռազմական դիտորդական առաքելություններում Հեվոնում, Կրատանում, Սուդանում և Պաղեստինում²⁰:

Թուրքիայի արտաքին քաղաքականությունն ու անվտանգության ու պաշտպանական ռազմավարության հայեցակարգերը կրում են ինչպես միջազգային ու տարածաշրջանային զարգացումների, այնպես էլ աշխարհաքաղաքական գնահատականների ու ըմբռնումների տրամաբանությունը: Թուրքիայի քաղաքականությունն անվտանգության ու պաշտպանության ոլորտում զգալիորեն կրում է այդ երկրի աշխարհագրական դիրքի ու աշխարհաքաղաքական միջավայրի մեծ ազդեցությունը: Ուստի 1990-ական թթ.-ի կեսերից Թուրքիայի գիտական, քաղաքական քննարկումներում սկսել է լայն տարածում գտնել եվրասիական հայեցակարգը: Այն ընդունվում է որպես Թուրքիայի արտաքին քաղաքականությունը, աշխարհաքաղաքական ռազմավարությունն ու ազգային անվտանգությունն արտացոլող հիմնական հայեցակարգ²¹: Ուսումնասիրելով թուրք գիմկորականության աշխարհաքաղաքական հայացքներն ու մոտեցումները՝ կարելի է ասել, որ «Եվրասիական հայեցակարգը» կարևոր տեղ է զբաղեցնում նաև Թուրքիայի գիմկորականության շրջանում: Այդ երկրի պաշտպանության նախարարության կայքէջում Թուրքիայի աշխարհաքաղաքական, աշխարհառազմավարական դերին վերաբերող բաժնում նշված է, որ «Երեք մայրցամաքները միմյանց միացնող և շատ կարևոր գետաբերանային նշանակություն ունեցող Թուրքիան միաժամանակ նաև Եվրոպական, ասիական, բալկանյան, մերձավորարևելյան, միջերկրածովյան և սևծովյան, ավելի կարճ ասած, Եվրասիական երկիր է: Թուրքիան այդ Եվրասիական գոտում գտնվելով կենտրոնական դիրքում՝ քաղաքական, անվտանգության և տնտեսական առումով մեծ դերակատարություն է նշանակություն է ձեռք բերել²²: Բարձրաստիճան գիմկորականները կիսում էին քաղաքական գործիչների այն մոտեցումը, որ Թուրքիան եվրասիական երկիր է և պետք է իրականացնի համարժեք քաղաքականություն: 1999 թ.-ին ելույթ ունենալով Վաշինգտոնում՝ Թուրքիայի պաշտպանության նախարար Հիմեթ Սամի Թուրքը նշել է. «Քրջապատված լինելով երեք ծովերով և միմյանց կապելով երկու մայրցամաքները, Թուրքիան եզակի և աշխարհագրորեն ռազմավարական դիրք է գրավում: Թուրքիան ոչ միայն իր հայացքն ուղղել է դեպի Արևմուտք, այլ նաև ավանդական կապել է պահպանում մահմեդական երկրների հետ: Նրա արժանատիքը գտնւմ են Կենտրոնական Ասիա, Մերձավոր Արևելք, Ամառոտիա և Եվրոպա: Թուրքիան եվրասիական երկիր է»²³:

Թուրքական բանակի թռչակառու գեներալ Սադի Էրգուլինչն իր հոդվածում անդրադարձել է Թուրքիայի աշխարհագրական-ռազմավարական

դիրքին, ընդգծելով, որ աշխարհագրական դիրքն ու ռազմական ներուժը կազմում են երկրի ռազմական ռազմավարական արժեքը: Թուրքիայի աշխարհագրական դիրքը դիտվում է որպես «նախանձելի ռազմավարական-ռազմական արժանիք»: Այն հնարավորություն է տալիս Թուրքիային գործել որպես վճռական փոխադրամիջոցների կամուրջ կամ խոչընդոտ և ապահովել բնական ռեսուրսների հասանելու ամենահեշտ և կարճ ճանապարհ: Թուրքիան կարող է ազդեցություն գործել իր անմիջական տարաբաշխումների նկատմամբ: Նման աշխարհագրական դիրքը կարող է առավելություն դիտվել, սակայն անհրաժեշտություն դեպքում պահանջում է ուժեղ պաշտպանունակություն (ռազմական ուժեր)²⁴: Մեկ այլ գեներալ Սուլա Կիլանը, Թուրքիան անվանում էր որպես «սահմանների երկիր»²⁵:

Թուրքիայի ՋՌԻ-ի Գլխավոր շտաբի Գլխավոր պլանավորման և քաղաքականության դեպարտամենտի ղեկավար, գեներալ-լեյտենանտ Հիլմի Աքքը Ջուրլուի քննողմամբ, Թուրքիան իր գետաբերանային դիրքով լինելով եզակի երկիր, գտնվելով երեք մայրցամաքների «խաչմերկում», հանդիսանալով Էներգետիկ տարանցիկ տարածք, միաժամանակ երաշխավորված չլինելով այդ տարածաշրջաններից եկող տարբեր մարտահրավերների ու սպառնալիքների նկատմամբ, հարկադրված է ունենալ 21-րդ դարի ռազմական ու քաղաքական պահանջներին համապատասխանող գիմկորված ուժեր²⁶:

Թուրքիայի պաշտպանական հայեցակարգի հիմքում դրված է նաև այդ երկրի բանակի կարիքների ապահովման համար սեփական ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման ու ՋՌԻ-ի լայնածավալ արդիականացման ռազմավարությունը: Այդ երկրի ռազմական գերատեսչությունը ՋՌԻ-ի հզորացման և արդիականացման հիմքում էական է համարում երկրում ռազմական տեխնոլոգիաների և գիտատար ուղղությունների ներդրումների ու աջակցության վրա հիմնված բանակային ապահովման սեփական արդյունաբերական համալիրի գոյություն ու զարգացման անհրաժեշտությունը: Թուրքիայի ՋՌԻ-ի ԳԵ-ի նախնին պետ Օզքյոքը իր վերջին ելույթներից մեկում անդրադարձել էր արդյունաբերական դարաշրջանի համաչափ տեսությունների տարբերվող «համաչափ և անհամաչափ մի-հանություն» ելույթում պարունակող 21-րդ դարի պատերազմների «Գիտության դարաշրջանի պատերազմ» նոր հայեցակարգի առանցքային նշանակությունը: Թուրքիայի գիմկորական շրջանակների համար ռազմավարական խնդիր է դիտվում տարածաշրջանում առաջատար տեղություն դառնալն ու առաջին հերթին ռազմական առումով գերակայություն հասնելը: Օզքյոքն իր ելույթներից մեկում նշել էր, որ Թուրքիան վերանվելող քաղաքական աշխարհագրության կենտրոնում տեղ է գտնում որպես տարածաշրջանային ուժ, իսկ դրա առաջնային պայմաններից է հզոր և պատերազմի պատրաստ, ինչպես նաև տեխնոլոգիապես հարուստ և գիտության ազդեցությունը կրող ՋՌԻ-ի գոյությունը²⁷:

Ներկայիս Թուրքիայի պաշտպանական պաշտպանական քաղաքականության հռչակված տարածաշրջանում խաղաղության և կայունության ապահովման գործում ներդրում ունեցող երկիր հանդիսանալու, տարբեր պետությունների հետ համագործակցությունն ու մերձեցմանն ուղղված նախաձեռնությունների առաջադրման և իրականացման վերաբերյալ դրույթները իրականում չեն համապատասխանում Թուրքիայի վարած քա-

դաքական ուղեծին, ինչը վկայում է այդ երկրի ոչ կառուցողական ու նույնիսկ ագրեսիվ նկրտումների մասին: Մինչև այժմ հայ-թուրքական սահմանի փակ լինելու հանգամանքը և դրա նկատմամբ Թուրքիայի ոչ կառուցողական դիրքը, ինչպես նաև հարավկովկասյան տարածաշրջանում թուրքական պետության ակտիվ նախաձեռնությամբ ու գործուն օժանդակությամբ իր հարևան Հայաստանի մեկուսացման ուղղված ծրագրերի իրականացումը դրա վաթ վկայությունն են:

Հարավկովկասյան տարածաշրջանում պաշտոնական Անկարայի հետամտած քաղաքականության ագրեսիվ կողմնորոշված քաղաքականության հատկապես դարաքաղյան հակամարտության ընթացքում, երբ Թուրքիան, քն ոչ անմիջականորեն, ներգրավվեց հակամարտության մեջ Ադրբեջանին տրամադրելով զգալի ռազմական օժանդակություն, նպաստելով հակամարտության խորացմանն ու արագացմանը հոգուտ Ադրբեջանի ռազմական հաղթանակի²⁸:

Մինչև այժմ Թուրքիան շարունակում է տարածաշրջանային խաղաղության ու կայունության ամրապնդման դեմ ուղղված իր քաղաքական գիծը՝ ընդդեմ Հայաստանի ձեռնարկելով թուրք-ադրբեջանական ռազմաքաղաքական դաշինք տարբեր տիպի ռազմական օժանդակություն տրամադրելով Ադրբեջանին²⁹:

1. Չնայած դաշինք մտնելու մասին արձանագրությունը ստորագրվել է 1951 թ. հոկտեմբերի 17, Թուրքիան լիիրավ անդամ դարձավ 1952 թ. փետրվարի 18-ին ստորագրելով Հյուսիսատլանտյան պայմանագիրը: Դաշինքի ստեղծումից հետո Թուրքիան քայլեր ձեռնարկեց միանալու դրան, սակայն դաշինքի անդամներ հանդիսացող Դանիան, Նորվեգիան, Բելգիան և Աժ Բրիտանիան դեմ էին Թուրքիայի անդամակցությանը: Եվ միայն աջակցելով ԱՄՆ-ին կորեական պատերազմում Թուրքիան ստացավ այդ երկրի օժանդակությունը անդամակցության գործում: Տե՛ս A.C. Коси́ков, Военно-политический потенциал Турции, Институты Ближнего Востока, <http://www.iimes.ru>

2. Sadi Erguvenç, Turkey's Security Perceptions, Journal of International Affairs, June-August 1998, vol. 3, N 2, <http://www.mfa.gov.tr/perceptions>

3. Լինելով ՆԱՏՕ-ի անդամ և դաշինքի ռազմական բաղադրիչ, այնուամենայնիվ, Թուրքիան իր ռազմական համակարգի կայացման և հատկապես ռազմական օժանդակությունների, պատագիծության ձեռքբերման առու մով զգալի կախվածության մեջ էր Միացյալ Նահանգներից: Մինչև 1946-1987թթ. ԱՄՆ-ի կողմից թուրքական զինված ուժերին հատկացված փոխանցումները կազմում են բնդիմանուր առմամբ շուրջ 8.8 մլրդ դոլար: 1982թ. սկսած ԱՄՆ-ը իր «Ռազմական օժանդակության ծրագրի», ՏՆտեսական օժանդակության հիմնարկի և «Միջազգային ռազմական ուսուցման ծրագրի» միջոցով տարեկան Թուրքիային է հատկացրել 700-800 մլն դոլար: Բացի այդ ԱՄՆ-ը մինչև այժմ իրավունք ունի օգտագործել Թուրքիայի տարածքում գտնվող 6 ռազմական բազաներ (Ինջիրլիք, Ումուրթալիք, Ղիարթեքիլ և այլն), Տե՛ս <http://www.hist.net/kieser/mak/McGhee1990.html> - 6k

4. Michael Robert Hickok, Hegemon Rising: The Gap Between Turkish Strategy and Military Modernization, The Eurasian Politician - Issue 3 (February 2001, <http://www.cc.jyu.fi/~aphamala/pe/issue3/hickok.htm>

5. Henri J. Barkey, Turkey and The New Middle East, A Geopolitical Exploration, Reluctant Neighbour, Turkey's Role in the Middle East, United States Institute of Peace Press, 1996, pp. 30-31.

6. 1990 թ. Իրաքի ներխուժումը Թուրքիայի, Թուրքիայի նախագահ Թուրգուք Օզալին հնարավորություն տվեց ցույց տալ ԱՄՆ-ին, որ Թուրքիան դեռևս լուրջ գնաստրատեգիական դերակատարություն կարող է ունենալ ԱՄՆ-ի արտաքին օգնակցության մեջ և մասնակցեց Իրաքի դեմ ռազմական գործողությունների: Մինչ Օզալը առաջ էր տանում Թուրքիայի օգնական մասնակցության անհրաժեշտությունը, երկրի զինվորականները և դիվանագիտական շրջանակները ավելի հակված էին ասպայանել ավանդական չեզոքություն մերժավորաբանյան տարածաշրջանում: Հենց այդ հանգամանքով է բացատրվում 1990թ. Թուրքիայի Չինված ուժերի գլխավոր շտաբի պետ Նեջիի Թուրուքիայի պաշտոնակալության հանգամանքը: Հետևաբար, չմեծելով ջեմալիզմի հիմնական սկզբունքները, երկրի բարձրագույն զինվորականները դարձան թուրքական ակտիվ արտաքին քաղաքականության համազված հետևորդներ: Տե՛ս Dietrich Jung and Wolfgang Piccol, Turkey at the Crossroads, Ottoman Legacies and A Greater Middle East, London & New York, 2001, p. 142.

7. Michael Robert Hickok, նշվ. աշխ.:

8. Валеру́с Г. Волко́в, Военные доктрины, <http://www.strana-oz.ru>

9. Michael Robert Hickok, նշվ. աշխ.:

10. Sükrü Elekdağ, 2 q War Strategy, www.mfa.gov.tr/perceptions/

11. Michael Robert Hickok, նշվ. աշխ.:

12. Տե՛ս նույն տեղում:

13. Արմենպրես, 28.03.2006:

14. Տե՛ս Թուրքիայի զինված ուժերի պաշտոնակալը, http://www.tsk.mil.tr/eng/genel_konular/savunmapolitikasi.htm.

15. Almanak Türkiye 2006, <http://www.byegm.gov.tr/YAYINLARIMIZ/kitaplar/turkiye2006/turkey/244-245.htm>, s 244.

16. Բարձրաստիճան զինվորականը որպես սպանալիք ի նկատի ունի Իրաքի տարածքային ամրոցականության խախտումն ու քրդական պետության ստեղծման հնարավորությունը:

17. Դաշտոնավարման ժամկետը լրանալու կապակցությամբ 2006թ. օգոստոսին կազմակերպված արտոգոության ժամանակ Հ. Օզքոթն իր հրաժեշտի ելույթում մանրամասն կանգ առավ նաև միջուկային ազանալիքի վրա: Ըստ նրա՝ Թուրքիայի համար չափազանց կարևոր պայմանալիք են ներկայացնում այն երկրները, չորից ունեն կամ պատրաստվում են ունենալ միջուկային զենք և եթե հնարավոր չլինի այդ հարցը լուծել դիվանագիտական ճանապարհով, ապա Թուրքիան կխանդիվ լուրջ մի մարտահրավերի: Նրա խոսքերով՝ խնդրի չլուծման դեպքում Անկարան կկորցնի մերձավորարևելյան տարածաշրջանում իր ռազմավարական գերակայությունը: Գեներալը ոչ մի երկրի անուն չի տվել, սակայն պարզ է, որ խոսքը վերաբերել է Իրանին: Թուրք զինվորականությունը մեկ անգամ ևս նմեց, որ դեմ է Իրանի միջուկային ծրագրին և դա դիտարկվում է որպես պայանալիք Թուրքիայի անվտանգությանն ու ապագային: Օզքոթնի ելույթից հետևում է նաև, որ Թուրքիան կունայն կարող է միջուկային զենք ստեղծել տարածաշրջանային գերակայության կամ զոնե հավասարակշռության պահպանման անհրաժեշտությունից ընկելով:

Տե՛ս www.zhamanak.com, 30.08.2006:

18. Ordu değışime hazır, Milliyet, 03. 05.2005.

19. Տե՛ս Թուրքիայի Ազգային պաշտպանության նախարարության պաշտոնական կայք, <http://www.msb.gov.tr/Birimler/GnPPD/GnPPDBeyazKbol1Kis2.htm>

20. Almanak Türkiye 2006, <http://www.byegm.gov.tr/YAYINLARIMIZ/kitaplar/turkiye2006/turkey/246-247.htm>, s 246-247.

21. Թուրքիայում «Եվրասիա» հասկացության շուրջ քաղաքական մոտեցումների մասին ավելի մանրամասն տե՛ս B. Safirstyan, The Concept of Eurasia and Turkey, s Regional Strategies, <http://www.globalpolitician.com>

22. <http://www.msb.gov.tr/Birimler/GnPPD/GnPPDBeyazKBo11Kis2.htm>

23. Hikmet Sami Turk, Turkish Defence Policy, <http://www.washingtoninstitute.org>

(Դյուլենթ Էնկիթի գլխավորած կառավարությունում 1999թ. հունվարից մինչև նույն թվականի մայիսը զբաղեցրել է ազգային պաշտպանության նախարարի պաշտոնը, որից հետո դարձել արդարադատության նախարար)

24. Sadi Erguvenc, նշված աշխ.;

25. Պաշտոնաթղ զեներալ Ս. Իլիանն իր հոդվածում նշում է, որ «Թուրքիան կազմում է երեք մայրցամաքներից կազմված աշխարհի կղզու կենտրոնը և այն քանակ ու դեր է կատարում՝ հյուսիսը բացելով դեպի հարավ, հարավը՝ հյուսիս, արեւելքը՝ արևմուտք, արևմուտքը՝ արևելք: Այն Բալկանները, Կովկասը և Մերձավոր Արևելքը միացնող և բաժանողն է: Աշխարհագրական դիրքը տարածաշրջանում ամեն հնարավոր փուլիփուլության պայմաններում ավելի մեծ կարևորություն է ստանում: Sö u Suat İlhan, Geopolitical developments and the Turkish world, Eurasian Studies, TIKKA, Vol.2, #3, 1995, p.25.

26. Թուրքիայի ԶՈՒ ԳԳ գլխավոր պլանավորման և քաղաքականության ղեկավար-տաննտի ղեկավար, զեներալ Հիլմի Աքըն Ջուրուփի ելույթը Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության քարտուղարության հիմնադրման 20-ամյակին նվիրված կոնֆերանսում: Sö u Suat İlhan, Geopolitical developments and the Turkish world, Eurasian Studies, TIKKA, Vol.2, #3, 1995, p.25.

27. Özkök, Türkiye bögesele güc olacak, <http://www.haber7.com>.

28. Թուրքիայի պաշտպանական քաղաքականության հիմնում մեծ նշանակություն էր տրվում սահմանափակ, քայք ազդեցիկ ներդրվածություն ունենալ դրանք բարդան հակամարտությունում, ջանքի որ Ադրբեջանի ռազմական հաղթանակով էր պայմանավորված Անկարայի պանթյուրքական արտաքին քաղաքականության պլանների հետագա իրականացումը: Ադրբեջանին տրամադրված ռազմական օժանդակության մասին ավելի մանրամասն տե՛ս Գափ Էթոյառն, Турция u Карабахский конфликт, Ереван-2006.

29. 2007 թ. սկզբին պարզ դարձավ, որ առաջիկայում Ադրբեջանի պաշտպանության նախարարի օգնական է նշանակվելու Թուրքիայի ԶՈՒ մի զեներալ և ենթադրվում է, որ մինչև 2011 թ. այդ երկրում ծառայության կանցնեն ևս մի քանի թուրք զեներալներ՝ արդրբեջանական բանակում բարեփոխումներ իրականացնելու համար: Որոշ տեղեկությունների համաձայն՝ 2007 թ. կապվեանա ընդհանուր առմամբ թուրք սպաների քիվը արդրբեջանական ԶՈՒ-ում: Արմենյան, 07.01.2007:

ԹՈՒՐԿԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Միխայի Ադաջանյան
Լևոն Հովսեփյան

Եվրոպական Միության լիիրավ անդամակցությանն ուղղված Թուրքիայի բարեփոխումների ընթացիկ գործընթացի շրջանակներում առավել «գալայուն» են հանդիսանում ռազմական ու ազգային անվտանգության ոլորտի բարեփոխումները, որոնք նպատակ են հետապնդում սահմանափակել զինվորականության դերակատարությունը երկրի հասարակական-քաղաքական կյանքի տարբեր բնագավառներում և պետության ազգային անվտանգության ապահովման ոլորտի նկատմամբ հաստատվել ժողովրդավարական վերահսկողություն:

Թուրքիայի կառավարությունը վերջին շրջանում մի շարք քայլեր ձեռնարկեց՝ ուղղված սահմանադրական-իրավական բարեփոխումների իրականացմանը, որոնք վերաբերում են երկրի հասարակական-քաղաքական կյանքի տարբեր ոլորտներին: Տվյալ քայլերի շարքում առավել խնդրահարույց հարցերից մեկը հանդիսանում է պետության անվտանգության մարմինների նկատմամբ վերահսկողության սահմանումը, և ավելի ընդհանուր ենթատեքստում՝ 1960-ական թվականներից հաստատված քաղաքական իշխանության ու զինվորականության միջև ամուր կապերի բարեփոխման հարցը՝:

Թուրքիայի ազգային անվտանգության համակարգի բարեփոխմանն ուղղուում կարևոր ու էական առաջընթացները առաջին հերթին շրջափեցին պետության առավել ազդեցիկ ռազմա-քաղաքական մարմինը՝ Ազգային անվտանգության խորհուրդը /Milli Guvenlik Kurulu/:

Թուրքիայի պետական իշխանության ժամանակակից համակարգում Ազգային անվտանգության խորհուրդը /այսուհետև՝ ԱԱԽ/ իր էական տեղն ունի և իրենից ներկայացնում է ներպետական հասարակական-քաղաքական գործընթացների վրա թուրքական զինվորական հանրության պահպանված ազդեցության ցուցատրական օրինակներից մեկը:

Թուրքիայի ժամանակակից ԱԱԽ-ի նմանակը կարելի է համարել 1933 թ.-ի ապրիլին ձևավորված Թուրքիայի պաշտպանության բարձրագույն խորհուրդը, որի ֆունկցիոնալ պարտականությունների մեջ մտնում էին երկրի պաշտպանությանն առնչվող հարցերի քննարկումների կազմակերպումը: Նիստերն անց էին կացվում երկրի նախագահի կամ վարչապետի նախագահությամբ՝ գլխավոր շտաբի պետի ու Խորհրդի անդամ-նախարարների մասնակցությամբ²:

Նշված մարմինը իրենով փոխարինեց 1949 թ. ստեղծված Թուրքիայի Ազգային պաշտպանության բարձրագույն խորհուրդը, որի իրավասույունների մեջ մտնում էր ազգային պաշտպանության քաղաքականության ոլորտում և դրան հետ կապված այլ բնագավառներում որոշումների կազմակերպում ու դրանց իրականացումը³: Ազգային պաշտպանության բարձրագույն խորհրդի պարտականությունների մեջ էին մտնում ազգային պաշտպանության քաղաքականության մշակումը և տվյալ քաղաքականության դրույթների կատարման նկատմամբ վերահսկողությունը, համընդհանուր մոբիլիզացիայի նախագծի նախապատրաստումը և անհրաժեշտության դեպքում

դրա իրականացումը, երկրի Նախարարների խորհրդին ազգային պաշտպանության մասին հայացքների տրամադրումը⁴:

1960 թ. մայիսի 27-ի զինված հեղաշրջումը երկրի քաղաքական կյանքում բանակի ուղղակի միջամտության առաջին դրսևորումը եղավ: Այդ գործողությունը միաժամանակ հանգեցրեց քաղաքական համակարգի որոշակի էվոլյուցիայի և դրանում բանակի դերի մեծացմանը: Մասնավորապես, հեղաշրջման կազմակերպիչները նախատեսում էին գործադիր իշխանության մարմինների կառուցվածքում Ազգային անվտանգության խորհրդի ստեղծումը, որն աստիճանաբար գերակա դիրքեր ձեռք բերեց կառավարության նկատմամբ:

Համաձայն 1961 թ. Թուրքիայի Սահմանադրության 111 հոդվածի ԱՄՆ-ի անդամներ էին հանդիսանում երկրի նախագահը, վարչապետը, մի շարք նախարարներ, գորատեսակների և ժանդարմերիայի հրամանատարները: ԱՄՆ-ի նիստերում նախագահում էր երկրի նախագահը, իսկ նրա քաջակալության դեպքում՝ վարչապետը: Սահմանադրության նշված հոդվածում սսվում էր. «ԱՄՆ-ի Նախարարների խորհրդին առաջարկում է ազգային անվտանգության ու կոորդինացիայի հարցերով որոշումների ընդունման հիմնական անհրաժեշտ ուղղությունները», այսինքն Սահմանադրությունը, ԱՄՆ-ի ստեղծման մասին ինչպես նաև 1962 թ. դեկտեմբերի 19-ի թիվ 129 Օրենքը, այս մարմնին հասկացնում էին խորհրդակցական ու խորհրդվական դեր⁵: Այսպես, այն տարիների քաղաքական պրակտիկան այլ բանի մասին էր վկայում:

Չնայած ԱՄՆ-ի հայտարարված խորհրդակցական բնույթը, դրա առաջնությունները փաստորեն պարտադիր էին կառավարության համար, որն, ըստ էության, քաղաքական բնագավառի ոչ մի կարևոր որոշում չէր կայացնում առանց դրանց քննարկման ու հաստատման ԱՄՆ-ի նիստերում, որտեղ գերակշռող դերակատարությունը կատարում էր բանակի բարձրագույն ղեկավարությունը: Մոտ 10 տարի անց՝ 1970 թ.-ին ԱՄՆ-ի մասնակցությունը քաղաքական կուրսի մշակման և ներքին ու արտաքին քաղաքականության տարբեր կոնկրետ խնդիրների լուծման մեջ արդեն այն աստիճան սովորական էր, որ թուրքական «Milliyet» թերթը գրում էր. «Թուրքական Սահմանադրության 111 հոդվածով նախատեսված և օրինականացված է զինված ուժերի մասնակցությունը քաղաքական կյանքում, դրանց կարգավորող ու ուղղորդող դերը»⁶:

1980 թ. սեպտեմբերի 12-ի հեղաշրջման արդյունքում ուղղակիորեն երկրի քաղաքական իշխանության եկած զինվորական շրջանակները ԱՄՆ-ն վերակազմավորեցին իրենց անհրաժեշտ ուղղությամբ՝ խորհրդի կազմում մնացին միայն զինված ուժերի զորատեսակների և ժանդարմերիայի հրամանատարները: ԱՄՆ-ի նախագահ, Թուրքիայի Գլխավոր շտաբի պետ գեներալ Քենան Էվրեն /Kenan Evren/ միաժամանակ ստանձնեց պետության ղեկավարի իրավասությունները⁷:

ԱՄՆ-ն իր ձեռքբերում կենտրոնացրեց պետական իշխանության ու կառավարման ամբողջ սպեկտրը, ինչպես նաև ստացավ հիմնադիր իշխանության որոշակի մանակի տեսք՝ համաձայն ԱՄՆ-ի կողմից 1980 թ. հոկտեմբերի 27-ին հաստատված «Սահմանադրական կառուցվածքի մասին» թիվ 2324 Օրենքի, որը կոչված էր զինվորական վարչակարգի գործողությունների համար ապահովել իրավաբանական հիմքերը, ԱՄՆ-ն ինչպե-

վում էր երկրի բարձրագույն օրենսդիր մարմինը, իսկ նրա նախագահ գեներալ Ք. Էվրենը՝ պետության ղեկավարը: 1980 թ. սեպտեմբերի 20-ին ձևավորվեց կառավարություն, որը գլխավորեց ՌՅՌԻ-ի նախկին հրամանատար, պաշտոնաթող ծովակալ Բյուլենթ Ուլուտուն /Bulent Ulusu/: Այդ ժամանակավոր կառավարության կազմում ընդգրկվեցին հիմնականում տեխնոկրատները և նախկին բարձրաստիճան զինվորակները: Նախարարների կաբինետը գտնվում էր ԱՄՆ-ի լիարժեք հսկողության տակ և գործնականում օժտված չէր որևէ նախաձեռնությամբ, նրա բոլոր որոշումները և միջոցառումները ենթակա էին խորհրդի կողմից հաստատմանը:

ԱՄՆ-ն չեղյալ հայտարարեց 1961 թ. Սահմանադրությունը և մի շարք այլ օրենքներ, ցրեց բոլոր քաղաքական կուսակցությունները և արհմիությունները /քացառությամբ՝ «Թյուրք-Իշ» արհմիութենական կոնֆեդերացիայի/, զրեթե բոլոր հասարակական կազմակերպությունները և արգելեց քաղաքական գործունեությունը⁸:

ԱՄՆ-ի հիմնադիր իշխանությունը դրևորվեց նրանով, որ սեպտեմբերյան հեղաշրջումից անմիջապես հետո գեներալ Ք. Էվրենը հայտարարեց, որ 1961 թ. Սահմանադրությունը հանգեցրել է Թուրքիայում ժողովրդավաճառական համակարգի վերացմանը: Հայտարարվել էր լայնածավալ օրենսդրական բարեփոխումների անցկացման մասին, որոնք ներառելու էին նոր սահմանադրության նախագծի⁹, կուսակցությունների ու ընտրությունների մասին օրենքների մշակումը, ինչպես նաև քաղաքական, տնտեսական, վարչական, սոցիալական ու այլ հարցերը կարգավորող այլ օրենքների վերանայումը: 1981 թ. հոկտեմբերին օրինագծերի մշակման համար՝ 1981 հունիսի 29-ի ԱՄՆ-ի մասին թիվ 2485 Օրենքի հիման վրա, ստեղծվեց Հին-մադիր ժողով: Դրա վերին պալատը դարձավ ԱՄՆ-ն, իսկ ստորինը՝ խորհրդատվական մեջլիսը, որի 165 անդամները չէին ընտրվում, այլ առաջարկվել էին իշխանությունների կողմից այն թեկնածուների կազմից, որոնք ներկայացվել էին ԱՄՆ-ին տեղական վարչկազմի կողմից: Խորհրդատվական մեջլիսի հանձնաժողովները մշակում էին օրենքների նախագծեր, որոնք հետագայում քննարկվում էին պատգամավորների նիստերում և փոխանցվում էին ԱՄՆ-ին: Վերջինս իրավունք ուներ այդ օրինագծերի մեջ ցանկացած փոփոխություն մտցնել՝ առանց խորհրդատվական մեջլիսի լրացուցիչ հավանության:

Թուրքական Հանրապետության նոր Սահմանադրության նախագիծը հաստատվեց ԱՄՆ-ի կողմից և որպես թիվ 2709 Օրենք իրապարակվեց 1982 թ. հոկտեմբերի 18-ին¹⁰: ԱՄՆ-ի նախագահ գեներալ Ք. Էվրենը դարձավ երկրի նախագահ, քանի որ սահմանադրության ժամանակավոր դրույթների առաջին հոդվածի համաձայն, նոր սահմանադրությունը ուժի մեջ մտնելու հետ մեկտեղ՝ ԱՄՆ-ի նախագահը և պետության ղեկավարը հանրաքվեի պահին ձեռք է բերում հանրապետության նախագահի կարգավիճակ¹¹:

1982 թ. նոր սահմանադրության նորմերից համապատասխան փոխվեց ԱՄՆ-ի իրավական կարգավիճակը: Եթե նախկինում ազգային անվտանգության ոլորտում պետական քաղաքականության մշակման, որոշման ու կյանքի կոչման հարցերի հետ կապված ԱՄՆ-ի որոշումները սահմանադրության համաձայն կրում էին խորհրդակցական բնույթ, ապա այժմ դրանք դառնում էին կատարման համար պարտադիր: Առաձեռնահատուկ կարելի է շեշտել 1982 թ. Թուրքիայի գործող Սահմանադրության 118 հոդվածի այն

դրույթը, որի համաձայն "այն միջոցառումների մասին որոշումները, որոնք ԱՄՆ-ն հարկ կհամարի ընդունել պետության գոյության ու անվտանգության, երկրի ամբողջականության ու անբաժանելիության, խաղաղության ու հասարակության անվտանգության պահպանման հարցերում, կառավարության կողմից ընդունվում են ուշադրության առաջնահերթ կարգով":


Թուրքիայի Սահմանադրության 118 հոդվածը ամրագրում էր ԱՄՆ-ի ժամանակակից կարգավիճակի հիմքերը երկրի պետական իշխանության համակարգում: Համաձայն այդ հիմքերի, ԱՄՆ-ն գլխավորվում է երկրի նախագահի կողմից և իր կազմում ընդգրկում է հետևյալ պաշտոնատար անձանց՝ վարչապետին, գլխավոր շտաբի պետին, ազգային պաշտպանության նախարարին, ներքին գործերի նախարարին, արտաքին գործերի նախարարին, ցամաքային զորքերի, նավատորմի ու օդային ուժերի իրամատարներին, ժամդարմերիայի գլխավոր հրամանատարին: Ըստ 1982 թ. սահմանադրության 118 հոդվածի, ԱՄՆ-ի հիմնական գործառույթն է՝ «պետության ազգային անվտանգության քաղաքականության ձևակերպման, ստեղծման ու իրացման առումով որոշումների կայացման ու անհրաժեշտ կորոդինացման ապահովման հարցերով միջոցառումների ներկայացումը կառավարությանը»:

Նշված սահմանադրական հոդվածը նախատեսել է ԱՄՆ-ի վարչական մարմնի գործունեության հետ կապված խնդիրների իրավական կարգավորումը: «Ազգային անվտանգության խորհրդի գլխավոր քարտուղարության կազմակերպումն ու պարտականությունները կարգավորվում են օրենքով»:

ԱՄՆ-ի կառուցվածքի, ֆունկցիաների ու գործունեության իրավասությունների օրենսդրական ձևակերպումը իրականացվել է 1983 թ. նոյեմբերի 9-ի Թուրքական հանրապետության թիվ 2945 Օրենքով: Հետագայում այդ օրենքի որոշ դրույթները ձևափոխվեցին, ինչը առավելապես տեղ գտավ 2001 թ.-ից հետո, երբ Թուրքիայում արդիական դարձավ սեփական օրենսդրության ներդաշնակության խնդիրը Եվրոպական Միության ժողովրդավարական սկզբունքների ու նորմերի հետ:

Թիվ 2945 օրենքի 3-րդ հոդվածի համաձայն /2001 թ. հունվարի 15-ին թիվ 4789 Օրենքով լրամշակված/ ԱՄՆ-ի կազմի մեջ՝ բացի սահմանադրության 118 հոդվածում հիշատակված պաշտոնատար անձինք, մտնում են նաև փոխվարչապետները և արտարդատության նախարարը: Կախված օրակարգի առանձնահատկություններից՝ խորհրդի նիստերին կարող են հրավիրվել նաև այլ նախարարներ ու անձինք, ում կարծիքը անհրաժեշտ է լսել: ԱՄՆ-ի գլխավոր քարտուղարը նույնպես մասնակցում է խորհրդի նիստերին, սակայն առանց ձայնի իրավունքի:

Թուրքիայի ԱՄՆ-ի կազմը սխեմատիկորեն կարելի է ներկայացնել հետևյալ կերպ /ձայնի իրավունքով պաշտոնատար անձինք/.



Թիվ 2945 Օրենքի 4-րդ հոդվածը /նոր խմբագրությամբ՝ 2003 թ. օգոստոսի 7-ի թիվ 4963 Օրենք/ ԱՄՆ-ի իրավասությունները սահմանել է քավական լակոնիկ ձևով¹¹. «Ազգային անվտանգության սկզբունքների ու պետության ազգային անվտանգության քաղաքականության շրջանակներում Ազգային անվտանգության խորհուրդը խորհրդատվական եզրակացություններ է տալիս այն հարցերի շուրջ, որոնք առնչվում են պետության ազգային անվտանգության քաղաքականության ձևակերպմանը, ստեղծմանն ու իրականացմանը, ինչպես նաև պետության ազգային անվտանգության քաղաքականության իրացման ոլորտում ապահովում է անհրաժեշտ միջոցառումները կորոդինացիան»:

ԱՄՆ-ն իր խորհրդատվական եզրակացություններն ու տեսակետները ներկայացնում է կառավարությանը և իրականացնում է օրենսդրությամբ իրեն վերապահված այլ իրավասություններ:

ԱՄՆ-ի գործունեության գործառույթային խնդիրները թիվ 2945 Օրենքով ձևակերպված են հետևյալ դրույթներով: ԱՄՆ-ն միստեր է իրավիրում 2 ամիսը մեկ անգամ, սակայն, միևնույն ժամանակ թիվ 2945 Օրենքը նախատեսում է, որ անհրաժեշտության դեպքում խորհրդի նիստ կարող է հրավիրվել վարչապետի առաջարկությամբ կամ հանրապետության նախագահի ուղղակի պահանջով: Երկրի նախագահի բացակայության պարագայում խորհրդի նիստերը նախագահում է վարչապետը: Հերթական նիստի օրակարգը որոշում է նախագահը՝ «ի գիտություն ընդունելով», ինչպես սակավ է թիվ 2945 Օրենքի 6 հոդվածում, «վարչապետի և գլխավոր շտաբի պետի առաջարկությունները»: ԱՄՆ-ի անդամ հանդիսացող և այլ նախարարների կողմից արված առաջարկությունները, խորհրդի նիստի օրակարգում տարբեր հրատապ խնդիրների քննարկումը ներգրավելու մասին, պահանջում է սովալ հարցի շուրջ վարչապետի նախնական կարծիքի ներկայացում: ԱՄՆ-ի օրակարգը ներառվելու համար նախարարների կողմից նախաձեռնված հարցերը ԱՄՆ-ի գլխավոր քարտուղարի միջոցով ուղարկվում են նախագահին:

Որոշումները կայացվում են ծայրերի պարզ մեծամասնության սկզբունքով, ընդ որում «կողմ» և «դեմ» ձայների հավասարության պարագայում, նախագահողի ձայնն ընդգրկող կողմը դիտվում է որպես մեծամասնություն: ԱՄՆ-ի քննարկումները հասարակությանը ներկայացվում են ԱՄՆ-ի գլխավոր քարտուղարության պաշտոնատար անձանց կողմից: Նիստերի որոշումների և արձանագրությունների բնօրինակները պահվում են ԱՄՆ-ի գլխավոր քարտուղարությունում: Թիվ 2945 Օրենքի 10-րդ հոդվածը նախատեսում է, որ խորհրդի որոշումները «կարող են բացատրվել կամ հրապարակվել ԱՄՆ-ի թույլտվությամբ»¹²: ԱՄՆ-ի որոշումները կառավարության օրակարգը ներառվում ու քննարկվում են առաջնահերթ կարգով:

ԱՄՆ-ի մշտական բնույթի անմիջականորեն գործող վարչական մարմինը ԱՄՆ-ի գլխավոր քարտուղարությունն է, որի իրավական կարգավիճակը կարգավորվում է թիվ 2945 Օրենքով /Օրենքի 3-րդ մասը/: ԱՄՆ-ի գլխավոր քարտուղարությունը գործում է երկրի վարչապետի ղեկավարությամբ: Մինչև 2003 թ.-ի բարեփոխումների "յոթերորդ փաթեթի" ընդունումը, որի մասին կխտակի ստորև, գլխավոր քարտուղարությունը՝ ԱՄՆ-ի գլխավոր քարտուղարի պաշտոնով, ավանդաբար գլխավորում էր երկրի ռազմա-օդային ուժերի ներկայացուցիչը՝ Թուրքիայի ՌՕՌ-ի գլխավոր շտաբի պետի պաշ-

տրոնում ծառայության անցնելուց հետո: Թիվ 2945 Օրենքի նոր խմբագրության մեջ սահմանվում է վարչապետի ներկայացմամբ ու երկրի նախագահի հաստատմամբ ԱԱՄ-ի գլխավոր քարտուղարի նշանակման մասին¹³:

Քարտուղարության աշխատակազմն ընդգրկում է քարտուղարին, նրա սովորակալներին ու խորհրդականներին, գլխավոր քարտուղարության բյուրոն, իրավական խորհրդատվությունը, ծառայողական գլխավոր վարչությունները /դեպարտամենտները/:


Ծառայողական գլխավոր վարչությունները ստեղծվում են ԱԱՄ-ի գլխավոր քարտուղարի առաջարկությամբ և վարչապետի հավանությամբ: Անհրաժեշտության դեպքում, ծառայողական գլխավոր վարչությունների շրջանակներից դուրս, կարող են ստեղծվել /նույն կանոնակարգով՝ ԱԱՄ-ի գլխավոր քարտուղարի առաջարկությամբ ու վարչապետի հավանությամբ/ ծառայողական ժամանակավոր բաժիններ, հատուկ հետազոտական հանձնաժողովներ, հատուկ ուսումնասիրման, նախագծման ու իրացման բաժիններ: Սահմանվում են ստեղծված ժամանակավոր բաժինների իրավասության շրջանակներն ու գործունեության ժամկետը, որոնց աշխատանքային գործունեության ժամկետների երկարաձգումը հնարավոր է միայն նույն կարգով, ինչ կարգով կազմակերպվում է նրանց ձևավորումը:

ԱԱՄ-ի գլխավոր քարտուղարության ստորաբաժանումների գործունեությանն առնչվող հարցերը՝ ստեղծումը, իրավասությունները, պարտականությունները և այլն, սահմանվում են ԱԱՄ-ի գլխավոր քարտուղարության Ռեզիմենտով, որը հավանության է արժանացել կառավարության 2003 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 6688 որոշմամբ:

Թիվ 2945 Օրենքում /2003 թ. օգոստոսի 7-ի թիվ 4963 օրենքի կրճատման ու ուղղման համաձայն/ ԱԱՄ-ի գլխավոր քարտուղարության իրավասություններն ու պարտականությունները հանգեցված են երկու դրույթների. 1. ԱԱՄ-ի ծառայությունների աշխատանքի ղեկավարում և 2. պարտականությունների կատարում՝ համաձայն ԱԱՄ-ի ցուցումների ու համապատասխան օրենքների դրույթների: ԱԱՄ-ի գլխավոր քարտուղարությունը իր պարտականությունները կատարում է թիվ 2946 Օրենքին և հարակից օրենքներին համաձայն, և երբ անհրաժեշտ է, այլ նախարարությունների, հաստատությունների ու ինստիտուտների հետ կոորդինացված ձևով: ԱԱՄ-ի գլխավոր քարտուղարության գործունեության ներքին կանոնակարգը, այլ նախարարությունների, հաստատությունների ու ինստիտուտների հետ հարաբերությունները և աշխատանքային գործառնությունները համաձայնեցվում են համապատասխան ռեզիմենտներով:

Թուրքիայի ԱԱՄ-ի գլխավոր քարտուղարի դերը՝ որպես ազգային անվտանգության ապահովման ինստիտուցիոնալ-համակարգային կորդինացման ոլորտում վարչական-պաշտոնատար բարձրագույն անձի, ռազմա-քաղաքական ու դիվանագիտական բնույթի հարցերի որոշումներում անպայմանորեն իր մեջ ընդգրկում է նաև երկրի ազգային շահերի առաջնահերթ ապահովման քաղաքիչ: Վերջին շրջանի միջազգային պրակտիկայի դրա վառ օրինակներից մեկը հանդիսանում է Թուրքիայի ԱԱՄ-ի ներկայիս գլխավոր քարտուղար Մեհմեթ Յիգիթ Ալթոբանի աշխատանքային այցը Վաշինգտոն¹⁴: Այցի պաշտոնական նպատակը հիմնական վիճելի հարցերի շուրջ Թուրքիայի ու ԱՄՆ-ի դիրքորոշումների մերձեցումն էր¹⁵:

ԱԱՄ-ի գլխավոր քարտուղարության ներքին կազմակերպական կառուցվածքն ունի հետևյալ տեսքը.



Ակնհայտ է, որ ԱԱՄ-ի միջոցով երկրի քաղաքական համակարգի վրա Թուրքիայի զինվորականության կողմից զգալի ու հիմնականում որոշիչ ազդեցության լծակների տիրապետումը չի համապատասխանում ԵՄ 4-րդ հիմնադրաման չափանիշներին և դրանց հետ գտնվում է հստակ հակասությունը և «օրենքի գերակայությունը» պարամետրերով¹⁶: Հետևաբար, հատկապես ռազմական ոլորտի ու ազգային անվտանգության ոլորտի բարեփոխումներն էին դրված որպես գերակա պայմաններ ԵՄ-ին Թուրքիայի լիիրավ անդամակցության համար:

2003 թ. հունիսի 23-ին Թուրքիայի խորհրդարանը ընդունեց այսպես կոչված «բարեփոխումների յոթերորդ փաթեթը», որը մասնավորապես, շոշափեց նաև ԱԱՄ-ի բարեփոխումների հարցերը: Սա Թուրքիայի սահմաններից դուրս գտնվող մի շարք հեղինակավոր հրատարակություններին առիթ տվեց «յոթերորդ փաթեթով» նախագծված բարեփոխումներն անվանել ոչ այլինչ, քան «լուսեղանակալություն»¹⁷:

Բացի անենը, օրենսդրական բարեփոխումների «յոթերորդ փաթեթի» նորամուծությունները հնարավոր դարձրեցին ԱԱՄ-ի գլխավոր քարտուղարի պաշտոնում քաղաքացիական անձի նշանակումը, ինչը առաջին անգամ տեղի ունեցավ 2004 թ. օգոստոսին¹⁸, ինչպես նաև սահմանափակեցին ԱԱՄ-ի մուտքը դեպի երկրի քաղաքացիական ինստիտուտները: ԱԱՄ-ն զրկվեց ներկայացուցիչներ ունենալու իրավունքից Կինձանտոգրաֆիայի և երաժշտության հարցերով ռիտարկով մարմնում, իսկ ավելի ուշ նրա ներկայացուցիչները դուրս բերվեցին Թուրքիայի Հեռուստատեսության ու ռադիոյի բարձրագույն մարմնի /RTUK/ և Բարձրագույն կրթության հանձնաժողովի /YOK/ կազմից¹⁹:

ԵՄ-ի կողմից օրենսդրության ու վարչական գործառնությունների ներդաշնակության պահանջների արդյունքում քաղաքական պայմաններում, Թուրքիայի ԱԱՄ-ի աշխատանքի հասարակական-քաղաքական ու միջգերատեսչական բնույթի որոշակի թերությունների ներկայիս իրողությանը կարելի է

հետևել համեմատաբար վերջերս ընդունված Թուրքիայի հանրապետության ազգային անվտանգության հայեցակարգի հերթական խմբագրության օրինակով:

2005 թ. հոկտեմբերի 24-ի ԱԱև-ի նիստի ժամանակ նախագահ Ա.Ն. Սեզերի նախագահությամբ ընդունվեց երկրի ազգային անվտանգության նոր հայեցակարգը: Հայեցակարգը ստացավ «Քաղաքական փաստաթուղթ ազգային անվտանգության մասին» պաշտոնական անվանումը /Milli Güvenlik Siyaset Belgesi – MGSB/: Առայժմ այն երբեմն անվանում են նաև «Կարմիր գիրք», «գաղտնի սահմանադրություն», «կարմիր սահմանադրություն»:

Այս փաստաթղթի նախագծի վրա մեկ տարուց ավելի շարունակվող բարդ աշխատանքում մասնակցություն ունեին Թուրքիայի բոլոր քաղաքականություն ունեցող գերատեսչությունները: Մասնավորապես, նախագծի առանձին բաժինների նախապատրաստման մեջ ներգրավված էին ԱԱև-ի վերլուծական վարչությունը, նախագահի ու կառավարության ղեկավարի աշխատակազմերը, առանցքային նախարարությունները /արդարադատության, ներքին գործերի, պաշտպանության, արտաքին գործերի, էներգետիկայի ու բնական ռեսուրսների/, երկրի ԶՈՒ-ի Գլխավոր շտաբը, հատուկ ծառայությունները, ռազմավարական հետազոտությունների անկախ կենտրոնները, մի շարք համալսարանները: Փաստաթղթի 10 էջ կազմող վերջնական նախագիծը՝ ԱԱև-ի հերթական նիստերից մեկում նախնական քննարկումից հետո, նորից ուղարկվել է վերանաշակման, որից հետո այն կոնսոլիդել է մինչև 25 էջի:

Փաստաթղթի այդ տարբերակի հաստատումը պետք է տեղի ունենար ԱԱև-ի 2005 թ. հունիսի 21-ի նիստում: Սակայն, համաձայն ԱԱև-ի անդամ Թուրքիայի արդարադատության նախարար Զ. Չիչեկի հայտարարության, «փաստաթղթի նախագիծը ԱԱև-ի անդամներին տրամադրվել է միայն երեկոյան նախօրյակին: Ուստի նրանք չկարողացան մանրակրկիտ ծանոթանալ ղետալներին ու վերլուծել դրանք: Դրա հետ կապված որոշում կայացվեց նախագծի քննարկումն ու ընդունումը տեղափոխել օգոստոս ամիսը»: ԱԱև-ի 2005 թ. օգոստոս և սեպտեմբեր ամիսների նիստերում այդ հարցը չի քննարկվել, ինչը խոսում է այն մասին, որ «գաղտնի սահմանադրության» հիմնական դրույթների շուրջ Թուրքիայի ռազմա-քաղաքական ղեկավարության մեջ համաձայնեցումը բավական բարդ է ընթանում:

Համաձայն թիվ 4982 Օրենքի տեղեկատվության ստացման իրավունքի մասին 16-րդ հոդվածի, տվյալ փաստաթղթի բովանդակությունը հանդիսանում է գաղտնիք և ենթակա չէ հրապարակման, քանի որ իրենից ներկայացնում է պետական գաղտնիք: Այդ օրենքի դրույթների խախտումը պատժվում է Քրեական օրենսգրքի թիվ 132-138, 229 հոդվածներով և նախատեսում է տարբեր ժամկետների ձերբակալում:

Այնուամենայնիվ, Թուրքիայի զանգվածային որոշ լուսավաճիչներում հայտնվեցին առանձին նյութեր ու հաղորդագրություններ /ըստ հատուկ ծառայությունների հաշվարկի, դրանք ավելի քան 80 էին/, որոնցում բերվում էին «կարմիր գրքից» կոճատ և ըստ հեղինակների պնդման, բնօրինակին համապատասխան հատվածներ: Այդ կապակցությամբ, ԱԱև-ի նիստում MGSB-ի հաստատումից երեք օր անց, Թուրքիայի կառավարությունը հանձնարարեց երկրի հատուկ ծառայությունների գտնել ազգային անվտանգության նոր հայեցակարգի գաղտնի դրույթների արտահոսքի ու մամուլում

հայտնվելու մեղավորին: 2005թ. հոկտեմբերի 28-ին թուրքական առաջատար թերթերից մեկը հղում կատարեց երկրի արտաքին քաղաքական գերատեսչության պաշտոնական ներկայացուցիչ Ն. Թանի վրա, որը հայտարարել էր. «Մնապատասխանաբար անձինք, ովքեր մեղավոր են պետական գաղտնիքի գաղտնազերծման մեջ, կատարել են լրջագույն հանցանք»:

Ինչպես հայտնի դարձավ, «գաղտնի սահմանադրության» վերջնական տեքստը հայտնի էր պետության 15 բարձրաստիճան պաշտոնյաների, որոնց թվում էին նախագահը, վարչապետը, արտգործնախարարության, հետախուզության, ուժային թևի գերատեսչությունների ղեկավարները, ԱԱև-ի անդամները, երկրի ղեկավարի և ԱԱև-ի գլխավոր քարտուղարի մի քանի օգնականները: Թուրքիայի ազգային անվտանգության ներկայիս հայեցակարգի առանձնահատկությունն այն է, որ դրա նախապատրաստման մեջ առաջին անգամ մասնակցում էին և ռազմական և քաղաքացիական գերատեսչությունները, այն դեպքում, երբ նման տեսակի բոլոր նախորդ փաստաթղթերը նախապատրաստվում էին զինվորականների կողմից, իսկ քաղաքացիական ղեկավարները դրանք միայն ստորագրվում էին: Չնայած բնույթ էր կրում միայն դասակարգված կառավարությունն նիստերում: ԱԱև-ի որոշումները, չնայած արտաքինապես կրում էին առաջարկությունների բնույթ, ենթակա էին անվիճելի կատարմանը: Իշխող կուսակցության առաջնորդը՝ գրադեցեղով վարչապետի աթոռը, հատուկ նիստի ընթացքում մանրակրկիտ տեղեկատվություն էր ստանում «կարմիր գրքի» բովանդակության մասին և ստիպված էր շտկել իր կուսակցության ծրագիրը, եթե վերջինիս դրույթները չէին համընկնում «գաղտնի սահմանադրության» դրույթների հետ: Այժմ իրավիճակը փոխվում է, և քաղաքացիական քաղաքական գործիչների մուտքը թույլատրվում է ոչ միայն MGSB-ի հաստատմանը, այլև դրա մշակմանն ու համաձայնեցմանը:

Թուրքիայի վերին քաղաքական ու պետական շրջանակներում առաջին անգամ հատուկ շեշտվում է ազգային անվտանգության նոր հայեցակարգի հաստատման գործառույթների կառավարական հատվածը: Դա վկայում է այն, որ MGSB-ի նոր խմբագրումների հաստատման գործառույթը նախարարների կաբինետի նիստում կլինի ավելի քան ոչ ձևակերպ:

Թուրքիայի ներկայիս իշխող կուսակցությունը և կառավարությունը հստակորեն ցուցադրում են իրենց գերակա դիրքերը՝ «գաղտնի սահմանադրության» մշակման մեջ, ընդգծում են այդ գործում քաղաքացիական անձանց, այլ ոչ թե իշխանության ռազմական ինստիտուտների գերակայությունը, ինչը նույնպես համապատասխանում է Թուրքիայի քաղաքական կյանքում բանակի «մասնաբաժնի» կոճատման մասին ԵՄ պահանջներին: Դա բարդ ու ցավոտ գործընթաց է, քանի որ թուրքական քանակը ավանդաբար հանդիսանում է բավական ազդեցիկ քաղաքական ուժ, որը ԱԱև-ի մեխանիզմի մոլոցով կարող էր բոլոր այլ պետական գերատեսչությունների համար պարտադիր կատարման որոշումներ կյանքի կոչել: Հատկանշական է 2005 թ. նոյեմբերի 2-ի կառավարության ղեկավար Ա.Թ. Էրդողանի ելույթը իր կողմից ղեկավարվող իշխանական կուսակցության՝ Ադալտություն և զարգացում կուսակցության ղեկավար խորհրդի նիստում: Իր համակիրներին առջև ելույթի ժամանակ MGSB-ի գաղտնի տեղեկատվության արտահոսքի համար մե մեղադրեց ԱԱև-ին՝ նշելով, որ «Դա տեղի է ունեցել փաստաթղթի նախապատրաստման փուլում, որում ընդգրկված էին ստորին մակար-

դակն չհնովիվները»: Մինչ այդ ԱՄՆ-ի աշխատակազմի նման հրապարակային քննադատությունն անհնար էր, նույնիսկ վարչապետի կողմից²⁰:

Թուրքական զինվորականների մոտ, որոնք իրենց համարում են հանրապետության աշխարհիկ կարգերի պահպան, առկա է իրենց կարծիքը երկրում տեղի ունեցող քաղաքական ու տնտեսական գործընթացների նկատմամբ: Այդ կարծիքը միշտ չէ, որ համընկնում է ներկայիս կառավարության դիրքորոշմանը: Ղա, մասնավորապես, առնչում է նաև՝ ԵՄ պահանջներին համապատասխան, երկրում իրականացվող բարեփոխումներին: Այսպես, զինվորական միջավայրում չկա ԵՄ հետ բանակցություններին աստարման վերաբերյալ միասնական դիրքորոշում: Չէ որ հատկապես ներկայիս թուրքական կառավարությունն է՝ պետական ապարատի ժողովրդավարացման վերաբերյալ ԵՄ պահանջների կատարման համատեքստում, զգալիորեն կրճատել զինվորականության իրավասությունները, այդ թվում նաև ԱՄՆ-ում: Համաձայն խորհրդարանի կոմից ընդունված թիվ 4963 Օրենքի ԱՄՆ-ի կառուցվածքում կրճատվել են մի շարք վարչություններ, որոնք սահմանում էին արտաքին ու ներքին քաղաքականության կարևորագույն ուղղությունները: Ըստ էության՝ եվրոպական չափանիշներին համապատասխան, թուրքական զինվորականներին աստիճանաբար դուրս են բերում քաղաքականությունից²¹:

Չնայած որ զինված ուժերի վերաբերմունքը քաղաքացիական ղեկավարության նկատմամբ կրում էր հավանաբար մշտական բնույթ, քաղաքացիական կառավարությունների վերաբերմունքը զինված ուժերի նկատմամբ տատանվում էր: «Թուրքիայում երկար ժամանակահատված առկա էր զինված ուժերի նկատմամբ վերաբերմունքի քաղաքացիական կառավարությունների երկու հայտնի վարքային նմուշ՝ նրանք կամ փորձում էին զինվորականներին տեղաշարժել դեպի ծայրամասային զիծը, կամ նրանց չափից դուրս ինքնավարություն էին տրամադրում: Երբ քաղաքացիական կառավարությունը հաջողակ էր տնտեսական հիմնախնդիրների ու ներքին վեճերի լուծման մեջ, ինչպես օրինակ 1950-ական թվականներին, ապա այն փորձում էր գրել զինված ուժերը իշխանությունից, ինչը հանգեցնում էր քաղաքացիական ու զինվորական չինովիվների «բշմամանքի» իրավիճակի²²:

Չնայած երկրում ներպետական գործընթացների վրա քաղաքական ազդեցության լծակների էական սահմանափակմանը, հատկապես երբ մեծաետելու լինենք 20-րդ դարի 1980-ականների սկզբից մինչև 1990-ականների վերջը ընկած ժամանակահատվածը, ԱՄՆ-ը պահպանում է իր կարևոր տեղը Թուրքական հանրապետության պետական մարմինների ամբողջ համակարգում: Հատկապես կարևոր է նրա դերը երկրի հատուկ ծառայությունների քաղաքական ղեկավարման ոլորտում: Թիվ 2945 Օրենքի և Ա նրա նոր խմբագրման/ դրույթների ուսումնասիրությունը իրական ապտկերացումներ չի տալիս թուրքական հատուկ ծառայությունների գործունեության վրա ԱՄՆ-ի ազդեցության բնույթի մասին: Ավելին, այնտեղ ուղղակիորեն չի հիշատակվում ԱՄՆ-ի գործունեության տվյալ «յուրահատուկ» ոլորտը, ինչը լիովին պարզ է, քանի որ հատուկ ծառայությունների գործունեությունը նույնիսկ ամենա ժողովրդավարական ու բաց պետություններում բացի այն, որ առանձնապես չի հրապարակվում, չի կարող «ֆիզիկապես» ենթարկվել մանրակրկիտ ու բաց օրենսդրական կարգավորման՝ օրենքներում տրվում են միայն հատուկ ծառայությունների

գործունեության հիմունքները՝ սկզբունքների ու հիմնական ուղղությունների տեսքով: Հատուկ ծառայությունների գործունեության մանրամասնումը, հետևաբար նաև այլ շատ հարցերը, տեղի է ունենում միջգերատեսչական ու ներգերատեսչական ակտերի ընդունման ուղիով:

Թուրքիայի ԱՄՆ-ն կարելի է բնութագրել որպես երկրի հատուկ ծառայությունների քաղաքական ղեկավարման կենտրոնական մարմին: Վերջինս ենթադրում է հետախուզական հանրության ընդհանուր քաղաքական ղեկավարում, ծագմավարական որոշումների կայացում ազգային հետախուզական ու հակահետախուզական ոլորտներում, համապետական մասշտաբով երկրի հատուկ ծառայությունների գործունեության գերակա ուղղությունների մշակում, նրանց գործունեության ընդհանուր վերահսկում և կորդինացում: Տվյալ ուղղությամբ ԱՄՆ-ի հիմնական խնդիրը կայանում է հատուկ ծառայությունների գործունեության ծագմավարություն ու մարտավարության համապատասխանեցումը պետության ազգային անվտանգության ապահովման հարցերում կառավարության քաղաքական կուրսին:

ԱՄՆ-ի գործունեության փորձը ցույց է տվել, որ խորհուրդն ունակ է բավական օպերատիվ կերպով արձագանքել երկրում ներքաղաքական փոփոխությունների դինամիկային, ազգային անվտանգության ապահովման ոլորտի ներպետական հիմնախնդիրներին: Այսպես, 1994 թ. փետրվարին՝ կազմված երկրի հարավ-արևելքում քրդական մարտական կազմավերությունների գործունեության ակտիվացման հետ, ԱՄՆ-ին առընթեր ստեղծվեց Հասարակական անվտանգության ստորաբաժանում: Ղրա կազմում ընդգրկվեցին ՄԻԻԻ-ի /MIT - Milli İstihbarat Teskilati - Ազգային հետախուզական կազմավերություն/ և ԹԱԳՏ-ի /Թուրքիայի ՆԳՆ-ը առընթեր Անվտանգության գլխավոր տնօրինություն/ 3-ական ներկայացուցիչներ: Տվյալ ստորաբաժանումը ներկայացված էր նաև երկրի արտաքին քաղաքական գերատեսչությամբ՝ Թուրքիայի ԱԳՆ Հետախուզական բյուրոյի պատասխանատու աշխատակցի տեսքով: Հասարակական անվտանգության ստորաբաժանումը ներ երկրում և արտասահմանում խոչոր հասարակական-քաղաքական իրադարձությունների շուրջ իրավիճակի հետախուզման իրավասություններ /հետախուզական հնարավորությունների դիրքերից/, որոնք առնչվում են Թուրքիայի ազգային անվտանգության ապահովման հարցերին, ինչպես նաև ԱՄՆ-ի համար նախապատասխանում էր հետախուզական տեղեկատվական փաստաթղթերի հսկվող իրավիճակների վերաբերյալ /համապատկերային զեկույցներ, կանխատեսումներ, անհրաժեշտ միջոցառումների ձեռնարկման ու դրանց իրականացման առաջարկություններ/: Ստորաբաժանման վրա պարտավորություն էր դրված նաև կորդինացնել Թուրքիայի ՄԻԻ-ի, ԹԱԳՏ-ի և ԱԳՆ-ի գործունեությունը:

1 Barak Salmoni, Turkey's Summer 2003 Legislative Reforms: EU Avalanche, Civil Military Revolution, or Islamist Assertion?, Strategic Insight, Vol.3, issue 9 (Sept 2003), <http://www.ccc.nps.navy.mil>.

2 Almanak Türkiye 2005, Güvenlik Sektörü ve Demokratik Gözetim, Tesev Güvenlik Sektörü Çalışmaları Dizisi Özel Yayın -2006, <http://www.tesev.org.tr>, s. 32.

3 Թուրքիայի ԱՄՆ պաշտոնական կայքը.

http://www.mgk.gov.tr/Turkce/arihke_2.html, 09.10.2006.

4 Թուրքիայի ԱՄՆ պաշտոնական կայքը.

http://www.mgk.gov.tr/Turkce/arihke_2.html, 09.10.2006.

5 Political structure of Turkey, Ankara, 1975, p. 50-52.

6 «Milliyets» օրաթերթը օգոստոսի

հիշակա մշել է դանիացի հետազոտող Բերտիլ Կոնդսենի, հատկապես 1971 թ.-ի իշխանափոխությունը ավելի մեծ ուժ հաղորդեց Թուրքիայի ԱՄՆ-ին, որպես «թուրքական քաղաքականության նկատմամբ վերահսկողության կոչող միջոցի» (Bertil V Knudsen, The role of the military in Turkish politics, Copenhagen Un.,Jan. 2005 <http://www.videt.dk/miliduty.pdf>, p. 8).

7 Չեղարքման օրը յուրաքանչյուր 15 րոպեն մեկ տրվում էին ԱՄՆ-ի հաղորդակցությունները: Քեման էվրեմի առաջին դիմումի մեջ ասվում էր – «Մեծ թուրք ազգ, մեծազուն Աթաթուրքի կողմից մեզ հանձնված երկրի ու ազգի միասնական պետությունը» Թուրքական հանրապետությունը, ինչպես տեսնում եք, վերջին տարիներին ներքին ու արտաքին քննադատների սաղոսանքների հետևանքով ենթարկվում է դավաճանական գաղափարական և ուղղակի հարձակումների, որոնք ուղղված են նրա միասնականության ու անկախության դեմ: Պետությունն իր հիմնական մարմինների հետ հանգեցված է անաշխատունակ վիճակի, սահմանադրական հաստատությունները ճեղքված են հակասություններից կամ լուռն են, քաղաքական կուսակցությունները անպատու վիճաբանությունների ու անաշխ դիրքորոշումների պատճառով չկարողացան ապահովել միասնականությունը ու ամբողջականությունը, որոնք պետք է փրկեն պետությունը, և անհրաժեշտ միջոցներ չենունարկեցին: Աթաթուրքի մի փոխարեն առաջ քաշված հետադիմական ու խեղաթյուրված այլ գաղափարախոսությունների հիման վրա կատարված դավաճանական գործողությունները հանգեցրին նրան, որ ուսումնական հաստատությունները դպրոցից մինչև համալսարան, կառավարման համակարգը, ներքին անվտանգության դատական մարմինները, աշխատավորական մարմինները, քաղաքական կուսակցությունները և, վերջապես, մարմնիկ մեր քաղաքացիները երկրի ամենահեռավոր անկյուններում հայտնվեցին հարվածների ու ճնշման տակ, քաղաքացիական պատերազմի շեմին Կարճ ասած, պետությունը կորցրեց իր ուսմ ու հզորությունը: Այս պայմաններում թուրքական զինված ուժերը որոշում կայացրեցին իրականացնել ներքին ժառանգության մասին օրենքով և թուրքական մեծ ազգի հրամանով իրենց վրա դրված Թուրքական Չանրապետության պաշտպանության պարտականությունը, և երկրի ղեկավարությունը ամբողջությամբ վերցրին իրենց ձեռքը: Նախաձեռնված գործառույթի նպատակն էր երկրի ամբողջականության պահպանումը, ազգային միասնականության և համախմբման ապահովումը, քաղաքացիական պատերազմի և եղբայրասպան քչնամանցի հնարավորության կանխարգելումը, վերականգնել պետության եղիմակությունն ու ինքնին գոյությունը, ինչպես նաև վերացնել այն պատճառները, որոնք խոչընդոտում են ժողովրդավարական կարգի գործունեությունը: Խորիդարանն ու կառավարությունը լուսավորված են: Խորիդարանի անդամները զրկված են անձեռնմխելիությունից: Անընդ երկրում հայտարարված է արտակարգ իրավիճակ» (А.А. Родионов, Турция – перекрёсток судьб. Воспоминания посла, М., 2006, с. 239-240).

8 В. И. Краснов, Армия в политической системе Турецкой Республики // «Правое ведение», 1985, № 5, с. 69.

9 Ք. Էվրեմը հաստատեց, որ «ժողովրդավարական խորիդարանական համակարգի հետագա զեղեններացման կասեցման նպատակով կնխապատրաստվի ճոր

սահմանադրություն» (Milli Güvenlik konseyince kabul edilen kanunlar, yayinlanar bildiri ve Kararlar ile onemli mevzuat, Ankara, 1982, s. 2-5).

10 Ասահմանադրությունն ընդունվեց 1982 թ.-ի նոյեմբերի 7-ի հանրաքվեում: 11 Կարևոր է նշել, որ թիվ 2945 օրենքի 4-րդ հոդվածի նախնական խմբագրումը քաղաքական ընդգրկում էր և, քացի անմեղ, ներառում էր Խորիդի կամ իրավաւորություններ, ինչպես «երկրի քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային ու տեխնոլոգիական զարգացման, ինչպես նաև ազգային հզորության բարելավումը» մշտական դիտարկումն ու գնահատումը, որոնք ազգային մե պետության ազգային անվտանգության քաղաքականության վրա» /օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ կետը/, « սահմանադրական կարգի պաշտպանության, ազգային միասնության ու ամբողջականության պահպանման, Աթաթուրքի սկզբունքների համապատասխան ազգային գաղափարների ու արժեքների շուրջ թուրք ազգի միավորման համար անհրաժեշտ միջոցների որոշումը» /օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ կետը/, «խաղաղ պայմաններում, պատերազմական ու հետպատերազմական շրջաններում հասարակական կազմակերպությունների, մասնավոր սեկտորի ինստիտուտների ու քաղաքացիների պարտականությունների ու պատասխանատվության և համապատասխան այլ հարցերի որոշումը համընդհանուր պաշտպանության, ազգային մոնիթինգիցայի ոլորտներում» /օրենքի 4-րդ հոդվածի 7-րդ կետը/, կամ «տեսակետների արտահայտումը արդեն ստորագրված կամ կնքմանը նախապատրաստած ազգային անվտանգության հարցերին առնչվող միջազգային համաձայնագրերի վերաբերյալ» /օրենքի 4-րդ հոդվածի 9-րդ կետը/:

12 Մինչև 2003 թ.-ի բարեփոխումները կարգ էր հանդիսանում այն, որ «ԱՄՆ- նիստեղի ժամանակ Թուրքիայի բարձրագույն զինվորական ղեկավարությունը» նախապես համաձայնեցնելով իր դիրքորոշումը գլխավոր շտաբի խորհրդակցության ժամանակ, հնարավորություն ուներ իր տեսակետը հայտնել ներ- և արտաքին քաղաքական իրավիճակի զարգացման հարցերի շուրջ, այլ նաև քաղաքացիական ղեկավարությունից պահանջել ձեռնարկել այս կամ այն միջոցները ինչպես Թուրքիայի արտաքին քաղաքական շահերը պաշտպանելու, այնպես էլ երկրի ներսում իրավիճակի կայունացման համար»: (С. Задонский, Внешние высшего военного юри- водства Турецкой Республики на внутреннюю и внешнею политику государства www.imes.ru, 21.05.2002).

13 Թիվ 2945 Օրենքի 15-րդ հոդվածն ընդգծում է, որ պահանջվում է «գլխավոր Շտաբի պետի դրական կարծիքն այն դեպքում, երբ տվյալ պաշտոնում նշանակվում էր թուրքական զինված ուժերի ներկայացուցիչ»:

14 Այդ տեղի ունեցավ 2006 թ.-ի հունվարի 23-27-ը:

15 Այդ հագեցած էր մի շարք բարձր մակարդակի հանդիպումներով Պետոցպարտամենտում /նաև դրա ղեկավար՝ Կ. Ուայլի հետ/ և պաշտպանության նախարարությունում Պենտագոնի «երրորդ համարի» Է. Էրեմյանի հետ, որը մինչև 2005 թ.-ի նոյեմբերը հանդիսանում էր Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպանը: Բանակցությունների ընթացքում թուրքական կողմը Կաշինտոնից կլկին պահանջեց միջոցներ ձեռնարկել Գլխավոր իրազում ՔԱԿ-ի գործակիցների գործունեության չեզոքացման համար: Դրանց բվում դիտորդները ուշադրություն են հրավիրում Անկարայի հետևյալ պահանջներին՝ ՔԱԿ-ի հիմնական գործող անձանց ձերբակալումը, որոնք գնվելու վայրի մասին թուրքական հատուկ ծառայությունները կտեղեկացնեն Գլխավոր իրազումի կամերիկյան հրամանատարությանը, և ձերբակալվածների փոխանցումը Թուրքիայի: Բացի այդ, Թուրքիայի ԱՄՆ-ի գլխավոր քարտուղար Սոսացավ Կաշինտոնի աջակցությունը Կիպոսի հարցում սահմանափակումների վերջացման մասին Անկարայի կողմից առաջ քաշված նախազեմում, ինչպես նաև փորձեց համոզել Պետոցպարտամենտին և Պենտագոնին տարածաշրջանային անվտանգության վերաբերյալ Միխայի մեկուսացման անվազապահարմարության մասին: Թուրքական կառավարության քաղաքականության հիմնական հարցերից մեկն էր իրանյան միջուկային ծրագիրը: ԱՄՆ-ի գլխավոր քարտուղարը, որը համընդհանուր է Թուրքիայի ռազմա-քաղաքական ղեկավարության առանցքային անձանցից մեկը նշեց, որ «միջուկային իրանը անհանգստացնում է Անկարային», «Թուրքիան ճանա-

յուն է խաղաղ նպատակներով միջուկային էներգիայի օգտագործման յուրաքանչյուրի իրավունքը, սակայն, երբ դրա օգտագործումը դուրս է գալիս այդ շրջանակներից, դա անհանգստացնում է մեր ղեկավարությանը": Պայմանավորվածություն ձեռք բերվեց այդ ուղղությամբ Անկարայի ու Վաշինգտոնի գործողությունների սերտ կոորդինացման մասին, ինչպես նաև Հարավային Կովկասի իրավիճակի շուրջ կանոնավոր խորհրդատվությունների մասին": (A.A.Гурьев, Ситязация в Турции: январь 2006 года, www.imes.ru., 2.02.2006.)

16 Bertil V. Knudsen, The role of the military in Turkish politics, Copenhagen Un., Jan 2005, <http://www.videt.dk/miliduty.pdf>, p. 12.

17 Financial Times (editorial), A quiet revolution: Less power for Turkey's army is a triumph for the EU, 31 July 2003.

18 Նախագահ Ա. Սեզերը հաստատեց կառավարության ղեկընտը Թուրքիայի ԱՄՆ-ի գլխավոր քարտուղարի պաշտոնում առաջին քաղաքացիական անձի՝ Յիգիթ Ալպողանի նշանակման մասին: Մինչ այս նշանակումը Ալպողանը հանդիսանում էր Թուրքիայի ղեկավարը Հունաստանում /2001 թ.-ից/: Նա կարևոր դերակատարություն ունեցավ կիպրոսյան հիմնախնդրի լուծման բանակցությունների ընթացքում որի ավարտը հանդիսացավ 2004 թ.-ի ապրիլի 24-ին կղզում անցկացված համաժամեցման: Ալպողանին համարում են թուրք-հունական հարաբերությունների ու կիպրոսյան հիմնախնդրի աստիճանաբար մասնագետներից մեկը:

Մեծնեղ Յիգիթ Ալպողանը ծնվել է 1945 թվականին Օդնիս քաղաքում /Իզմիրի նահանգ/: Բարձրագույն կրթությունը ստացել է Անկարայի համալսարանում քաղաքագիտություն մասնագիտությամբ (political affairs): 1968 թ.-ից անցել է պետական ծառայության Թուրքիայի արտաքին գործերի նախարարության հասարակական անվտանգության գործերով գրասենյակում (Common Security Affairs Bureau): 1972 թ.-ին պաշտոն է ստացել ճապոնիայում թուրքական դեսպանատանը, 1975-ին դեսպանատանը Կիպրոսում: 1977 թ.-ին նա գլխավորում էր կիպրոսյան հիմնախնդրի կարգավորման թուրք-հունական հանձնաժողովը: 1991-ին նշանակվել է Հունաստանում թուրքական դեսպանի տեղակալ: 1995-ին նշանակվել է առաջին դեսպան Աշխարհում /Թուրքմենստան/: 2000թ.-ին անցել է խորհրդակցի պաշտոնի Թուրքիայի արտգործնախարարությունում: 2001թ.-ից հանդիսանում էր Թուրքիայի ղեկավարը Հունաստանում: Ամուսնացած է, ունի երկու երեխա, ազատ տիրապետում է անգլերեն և ֆրանսերեն լեզուներին՝ "Zaman" օրաթերթ, 19 օգոստոսի 2004 թ.:

19 Այդ մասին մանրամասն տես՝ 1) European Commission: 2003 Regular Report or Turkey's progress towards accession, November 5, 2003; 2) European Commission: 2004 Regular Report on Turkey's progress towards accession, October 6, 2004; 3) European Commission: Turkey 2005 Progress Report, Brussels, 9 November 2005.

20 A. A. Гурьев, «Красная книга»: у Турции новая концепция национальной безопасности, www.centrasia.ru., 08.11.2005.

Չետաքրքիր է նշել, որ ԱՄՆ-ի գլխավոր քարտուղարի պաշտոնում Յ. Ալպողանի նշանակումից հետո խորհրդի կարդային կազմում տեղի ունեցավ եական քերտուղի մի "քաղաքացիական" քաղաղորդիչ: Ըստ 2004 թ.-ի վերջի տվյալների ԱՄՆ-ի գլխավոր քարտուղարության աշխատակիցների կազմում զգալիորեն նվազեց զինվորականների քանակը, գլխավոր քարտուղարության աշխատակիցների ընդհանուր թվի 294 հոգուց զինվորականները կազմում էին միայն 15-ը: (Turkey puts civilian over its National Security Council, reduce role, <http://www.worldtribune.com>, Dec. 3, 2004.)

21 A.A. Гурьев, Партия справедливости и развития Турции: три года у власти. www.imes.ru., 30.11.2005.

22 Metin Heper, Justice and Development Party government and the military in Turkey // Turkish Studies, Oxfordshire, United Kingdom, Summer 2005, Vol. 6, Iss. 2, p. 215.

ԹՈՒՐԿԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԸ

Սերգեյ Մինսայան

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Զինված ուժերը Թուրքական հանրապետության գոյության ամբողջ ժամանակաշրջանի քաղաքական կյանքում խաղացել է շարունակում են բացառիկ կարևոր դեր խաղալ: Բանակի բացառիկ դերակատարությունը ամրագրված է երկրի Սահմանադրության մեջ և հաստատվում է երկրի քաղաքական գործընթացներում բանակի ուղղակի ներգրավվածության քաղաքական պրակտիկայով, արտաքին քաղաքական գերակայությունների որոշման ժամանակ զինվորական ղեկավարության վճռորոշ խոսքով և դրանք իրական քաղաքականության վերածուծով: Համաձայն գործող Սահմանադրության դրույթների /մինչև 2003 թ.-ին եՄ-ի ճնշմամբ իրականացված անվտանգության ոլորտի նկատմամբ վերահսկողության համակարգի բարեփոխումը/ Թուրքիայում գոյություն չի ունեցել քաղաքացիական իշխանության մարմին, որը կարող էր հսկել կամ զսպել զինվորական իշխանությունը: Գեներալիտետը գործնականում անսահմանակալ ազդեցություն ուներ ռազմական, արտաքին ու ներքին քաղաքականության մեկավորման վրա, առաջին հերթին երկրի Ազգային անվտանգության խորհրդի միջոցով, որը տվյալ ոլորտում երկրի քաղաքականությունը ձևավորող կարևորագույն մարմինն է: Քաղաքական կյանքի նկատմամբ զինվորական ղեկավարության կոչուտ հսկողությունը հանգեցրեց նրան, որ "Թուրքիայում բանակը չի հանդիսանում պետության մի մասը, այլ այն նույնացված է պետության հետ":

Թուրքական զինված ուժերը հանդիսանում են նաև տարածաշրջանային նշանակության կարևորագույն ռազմա-քաղաքական գործուն: Անճնակազմի մեծ քանակությունը /քանակով թուրքական բանակը ԱՄՆ-ի բանակից հետո ՆԱՏՕ-ում երկրորդն է/, բարձր կարգապահությունը և զինծառայողների զարգացման պատրաստվածությունը, քանակական հագեցվածությունը համեմատաբար ժամանակակից սպառազինությամբ ու ռազմական տեխնիկայով, զարգացող ռազմարդյունաբերական համալիրը ստիպում են Թուրքիայի զինված ուժերը դիտարկել որպես ամենամարտունակներից մեկը Մերձավոր և Միջին Արևելքում, Միջերկրածովային Արևելքում, ինչպես նաև Հարավային Կովկասի ու Անժուլ-Կասպիական տարածաշրջանում: Սառը պատերազմի ավարտից հետո տեղի ունեցած տեխնոլոգիական փոփոխությունները փոխեցին Թուրքիայի աշխարհաքաղաքական նշանակությունը ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի շրջանակներում /նրա դաշնակիցների աչքերում, ինչպես նաև այդ երկրի տարածաշրջանային ընկալումը հարևանների կողմից: Մի կողմից, թուրքական քաղաքական վերնախավի մտավախությունը ՆԱՏՕ-ի իր դաշնակիցների համար երկրի դերի հեղափոխումը նվազում, 1991 թ.-ի պատերազմը՝ Պարսից ծոցում և հետագա իրադրությունները ցույց տվեցին, որ Թուրքիան /հիմնականում քաղաքիկ աշխարհագրական դիրքով և ռազմա-քաղաքական շոշոփելի ներուժով պայմանավորված/ հնարավոր է հայտնվել է ավելի պետական դիրքում արևմտյան տերությունների համար, քան սառը պատերազմի "անճնատաք" տարիներին: Մյուս կողմից, ԽՍՀՄ-ի փլուզումը և նրա տարածքում

նորանկախ պետությունների ձևավորումը, Ս. Հուսեյնի վարչակարգի տա- պալումը և քաղաքացիական պատերազմն այդ երկրում, Սիրիայի թուլա- ցումը /զրկվել էր խորհրդային ռազմա-տեխնիկական օգնությունից և հայտնվել էր արևմտյան պետությունների կոշտ ճնշման տակ/, Իրանի մի- ջազգային մեկուսացումը և շատ այլ գործոններ ամենաբարենպաստ ձևով արտացոլվեցին Թուրքիայի ազդեցության ուժեղացման վրա, որը վերած- վեց յուրատեսակ տարածաշրջանային գերտերության: Դա Թուրքիային հնարավորություն տվեց /չնայած ԱՄՆ-ի կողմից որոշակի հավազդեցու- թյունը, որը 2003 թ. Իրաքի պատերազմից հետո ԱՄՆ-ի արտաքին դիտարկում էր որպես իրեն մրցակից տարածաշրջանային քաղաքականության հար- ցերում՝/ ավելի ինքնուրույն և ակտիվ դերակատարություն ունենալ նշված տարածաշրջանի քաղաքական գործընթացներում: Թուրքիայի տվյալ հա- վանկոտ ու տևական տարածաշրջանային արտաքին քաղաքական ռազ- մավարության մեջ կարևորագույն դեր են կատարում նրա քաղաքակրթ- ու տեխնիկական համեմատաբար լավ հազեցված զինված ուժերը:

2. ԹՈՒՐԿԱԿԱՆ ԶԻՆՎԱԾ ՌԵՏՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՌՈՑՎԱԾՔԸ ՌԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԹ՝

Համաձայն երկրի Սահմանադրության, Թուրքական Ջինված Ուժերի Գլ- խավոր Հրամանատարը /Turk Silahlı Kuvvetleri, TSK/ հանդիսանում է հան- րապետության Տախազահը: ԹՁՈՒ-ի օպերատիվ կառավարման բարձ- րագույն մարմինը հանդիսանում է Գլխավոր շտաբը, իսկ նրա պետը ընդնց հրամանատարն է: Համաձայն Սահմանադրության 117-րդ հոդվածի, Գլ- խավոր շտաբի պետը նշանակվում է հանրապետության նախագահի կող- մից՝ ըստ Թուրքիայի Տախարարների խորհրդի ներկայացման, և պատաս- իսանալովություն է կրում երկրի վարչապետի աջըն: Գլխավոր շտաբի՝ պե- տը պատասխանատու է զինված ուժերի հսկողության և ընդհանուր կառա- վարման, մարտական պատրաստվածության, ինչպես նաև պատերազմի ժամանակ ու խաղաղ պայմաններում զորքերի օպերատիվ կառավարման համար: Գլխավոր շտաբը մշակում է պաշտպանության ու ազգային անվ- տանգության ոլորտներում ընդհանուր քաղաքականությունը, զինված ու- ժերի մարտական կիրառումը, ձևավորում է ռազմական դոկտրինը, որոշ- ում է զինված ուժերի ռեսուրսային կարիքները և դրանց զբաղագման հե- տևակարգերը: Պատերազմի ժամանակ Գլխավոր շտաբի պետը հանրապե- տության նախագահի անունից կատարում է ԹՁՈՒ-ի գլխավոր հրամանա- տարի պարտականությունները: Գլխավոր շտաբի պետը ղեկավարում է նաև այլ երկրների զինված ուժերի հետ հարաբերություններն ու կապը, ինչ- պես նաև ՆԱՏՕ-ի տարրեր կառույցների ու մարմինների հետ: Պետք է նշել, որ Թուրքիայի Գլխավոր շտաբի պետը՝ գործնականում ի տարբերություն ՆԱՏՕ-ի անդամ-երկրների իր թուրք գործընկերների, ունի շատ ավելի բարձր աստիճանի իրավասություններ ու անկախություն: Պատահական չէ, որ Գլխավոր շտաբի, և ընդհանրապես զինվորական իշխանության բարձր դիրքը Թուրքիայի հասարակական ու քաղաքական կյանքում, նրանց ազ- դեցությունը երկրի ներքին ու արտաքին քաղաքականության ձևավորման վրա հանդիսանում են ե՛մ կողմից ցնճադատության ու դիտողությունների հիմնական շարժառիթներից մեկը Եվրամիությանը Թուրքիայի հավանա- կան անդամկցության բանակցությունների ընթացքում:

Թուրքիայի ՋՈՒ-ի տեսակներն են՝ ցամաքային զորքերը, ռազմա-օդային ուժերը և ռազմա-ծովային ուժերը: Դրանց հրամանատարները անմիջապես ենթարկվում են Գլխավոր շտաբի պետին: Այսպիսով, Թուրքական Հանրա- պետության Ջինված ուժերը կազմակերպական առումով կազմված են Գլ- խավոր շտաբի պետի վարչական ու օպերատիվ ենթակայության տակ գտն- վող ցամաքային զորքերի, ռազմա-ծովային ուժերի ու ռազմա-օդային ուժերի հրամանատարություններից: Պատերազմի ժամանակ Գլխավոր շտաբի օպե- րատիվ ենթակայության են անցնում նաև ոստիկանական զորքերն ու ափա- մերձ պաշտպանությունը /որոնք խաղաղ պայմաններում ընդգրկված են ՆԱՄ կազմում/, ինչպես նաև այլ համապատասխան զորամասերն ու ստորաբա- ժանումները /Թուրքիայի հատուկ գործառնությունների գրասենյակի ստորաբա- ժանումները՝ այսպես կոչված «բուրդագույն բերետներ», երկրի քրոյաբնակ տարածքների ոստիկանության հատուկ նշանակության ստորաբաժանումնե- րը՝ այսպես կոչված «գլուղական պաշտպանությունը» և այլ կառույցներ/: Տվ- յալ ուժերն ու մարմինները ռազմական մորիլիզացիայի պարագայում ընդգրկ- վում են զինված ուժերի համապատասխան տեսակների կազմում:

Համաձայն երկրի Սահմանադրության 117-րդ հոդվածի Գլխավոր շտա- բի պետն աշխատում է սերտորեն Թուրքիայի Ազգային պաշտպանության նախարարության հետ /Milli Savunma Bakanligi, MSB/, սակայն հաշվետու է երկրի վարչապետին, այլ ոչ թե ազգային պաշտպանության նախարարին: Ազգային պաշտպանության նախարարության ֆունկցիաների մեջ մտնում են զինակոշիկ և զինված ուժերի համալրումը, սպառազինության, ռազմա- կան տեխնիկայի գնումը զինված ուժերի թիվունքային մատակարարումը, ռազմարդյունաբերական համակարգի գործունեության ապահովումը:

2006 թ.-ին Թուրքիայի բնակչությունը կազմել է 72 300 հազար մարդ: 2006 թ.-ի ռազմական քույզեն կազմել է ավելի քան 10,9 մլրդ. դոլար /թուր- քական լիրայի նկատմամբ փոխարժեքային կուրսին համապատասխան և ընթացիկ գներով/, այսինքն ընթացիկ գներով մոտավորապես ընդհանուր ԸՆԱ-ի 3 տոկոսը: Թուրքիայի կամուրջավոր զինված ուժերի ընդհանուր քա- նակը 2006 թ.-ին կազմել է 421 հազ. մարդ, իսկ հաշվի առնելով զինվորա- կանացված ստորաբաժանումները /ժամդարմերիան և ափամերձ պաշտ- պանության ստորաբաժանումները/՝ ավելի քան 652 հազ. մարդ: Զինված ուժերի կազմում զինժառայողների ու ազատ վարձակալների հարաբերու- թյունը բնակչության ակտիվ մասին կազմել է 2,2 տոկոս³:

Ամնակազմի բաշխվածությունը ըստ զինված ուժերի տեսակների ներ- կայացված է թիվ 1 աղյուսակում /2006 թ.-ի վերջի տվյալներով/:

Աղյուսակ 1

	Մշտական	Պահեստային	Ընդամենը
Կամուրջավոր զորքեր			
Ցամաքային զորքեր	308 000	259 000	567 000
ՈՐՈՒ	60 000	65 000	125 000
ՈՇՈՒ	53 000	55 000	108 000
Ենդամենը	421 000	379 000	800 000
Ռազմական նազված միավորումներ			
Ափամերձ պաշտպանություն	2 200		2 200
Ժամդարմերիա	230 000	60 000	290 000

**3. ԶԻՆՎԱԾ ՌԺԵՐԻ ՀԱՄԱՐՈՒՄԸ
ԵՎ ՍՊԵՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ**

Համաձայն Թուրքական Հանրապետության Սահմանադրության 72-րդ հոդվածի, ծառայությունը զինված ուժերում հանդիսանում է երկրի յուրաքանչյուր քաղաքացու իրավունքն ու պարտավանությունը: ՁՈՒ-ի շարքային ու սերժանտական կազմի համալրման հիմնական աղբյուրը հանդիսանում է ծառայությունն ըստ զորակոչի: Բանակում ծառայելու զորակոչի արջուրենքը կախված են զորակոչիկների կարգավիճակից ու կատեգորիայից: Հիմնական աղբյուրը զինապարտ տղամարդիկ են: 20 տարին լրացած Թուրքիայի յուրաքանչյուր քաղաքացի զորակոչվում է զինծառայության՝ կախված կրթության մակարդակից և զբաղեցրած կարգավիճակից: Զինապարտության մասին օրենքին համապատասխան զինված ուժերում ծառայությունը պարտադիր է հանդիսանում 20-ից 40 տարեկան արական սեռի Թուրքիայի բոլոր այն քաղաքացիների համար, որոնք ըստ առողջության վիճակի պիտանի են ծառայելու: Համաձայն օրենքի պատերազմական պայմաններում բանակ կարող են զորակոչվել 16-ից 60 տարեկան տղամարդիկ և 20-ից 46 տարեկան կանայք, որոնք ունակ են զենք կրել:

Թուրքական ՁՈՒ-ը օժտված են զինվորական ուսուցման բոլոր մակարդակների զարգացած համակարգով: Սպայական կազմը նույնպես նուսցում և վերապատրաստում է անցնում մի շարք արտասահմանյան երկրների ռազմա-ուսումնական հաստատություններում, ինչպես նաև ՆԱՏՕ-ի ակադեմիայում: Հինված ուժերը սպայական և ենթասպայական կազմով համալրվում են Հանդիսանոր զինապարտության օրենքի հիման վրա: Համալրման գործընթացով անմիջականորեն զբաղվում են Գլխավոր շտաբի օպերատիվ ու ռազմա-մորիլիզացիոն վարչությունները, որոնք արձակում են համապատասխան հրամաններ և ցուցումներ: Այդ ցուցումների հիման վրա Գլխավոր շտաբի կադրերի վարչությունը, հաշվի առնելով զինված ուժերի տեսակների հայտերը, մշակում է սպայական և ենթասպայական կադրերով զինված ուժերի համալրման պլանը: Այդ պլանները օրենքով հաստատված ժամկետներում ներկայացվում են Գլխավոր շտաբի ռազմա-ուսումնական հաստատությունների վարչություն, որոնք համապատասխանաբար մշակում են զորակոչի, ինչպես նաև բարձրագույն ու միջնագրգ ռազմա-ուսումնական հաստատություններ ընդունվելու պլանները: Այդ պլանները հաստատում են Գլխավոր շտաբի պետը և ազգային պաշտպանության նախարարը: Դրանից հետո դրանք իջեցվում են ռազմական ակադեմիաների ու ուսումնարանների հրամանատարությանը: Ռազմական ակադեմիաների հրամանատարությունն իր հերթին որոշում է ռազմա-ուսումնական բարձրագույն ու միջնակարգ հաստատությունների ընդունման կարգը, ժամկետները, մրցույթը և դիմորդների ու ունկնդիրների քանակը:

Պարտադիր զինծառայության զորակոչված անձինք, որոնք նախատեսված են կուրսեր հրամանատարներին փոխարինելուն, ուղարկվում են սերժանտական ու ենթասպայական կազմի պարտաստման կենտրոններ, զորամասեր, միավորումներ: Ցամաքային զորքերում նման նախապատրաստումը դրված է Էգեյան դաշտային բանակի /4-րդ/ ուսումնական հրամանատարության վրա, իսկ ՌՕՈՒ-ում և ՌՇՈՒ-ում՝ ուսումնական հրամանատարության զորամասերի և ստորաբաժանումների վրա:

Զինված ուժերի սերժանտական ու ենթասպայական կազմը ներկայաց-

ված է երկու կատեգորիաներով՝ ժամկետային ու պարտադիր ծառայություններով: Ժամկետային ծառայության ենթասպաները հանդիսանում են սպայական կազմի հիմնական հենասյուղը: Ենթասպաներին նախապատրաստում են 2-3 տարիների ընթացքում զորքերի տեսակների ռազմական ուսումնարանների հատուկ բաժանմունքներում: Այդ բաժանմունքները համարվում են պարտադիր զինծառայության զինվորների և նախասերիների կամավորական սկզբունքների հիման վրա, որոնք ունեն միջնակարգ կրթություն, ինչպես նաև ենթասպայական նախապատրաստական դպրոցների շրջանավարտների հաշվին, որոնք ընդունում են 14-16 տարեկան անձինք, որոնք ավարտել են տարրական դպրոցը և ունեն լիարժեք միջնակարգ կրթություն: Ենթասպաների ծառայության նվազագույն ժամկետը 15 տարի է: Զինված ուժերում 25 տարուց ոչ պակաս ծառայած ենթասպաները զորացրվում են, եթե նրանց չի շնորհվում հերթական կոչումը:

Ընտրության առավել բարձր մակարդակ ունի սպայական կազմի համարումը: Դա ձեռք է բերվում ռազմական ուսումնարաններ պատասխանելու կամավոր ընդունելության և նրանք քաղաքական հուսալիության ստուգման համալիրի միջոցով, ինչը հնարավորություն է տալիս ձևավորել սպայական կազմը գերազանցապես բնակչության կրթված շերտերից: Թուրքիայի զինված ուժերի սպայական կազմը ստորաբաժանվում է մի քանի կատեգորիաների՝ կադրային սպաներ, պահեստի սպաներ և չինովիկներ /իրավաբաններ, ֆինանսների դոկտորի ծառայողներ և այլն/: Սպաների նախապատրաստումը տարվում է ռազմա-ուսումնական հաստատություններում, որոնք շարքին են դասվում վարժարանները և նախավարժարանները, զինված ուժերի տեսակների միջնակարգ ու բարձրագույն ուսումնական հաստատությունները, զինվորական ակադեմիաները: Սպայական կադրեր պատրաստվում են նաև քաղաքացիական բարձրագույն ուսումնական հաստատությունների ռազմական ֆակուլտետներում:

Զինվորական վարժարանները համարվում են հանրակրթական միջնակարգ դպրոցների ութերորդ դասարանի շրջանավարտներով: Զորքերի ու ծառայությունների տեսակների միջնակարգ ռազմա-ուսումնական հաստատությունները /հետևակային, զրահատանկային, հրթիռային, իրեստա-նային, հետախուզական, օտար շեզուների, տեխնիկական, ինտեղդան-տային, կապի, "կոմանդո"-ի/ պատրաստում են ստորին օդակի սպաներ՝ դասակի, խմբի, վաշտի, մարտկոցի հրամանատարներ: Որպես օրենք դրանք համարվում են նախկին ենթասպաների ու սերժանտների կազմից ելած կուրսանտներով, մասամբ նաև քաղաքացիական երիտասարդություն, ինչպես նաև բարձրագույն զինվորական ուսումնական հաստատությունների շրջանավարտներով:

Թուրքական զինված ուժերի բարձրագույն զինվորական դպրոցը հաշվառում է հինգ ակադեմիաներ՝ 3-ը զինված ուժերի տեսակների /ցամաքային զորքերի, ՌՕՈՒ-ի և ՌՇՈՒ-ի/, 1-ը զինված ուժերի /որում ուսանում են զինված ուժերի երեք տեսակների սպաները/ և 1-ը ազգային անվտանգության /որտեղ զինվորականների հետ ուսանում են նաև պետապարա-կի ներկայացուցիչները/: Զինվորական ուսումնարանների հետ մեկտեղ կա նաև սպաների նախապատրաստման կուրսերի ցանց՝ ըստ կրթերի տեսակների: Սպաների մի մասը վերապատրաստում է անցնում արտասահմանում, հիմնականում ԱՄՆ-ում և Գերմանիայում:

Ջինժառայողների պատրաստման զարգացած համակարգը, երկրի զգալի ժողովրդագրական ներուժը և մորիլիզացիոն հնարավորությունները թույլ են տալիս անհրաժեշտության դեպքում շատ կարճ ժամկետներում լրացուցիչ կերպով զինված ուժերը համալրել:

4. ԹՈՒՐԻԱՅԻ ՑԱՄԱՔԱՅԻՆ ՁՈՐՈՒՐ

Ցամաքային զորքերը պատմականորեն հանդիսանում են Թուրքիայի զինված ուժերի հնագույն և առավել բազմաճյուղ տեսակը: Երկրի աշխարհաքաղաքական դիրքի առանձնահատկությունը, քրոջաբնակ հարավ-արևելյան շրջաններում շարունակվող լատենո մարտական գործողությունները, գրեթե բոլոր հարևանների հետ /որոշը օժտված են զգալի ռազմական ներուժով/ առկա քաղաքական հիմնախնդիրները մեծացնում են թուրքական զինված ուժերի նշված տեսակի նշանակությունը: Թուրքիայի ցամաքային զորքերի կառավարման համակարգն ընդգրկում է. դաշտային 1-ին, 2-րդ և 3-րդ բանակների հրամանատարությունը, էգեյան բանակի /4-րդ դաշտային/ հրամանատարությունը, Հյուսիսային Կիպրոսի թուրքական ուժերի հրամանատարությունը /այսպես կոչված “Կիպրոսում թուրքական խաղաղապահ ուժեր”, զորավարությունների ու դրկտիրների հրամանատարությունը, հատուկ օպերացիաների հրամանատարությունը /որին օպերատիվ առումով ենթարկվում են “կոմանդոս”-ի առանձին բրիգադները և դաշտային բանակների հատուկ նշանակության առանձին ջոկատները/, լոգիստիկայի հրամանատարությունը, բանակային ավիացիայի հրամանատարությունը և ժանդարմերիայի գլխավոր հրամանատարությունը /այստերազմական պայմանների դեպքում, իսկ խաղաղ պայմաններում դա մտնում է Թուրքիայի ՆԳՆ կազմի մեջ/: Ցամաքային զորքերի կազմի մեջ մտնում են հետևյալ միավորումները, զորամասերը և ստորաբաժանումները. 4 դաշտային բանակներ, 10 բանակային կորպուսներ, 2 մեխանիզացված դիվիզիա, մեխանիզացված դիվիզիաների 2 շտաբեր /մարտավարական/, 1 հետևակային դիվիզիա, 1 ուսումնական դիվիզիա, 14 մեխանիզացված բրիգադներ, 14 տանկային բրիգադներ, 12 հետևակային բրիգադներ և այսպես կոչված տարածաշրջանային անվտանգության բրիգադը. “կոմանդոս”-ի 5 բրիգադներ, 5 ուսումնական բրիգադներ, նախազահական զվարթիայի 1 գունդ, սահմանապահների 5 գունդ և 26 գունդուտակ /պատերազմական պայմաններում, որը կազմակերպչական առումով ընդգրկված է ժանդարմերիայի կազմում/:

Ցամաքային զորքերի սպառազինության մեջ մտնում են օպերատիվ-տակտիկական ATACMS հրթիռների 12 արձակման համասարքեր, մուտավորապես 4170 տանկեր /Leopard/ A1/A3, M-60 A1/A3, ինչպես նաև տարբեր մոդիֆիկացիայի M-48 տանկեր՝ T5, A5T1, T2/, որոնցից մարտական վիճակում գտնվում է մոտ 2653 միավորը, իսկ մնացածը /A3 մոդիֆիկացիայի M-48 տանկերը/ գտնվում են պաշտոններում, մուտավորապես 930 ՀՄՍ /հետևակի մարտական մեքենաներ, AIFV, UR-416, Condor/, մուտավորապես 4600 գրանանցեցաններ /AAPC, M-113 A1/A3, BTP-80, BTP-60/, 360 հատ ՄՀՄ /մարտական հետախուզական մեքենաներ/, մուտավորապես 885 ինքնազնուց հրետանային 105 մմ և ավելի տրամաչափի համասարքեր, մուտավորապես 1330 քարշակային հրետանային 105 մմ և ավելի տրամաչափի համասարքեր, ավելի քան 2000 ականանետներ, մոտ 164 հատ ՉՀՀՀ /այդ

բվում մոտ 30 հատ 320 մմ-ոց WS-1A/B/, մուտավորապես 1400 ՀՏՀՀ ԱՀ /հակաուսնակային հրթիռային համալիրների արձակման համասարքեր, ավելի քան 47 000 ՉՀՀ և հակաուսնակային հրանոթներ, զենիթային հրետանու 1860 հրանոթներ, փոքր և միջին շառավղի 96 միավոր ՉՀՀ ԱՀ /զինթային հրթիռային համալիրի արձակման համասարք/, մուտավորապես 940 միավոր ՏՀՀԿ և այլ սպառազինություն ու ռազմական տեխնիկա:

Մինչև 1990-ականների սկիզբը Թուրքիայի ցամաքային զորքերի կազմակերպչա-հաստիքային կառուցվածքը առանձնանում էր զգալի մեծությամբ: Հաշվի առնելով, որ 1952 թ.-ին ՄԱՏՕ-ի կազմի մեջ մտնելուց հետո և “սառը պատերազմի” հետագա տարիների Թուրքիայի ցամաքային զորքերի նպատակներն ու խնդիրները հիմնականում հանդիսանում էին սևծովյան նույնցների պաշտպանությունը, ինչպես նաև Անդրկովկասից հավանական խորհրդային ներխուժումից պաշտպանությունը, դրանք ունեին բավական ահեղի դիվիզիոն-կորպուսային կառուցվածք: “Սառը պատերազմի” ավարտից հետո պաշտպանական պահանջարկից զերտարվածների փոփոխությունը, ցամաքային զորքերի բազմաքանակ անձնակազմերի ծավալման 1990-1991 թթ.-ի փորձը “Հողմ անապատում” օպերացիայի ընթացքում սահմանամերձ Իրաքում իրավիճակի սրման ժամանակ, թուրքական բանակի զորամասերի զգալի համակենտրոնացում և ղեպի երկրի հարավ-արևելյան սահմանը դրանց տեղափոխման պահանջ առաջացրին՝ ցույց տալով, որ թուրքական բանակը հարմարեցված չէ անձնակազմի ու ռազմական տեխնիկայի զանգվածային տեղափոխման համար, և օժտված է անբավարար շարժունությամբ: Դա, ինչպես նաև հարևանների կողմից ռազմական սպառնալիքների նվազումը՝ ստիպեցին զինված ուժերի ղեկավարությանը 1990-ականների կեսերից իրականացնել որոշ փոփոխություններ ցամաքային ուժերի կազմակերպչա-հաստիքային կառուցվածքում, մասնավորապես դիվիզիոնային հսկա կառուցվածքից անցնել բրիգադ-կորպուսային համակարգի: Տեխնիկական զորամասերի և միավորումների անցումը նոր կազմակերպչական կառուցվածքի, ինչպես նաև ցամաքային ուժերի զգալի տեխնիկական վերահագեցումը, որոնք իրականացվեցին վերջին 15 տարիների ընթացքում, նպաստեցին թուրքական բանակի շարժունության և մարտունակության նկատելի բարձրացմանը:

Դրա հետ մեկտեղ, 1990-ականների սկզբին երկրի հարավ-արևելքում և Իրաքի հյուսիսում ցածր ինտենսիվության ակտիվ մարտական գործողությունների վարման փորձը ցույց տվեց, որ, չնայած կազմակերպչական փոփոխություններին, պահպանված մեծ քանակությանը և աճող տեխնիկական հագեցվածությանը, թուրքական ցամաքային ուժերում առկա են վերջը հիմնախնդիրներ: Երկրի զինվորական ղեկավարության կարծիքով, վերջին տարածաշրջանային հակամարտությունների ընթացքում մարտական գործողությունների և Իրաքի պատերազմի վերլուծությունը մի շարք թույլ զգալից հայտնաբերեցին թուրքական բանակի կազմակերպման ու հագեցվածության մեջ: Մասնավորապես, թուրքական բանակում նշվում էր հետախուզական ու հարվածային ուղղաթիռների, ցածր բարձրության օդային թիրախների հայտնաբերման ռադիոլուկացիոն կայանների, մեծ հեռահարության ՀՕՊ համակարգերի և ռազմա-տրանսպորտային ինքնաթիռների, տիեզերական հետախուզության համակարգերի, կառավարման ու տեղեկատվական բարձր տեխնոլոգիական համակարգերի գործնա-

կան բացակայություն կամ դրանց անբավարար քանակություն?՝

Ղրանից ելնելով՝ ներկայումս Թուրքիայի ցամաքային զորքերում դիտվում են լայնածավալ բարեփոխումներ: Մեծ քանակությամբ անձնակազմերով դիվիզիաների փոխարեն կստեղծվեն ավելի փոքր բրիգադային կամ մույնիսկ գումարտակային ռազմի մարտական ստորաբաժանումներ, որոնք կկիրառեն գործողությունների՝ «պարտիզանական» կամ անվանոն մարտակարողություն: Ցամաքային զորքերի վերակազմակերպման հեղինակն է ուզաբեյլիստանի Ղալխավոր շտաբի ներկայիս պետ Յ. Բյույուկլանցընը: Ռազմական բարեփոխման կարևորագույն նպատակը հանդիսանում է մարտունակ ու շարժուն զինված ուժերի ստեղծումը, որոնք ունակ են կարծառես ժամկետում վերջնականապես ճնշել քրդական դիմադրությունը երկրի հարավ-արևելյան շրջաններում, ինչպես նաև Իրաքի հյուսիսում: Բարեփոխումների ընթացքում պլանավորվում է օգտագործել հասարակածային մարտական գործողությունների, փոքր ինտենսիվություն համակարգությունների և նոր սերնդի ասիմետրիկ պատերազմների համաշխարհային ու թուրքական փորձը:

Թուրքական Հանրապետության զյուբյան բոլոր տարիների առավել ծավալուն ռազմական բարեփոխման ընթացքում նախատեսվում է երկու դաշտային բանակների վերացում /3-րդ դաշտային և 4-րդ էգեյան/, զինված ուժերի երեք տեսակների միացյալ հրամանատարության ստեղծում /ցամաքային զորքերի, ՌՕՌ-ի և ՌՕՌ-ի/ և ներկայիս Ղալխավոր շտաբի վերակազմակերպում համապատասխան «կենտրոնական» կամ «միացյալ» շտաբի, որին կենթարկվեն թուրքական զինված ուժերի տեսակների հրամանատարությունները: 1-ին դաշտային բանակի շտաբի /Ստամբուլում տեղակայված/ և 2-րդ դաշտային բանակի շտաբի /թ. Սալաթիա/ հիման վրա կստեղծվեն զորքերի Արևմտյան ու Արևելյան խմբավորումների հրամանատարություններ, իսկ Թուրքիայի ամբողջ տարածքը ռազմա-վարչական ու օպերատիվ առումով կբաժանվի երկու հատվածի: Ըստ թուրքական զինված ուժերի ղալխավոր հրամանատար Յ. Բյույուկլանցի նախատեսվում է, որ արդյունքում 2014 թ.-ին թուրքական բանակի թվակազմը կվրձնաձևվի 20-30 տոկոսով: Ցամաքային զորքերի նոր կառուցվածքը ենթադրում է, որ այն թվակազմով պետք է ավելի փոքր լինի, սակայն ավելի շարժուն, մարտունակ և առավել ժամանակակից զենքով ու մարտական տեխնիկայով հագեցված: Պլանավորվում է նաև արհեստավար զինծառայողների մասնաբաժնի ավելացում /մշտական պատրաստվածության զորհանձնարում կան այնպիսի պաշտոններում, որոնք պահանջում են բարձր մասնագիտական նախապատրաստվածություն ու փորձ/, որոնք աստիճանաբար կփոխարինեն զինակոչիկներին: Տվյալ միջոցառումները դիտվում են որպես կարևոր փուլ ցամաքային զորքերի /ինչպես նաև Թուրքիայի զինված ուժերի այլ տեսակները/ համալրման համակարգը ապագա հեռանկարում բացառապես պրոֆեսիոնալ հիմքերի վրա տեղափոխելու համատեքստում:

Ռազմական բարեփոխման կարևոր տարր է դիտվում նաև ղեկավարման ու վերահսկողության համակարգերի /C2/ հնարավորությունների, հետախուզության ու Թուրքիայի զինված ուժերի այլ տեսակների և դաշնակցային ստորաբաժանումների հետ համատեղ զուգակցված ու միացյալ օպերացիաներ իրականացնելու ցամաքային զորքերի ունակության բարձ-

րացումը, որը նախատեսված է թուրքական զինված ուժերի զարգացման «Տեղական-2020» ընդհանուր ռազմավարությամբ: 2002 թ.-ին «Asefcan» ընկերությունը սկսեց 4-րդ դաշտային բանակին Մարտավարական գոտու կոմունիկացիոն համակարգերի մատակարարումը, որը պետք է դառնա թուրքական ամբողջ զինված ուժերի Կոմունիկացիաների ինտեգրված համակարգերի բաղկացուցիչ մասը: Բացի այդ, բանակային 3-րդ կորպուսի /Ստամբուլ/ հիման վրա ստեղծվել է Արագ արձագանքման թուրքական ուժերի հրամանատարությունը, որը պետք է հիմք հանդիսանա ՆԱՏՕ-ի բարձր պատրաստվածության ցամաքային ուժերի 6 Հրամանատարությունների մեկի շտաբի ծավալման համար /NATO High Readiness Forces (Land) HQ/: Այդ Հրամանատարության շրջանակներում և 3-րդ բանակային կորպուսի օրինակով Թուրքիայի զինվորական ղեկավարությունը նախատեսում է կառավարման, վերահսկողության և մատակարարման զուգակցված համակարգերի ծավալման ՆԱՏՕ-ի փորձի ուսումնասիրումը և ներդրումը՝ ամբողջ ցամաքային զորքերի մասշտաբով դրանց հետագա կիրառման համար¹⁰:

Թուրքիայի ցամաքային ուժերի վերակազմավորման շրջանակներում զգալի ուշադրություն է հատկացվում դրանց տեխնիկական ու քանակական վերազինմանն ու արդիականացմանը: Առանձնահատուկ ուշադրություն է հատկացվում զրահատեխնիկայի ձեռքբերմանն ու արդիականացմանը և ցամաքային զորքերը ժամանակակից հրետանային համակարգերով համալրմանը: 2005 թ. նոյեմբերին Թուրքիան Գերմանիայի հետ պայմանագրի ստորագրեց 298 միավոր «Leopard -2A4» արդիականացված տանկերի գնման մասին: Նախատեսվում էր, որ դրանք թուրքական բանակի սպառազինմանը կտրամադրվեն արդեն 2006 թ.-ի ընթացքում: Միաժամանակ իսրայելական ընկերությունները ձեռնամուխ կան թուրքական առկա տանկային պարկի մասշտաբային արդիականացման իրականացմանը: Առաջին հերթին դա վերաբերվում է 170 միավոր M-60 ամերիկյան արտադրության տանկերին, որոնք արդիականացումից հետո որոշ քննադիրներով կհամապատասխանեն իսրայելական վերջին սերնդի «Merkava» Mk4 տանկերին: Մասնավորապես, «Merkava»-ից թուրքական տանկերին անցան կրակի կառավարման համակարգը, աշտարակի պտույտի մեխանիզմը, կախովի գրահի հավաքակազմերը, ուժային համաառքը և 120-միլիմետրանոց հրանոթը: Արդիականացված բոլոր 170 միավոր M-60 տանկերը պետք է պատրաստ լինեն և մտցվեն Թուրքիայի ցամաքային զորքերի մարտական կազմի մեջ մինչև 2009 թ.-ը¹¹: Նախատեսվում է նաև շարունակել թուրքական ձեռնարկություններում թողարկվող ՀՄՍ-րի և զրահանքների, ինչպես նաև դրանք հիման վրա տարբեր մասնագիտացված մեքենաների արտադրությունը: Թուրքական ՂԱՀ-ի ձեռնարկությունները նախատեսում են շարունակել սեփական մշակման 155-մմ ինքնագնաց «Firtina» և քաղաքային «Panter» հրետանային համակարգերի արտադրությունը, տարբեր տրամաչափի ՋՀՀՀ համակարգերի և այլ սպառազինության ու օգնական տեխնիկայի արտադրությունը:

Ենթադրվում է, որ մոտ ապագայում զգալիորեն կուժեղացվի բանակային այլ հացիայի մարտական կազմը՝ ի հաշիվ հարվածային ուղղաթիռների մեծ թվակազմի գնման: Դա հնարավորություն կտա բարձրացնել ցամաքային զորքերի հարվածային հզորությունը, հատկապես տանկերի դեմ

պայքարում, հարավ-արևելյան լեռնային վայրերում քուրդ արստամբների դեմ զործողությունների կազմակերպման մեջ և ակրոմոդիլային ու դեսանտա-գրոհային օպերացիաների իրականացման ժամանակ: 2007 թ. մարտի վերջին պաշտոնապես հայտարարվել է, որ Agusta Aerospace իտալական ընկերությունը հաղթել է Թուրքիայի զինված ուժերին կրակային սատարման ժամանակակից 52 միավոր ուղղաթիռների "Mangusta" A-129/մատակարարման մրցույթում՝ մոտ 3 մլրդ. դոլար ընդհանուր արժեզրույթով: Մրցույթի եզրակակիչ մասում միտակցված ընկերությունը շրջանցեց հարավաֆրիկյան Denel-ին, իսկ ավելի վաղ մրցույթից դուրս էին մնացել ռուսական "Կամով" ընկերությունը իր Ka-50 և Ka-52 ուղղաթիռներով, ինչպես նաև ֆրանս-գերմանական "Eurocopter" ընկերությունը, որն առաջարկում էր "Tiger" հեռանկարային հարվածային ուղղաթիռը¹²: Դրանով ավարտվեց նոր մարտական հարվածային ուղղաթիռներով զինված ուժերի համալրման ծավալում ծրագրի Թուրքիայի փորձերի բազմամյա պատմությունը, որը դեռ սկսվել էր 1997 թ.-ին: 2000 թ.-ին 50 միավոր AH-12 ուղղաթիռների մատակարարման առաջին մրցույթը հաղթել էր ամերիկյան "Bell Textron" ընկերությունը, սակայն 2004 թ. մայիսին նրա հետ բանակցությունները փակուղի մտան՝ մարտական մեքենաների գների, Թուրքիայում այդ ուղղաթիռները արտադրելու համար արտոնագրերի և տեխնոլոգիաների փոխանցման մասին հարցերի շուրջ տարածաշրջանների պատկերով: Այն ժամանակ Անկարան չկալ համաբեց աճուրդը և հայտարարեց նորի անցկացման մասին: Ենթադրվում է, որ շուտով Թուրքիան ինչ կերպ երկրի ՌՕՌ-ի ու բանակային ավիացիայի համար բազմաձևանակ 32 միավոր ուղղաթիռների մրցույթի արդյունքները, որում մատակարարման հիմնական թեկնածու է դիտարկվում ամերիկյան "Սիկորսկի" ընկերության S-70 "Blackhawk" ուղղաթիռը¹³:

Ձգալի փոփոխություններ է նախատեսվում նաև ներմուծել սահմանների պաշտպանության համակարգում, որպեսզի այդ հարցում պատասխանատու ծառայությունները համապատասխանացվեն եվրոպական նվազագույն ստանդարտներին: Ներկայումս այդ ֆունկցիան կատարում են ժամադրներիայի ստորաբաժանումները, իսկ Թուրքիայի հարավ-արևելյան քրդաբնակ շրջաններում՝ անհիջականորեն նաև ցամաքային զորքերը: Սակայն, ԵՄ Թուրքիայի հավանական անդամակցության շուրջ բանակցությունների շրջանակներում, Թուրքիայի ՉՌՌ-ի գլխավոր շտաբը և Անվտանգության գլխավոր վարչությունը Եվրոմիության ճնշման տակ 2006 թ. մարտի վերջից սկսեցին մասնագիտացված սահմանապահ ծառայության ստեղծման ծավալում նախագծի իրականացումը: Նախնական տվյալներով նախագծի վերջնական արժեքը կկազմի 3,7 մլրդ. եվրո, որից մոտ 60 տոկոսը կորածաղրվի ԵՄ-ի կողմից: Թուրքիայի սահմանապահ ծառայության ստեղծման նախագծի շրջանակներում նախատեսվում է մինչև 2014 թ.-ը ուսուցանել մոտ 70 հազ. արհեստավարժ սահմանապահներ, նրանց հաջեցնել ժամանակակից սարքավորմամբ, հանդերձանքով և տեխնիկային միջոցներով, այդ թվում նաև ջերմացույց խցիկներով և արքամակային հակողության ու տեղեկացման համակարգով: Ըստ որում, ինչպես հաղորդում են թուրքական արդյունքները, նոր ծառայությունը ուղղակիորեն կապված չի լինելու զինված ուժերի և նրա ղեկավարումը պետք է իրականացվի սահմանամերձ շրջանների տեղական իշխանու-

թյունների կողմից և սահմանային պաշտպանության հատուկ վարչության կողմից, որը դեռևս ենթադրվում է ստեղծել: Ինչպես նշվում է, նոր սահմանապահ ծառայության ստեղծման մեջ լայնորեն օգտագործվելու է եվրոպական փորձը, մասնավորապես, որպես հիմք պետք է ընդունվի սահմանային պաշտպանության կազմակերպման ֆրանսիական մոդելը¹⁴:

5. ԹՈՒՐԻՔԻԱԻ ՌՕՌ-ը

ՌՕՌ-ը հատուկ դեր են կատարում զինված ուժերի կառուցվածքում՝ երկրի ռազմավարական պաշտպանական պլանավորման մեջ ունենալով առաջնահերթություն, իր մարտական ներուժով ու շարժունությամբ հանդիսանալով թուրքական զինված ուժերի առավել հզոր տեսակներից մեկը: Դա բացատրվում է ինչպես ՌՕՌ-ի բազմակարգ ժամանակակից տեխնիկական հազցվածությամբ, այնպես էլ նրանց բարձր մարտական հնարավորություններով ու իմպերատիվությամբ: Թուրքիայի ՌՕՌ-ը ունակ են իրենց վրա դրված մարտական խնդիրները լուծել ինչպես զինված ուժերի այլ տեսակների հետ սերտ համագործակցությամբ, այնպես էլ ինքնուրույն կերպով: Բացի այդ, պատերազմական պայմաններում դրանց դիտարկվում են նաև որպես ՆԱՏՕ-ի Միացյալ ՌՕՌ-ի բաղկացուցիչ մաս, մասնավորապես մտնում են ՆԱՏՕ-ի ՌՕՌ-ի 6-րդ տակտիկական ավիացիոն հրամանատարության մեջ /SIXATAF/: Թուրքական ՌՕՌ-ի հրամանատարության աճող հավակնությունների մասին է խոսում այն, որ 2002 թ. մարտին որոշում է կայացվել այն ժամանակ, որպես ՌՕՌ-ի պլանավորման ու միարտական օգտագործման հիմնական վաստաթուղթ, զորժող "Ռուքական Զինված Ուժերի Ավիացիոն Հայեցակարգ"-ը փոխարինել ավելի զգրքավ "Աէրոտիզերական ու հրթիռային պաշտպանության հայեցակարգ"-ով՝ որպես նոր Ազգային տիեզերական կառավարման ու ավիացիոն, գեներիային/հավաիրթիռային և տիեզերական տարրերի զարգացման ինտեգրված ծրագրի ծավալման բաղկացուցիչ մաս Թուրքիայի հեռանկարային՝ արտոնիզերական՝ ՌՕՌ-ի համար:

Կառուցվածքային առումով ՌՕՌ-ը կազմված են ՌՕՌ-ի հրամանատարությունից և շտաբից /Անկարա/, 1-ին և 2-րդ մարտավարական ավիացիոն հրամանատարություններից /Եսկիշեիր/ և Դիարբեքիր/, ուսումնական հրամանատարությունից /Իսթանբուլ/ և Կոնյա հրամանատարությունից /Իզմիր/, թիկունքային հրամանատարությունից, վարելիքի լիցեզավորման ավիացիոն 10-րդ հենակետի հրամանատարությունից /Ինջիլիկ, Ադանա/, 11-րդ գլխավոր ավիացիոն տրանսպորտային հենակետի հրամանատարությունից /Եթիզիթ, Կայսերի/:

Մարտավարական ավիացիոն հրամանատարությունները հանդիսանում են ՌՕՌ-ի հիմնական օպերատիվ միավորումները: 1-ին մարտավարական ավիացիոն հրամանատարությունը փակում է երկրի արևմտյան օդային տարածքը և ներառում է՝ ավիացիոն 4 հենակետեր /Եսկիշեիրում, Ակինջիում, Բանդիրմեում, Բալիքեսիրում/, գեների-իրթիռային հենակետը /Կեծղաղ, Սաամրուկ/ և ավիացիոն տարածության նկատմամբ հսկողության 1-ին խմբավորման հրամանատարությունը: 2-րդ մարտավարական ավիացիոն հրամանատարությունը պատասխանատու է երկրի արևելյան ու հարավ-արևելյան օդային տարածքների համար և ներառում է 3 ավիա-

ցիոն հենակետեր Աերզիֆնուն, Երիպե-Մալաթիայում ու Ղիարբեքի-րում/ ու ավիացիոն տարածքի նկատմամբ հակոդության 2-րդ խմբի հրամանատարությունը:

ՈՂՈՒ-ն ընդգրկում են 19 կործանիչ ու կործանիչ-նմբակոծիչ ավիացիոն խվակարիներ, 1 հետախուզական ավիացիոն խվակարի, 6 ուսումնական ավիացիոն խվակարիներ, 6 տրանսպորտային ավիացիոն խվակարիներ, վառելիքի լիցքավորման ավիացիոն 1 խվակարի, 8 զենիթ-իրթիային դիվիզիոններ /"Nike Hercules" ՁՀՀ-ի 34 մարտկոցներ/:

Թուրքական ՈՂՈՒ-ի մարտական կազմում գտնվում են ավելի քան 400 ինքնաթիռներ, այդ թվում՝ 218 միավոր F-16C/D, 50 F-4E "Terminator 200", մոտ 65 միավոր F-4E /ընդ որում, մոտ 18 միավոր RF-4E/, 58 միավոր F-5A/B /ընդ որում, մոտ 20 միավոր RF-5/, կան նաև վառելիքի լիցքավորման 7 միավոր KC-135R ինքնաթիռներ: ՈՂՈՒ-ի, ցամաքային զորքերի բանակա-յին ավիացիայի, ժանդարմերիայի և ՈՂՈՒ-ի ավիացիայի կազմում կան մոտ 470 ուղղաթիռներ, ըստ որում 37 միավոր AH-1 W/P հարվածային ուղղաթիռ-ներ /բանակային ավիացիայի կազմում/ և գրեթե 350 բազմանշանակ ու տրանսպորտային ուղղաթիռներ /AS-532 Cougar, S-70A "Blackhawk", UH-1H/AB-204/AB-205, ՕՈՒ-17/: Թուրքական բանակն ունի անօդաչու թռչող սարքերի մեծությամբ երկրորդ /Իսրայելից հետո/ պարզը ավելի քան 110 մի-ավոլո/, այդ թվում նաև "Harpy" տիպի հարվածային նման ապարատներ¹⁵:

Ըստ ռազմական փորձագետների, իրենց պրոֆեսիոնալ պատրաստ-վածությամբ, թռչեքային ժամերի քանակով /այդ թվում նաև լեռնային պայ-մաններում ցածր բարձրության վրա/ և բարոյա-իզգրբանակական տրամադր-վածությամբ, թուրքական օդաչուները հանդիսանում են ՆԱՏՕ-ի երկրնե-րի ՈՂՈՒ-րի կազմում առավել պատրաստվածներից մեկը: Իսկ Մերձա-վոր ու Միջին Արևելքի տարածաշրջանում Թուրքիայի ՈՂՈՒ-ը քանակա-կան ու որակական առումով /այդ թվում նաև անձնակազմի արհեստա-վարժության հարցում/ զիջում են միայն Իսրայելի ՈՂՈՒ-ին: Թուրքիայի ՈՂՈՒ-ը /AEWS-ը/ Հեռահար ռադիոլոկացիոն հայտնաբերման ինքնաթիռների /AEWS-ը/ որոշակի քանակով համալրման ծրագրի հաջող ավարտի դեպ-քում, տարածաշրջանում նա իրեն հավասարը չի ունենա նաև ավիացիա-յի կառավարման համակարգի ու մարտական օգտագործման, հետա-խուզման և օդային տարածքի վերահսկման առումներով:

Թուրքիայի ՈՂՈՒ-ի բարձր տեխնիկական մակարդակի վրա պահպա-նումը ապահովվում է նաև երկրի ավիացիոն արդյունաբերության բավա-րար հնարավորություններով, քանի որ թուրքական ռազմական ավիացի-այի հիմնական մարտական ինքնաթիռ հանդիսացող F-16-ի հավաքը /ըստ ամերիկյան արտոնագրի/, որոշ բաղադրիչների արտադրությունը և վերա-տորոգումը դեռևս 1980-ականների վերջերից իրականացվում են թուրքա-կան ձեռնարկություններում: Թուրքական մարտական ավիացիայի մար-տական ներուժը և գործողության շարավիթը զգալիորեն աճեցին վառելի-քի լիցքավորման 7 միավոր KC-135R ինքնաթիռներով համալրումից հե-տո: Իր հերթին, բեռների տեղափոխման ու դեսանտային գործողություն-ների իրականացման առումով Թուրքիայի ՈՂՈՒ-ի տրանսպորտային ավիացիայի հնարավորությունները էպպես կաճեն A-400M տրանսպոր-տային ինքնաթիռների արտադրության եվրոպական ծրագրի իրագործու-մից հետո, որում մասնակցում է նաև թուրքական կողմը /առաջին փուլում

նախատեսվում է Թուրքիայի ՈՂՈՒ-ի համար գնել 10 ինքնաթիռ/:

Թուրքական ՈՂՈՒ-ի հեռանկարային պլաններում առաջին հերթին նա-խանշվում է առաջիկա 15 տարիների ընթացքում 100-120 միավոր F-35 ինք-նաթիռների գնումը, որոնց մշակվում են JSF ծրագրի շրջանակներում /որում մասնակցում են ԱՄՆ-ն, Մեծ Բրիտանիան, Կանադան, Ավստրալիան, Ղա-նիան, Նորվեգիան և Թուրքիան/ Թուրքիայի ՈՂՈՒ-ի սպառնազինման մեջ գտնվող F-4 և F-16 ինքնաթիռների աստիճանական փոխարինման համար: Թուրքիան համոզված է այդ նախագծի ակտիվ մասնակիցներից մեկը: Ինչպես պլանավորված է, F-35 կործանիչների բվակազմի ձեռքբերումը թուրքական զանձարանի վրա կանրադառնա մոտ 10 մլրդ. դոլարի տեսքով: Ղրա հետ մեկտեղ հատկանշական է, որ Թուրքիայի ռազմա-քաղաքական ղեկավարությունը երկար ժամանակ տատանվում էր միայն F-35 ինքնաթի-ռների գնման կամ նաև "Թաֆոուն Եվրոֆայթեր" կործանիչների որոշակի քա-նակի լրացուցիչ ձեռքբերման արթիվ: Մի կողմից, եվրոպական կործանի-չների ձեռքբերումով Թուրքիան ձգտում էր դրական ազդեցություն ունենալ ՄԱԻ-ն իր անդամակցության բանակցային գործընթացի վրա, սակայն, մյուս կողմից, ամերիկյան կործանիչների մեծ պարկի ավանդական ներկայությու-ն և հատկապես նման ինքնաթիռների շահագործման հարուստ փորձը ստիպեցին թուրքական Վլխավոր շտաբին ու ՈՂՈՒ-ի իրաձանատարությա-նը ընտրությունը կատարել ի օգուտ միայն F-35-ի: 2005 թ.-ի մայիսին Թուր-քիայի արտոնիզերական կորպորացիայի /ԹԱԿ/ ղեկավարությունը 100 մլն. դոլար արժողությամբ համաձայնագիր ստորագրեց "Նորուրպ Գրունման/ կորպորացիայի հետ F-35 կործանիչ-նմբակոծիչների համար համալրող բաղկացուցիչների ու կոմպոզիտային նյութերի արտադրության մասին: ԹԱԿ-ի ղեկավարության կարծիքով, այն քանից հետո, երբ F-35-ը կրկին զանգվածային արտադրության և կավելանա այն ինքնաթիռը գնող երկրնե-րի թիվը, ԹԱԿ-ը՝ այդ կործանիչի պահեստամասերի ու կոմպոզիտային նյու-թերի արտադրության մեջ, պլանավորում է իր մասնաբաժինը հասցնել 1,2 լրդ. դոլարի¹⁶: Թուրքական ընկերությունները կմասնակցեն նաև ինքնաթի-ռի ավիոնիկայի ու կառավարման համակարգերի տարրերի արտադրության-ը: 2003 թ. հոկտեմբերին համաձայնագիր ստորագրվեց, որի համաձայն թուրքական "Elektronik San AS" /Ayse/ ընկերությունը սկսեց F-35 հեռան-կարային ինքնաթիռի իրթիոային սպառազինման կառավարման համակար-գերի աամսմին տարրերի արտադրությունը¹⁷:

Ինչպես պլանավորված է, մոտավորապես 2015 թ.-ին կսկսվի թուրքա-կան կործանիչ-նմբակոծիչների աստիճանական փոխարինումը նոր F-35 ինքնաթիռներով: Այդ ժամանակ թուրքական ՈՂՈՒ-ի սպառնազինման մեջ կլինեն միայն արդիականացված F-16C/D և F-4E "Terminator" կործանիչ-նմբակոծիչները, իսկ հնացած F-5A/B կործանիչները դուրս կգրվեն, կհան-վեն մարտական կազմից կամ կփոխանցվեն ուսումնական գործանասերին: Սակայն, մինչ տվյալ կործանիչի տրամադրումը, Թուրքիան պլանավորում է իրականացնել F-16-ի նախկին մոդելների արդիականացումը և F-16-ի վերջին մոդել Block 50-ի 30 միավոր կործանիչ-նմբակոծիչների ձեռքբերու-մը, իսրայելական մասնագետների օգնությամբ F-4E կործանիչ-նմբակոծի-չների նոր թվաքանակի արդիականացումը, և իրականացնել պատրշած վի-ճակում ինքնաթիռային պարկի տեխնիկական պահպանման ուղղված մի շարք այլ միջոցառումներ: Ղրանից ելնելով՝ 2006 թ.-ին ՈՂՈՒ-ի իրաձանա-

տարությունը "Ղոկիիդ-Մարտին" ընկերության հետ համաձայնագիր ստորագրեց պաշտպանման մեջ զտնվող 218 ինքնաթիռներից 117 F-16 կործանիչների արդիականացման մասին:

Սուտակա ամիսներին թուրքական զինված ուժերը մտադրված են նաև մեռք բերել 2 անօդաչու ռազմական օդաչարիկ՝ Թուրքիայի հարավ-արևելքյան շրջաններում և Իրաքի հետ սահմանամերձ տարածքում քրդական մարտական ջոկատների տեղաշարժերի նկատմամբ մշտական մոնիտորինգի ու հետախուզման ապահովման համար և դրանք դեմ պայքարի ընթացքում թուրքական բանակի զորամասերի ու ժամդրներիայի միջև կորդիինացիայի ապահովման համար: Օդաչարիկները հագեցված կլինեն դիտման ժամանակակից օպտիկական ու էլեկտրոնային միջոցներով, որոնցից մեկը կտեղադրվի ստրատոսֆերայում /21 կմ բարձրության վրա/, իսկ մյուսը՝ Թուրքիայի տարածքի վրա միջին բարձրություններում: Օդաչարիկներից յուրաքանչյուրի մոտավոր արժեքը, որոնք պլանավորվում է գնել ամերիկյան "Ղոկիիդ-Մարտին" ընկերությունից, կկազմի 50-60 մլն. դոլար և դրանք ընդունակ կլինեն հսկել մոտավորապես 1 հազ. ք. կմ տարածք¹⁸:

Ամկա հիմնախնդիրներին, որոնք ներկայումս բախվում են թուրքական ՌՕՌՒ-ը, պետք է ավելացնել կարողել զգալի պակասը առաջին հերթին՝ բարձր որակավորում ունեցող օդաչուների: 1984 թ.-ից Թուրքիայի ՌՕՌՒ-ից հեռացել են ավելի քան 1500 օդաչուներ, իսկ արհեստավարժ ազդական օդաչուների ամենամյա կադրային հոսքը կազմում է մինչև 7 տոկոս: Տևական քաղաքացիական ավիացիայի արագ ու արդյունավետ աճի հիմնապատկերի վրա /հաշվի առնելով Թուրքիայի զոսաշրջության ոլորտի արագ վերելքը/ շատ ռազմական օդաչուներ նախընտրում են հեռանալ ՌՕՌՒ-ից և ընդունվել շատ ավելի բարձր վարձատրվող աշխատանքի քաղաքացիական ավիաընկերություններում: Ի նկատի ունենալով այն, որ կործանիչ-օդաչուի նախապատրաստումը տևում է մոտ 15 տարի և թուրքական ՌՕՌՒ-ի վրա նստում է մոտ 15 մլն. դոլար, ռազմական ավիացիայի շարունակվող ծավալուն արդիականացման հիմնապատկերի վրա Թուրքիայի ՌՕՌՒ-ը զգալի կորուստ են կրում և մոտ ապագայում կարող են բախվել լուրջ կադրային հիմնախնդիր¹⁹:

Իր զինված ուժերի հետախուզական հնարավորությունների բարձրացման նպատակով թուրքական ռազմա-քաղաքական ղեկավարությունը պլանավորում է նաև իր տիեզերական արբանյակային ծրագրի ծավալումը, մասնավորապես՝ ժամանակակից արբանյակների արձակումը ուղեծիր: Այդ ծրագրում գործընկերներ կարող են դառնալ Իսրայելը, ԱՄՆ-ը և մի շարք եվրոպական երկրներ: Այդ ծրագրի արժեքը կկազմի 200 մլն. դոլար, իսկ դեպի ուղեծիր առաջին հետախուզական ռազմական արբանյակների դուրս բերումը պլանավորվում է իրականացնել արդեն 2011 թ.-ից²⁰:

Վերջին տարիներին թուրքական ՌՕՌՒ-ի հրամանատարությունը մեծ ուշադրություն է հատկացնում մեծ շառավղի ՀՕՊ համակարգերով հագեցման հարցին, ինչպես նաև՝ Թուրքիայի տարածքում ռազմական գործողությունների բառերաբանի ՀՀՊ-ի համակարգերի ծավալմանը: Որպես առավել իրատեսական տարբերակ դիտարկվում է ամերիկյան գեներալային "Patriot" համակարգերի տարբեր մոդիֆիկացիաների, իսրայելական "Arrow" կամ "Arrow-2" ՀՀՊ համակարգերի, ինչպես նաև ռուսական C-300 ՀՀՀ-րի գնումը: Ասկայն, դեռևս Թուրքիայի ռազմա-քաղաքական ղեկա-

վարությունը այդ հարցի շուրջ վերջնական որոշում չի կայացրել, և շատ առումներով դա կախված է ՀՌՁ-ի տարածման հիմնախնդրի շուրջ իրավիճակի և Մերձավոր ու Միջին Արևելքի տարածաշրջանում հրթիռային տեխնոլոգիայի ընդհանուր զարգացման դինամիկայից²¹:

6. ԹՈՒՐԻԱՅԻ ՌՕՌՒ-ը

Ուազմածովային ուժերը հանդիսանում են զինված ուժերի ինքնուրույն տեսակը: Կազմակերպչական առումով նրանք ներառում են չորս հրամանատարություն՝ Ուազմածովային նավատորմի, Հյուսիսային ռազմածովային զուտու, Հարավային ռազմածովային զուտու և Ռուսումնական: ՌՕՌՒ-ի հրամանատարի ենթակայության տակ օպերատիվ առումով գտնվում է նաև ափամերձ պաշտպանության հրամանատարությունը, որը խաղաղ պայմաններում գտնվում է ՆԳՆ վարչական ենթակայության տակ: Թուրքական ՌՕՌՒ-ի նավային կազմը ընդգրկում է 13 դիզելային սուզանավեր, 20 ֆրեգատներ ԿՀՄ, 6 կորվետ, 22 հրթիռային ու տորպեդային կատերներ, 106 պարեկային նավեր ու կատերներ, 50 դեսանտային նավեր ու մոտորանավակներ, ավելի քան 80 օժանդակ նավեր ու մոտորանավակներ: Ծովային ավիացիայի կազմում են երկու էսկադրիլներ, որոնք ընդգրկում են մինչև 30 ինքնաթիռներ ու ուղղաթիռներ: ՌՕՌՒ-ի կազմի մեջ է մտնում նաև ծովային հետևակի առանձին բրիգադը²²:

Թուրքիայի ՌՕՌՒ-ի հիմքը հանդիսանում է Ուազմածովային նավատորմի /ՌՕՄ/ Հրամանատարությունը, որի շտաբը գտնվում է Գլխավոր ռազմածովային Գեյզուկ հենակետում /ԳՈՏՀ/: ՌՕՄ-ի մեջ մտնում են միասեռ ուժերի չորս ֆլոտիլիաներ՝ սուզանավերի, վերջոյա նավերի, հրթիռային կատերների և ական-տրալային ուժերի, ինչպես նաև ծովային ավիացիայի զուտու, օժանդակ նավերի դիվիզիոնը, ռազմածովային հենակետերը, ՌՕՌՒ-ի թիկունքային ապահովման կենտրոնը և "Գեյզուկ" նավաշինական գործարանը: Սուզանավերի ֆլոտիլիան կազմված է շտաբից, սուզանավերի երեք դիվիզիոնից /"Altay" – Type 1200 և "Preverze" – Type 1400 տեսակների/ և տեղակայված է Գեյզուկ ԳՈՏՀ-ում և Աքսաղ-Կարագաչ ԳՈՏՀ-ում: Վերջոյա ուժերի ֆլոտիլիան հանդիսանում է ՌՕՄ-ի հիմնական մարտական միավորումը, որը ներառում է շտաբը, ԿՀՄ ֆրեգատների 5 դիվիզիոն և տեղակայվում է Գեյզուկ ԳՈՏՀ-ում և Աքսաղ-Կարագաչ ԳՈՏՀ-ում: Հրթիռային կատերների ֆլոտիլիան կազմված է շտաբից, հրթիռային կատերների 2 դիվիզիոնից և տեղակայվում է Ստամբուլի ԳՈՏՀ-ում: Ալյանարս նավերի ֆլոտիլիան կազմված է շտաբից, ականաբեթիչ նավերի երկու դիվիզիոնից և տեղակայվում է Էրզրուի ԳՈՏՀ-ում: Օժանդակ նավերի դիվիզիոնը /տեղակայվում է Գեյզուկ ԳՈՏՀ-ում/ նախատեսված է մարտական ուժերի թիկունքային մասակարարման համար և ներառում է լիցքավորող տանկերներ, մասակարարման տրամադրող, քարշակներ և այլն: Ծովային ավիացիայի զուտու տեղակայվում է Տոպել ավիացիոն հենակետում, կազմված է ավիացիոն էսկադրիլից /հենակետային պարեկային ավիացիայի 6 միավոր CN-235-100M ինքնաթիռներ և TB-20 ուսումնական ինքնաթիռներ/ և հակամակային ուղղաթիռների էսկադրիլից /7 միավոր S-70B ուղղաթիռներ, 12 միավոր AB-212 և 1 հատ AB-204 ուղղաթիռներ/²³:

Հյուսիսային ռազմածովային զուտու Հրամանատարությունը /շտաբը գտնվում է Ստամբուլի ԳՈՏՀ-ում/ պատասխանատու է Բոսֆոր և Դարդանել

ներուցների գոտու, Մարմարա ծովի և Թուրքիայի սևծովյան ափի երկայնքով ծովային գոտիների համար: Կազմակերպչական առումով այն ընդգրկում է երեք շրջանների հրամանատարությունները՝ Սև ծովի /Էրեզլիի ՌՇՀ/, Ռուսիայի ներուցի /Ստամբուլի ՌՇՀ/, Դարդանդի ներուցի, ինչպես նաև փրկարարական ու ստորջրյա աշխատանքների հրամանատարությունը, նավիգացիայի ու հիդրոգրաֆիայի վարչությունը, «Ստամբուլ» նավաշինարարական գործարանը: Խաղաղ պայմաններում այն պատասխանատու է ենթակա կամ ՀՌՇԳ-ի պատասխանատվության գոտի ժամանած նավերի, ափամերձ շրջանների մարտական պատրաստվածության, ռազմա-ծովային հենակետերի թիվունցային ապահովման, դրանց գործունեության և այլնի համար: Պատերազմական պայմաններում հրամանատարությունն ապահովում է պատասխանատվության իր գոտու տարածքում իրեն ենթակա ուժերի կողմից մարտական խնդիրների կատարումը:

Հարավային ռազմա-ծովային հենակետի Հրամանատարությունը /շտաբը գտնվում է Իսմիրի ՌՇՀ-ում/ հանդիսանում է Թուրքիայի ՌՇՌՌ-ի գլխավորումը, որի պատասխանատվության գոտու մեջ մտնում են ջրային շրջանները Էգեյան ու Միջերկրական ծովերի ափերի երկայնքով: Կազմակերպչական առումով այն ընդգրկում է երկու ֆլոտիլիա՝ պարելային ուժերի /Բզմիրի ՌՇՀ/ և ամֆիբիա-դեսանտային /Յուչայի ՌՇՀ/, երկու հրամանատարություն՝ Էգեյան ծովի շրջանի /շտաբը գտնվում է Իզմիրի ՌՇՀ-ում/ և Միջերկրական ծովի շրջանի /շտաբը գտնվում է Մերսինի ՌՇՀ-ում/, ծովային հետևակի բրիգադը /տեղակայված է Ֆոչայում/, ինչպես նաև ՀանՌՇՀ-ի պատասխանատվության գոտում գտնվող ռազմա-ծովային հենակետերի հրամանատարությունները: Պարելային նավերի ֆլոտիլիան ներառում է շտաբը, պարելային նավերի դիվիզիոնը, պարելային կատերների երկու դիվիզիոնները և ֆլոտիլիայի կազմից փոխանցվող հրթիռային կատերների ՀՆԸ դիվիզիոնը: Ամֆիբիա-դեսանտային ֆլոտիլիան կազմված է շտաբից և դեսանտային նավերի ու կատերների երեք դիվիզիոններից: Ըստ ռազմական փորձագետների գնահատականի, ամֆիբիա-դեսանտային ֆլոտիլիայի ուժերն ու միջոցները հնարավորություն են տալիս իրականացնել ծավալուն ծովային դեսանտային օպերացիա՝ ափամերձ պլազդարմի, խոշոր նավահանգստի կամ ՌՇՀ-ի գրավման և դրանց հետագա պաշտպանման նպատակով: Ծովային հետևակի բրիգադը հանդիսանում է Թուրքիայի ՌՇՌՌ-ի էլիտար միավորումը, որը նախատեսված է ծովային դեսանտային օպերացիաների, նավերի ու ավիացիայի աջակցությամբ թշնամու ափամերձ շրջաններում մարտական գործողությունների իրականացման համար: Բրիգադը կազմված է ծովային հետևակի 3 գումարտակներից, մատակարարման գումարտակից, հրետանային դիվիզիոնից, ներառում է մոտ 30 հազ. մարդ և համարվում է թուրքական զինված ուժերի առավել նախապատրաստված և մարտունակ միավորումներից մեկը:

Ուսումնական հրամանատարությունը զբաղված է ՌՇՌՌ-ի անմասկազմի ուսուցմամբ ու նախապատրաստմամբ /շտաբը գտնվում է Կարսմյուրսեի ՌՇՀ-ում/, նրան ենթակա են ռազմա-ծովային ուսումնական հաստատությունները և կենտրոնները, ուսումնական նավերի ու կատերների ջուկատները և այլն:

Թուրքիայի ռազմա-քաղաքական ղեկավարության զինված ուժերի արդիականացման հեռանկարային պլանների մեջ զգալի ուշադրություն է

հատկացվում ՌՇՌՌ-ի զարգացմանն ու հազցեցվածությանը, նրա կազմի մեջ տարբեր նշանակության նոր մարտական նավերի, սուզանավերի ու կատերների ընդգրկումը, ինչպես նաև ծովային պարելային ու հավանա-վականային ավիացիայի քանակի ավելացումը: Մասնավորապես, Թուրքիայի ՌՇՌՌ-ի զարգացման ծրագիրը մինչև 2012 թ. նախատեսում է նոր սերնդի TF-2000 տիպի 6 միավոր ԿԿՍ ֆրեգատների կառուցում, Preverze տիպի երեք սուզանավերի շինարարության ավարտում, նոր շարքի ժամանակակից սկանազերծիչ նավերի տարբեր նշանակման արագընթաց կատերների ու կորվետների զգալի քանակների կառուցում: Ծովային պարելային ու հավանավականային ավիացիայի հնարավորությունների ուժեղացման նպատակով նախատեսվում է հականավակային S-70B "Seahawk" ուղղաթիռների և հենակետային պարելային ավիացիայի CN-235 ինքնաթիռների լրացուցիչ քանակների ձեռքբերումը²⁴:

Ըստ Թուրքիայի ռազմա-քաղաքական ղեկավարության պլանների, արդյունքում մինչև 2012 թ.-ը ՌՇՌՌ-ի մարտական կազմում նախատեսվում է ունենալ 15 դիզելային սուզանավեր, 24 միավոր ԿԿՍ ֆրեգատներ, 24 միավոր սկանազերծիչ նավ, 12 միավոր պախակային նավեր ու կորվետներ, 18 միավոր հրթիռային կատերներ, 70 միավոր դեսանտային նավեր ու կատերներ, 36 հականավակային ուղղաթիռներ և այլն²⁵: Բացի այդ, նախատեսվում է նաև ՌՇՌՌ-ի կազմի մեջ մտցնել մեկ միավոր թեթև ավիակազմ²⁶: Պլանավորվում է, որ ՌՇՌՌ-ի կազմի մեջ մտցվող նավերի ու սուզանավերի հիմնական մասը պետք է կառուցվի թուրքական նավաշինարարական գործարաններում՝ արտոնագրերի կամ սեփական մշակումների հիման վրա: Միևնույն ժամանակ պետք է ինկատի ունենալ, որ ֆինանսական լուրջ խնդիրները, ինչպես նաև հրամանատարության այն ցանկությունը, որը որպես առաջնախերթ խնդիր է հանդիսանում թուրքական նավատորմի տեղակայման հիմնական հենակետի՝ Գելջուլի ՌՇՀ-ի վերականգնումն ու վերասարքավորումը /որը գործնականում վիուզվել է 1999 թ. երկրաշարժի հետևանքով/, կարող են բարդացնել Թուրքիայի ՌՇՌՌ-ի նավային կազմի թարմացման ու ուժեղացման նշված ծավալուն ծրագրի իրականացումը²⁷:

Դրա հետ մեկտեղ պետք է նշել, որ ընդհանուր առմամբ Թուրքիայի ՌՇՌՌ-ը հանդիսանում է համեմատաբար ժամանակակից և տեխնիկական բավական լավ հազցված զինված ուժերի տեսակ, որն ունակ է մարտական խնդիրներ լուծել Միջերկրական ծովի արևելյան և Սև ծովի ակվատորիայում՝ ինչպես ինքնուրույն կերպով, այնպես էլ ՆԱՏՕ-ի Միացյալ ՌՇՌՌ-ի հետ համատեղ: ՆԱՏՕ-ի պլաններում թուրքական ՌՇՌՌ-ին հատկացվում է Սև ծովում և Միջերկրական ծովի հյուսիս-արևելյան շրջանում նւուցների ու կոմունիկացիաների պաշտպանության, հականավակային պայքարի կազմակերպման, պատասխանատվության իր գոտում մարդափրկական գործողությունների ապահովման, ծովային դեսանտների դեմ պայքարի դեր:

Ավելին, ինչպես քանակային առումով, այնպես էլ իր մարտական հնարավորություններով, Թուրքիայի ՌՇՌՌ-ը զգալիորեն գերազանցում են տարածաշրջանի մյուս երկրների ՌՇՌՌ-ը: Լսոնիրդային Միության վիուզումից և ԽՍՀՄ նախկին Սևծովյան նավատորմը Ռուսաստանի ու Ուկրաինայի միջև բաժանումից հետո Թուրքիայի ՌՇՌՌ-ը դարձան ամենազորեղ Սև ծովում: «Մաքը պատերազմի» ավարտը, Սևծովյան-Կասպիական տա-

րածաշրջանում մասշտաբային էներգետիկ և կոմունիկացիոն նախագծերի իրականացման սկիզբը, անվտանգության ոլորտում Թուրքիայի գերակայությունների ընդհանուր փոփոխությունը հանգեցրեցին նաև թուրքական ՌՇՌ-ի նպատակների ու խնդիրների փոփոխմանը: Եթե նախկինում նրանց գերակա նպատակը համարվում էր նեղուցների պաշտպանությունը և մասնակցությունը ՆԱՏՕ-ի Միացյալ ՌՇՌ-ին, ապա ներկայումս Սև ծովի տարածքում Թուրքիայի ռազմա-ծովային ռազմավարությունը դարձել է ավելի ագրեսիվ և հավակնոտ: Դրա վառ դրսևորումներն էին կանոնավոր ռազմա-ծովային զորավարությունները և սևծովյան երկրների ռազմական նավերի ու կատերներին մասնակցությամբ անցկացվող համատեղ գործողությունները, որոնք իրականացվում են հատկապես Թուրքիայի ՌՇՌ-ի նախաձեռնությամբ կամ ղեկավարությամբ:

Թուրքիայի նշված ռազմավարության շրջանակներում պետք է դիտարկել Թուրքիայի կողմից նախաձեռնված 2001 թ. համաձայնագրի ստորագրումը՝ սևծովյան 6 պետությունների կողմից /Դուբայի, Կրաստան, Ռուսաստան, Ռումինիա, Թուրքիա և Ուկրաինա/ Սևծովյան ռազմա-ծովային խնամավորման /ՄՈՇՄ/ ստեղծման մասին /"Blackseafor": Չնայած, որ ՄՈՇՄ-ի ծավալման հիմնական նպատակը հայտարարվել էր Սևծովյան երկրների ՌՇՌ-ի միջև համագործակցության կորոդինացումը, որոնման-փրկարարական ու մարդասիրական գործողությունների, զորավարությունների համատեղ իրականացումը, ահաբեկչության ու ծովային մաքսանեցության դեմ պայքարը, առաջին հերթին սա պետք է դիտարկել Սև ծովում թուրքական ռազմա-ծովային նավատորմի աճող դերի արձանագրման տեսանկյունից: Մյուս կողմից, Blackseafor-ի ստեղծումը և թուրքական կողմի հատուկ շահագրգռվածությունը դրանում Ռուսաստանի Սևծովյան նավատորմի մասնակցության մեջ, առիթ է տվել մի շարք փորձագետների կողմից պնդելու, որ Մոսկվայի ու Անկարայի միջև առկա է որոշակի տարածաշրջանային ռազմա-ծովային մերձեցում՝ շրջանցելով ԱՄՆ-ն և ՆԱՏՕ-ի կառույցները:

Սևծովյան տարածքում թուրքական ՌՇՌ-ի աճող դերն է խորհրդանշում նաև 2004 թ.-ին իրենց կողմից ծավալած "Սևծովյան ներդաշնակություն" օպերացիան: Տվյալ գործողության շրջանակներում, որն անցկացվում էր թուրքական ՌՇՌ-ի կողմից ՆԱՏՕ-ի հետ համաձայնեցման պայմաններում, նախատեսվում է Սև ծովի հարավային ու հարավ-արևելյան շրջանակների մշտական պարեկային հսկողություն թուրքական ռազմա-ծովային նավատորմի կողմից: Դրա իրականացման համար Թուրքիայի ՌՇՌ-ի կազմում ստեղծվել է հատուկ օպերատիվ խումբ, որի մեջ մտնում են 4ԿՄ Ֆրեզատներ, սուզանավեր, պարեկային ու հրթիռային կատերներ, ինչպես նաև պարեկային հենակետային ավիացիան ու ուղղաթիռներ²⁸: Տվյալ օպերացիային 2006 թ.-ից միանալու իր ցանկության մասին հայտնել է նաև Ռուսաստանը²⁹, ինչը վկայում է այն, որ թուրքական կողմը որոշակի մտավախություն ունի սևծովյան հիմնախնդիրներում ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի Միացյալ ՌՇՌ-ի առավել ակտիվ ներգրավման վերաբերյալ, ինչը կարող է սպառնալիքի տակ ղնել այս տարածաշրջանում Թուրքիայի աճող ազդեցությունը:

7. ԵՃՐՈՓԱԿՈՒՄ

Ընդհանուր առմամբ կարելի պնդել, որ Թուրքիայի զինված ուժերն /ՌՇՌ/ օժտված են մարտունակության բավական բարձր մակարդակով,

զգալի քանակով, կարգապահ ու արհեստավար սպայական կորպուսով, բավարար տեխնիկական հագեցվածությամբ: Ներկայումս ԹՅՈՒ-ը ունակ են լուծել ինչպես արտաքին լայնածավալ հարձակման դեմ պաշտպանության ապահովման և երկրի ներսում աքստանքների դեմ միաժամանակյա տեղային պայքարի հետ կապված խնդիրներ, այնպես էլ տիրապետում են զգալի ներուժի զինված ուժերի բոլոր տեսակների մասնակցությամբ տարածաշրջանային միացյալ հարձակողական գործողությունների իրականացման համար: Թուրքական հանրապետության զինված ուժերը, ըստ փորձագետների կարծիքի, ընդունակ են վարել տեղական լայնածավալ մարտական գործողություններ ինչպես ինքնուրույն կերպով /հատկապես օպերատիվ ու օպերատիվ-տակտիկական մակարդակներում/, այնպես էլ ՆԱՏՕ-ի Միացյալ զինված ուժերի կազմում:

Թուրքիայի ռազմա-քաղաքական ղեկավարության կարծիքով, հեռանկարում, հանրապետության գոյության բոլոր տարիների կտրվածքով ամենածավալուն ռազմական քարեփոխման իրականացման արդյունքում, ինչպես նաև վերասպառազինման կամ առկա սպառազինության և ռազմական տեխնիկայի արդիականացման շնորհիվ, թուրքական զինված ուժերը զգալիորեն կբարձրացնեն իրենց մարտունակությունը, կդառնան ավելի շարժուն և անձնակազմի քանակի կրճատման ու կազմակերպչա-հաստիքային կառուցվածքի փոփոխման շնորհիվ քիչ քերքի ամրակված օպերատիվ ձևերով: Կմեծանան նաև թուրքական զինված ուժերի հնարավորությունները հետախուզության, հսկողության ու կառավարման առումով: Նախատեսվում է զինված ուժերի համալրման համակարգի աստիճանական տեղափոխում պրոֆեսիոնալ հիմքերի վրա, ռազմարդյունաբերական համալիրի հետագա զարգացում՝ նոր տեխնոլոգիաների ներդրմամբ, թուրքական ձեռնարկություններում թողարկվող սպառազինության ու ռազմակա տեխնիկայի ծավալների ընդլայնմամբ, ինչպես նաև այլ երկրների հետ, առաջին հերթին ՆԱՏՕ-ի անդամների հետ, ռազմա-տեխնիկական համագործակցության խորացմամբ:

Ի նկատի ունենալով Մերձավոր ու Միջին Արևելքի, Միջերկրական ծովի արևելյան գոտու ու Կովկաս-Կասպիական տարածաշրջանի քաղաքական պրոցեսներում Թուրքիայի հավակնուտ ու ակտիվ ներգրավվածությունը՝ թուրքական զինված ուժերը հանդիսանում են տարածաշրջանային անվտանգության կարևոր և ոչ միաբեռն ռազմա-քաղաքական գործոն:

8. Հավելվածներ³⁰

Աղյուսակ 2.

Թուրքիայի ցամաքային ուժերի սպառազինության ու ռազմական տեխնիկայի քանակը 2006 թ. դրությամբ

Սպառազինության կամ ռազմական տեխնիկայի տեսակը	Մոդելը	Քանակը	Կրանցից ժառանգակ է՞ն	Ծանոթություն
OS-1 դասի երկվի-եռվիո՞ր	MGM-140 ATACMS Block1	12 ՍԿ և 72 հրթիռներ	12 ՍԿ և 72 հրթիռներ	զգտագործվում են ԶԿԳԿ M-270MLRS-ի ՍԿ-ը
Տանկեր		-4170	-2650	
	"Leopard" A1/A3 M-60 A1/A3	397 906	397 906	դրանցից 170-ը նախատեսվում է արդիակազմացնել "Sabra" MkIII ծրագրով
	M-48 T5/A5T1/T2	-1350	-1350	արդիակազմացված են մինչև M-60 A1 և M-60A3 տանկերի մակարդակը
	M-48 A3	-1530	0	հանված են ապաստանում քրու՞նց և զգտագործվում են որպես պահեստամասեր
ԲԱՍ		928	928	
	"Cantok" UR-416	25 35	25 35	
	AIFV	868	868	ներառյալ 170 միալոր 81-մմ ինքնազանց ակամանետները և 48 հատ ինքնազանց ՊՏԿ, TOW
Չուսիանցքենաներ	AAPC	4595	4595	
	M-113 A1/A3 BTP-80	2815 240	2815 240	քուրդական արտադրության, նախատեսվում է ևս 551 միավորի տրամադրում
	BTP-60	340	340	ժանդարմերիայի զորքերի սաստա՞լիմոքում մեջ
	S-55	40	40	ժանդարմերիայի զորքերի սաստա՞լիմոքում մեջ
ԱՊԷ և փքե զրահապատ նեքենաներ	"Cobex" "Alper"	360 260	360 260	

չարու նակություն

Ինքնազանց հատիքամեր հրանոթներ	և	933	885	
	203-00 M-110	219	219	
	203-00 M-55	9	9	
	175-00 M-107	36	36	քուրդական արտադրության, նախատեսվում է ևս 300 միավորի տրամադրում
	155-00 "Firtina"	8	8	
	155-00 M-44T	222	222	
	155-00 M-52T	365	365	
	152-00 "Dara"	48	~	
	105-00 M-108	26	26	
Քարշակային հատիքամեր և հրանոթներ		1802	1331	
	203-00 M-115	162	162	
	155-00 "Firtina"	12	12	քուրդական արտադրության, նախատեսվում է ևս 400 միավորի տրամադրում
	155-00 M-114	517	517	
	155-00 M-59	171	0	
	105-00 M-101/T02	640	640	
Ակամանետներ		2013	2013	
	120-00	578	578	
	107-00 M-30	1265	1265	
	81-00	170	170	
	ինքնազանց ակամանետներ			
ԶԿԳԿ		-164	-164	
	WS-1A/B (4x320-00)	-30	-30	չինական արտադրության, որոնց զստվելի ենթում Չինաստանից քուրդ են 1998 թ. առանց ենթու՞րդ չլրանակներում տեղեկացնելու
	M-270 MLRS (12x227-00)	12	12	
	T-122 CNRA (40x122-00)	-50	-50	
	TR-107 (12x107-00)	48	48	
	RA-7040 (40x70-00)	24	24	

չարունակություն

ԳՏԳԳ ԱԳ	1563	1377	
"Molan" TOW/Մ	392	392	
ERYX	550 (1.200 քառք)	550	թուրքական արտադրության, նախատեսվում է մինչև 10000 միավորի արտադրություն
9M113M «տուկուրա» "Cobra"	70 (420 հրթիռներ) 185	70	զգույնացվում են որպես ուսումնականներ
ԶՔ, ու նշտառառ ինքնաթիռային իրանքներ	47135	47135	
ԶՔ, -7 (40. 00)	5000	5000	
M-72 A2 LAW (66-00)	+40000	40000	
Քննարկային հիմնանի	106- 00 M-40 A1	2135	2135
	40- 00 L60/70	800	800
	40- 00 T1	40	40
	40- 00 M-42 A1 SP	260	260
	35- 00 GDF-003	120	120
	20- 00 GAL-DO1	440	440
ԶԳԳ ԱԳ	96	96	
"Raptor" B1X	78	78	
"Raptor"	8	8	
"Zapkin"/"Anigen"	10	10	"Singer" ԶԳԳ-ի հիմնանք ԱԳ
ՏՁԳԳ ԱԳ	938	938	
"Singer"	108	108	
"Redeye"	790	790	
Ինքնանիզ (նավթային)	9M39 «Վալա» 40- 00 M48	40 +1.500	+1.500

Արյունակ 3.

Թուրքիայի ՌՕՌ-ի, բանակային և ծովային ավիացիայի ավիացիոն տեխնիկան ու սպառազինությունը 2006 թ. դրությամբ

Ապստղինության կամ ավիացիոն տեխնիկայի տեսակը	Մոդելը	Քանակը	Դրանցից (նարկադաս) թիվը	Ծանոթություն
Արտոսական հիմնաքիներ		419	-400	
	F-16C/D	218	218	Նախատեսվում է հին մոդելի 40 հիմնաքիների վանաք և 117 հիմնաքիների արդիականացում
	F-4 "Terminator 2020"	50	50	
	F-4E	93	-65	դրանցից 18-ը RF-4E հետախուզական մոդիֆիկացիայի: Բանակցություններ են տարվում ևս 48 հիմնաքիի արդիականացման նպատակով: F-4 Terminator 2020-ի մակարդակը դրանցից 20-ը RF-5 հետախուզական մոդիֆիկացիայի
Տրանսպորտային հիմնաքիներ		107	90	
	C-160D	19	19	
	EC-135R	9	7	վստելից (իջարկորդ) հիմնաքիներ նախատեսվում է արդիականացում
	C-130E	7	7	նախատեսվում է վերասարքավորում ՃԲՈՈ հիմնաքիի
	C-130B	7	5	
	"Citation" (VIP) C/N-235	5 60	5 47	նախատեսվում է 2 մեքենայի վերասարքավորում ՃԲՈՈ հիմնաքիի
Նարկադային ու կասի հիմնաքիներ		262	262	
	F-5	35	35	նախատեսվում է ևս 48 մեքենայի սրանարդում
	T-38 (F-5)	70	70	
	"Cessna" 318 (T-37)	60	60	
	TB-20	7	7	
	SF-260D	39	39	
	"Cessna" 172 (T-41)	51	51	դրանցից 26-ը բանակային ավիացիայում

չարունակություն

Ուղղաթիռներ		469	469	
Դարձվածային ուղղաթիռներ	AH-1 Wp "Cobra"	37	37	բանակային ավիացիայում
Քաղցնակ անավտանաստորուսային ուղղաթիռներ	ու			
	AS-332 "Cougar"	47	47	դրանցից 29-ը բանակային ավիացիայում
	Ми-17	19	19	ժամկետանոցներում
	S-70A "Blackhawk"	27	27	39-ը՝ սանդղատնորայում, 2-ը՝ հաստիկ գործերում
	AB-412	9	9	ավիացիայում
	UH-1H/AB-204/AB-205	186	186	պաշտպանությունում՝ 160-ը՝ բանակային ավիացիայում, 3-ը՝ ՈՐՈՒ-ում
Թեք ուղղաթիռներ	AB-206	32	32	դրանցից 3-ը՝ ավիացիայում, պաշտպանությունում
	H-300C	28	28	բանակային ավիացիայում
	OH-58B	3	3	բանակային ավիացիայում
ՈՐՈՒ	AB-212	14	14	12-ը՝ հանրապետական տարածքային ՈՐՈՒ-ում, 2-ը՝ բանակային ավիացիայում
	S-70B "Seabawk"	7	7	
ԱՕԵԱ		-120	-120	
	"Dass" 759	6	6	
	"Harp"	108	108	հարվածային ԱՕԵԱ
	CL-89	+	+	
ԶԳԳ				
	"Nuke Hercules"	8 դիվիզիոն, 24 սպարավան	0	հանդիման են տալիս ցանկացած զինամթերքի
	"Hawk"	8 ԱԳ	8 ԱԳ	

Աղյուսակ 4.

Թուրքիայի ՈՇՈՒ-ի նավային կազմը 2006 թ. դրությամբ

Սարտական նավի տեսակը	Մոդիֆիկացիան	Քանակը	Ծրվարությունը / Ընդհատարդությունը / Ը	Ծանոթություն
Մուզանավեր	"Atalya" (Type 1200)	13	61.2/1185	
	"Fevziye" (Type 1400)	5	62/1586	
ԿԳԱ Ֆրեգատներ	"Duhara" (MEKO 200 track II-A.E)	20	116.7/3350	ճախատնվում է նաև դասի ևս 3 սուզանավի տրամադրում
	Yusuz (MEKO 200)	4	115.5/414	
Կորվետներ	"Osmangazi" ("Osman Pazari" class)	8	135.6/3638	
	"Tepel" ("Kara" class)	4	134/3011	
	"Buzak" ("M'Qazak" Type 69A)	6	80.5/1175	
Զորքային տորպեդային կատրոններ	ու	22		
	"Dogan" class	8	58.1/1436	
	"Gök" class	4	57.0/1433	ճախատնվում է սրբիականացված ևս 3 նավերի K.Bic II տրամադրում
	"Yildiz" class	2	57.8/1433	
	"Kizil" ("Sakarya" class)	8	42.5/160	

1 Багдасарян С. Перед выбором: проблема основных факторов и приоритетов политического развития Турции // Туркологические и османистические исследования. Т.1, Ереван, 2002. С.75.

2 Sbu Мурадян И. Региональные проблемы турецко-американских отношений. Ереван, 2004.

3 Հաշվարկված է փորձագիտական զննատակվանների հիման վրա՝ օգտագործելով պաշտոնական կիսնախարարությունը.

4 Sbu՝ Вихрев М.М. Военные профессионалы Турецкой Республики как резерв государственного управленческого аппарата // Офицерский корпус ближневосточных государств (сборник статей) / Отв. ред. Ахмедов В.М., Юрченко В.П. ИИИБВ: М., 2004.

5 Sbu Вихрев М.М. Военные профессионалы Турецкой Республики как резерв государственного управленческого аппарата // Офицерский корпус ближневосточных государств (сборник статей) / Отв. ред. Ахмедов В.М., Юрченко В.П. ИИИБВ: М., 2004.

6 Թուրքական ռազմաքաղաքական ղեկավարությունը 2006 թ.-ին պաշտոնապես հայտարարել է որ նախկին "2.5 ճակատով պատերազմի ռազմավարությունից" անցնում է /ինչը ենթադրում է երկրի զինված ուժերի ունակությունը միաժամանակ մասնացել բարձր ինտենսիվության երկու և մեկ ցածր ինտենսիվության ռազմական հակամարտություններում. այսինքն հարևան երկու երկրների հետ միաժամանակյա արտաքին պատերազմի վարում և երկրի ներքին անկայուն հակամարտությունը հակազդեցությունը / "1.5 ճակատով պատերազմի" նոր հայեցակարգին: Ելնելով նրանից, որ Թուրքիայի ռազմական ղեկավարության կարծիքով նվազել է այն երկրների քանակը, որոնք իրական ապամոտիչ են ներկայացնում իրենց համար, չկա այլևս անհրաժեշտություն ունենալ այնպիսի մեծ քանակ, ինչպես նախկինում: Այժմ շեշտը պետք է դնել շարժուն ստորաբաժանումների վրա, որոնք օժտված են ռազմապետական տեխնիկական հագեցվածությամբ և շարժունությամբ, և ունակ են երկրի մի ծայրից դեպի մյուսը արագ օպերատիվ տեղաշարժման: Դրանից ելնելով, առաջին հերթին կկրճատվեն ցամաքային զորքերը - Թուրքիայի զինված ուժերի առաջին մեծաքանակ տեսակը:

7 Козарь В. Турецкая армия на пороге войны // Красная звезда, 09.08.2006

8 Турецкая армия будет воевать по-партизански // <http://lenta.ru/news/2006/08/28/turkish/>

9 РИА «Новости», 24.08.2006.

10 Sariirahimoglu S. Growing Commitments. Turkey: Country Briefing // Jane's Defense Weekly, 12 February 2003. P.22.

11 Козарь В. Турецкая армия на пороге войны // Красная звезда, 09.08.2006.

12 Augusta Aerospace իտալական ընկերությունը հաղթել է Թուրքիայի համար մարտական ուղղաթիռների արտադրության մրցույթը // РИА «Новости», 02.04.2007.

13 Щербатов В. Турция возобновляет вертолетный тендер // Военно-промышленный курьер, № 6(73), 16-22.02.2005.

14 Нестеркин В. Создание погранслужбы Турции // Зарубежное военное обозрение, №6, 2006. С.35.

15 Sbu՝ The Middle East Strategic Balance 2005-2006. JCSS: Tel Aviv University, 2005.

16 "Մորտորակ-Գրումման" ընկերության հետ Թուրքիայի համաձայնագիր է ստորագրել F-35 ինքնաթիռների համար բաղադրամասեր արտադրելու մասին // IА АРМС-ТАСС, 15.06.2005.

17 Sariirahimoglu S. Turkish Company Makes First Move in JSF Agreement // Jane's Defense Weekly, 22 October 2003.

18 Эльжанов В. За передвижениями боевиков в Турции планируется спедить с помощью дирижаблей // Зарубежное военное обозрение, №12, 2006. С.65.

19 Михайлов О. Дефицит кадров в турецких ВВС // Зарубежное военное обозрение, №12, 2006. С.47-48.

20 Taylor D. Turkey's Military Satellite Program: A Model for Emerging Regional Powers // The Space Review, 02.01.2007.

21 Udum S. Missile Proliferation in the Middle East: Turkey and Missile Defense // Turkish Studies, Vol.4, №1 (Autumn 2003). P. 80-89.

22 Sbu՝ The Middle East Strategic Balance 2005-2006. JCSS: Tel Aviv University, 2005.

23 Крымов И. Военно-морские силы Турции // Зарубежное военное обозрение, №4, 2005. С.53-60.

24 Sbu՝ The Middle East Strategic Balance 2005-2006. JCSS: Tel Aviv University, 2005.

25 Крымов И. Военно-морские силы Турции // Зарубежное военное обозрение, №4, 2005. С.53-60.

26 Аршев А. Вооруженные силы и внешнеполитический курс Турции на современном этапе // Вопросы стратегии и безопасности / Составитель и редактор Айвазян А. Ереван, 2007. С.112.

27 Sariirahimoglu S. Growing Commitments. Turkey: Country Briefing // Jane's Defense Weekly, 12 February 2003. P.26.

28 Крымов О. Операция ВМС Турции «Черноморская гармония» // Зарубежное военное обозрение, №1, 2007. С.49-53.

29 2006 թ. -ի աշնանը Ռուսաստանի Աժժովյան նավատորմի մեկ հրթիռային համաճար և երկու մեծ դեսանտային նավերը մասնակցեցին թուրքական ՌՇՈՒ-ի հետ համատեղ օպերացիայում և մարտական պարելավորման մեջ՝ "Աժժովյան ներդաշնակություն" օպերացիայի շրջանակներում: Sbu՝ Бабакин А. «Черноморская гармония» // Независимое военное обозрение, 13.10.2006.

30 Ադրյանականը նախապատրաստված են հետևյալ արդյունքների տվյալների. The Military Balance 2005-2006. IISS: London, 2005; The Middle East Strategic Balance 2005-2006. JCSS: Tel Aviv University, 2005, ինչպես նաև պատճառական տեղեկատվության ու փորձագիտական զննատակվանների հիման վրա:

ԹՈՒՐԵԿԻԱՅԻ ՈՒՋՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԽՐԻ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՋԻՆԿԱԾ ՈՒՇԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՋՄԱԿԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Լևոն Հովսեփյան

Թուրքիան ակտիվորեն ձեռնամուխ է եղել սեփական ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման, սպառազինության ձեռքբերման և սեփական զինված ուժերի (այսուհետ՝ ՋՌԻ) սպառազինության արդիականացման լայնածավալ ծրագրի իրագործմանը: Ուղղված արդիականացման այդ ծրագրերը կարևորություն են ներկայացնում ոչ միայն Թուրքիայի, այլ նաև տարածաշրջանային ռազմաքաղաքական հիմնախնդիրների և զարգացումների տեսանկյունից:

ՆԱՏՕ-ի անդամ պետությունների շարքում Թուրքիան, հանդիսանալով իր բանակի թվակազմով և սպառազինության հզորությամբ երկրորդ երկիրը և լիովին չունենալով իր բանակի համար ռազմական տեխնիկայի և սպառազինության ապահովման բավարար թեսուրսներ ու գործուն ռազմաարդյունաբերական համալիր, հատկապես 1990-ական թվականների կեսերից ակտիվորեն ձեռնամուխ է եղել ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման և ՋՌԻ-ի արդիականացման ծրագրի իրականացմանը: Ռազմաարդյունաբերական սեփական համալիրի զարգացման և ՋՌԻ-ի սպառազինության արդիականացման ծրագրերն ու նախագծերը Թուրքիայի համար մեծ կարևորություն են ներկայացնում մի շարք տեսանկյուններից: Դառնալով Հյուսիսատլանտյան դաշինքի անդամ և ԱՄՆ-ի ռազմաարևելյան դաշնակիցը՝ Թուրքիան իր սեփական ռազմական համակարգի կայացման, զարգացման և սպառազինության ապահովման գործում օգտվում էր այդ խողովակով ստացվող օժանդակությունից և փաստորեն զգալի կախվածություն ունեցել էր գտնվում ԱՄՆ և եվրոպական երկրների մատակարարումներից:

Չինված ուժերի արդիականացման գործընթացը սկսվեց հետաառըպատանազմյան նոր մարտաօդակներից դիմապայելու համար, քանի որ փոխվում էր Թուրքիայի աշխարհաքաղաքական դերը՝ արդեն հանդես գալով որպես տարածաշրջանային տերություն, որը ներքին և արտաքին սպառազինություններից դիմագրավելու համար ավելի շատ ռազմական ուժի կարիք էր զգում:

Ելույթ ունենալով 2005 թ. աշնանը Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության քարտուղարության հիմնադրման 20-ամյակին նվիրված համաժողովում՝ Թուրքիայի ՋՌԻ-ի Գլխավոր շտաբի Գլխավոր պլանավորման և քաղաքականության դեպարտամենտի ղեկավար Հիլմի Աքըն Ջուրուն նշել է, որ երաշխավորված չլինելով շրջապատող տարածաշրջաններից եկող տարբեր մարտաօդակների ու սպառնալիքների նկատմամբ, Թուրքիան հարկադրված է ունենալ 21-րդ դարի ռազմական ու քաղաքական պահանջներին համապատասխանող ՋՌԻ՝ դրա հաջողության ամենակարևոր գրավականը համարելով տեղական հզոր և արդյունավետ ռազմաարդյունաբերական համալիրի կայացումն ու զարգացումը՝:

Թուրքական ՋՌԻ-ի արդիականացման խնդիրները վերաբերում են հիմ-

նականում ոչ այնքան բանակի համակարգային փոփոխությունների, որքան ՋՌԻ-ի արդիականացման, սպառազինության թարմացման և սեփական ռազմական արդյունաբերության զարգացման անհրաժեշտությանը: Անվտանգության նոր մարտաօդակներից դիմագրավելու համար Թուրքիայի ՋՌԻ-ը գտնվում են ռազմաքաղաքական, ռազմավարական նոր պայմաններից բխող պահանջներին և կարիքներին համապատասխանեցնելու գործընթացում:

Նախ Թուրքիայի ՋՌԻ-ի արդիականացումը ենթադրում է ցամաքային ուժերի մասնակի վերակառուցում և կրճատում, սպառազինության արդիականացում, ռազմաօդային և ռազմածովային ուժերի ընդհանուր արդիականացում:

Ռազմական ուժի պաշտպանունակությունը բարձրացնելու համար ձեռնարկված արդիականացման ռազմավարությունը ենթադրում է հետևյալ հնարավորությունների յուրացման և զարգացման նպատակ, որոշիչ ռազմական ուժի, հրամանատարական հսկման, պատերազմական, համակարգչային, հետախուզական-հսկողական համակարգերի, մոբիլ կրակային ուժի, բարձր տեխնոլոգիական զենքերի և համակարգերի գոյություն, ցանկացած պայմանում գիշեր-ցերեկ մարտական գործողություններ իրականացնելու, խաղաղ վիճակից արագորեն պատերազմական անցման հնարավորություն, զանգվածային ուղեւթացման զենքերի դեմ հակաօդային և հակահիթիռային պաշտպանության համակարգերի առկայություն, բազմակողմ անհամաչափ սպառնալիքների դեմ ռազմական գործողություններ իրականացնելու, դաշնակցային կամ միացյալ գործողություններ իրականացնելու հնարավորություն, դաշնակցային ուժերի հետ համատեղ, փոխադրած գործողությունների վառման կարողությունը:

2006 թ.-ի օգոստոսին Թուրքիայի ՋՌԻ-ի գլխավոր շտաբի պետ Աշմանակված ցամաքային զորքերի նախկին հրամանատար Յաշար Բույուքբանըթի իր առաջին ելույթներից մեկում արդեն հայտարարեց Թուրքիայի ցամաքային զորքերի կրճատման մասին: Նախատեսվում է մինչև 2014 թ.-ը մինչև 30 տրուկտով կրճատել ցամաքային զորքերի ամենակազմը և իջեցնել մինչև 180 հազարի: Ցամաքային զորքերն այնուհետ կազմված են լինելու ժամանակակից և հզոր սպառազինությամբ հագեցված բրիգադներից³: Ցամաքային զորքերում 2004 թ.-ից սկսած աստիճանաբար դիվիզիոն կառուցվածքը փոխարինվում է ամերկյան տիպի բրիգադներով:

1990-ական թթ-ի կեսերին արդեն հստակ քայլեր էին ձեռնարկվում երկարաժամկետ լայնածավալ ծրագրերի իրականացման ուղղությամբ: Կյո ծրագրի շրջանակներում թուրքական բանակին ու պաշտպանության նախարարության պաշտպանական արդյունաբերությանը մինչև 2007 թվականը նախատեսվել էր հատկացնել շուրջ 27 մլրդ դոլար⁴: Մինչև 2007 թվականը ծրագրի իրականացումը կարելի է դիտել որպես թուրքական ՋՌԻ-ի արդիականացման կարճաժամկետ գործողություն: 1996 թ. թուրքական իշխանությունները երկարաժամկետ և հեռանկարային բավականին հավանաբար ծրագիր առաջ քաշեցին՝ հաստատելով ՋՌԻ-ի արդիականացման, նորագույն սպառազինության ձեռքբերման համար 30 տարվա շրջանակներում ներդնել շուրջ 150 մլրդ դոլար⁵:

Թուրքիայի ռազմական արդիականացման հիմքերը դրվեցին հատկապես 1991 թ.-ից Պարսից ծոցի պատերազմի իրադարձություններից հետո,

քանի որ Թուրքիայի զինվորական շրջանակները պարզ հասկացան, որ երկրի ՏՂՌ-ն իրենց թույլ և արդեն հնացած սպառազինությանը չեն կարող դիմագրավել 21-րդ դարի մարտահրավերներին⁶:

ՏՂՌ-ի արդիականացման ռազմավարության հիմքում է ձևակերտված և հիմնական ղեկավարություն է տրվում երկրի ռազմաարդյունաբերական համալիրի զարգացմանը: 1996 թ.-ին թուրքական ռազմական արդյունաբերության ընկերությունների ներկայացուցիչների հետ Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելի անցկացրած խորհրդակցության ժամանակ մասնաճյուղի վերաբերյալ առանձին փաստաթուղթ⁷: 1985 թվականին Թուրքիայում ռազմական արդյունաբերության զարգացման նպատակով ընդունված թիվ 3238 օրենքով ստեղծվեց «Պաշտպանական արդյունաբերության զարգացման և աջակցման վարչությունը», որը ֆինանսավորվում էր սեփական ֆինանսական մարմնից՝ Պաշտպանական արդյունաբերության աջակցման ֆոնդից⁸:

Ներկայումս պաշտպանական արդյունաբերության հիմնական մարմինը Թուրքիայի ազգային պաշտպանության նախարարությանը կից գործող Պաշտպանական արդյունաբերության քարտուղարությունն է (թուրքերեն՝ Savunma Sanayiı Mustesarligi): Ուսումնասիրությանն ուղարկվում որոշումներն ու ռազմավարությունը, ինչպես նաև սպառազինության կարիքների ձեռքբերման հարցերը ընդունվում են Պաշտպանական արդյունաբերության բարձրագույն համակարգման խորհրդի ու Պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեի կողմից⁹:

Ուսումնասիրության համալիրի զարգացման կարևոր սկզբունքներն ու ռազմավարությունն իրենց արտացոլումը գտան 1998 թ-ի մայիսի թուրքական կառավարության կողմից հաստատված «Թուրքական պաշտպանական արդյունաբերության քաղաքականության և ռազմավարության հիմնարկայինները» փաստաթղթում¹⁰: Փաստաթուղթը վերաբերում է ռազմական արդյունաբերության զարգացման ռազմավարությանն, ու սպառազինության ապահովման հիմնական սկզբունքներին, ուստի կարևոր է անդրադառնալ դրանցից մի քանիսին:

Պաշտպանական արդյունաբերության քաղաքականությունը նախատեսում է տեղականի հետ միասին նաև օտար հատվածի համար բաց, դինամիկ կառույցով, արտահանման հնարավորություններով օժտված և միջազգային շուկայում մրցունակ, նորագույն տեխնոլոգիաներին ռազմարժեք և տեխնոլոգիաներ արտադրելու հնարավորություններով օժտված, տեխնոլոգիական զարգացումներին համապատասխան սեփական կարողությունները ապահովող, Թուրքիային բարելավ կամ դաշնակից երկրների հետ համատեղ ռազմաարդյունաբերական կայուն համագործակցությունը հնարավոր դարձնող և տարբեր քաղաքական իրավիճակներին նվազագույն չափով ազդեցություն կրող ռազմական արդյունաբերության կառույց:

Պաշտպանական արդյունաբերության ռազմավարական հիմնարկայիններն են. որպես երկրի անվտանգության բաղադրիչ՝ թուրքական ՏՂՌ-ի կարիքների կայուն ապահովում, այդ ապատակով բարձր տեխնոլոգիաներին պատկանող ռազմական միջոցների և զինատեսակների տեղական

արտադրություն, արտադրական բազայի ստեղծում և ազգային ռազմաարդյունաբերության ենթակառուցվածքի ընդլայնում, տեղական հիմքի վրա սեփական տեխնոլոգիաների երկարաժամկետ զարգացում, տեղական և օտարերկրյա մրցակցության համար բաց ռազմական արդյունաբերության զարգացում, պաշտպանական արդյունաբերության ռազմավարության գնահատումներում որպես աղբյուր Թուրքիայի «Ազգային զինվորական ռազմավարության» և «Պլանավորման ու ծրագրավորման ուղեկիցների» օգտագործման անհրաժեշտություն և այլն¹¹:

Թուրքիայի ռազմական արդյունաբերության զարգացումը իր մեջ պարունակում է ինչպես ռազմաքաղաքական, այնպես էլ սոցիալ-տնտեսական, տեխնոլոգիական նպատակներ, քանի որ թուրքական ընկերությունների ներգրավումը արդյունաբերության մեջ լուրջ խթան կհանդիսանա ընդհանրապես երկրի արդյունաբերական զարգացման համար, կնպաստի այդ ոլորտում զիտական և տեխնոլոգիական նորագույն մշակումներին: Ուսումնասիրությանն առումով այն հնարավորություն կտա Թուրքիային դառնալ տարածաշրջանային տերություն և բարձրացնել միջազգային հեղինակությունը¹²: Ուսումնական արտադրանքի արտահանումը ոչ միայն ֆինանսական եկամուտներ կապահովի, այլ ավելի շատ ռազմավարական, ռազմաքաղաքական առավելություն կունենա Թուրքիայի համար¹³:

Թուրքիայի ռազմական արդիականացման ծրագրերն ու ռազմաարդյունաբերական համալիրի զարգացումը բացի զուտ ռազմական նպատակներից, Թուրքիայի համար նաև կարևոր արտաքին քաղաքական լծակներ են ապահովում: Մի կողմից այդ քայլերն ուղղված են նվազեցնել Թուրքիայի կախումը արտաքին մատակարարներից, մյուս կողմից էլ խոշոր ռազմական պայմանագրերն ու հայտանիցույթները Թուրքիայի համար արտաքին քաղաքական նպատակների իրականացման լուրջ գործիք են դառնում¹⁴:

2004 թ-ի մայիսին հրապարակված «Պաշտպանական կարիքների ապահովման նոր ռազմավարության» համաձայն Թուրքիան պետք է մեծացնի իր սեփական ռեսուրսները, տեխնոլոգիաների օգտագործումն ու թուրքական ընկերությունների մասնակցությունը պաշտպանական նախագծերում՝ նպատակ ունենալով բարձրացնել տեղական ներդրումների աստիճանը պաշտպանական ծրագրերում՝ ներկայիս 25%-ի փոխարեն առաջիկա 5 տարիների ընթացքում հասցնելով 50%-ի¹⁵:

Ուսումնասիրության համալիրի հնարավորությունների զարգացման ռազմավարությունը ըխում է ներքին պահանջարկի բավարարման, ինչպես նաև համաշխարհային պաշտպանական շուկայում հիմնական ներմուծող երկրից որպես սեփական արտադրանք արտահանող երկրի տեսանյութի և այդ ոլորտում առաջատար դառնալու համակցությունները¹⁶:

1990-ական թթ-ի սկզբից Թուրքիան սպառազինության ձեռքբերման ուղղությամբ, պաշտոնական տվյալներով տարեկան ծախսում է մոտ 3,5-5 մլրդ դոլար: Թուրքիայի ռազմաարդյունաբերական համալիրի հիմքի վրա է արտադրվում այդ երկրի բանակի տրամադրության տակ գտնվող ռազմական տեխնիկայի և զինատեսակների մոտ 25 %-ը, ինչը սակայն պաշտպանական արդյունաբերության քարտուղարության ղեկավարության համար դիտվում է որպես ոչ բավարար ցուցանիշ, քանի որ պաշտպանական տվյալներով Թուրքիան աշխարհում սպառազինության ներմուծման ցուցանիշով 4-րդ, իսկ արտահանման ցուցանիշով 28-րդ երկիրն է¹⁷:

Պաշտպանական կարիքների ապահովման նոր ռազմավարությունը բացառում է սպառազինության համատեղ արտադրության պայմանագրերը՝ առաջնահերթությունը տալով արտասահմանից ուղղակի գնումներին և հատկապես տեղական ընկերությունների մասնակցությամբ արտադրությանը: Խրախուսվում է տեղական ռազմական արդյունաբերության վերակազմավորումը՝ պետական հատվածում գտնվող ընկերությունների և մասնավոր ընկերությունների համախմբման միջոցով¹⁸: Որպես նոր ռազմավարության իրականացում՝ Թուրքիայի պաշտպանության նախարարությունը 250 տանկերի արտադրության վերաբերյալ 2004 թ-ին պայմանագիր ստորագրեց թուրքական 3 ընկերությունների հետ՝ 2,5 մլրդ դոլար արժույթով: 2005 թ.-ին խոշոր պայմանագրեր ստորագրվեցին նաև TAI (Turkish Aerospace Industries), Aselsan ընկերությունների հետ¹⁹:

Թուրքիայի պաշտպանության նախարար Վեշդի Գյոնուլի խոսքերով երկրի պաշտպանական արդյունաբերությունը զրանցում է զարգացման միտում և հետ չի մնում մյուս երկրներից՝ օգտագործելով բոլոր նորագույն մշակումներն այդ ոլորտում: Ըստ նրա՝ շոշափելի հաջողություններ են զրանցվել հրթիռային արտադրության բնագավառում, և ներկայումս Թուրքիան հնարավորություն ունի արտադրել նույնիսկ F-16 ռազմական ինքնաթիռներ²⁰:

Թուրքական ռազմական արդյունաբերության հիմնական ոլորտները դասակարգվում են հետևյալ կերպ.

- օդանավաշինության և տիեզերական արդյունաբերություն
- հրթիռային արդյունաբերություն
- իլեկտրոնային սարքավորումների արդյունաբերություն
- գինատեսակների, սպառազինության արդյունաբերություն
- ռազմական նավերի արդյունաբերություն
- մարտական մեքենաների և հրետանային միջոցների արդյունաբերություն
- ռազմական հանդերձանքի արտադրություն²¹:

Ներկայումս թուրքական ռազմաարդյունաբերության ոլորտում գործում են մի քանի տասնյակ մասնավոր և պետական ընկերություններ, որոնց մեծ մասը միավորված են Պաշտպանական արդյունաբերության արտադրողների միության (SaSaC) և Ռազմաարդյունաբերողների միավորման (SADER) շրջանակներում, որոնք համախառնում են այդ ընկերությունների ավելի արդյունավետ գործունեությունը: Թուրքիայի Պաշտպանական արդյունաբերության արտադրողների միությունը միաժամանակ հանդիսանում է նաև Եվրոպական ռազմակապարդյունաբերական խմբի (European Defence Industry Group) անդամ²²:

Ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման գործում մեծ կարևորություն է տրվում տարբեր գիտակրթական հաստատությունների և ռազմաարդյունաբերական ընկերությունների միջև կապի ապահովմանն ու համատեղ փոխգործակցությանը: Ռազմաարդյունաբերական ընկերությունների, տարբեր կառույցների անձնակազմի կատարելագործման և ուսուցման նպատակով պաշտպանության նախարարության ենթակայությանը գործում է Ռազմական արդյունաբերության և տեխնոլոգիական կրթության կենտրոնական հրամանատարությունը (թուրք. Savunma Sanayii ve Teknoloji Egitim Merkezi)²³:

Ռազմաարդյունաբերության զարգացման նպատակով համապատասխան բնագավառում գիտական և տեխնոլոգիական քաղաքականություն և մշակումներն իրականացնում է Թուրքիայի գիտական և տեխնոլոգիական հետազոտությունների խորհուրդը (TUBITAK), որը կատարում է նաև հետազոտություններ ու զարգացման նախագծեր տարբեր բնագավառներում²⁴:

Օդանավաշինության և ինքնաթիռաշինության ոլորտում գործող ամենամեծ ընկերությունը պետական Թուրքական օդանավաշինության արդյունաբերական ընկերությունն է (Turkish Aerospace Industries Inc), որը զբաղվում է ինժեներական օդային միջոցների առանձին բաղադրամասերի համալուծ արտադրությամբ: Ընկերությունը արտասահմանյան ընկերությունների հետ համատեղ միջոցներով արտադրել է 286 F-16 մարտական ինքնաթիռներ, 60 CN-235 տրանսպորտային օդանավեր, 30 Cougar AS-532 բազմանպատակ ուղղաթիռներ և այլն: Ընկերությունը համատեղ արտադրության ոլորտում համագործակցում է ամերիկյան Boeing, Sikorsky ընկերությունների հետ, մասնակցում միջազգային մի շարք նախագծերի: Տարբեր ինքնաթիռների շարժիչների նախագծերի մշակման, բաղադրամասերի արտադրության ոլորտում գործում է Tusas Engine Industry ընկերությունը²⁵: Այդ ընկերության ամենամեծ նախաձեռնությունը ամերիկյան ընկերությունների հետ F-16 ինքնաթիռների թափելի արտադրությունն էր Անկարայից ոչ հեռու՝ Մյուրթեյի օդային բազայում գտնվող գործարանում²⁶:

Ներկայումս այդ ընկերությունը ստանձնել է Հորդանանի, ինչպես նաև Պակիստանի ռազմաօդային ուժերի 25-35 F-16 ինքնաթիռների արդիակազմման գործընթացը մոտ 50 մլն դոլար ընդհանուր արժույթով²⁷: Նախկինում այն մասնակցել է նաև Եգիպտոսի համանման ինքնաթիռների արդիակազմմանը:

Ներկայումս ընկերության հիմնական դրամազխային կապիտալի շուրջ 55 տոկոսը պատկանում է Թուրքիայի ԶՈՒ-ի հզորացման հիմնադրամին, իսկ 45 տոկոսը՝ Պաշտպանական արդյունաբերության քարտուղարությանը: Ընկերությունը հիմնադրումից (1984թ.) մինչև 2006 թ. ավարտը զրանցել է շուրջ 1 մլրդ 118 մլն դոլարի արտահանման ցուցանիշ, իսկ ընդհանրապես ամբողջական վաճառքի գումարը կազմել է 1 մլրդ 417 մլն դոլար²⁸:

Բացի այդ, Եսքիչեհիր և Կպսեղի քաղաքներում գործում են ռազմական ավիացիայի վերանորոգման երկու խոշոր ձեռնարկություններ, որոնք հիմնականում իրականացնում են ամերիկյան արտադրության ռմբակոծիչների վերանորոգման և արդիակազմման աշխատանքներ²⁹:

Հրթիռային արտադրության ոլորտում մասնագիտացած, 1988 թ-ին հիմնադրված Roketsan թուրքական ընկերությունն իր գործունեությունն սկսեց Եվրոպական կոնորգիումի համար «Stinger» հրթիռների շարժիչների արտադրությամբ: Այդ ընկերությամբ է պատկանում փոքր հեռահարության հրթիռների, ինչպես նաև հրթիռների տարբեր բաղադրիչների՝ վեկտորային կառավարման մասերի, մարտազխիլների, կառավարման համակարգերի արտադրությունը: Ընկերությունն այժմ պատրաստ է Թուրքիայի ԶՈՒ-ի համար բարձր հեռահարության հակաօդային պաշտպանության համակարգի ստեղծման համար³⁰: Հակաառևանակային հրթիռների ծրագրի շրջանակներում ընկերությունը թուրքական բանակին տրամադրեց սեփական նախագծման T-122 MBRL և T-107 MBRL հրթիռային համակարգեր³¹:

Roketsan թուրքական ընկերության տնօրեն Հուսեյն Բայսաքը 2005 թ.-ի վերջին հայտարարեց, որ տարբեր տեսակի հեռահար գործողության հրթիռների արտադրության համար ընկերությունն ունի բոլոր անհրաժեշտ մարդկային, գիտական և տեխնոլոգիական ենթակառուցվածքները: «Մենք արդեն սկսել ենք հեռահար գործողության հրթիռների արտադրությունը՝ սեփական կարիքները հոգալու համար: Դրա առաջին նմուշները կլինեն հակատանկային հրթիռները»,- ասել է նա³²:

Roketsan ընկերությունն առաջիկայում նպատակ ունի էլ ավելի մեծացնել արտադրության շրջանակները՝ դառնալով հրթիռաշինության առաջատար ընկերություն: Թուրքական ռազմաարդյունաբերության հպարտություն համարվող Stinger հրթիռները դեռևս 2005 թ.-ին սկսել են վաճառել Սփրիտանդներին:

Ընկերությունը երկար ժամանակ է՝ աշխատանքներ է իրականացնում «2.75 լազերային կառավարման հրթիռի» ստեղծման ուղղությամբ: Երկարատևություն է այդ հրթիռների արտադրությունն ավարտել 2007 թ.-ին մինչև Սիջազգային պաշտպանական արդյունաբերության ցուցահանդեսի (IDEF) սկսվելը: Ընկերությունը պաշտպանական արդյունաբերության քարտուղարության հետ պայմանագրվել է ստորագրել «հեռահար հակատանկային ռազմական համակարգերի» ոլորտում աշխատանքների իրականացման շուրջ³³:

Էլեկտրոնային սարքավորումների ու հիմանատարական հսկողության միջոցների արտադրության ոլորտում գործում է Aelsan Military Electronics Industries պետական ընկերությունը: Ընկերության հիմնական արտադրատեսակներն են զինվորական կապի միջոցները, տեղեկատվական, ռադարային, էլեկտրաօպտիկական, ինչպես նաև հրթիռային տարբեր բաղադրամասերը, մարտազինվածքներն ու կառավարման համակարգերը: Ընկերության արտադրատեսակներին են պատկանում ներկայումս թուրքական բանակի սպառազինության մեջ գտնվող ATILGAN Kaideye Monteli Stinger, ZIPKIN Kaideye Monteli Stinger ցամաքային շարժական և BORA ծովային հրթիռային կայանքների արտադրությունը³⁴:

Հրթիռների արտադրության ոլորտում լուրջ համագործակցություն սկսեց ծավալվել հատկապես Իսրայելի ռազմաարդյունաբերական ընկերություններին հետ: 2003 թ.-ին սկսեցին քայլեր ձեռնարկվել Իսրայելի հետ հակաօդային պաշտպանության հրթիռների համատեղ արտադրության ուղղությամբ: Էլմադադում (Թուրքիա) տեղակայված Roketsan ընկերությունը սկսեց համագործակցել իսրայելական Rafael ընկերության հետ՝ Popeye հրթիռների համատեղ արտադրության ոլորտում: Թուրքական կողմը հետազայում է իր շահագրգռությունն իր հայտնում Իսրայելի ավիացիոն արդյունաբերության (Israeli Aviation Industry) հետ համատեղ միջին հեռահարության «երկինք-երկիր» հրթիռների, ինչպես նաև Arrow 2 հակաբալիստիկ հրթիռային համակարգերի (ATBMs) և AGM-142 Popeye 2 միջին հեռահարության հրթիռների համատեղ արտադրության վերաբերյալ³⁵:

2002 թ.-ի հունվարի 14-ին թուրքական «Milliyet» թերթը իրապարակեց մի հոդված, որում հաստատվում էր, որ Թուրքիայում արտադրված առաջին բալիստիկ հրթիռի փորձարկումն անցել է հաջող: Թերթի տեղեկատվության համաձայն՝ «J missile» կոչվող հրթիռը չինական տեխնոլոգիաների հիման վրա թուրքական Roketsan ընկերության կողմից արտադրված

առաջին արտադրանքն էր: Դրա առաջին փորձնական արձակումը կատարվել է 2001 թ.-ի դեկտեմբերին՝ Ստամբուլի մերձակա ափամերձ շրջակայքում: Փորձարկված այդ հրթիռը հանդիսացել է չինական M-7 հրթիռի կառավարման և ուղղորդման համակարգով ավելի կատարելագործված նախատիպը՝ 150 կմ գործողության շառավիղով³⁶:

2006 թ.-ին ընկերությունը իր արտադրության ոլորտում հաջողություն գրանցեց էլեկտրաօպտիկական նորագույն «գիշեր-ցերեկ դիտարկման և թիրախի հայտնաբերման» ASELFLIR-300T համակարգի ստեղծման գործում, որը կարող է տեղադրվել օդային և ծովային միջոցների վրա: Նախկինում էտապում նախատեսվում է 10 նման համակարգով զինված անօդաչու ինքնաթիռները, այնուհետև նաև 50 համակարգ տեղադրել մարտավարական-հարձակողական ուղղաթիռների վրա³⁷:

2006 թ.-ի դեկտեմբերի 12-ին կայացած Պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեի նիստում որոշում կայացվեց առաջիկա 10 տարիների պաշտպանական արդյունաբերության նախագծերում առաջնային դերակատարություն հանձնել Aelsan ընկերությանը: Հատկապես այդ ընկերությունը ստանձնեց երկրի ռազմաօդային ուժերի ինքնաթիռների մի մասի և ժանդարմական հրամանատարությանը պատկանող ուղղաթիռների ավիացիոն համակարգերի արդիականացման աշխատանքները իրականացնելու պարտավորությունը³⁸:

ՋՌՌ-ի սպառազինության արդիականացման և ռազմական արտադրության ոլորտում ծրագրային ապահովումն ու նորագույն տեխնոլոգիաների մշակումն իրականացնում է Havelsan ընկերությունը, որը պատկանում է «Թուրքիայի ՋՌՌ-ի ամրապնդման հիմնադրամիջին»: Ընկերությունը ռազմաարդյունաբերական տարբեր ծրագրերի իրագործման համար արտադրում է անհրաժեշտ ինֆորմացիոն տեխնոլոգիաների և ինֆորմացիոն կառավարման համակարգեր, ինչպես նաև էլեկտրոնային պատերազմական, ծովային մարտական, ավիացիոն և էլեկտրոնային անվտանգության համակարգեր³⁹:

Բարձրագույն տեխնոլոգիաների արտահանման առումով ընկերությունն զգալի հաջողություններ է գրանցել 2005 թ.-ին՝ ծավալները 2001 թ.-ի 3.3 մլն դոլարի փոխարեն հասցնելով 60 մլն դոլարի⁴⁰:

Հրետանային զենքերի, պայթուցիկ սարքավորումների, թեթև սպառազինության և տարբեր զինատեսակների արտադրության մեջ ամենամեծ ընկերությունը Մեքենաշինական և քիմիական արդյունաբերական պետական ընկերությունն է (թուրք. Makina ve Kimya Endustrisi Kurumu-MKEK): Սպառազինության արտադրությունը իրականացվում է ընկերության Անկարայի, Քըրըքալեի և Չանքըրի նահանգներում գտնվող 12 գործարաններում⁴¹: Հրետանային, հրաձգային զինատեսակների ու զենիթահրետանային համակարգերի արտադրությունը կենտրոնացված է Քըրըքալեի և Չանքըրի գործարաններում⁴²:

Մարտական գրահապատ մեքենաների, ինչպես նաև դրանց համար անհրաժեշտ զինատեսակների արտադրությունը հիմնականում կենտրոնացված է թուրքական Nuroi Grup ընկերության և ռազմաարդյունաբերության ոլորտում համաշխարհային առաջատար համարվող բրիտանական BAE Systems ընկերության համատեղ FNSS Savunma Sistemleri ընկերության գործարաններում: Ընկերության արտադրացանկին են պատկանում

ցամաքային մարտական մեքենաների ընտանիքին պատկանող թթուրավոր ACV-300 AAPC, ACV-300 IFV, ACV-SIFV, ինչպես նաև անիվավոր Pars զրահապատ մեքենաները: Բացի արտադրությունից, ընկերության ձեռնարկություններում իրականացվում են նաև թուրքական բանակի հնացած մարտական մեքենաների արդիականացման աշխատանքներ⁴³:

2007 թ.-ի հունվարին FNSS ընկերությունը պայմանագիր ստորագրեց Թուրքիայի ցամաքային զորքերի հրամանատարության համար «չարժեական լողացող գրոհային կամրջի» արտադրությունն սկսելու վերաբերյալ: Նախագիծը գնահատվում է շուրջ 133 մլն դոլար, և նախատեսվում է առաջին արտադրանքը ցամաքային զորքերի համնմել 2010 թ.-ին: Նախագծի համաձայն նախատեսվում է 52 միավոր 8x8 Pars ռեուինն անիվավոր զրահապատ «տանկերի» արտադրություն, որոնք էլ կազմելու են այդ գրոհային կամրջի կառուցվածքային ուղե համակարգը 650 մետր երկարությամբ: «Հարավոր կլինի նաև օգտագործել որպես 150 մետր երկարությամբ առանձին 4 կամուրջներ: Նախագծի վերաբերյալ որոշում էր կայացվել դեռևս 2005 թ.-ին: Համաձայն նախագծի պատասխանատուների կամրջի նախագծում ու արտադրություն իրականացվելու է թուրք ինժեներների կողմից: Գործարքի 50 տոկոսից ավելին կիրադրովի տեղական մասնակցությամբ⁴⁴:

Ավտիվ ներդրումներ են կատարվում թուրքական բանակի համար «հայրենական տանկերի» արտադրության ոլորտում: Կողմնորոշվելով «հայրենական տանկերի» նոր սերնդի նախատիպի որոշման հարցում՝ Թուրքիան նպատակադրվել է սեփական ՋՈՒ-ի համար 1000 միավոր նոր սերնդի տանկ արտադրել, ինչի համար հիմնական արտադրող է ընտրել պաշտպանական արդյունաբերության հետ համագործակցող թուրքական BMC, FNSS և OTOKAR ընկերություններին⁴⁵:

Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության խորհուրդը որոշել է հիշյալ ընկերություններին տանկերի արտադրության և զարգացման տարբեր առաջարկություններ ներկայացնել և տանկերի ապագա գլխավոր արտադրողին ընտրել նրանց կատարած աշխատանքի արդյունքից ելնելով: Ընկերությունները պետք է Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության խորհրդին ներկայացնեն սեփական հնարավորությունները՝ «հայրենական պատերազմական գլխավոր տանկի» (Main Battle Tank) արտադրության հարցում: Նոր սերնդի տանկերի առաջին օրինակները կարտադրվեն հաջորդ 6-7 տարիների ընթացքում, այնուհետև կսկսվի դրանց բուն արտադրությունը: Նախատեսվում է նոր արտադրված տանկերը Թուրքիայի բանակին մատակարարել 2012-2013 թթ-ին: Լրտակողակից տանկերի գրահից ներկրվելու է արտասահմանից և դրանց համատեղ արտադրության համար բանակցություններ են ընթանում Պակիստանի հետ, որը այդ ոլորտում տիրապետում է նորագույն տեխնոլոգիաներին: Երբ վերջնականապես ավարտվի հիմնական արտադրողի հայտանրցույթը, Պակիստանի հետ կստորագրվի տանկերի գրահի ներկրման գլխաբերյալ համաձայնագիրը: Հայրենական տանկերի արտադրության այդ ծրագիրը կարելի է դիտել թուրքական սեփական ռազմական արտադրության ամենամեծ ձեռնարկը, որ երբևէ առաջարկվել է⁴⁶:

2005 թ.-ի նոյեմբերին գերմանական արդյունների համաձայն՝ Գերմանիան զրեթե 300 Leopard-2 տանկ կմատակարարի Թուրքիային: ԳՅՀ-ի պաշտպանության նախարարությունը հավաստել է, որ նույն թվականի նո-

յեմբերին Բեռլինում կողմերը պայմանագիր են ստորագրել Թուրքիային 298 տանկ մատակարարելու մասին: Ընդ որում՝ ծրագրվում է մատակարարել մարտական այնպիսի մեքենաներ, որոնք գտնվում էին բունդեսվեյրի պահուստում և չէին օգտագործվում: Թուրքիան նաև խնդրել է Բեռլինին արդիականացնել այն տանկերը, որոնք արդեն կան թուրքական բանակի սպառազինության մեջ⁴⁷:

Միաժամանակ Թուրքիան սկսել է նաև իր բանակի տանկերի արդիականացման լայնածավալ ծրագիրը: 2005 թ-ի նոյեմբերին թուրքական պաշտպանական արդյունաբերության բարտոլարության և իսրայելական ռազմական արդյունաբերության (Israel Military Industries) ընկերության ու Elbit Systems ընկերության միջև ձեռք բերված համաձայնությամբ Իսրայելն ստանձնեց թուրքական բանակի M-60 170 միավոր տանկերի արդիականացման ծրագիրը՝ 688 մլն դոլար արժողությամբ: Նախատեսված է դրանք մի շարք բնութագրերով համապատասխանեցնել վերջին սերնդի իսրայելական տանկերին: Իսրայելական Merkava տանկերից թուրքական տանկերին կփոխանցվեն հատկապես կրակի կառավարման համակարգը, տանկի աշտարակի պտույտի մեխանիզմը, գրահի բաղադրամասերը, ուժասարքերն ու 120 միլիմետր տրամաչափի թնդանոթը: Թուրքական տանկերի արդիականացման վերաբերյալ պայմանագիր էր կնքվել դեռևս 2002-ին, սակայն տեխնիկական պատճառներով հետաձգվել էր դրա իրագործումը: Տանկերի որոշ բաղադրամասերի արտադրություն սկսելու է 2006-ի վերջին, իսկ նոր տանկերի թողարկումը 2007-ի սկզբին թուրքական Կայսերի քաղաքում: Նույն ծրագրի շրջանակներում M-60 տանկերը համընդհանրվելու են մի շարք համակարգերով, որոնք օգտագործվում են իսրայելական Merkava 4 տանկերում, այդ 170 տանկերը նորացված ձևով Թուրքիան կստանա 2009-ին⁴⁸:

Թուրքիայի ռազմաարդյունաբերական համալիրի և բանակի սպառազինության արդիականացման ռազմավարության պատկերները ամբողջական չի կարող լինել, առանց անդրադառնալու իսրայելա-թուրքական ռազմական համագործակցության բաղադրիչներին: 90-ական թվականների կեսերից ռազմատեխնիկական և հատկապես ռազմասրդյունաբերական ոլորտում սերտ համագործակցություն սկսվեց զարգանալ Թուրքիայի և Իսրայելի միջև, ինչը միանգամայն բխում էր երկու երկրների ռազմավարական շահերից: Երկու երկրների միջև ռազմատեխնիկական համագործակցության անկունաքարը հանդիսացավ 1996 թվականի ստորագրված համաձայնագիրը և դրան հաջորդած 12 արձանագրություններն այդ ոլորտում համագործակցության զարգացման ուղղությամբ: Ռազմատեխնիկական բնագավառում համագործակցությունը հնարավորություն էր տալիս Թուրքիային իր ՋՈՒ-ն ապահովել նորագույն սպառազինությամբ և ժամանակակից ռազմական տեխնոլոգիաներով:

Իսրայելական կողմը զգալի հաջողություններ է գրանցել թուրքական սպառազինության շուկայում, հատկապես թուրքական ռազմազորային ուժերի F-4 և F-5 ռազմական ինքնաթիռների, զրահապատ մարտական մեքենաների արդիականացման, ինչպես նաև անօդաչու ինքնաթիռների, հրթիռային տեխնոլոգիաների տրամադրման ոլորտում⁴⁹:

Երկրորդ ռազմատեխնիկական համագործակցության առավել մեծ նախագծերից էին, քացի M-60 տանկերի արդիականացումից, թուրքական

չուրջ 5 տասնյակ F-4 Phantom կործանիչների արդիականացումը, Haron անօդաչու հետախուզական ինքնաթիռների և Ahzarai զրահամեքենաների վաճառքը Թուրքիային և այլն:

2005 թ. ապրիլին 200 մլն դոլար արժողությամբ անօդաչու հետախուզական ինքնաթիռների վաճառքի վերաբերյալ ստորագրված պայմանագրի համաձայն՝ ինքնաթիռները մատակարարելու են իսրայելական ավիացիոն արտադրության գործարանները, իսկ կապի և մոնիթորինգի միջոցները Elbit Systems ընկերությունը⁵⁰:

Իսրայելա-թուրքական ռազմատեխնիկական համագործակցության ծավալների վերաբերյալ պատկերացում կազմելու համար հետաքրքրություն են ներկայացնում հետևյալ ցուցանիշները: 2000 թ-ին Իսրայելի պաշտպանական արդյունաբերական համալիրի կողմից 2000 թ.-ին ստորագրված պայմանագրերի ընդհանուր արժեքը կազմել է մոտ 2,48 մլրդ, 2001 թ-ին՝ 2,58 մլրդ, 2002 թ-ին՝ 4 մլրդ, 2003 թ-ին՝ 3,02 մլրդ, 2004 թ-ին՝ 3,9 մլրդ դոլար: Այդ պայմանագրերում զգալի մասնաբաժինը՝ 20-35 %-ը, պատկանում է Թուրքիային⁵¹:

Թուրքիայի իշխանություններն ու հատկապես զինվորական շրջանակները քայլեր են ձեռնարկում Ադրբեջանի հետ համատեղ ռազմաարդյունաբերական ոլորտում համագործակցության ծավալման ուղղությամբ: Բազմում Թուրքիայի դեսպան Թուրան Մորալին հայտարարեց, որ իր երկիրը մասնակցությունն է ունենալու Ադրբեջանի ռազմաարդյունաբերական համալիրի ստեղծման գործում՝ նշելով, որ ծրագրվում է ռազմական մեքենաշինության ոլորտում համատեղ նախագծերի մշակում, քանի որ ասկա են բոլոր մեխանիզմները Թուրքիայի և Ադրբեջանի միջև ռազմական դաշինք ձևավորելու համար, սակայն բացակայում է համապատասխան համաձայնագիրը: Թուրք դեսպանը նշել է, որ անհրաժեշտության դեպքում Թուրքիան ըստ արժանիության կգնահատի ստեղծված իրավիճակն ու կծեռնարկի անհրաժեշտ քայլեր⁵²:

Վերջին տարիներին որոշակի աշխուժություն է նկատվում ռուս-թուրքական ռազմատեխնիկական համագործակցության ոլորտում: Թուրքիան ՄԱՍՈ-ի անդամ երկրներից առաջինն էր, որ Ռուսաստանի հետ հասատեց համագործակցություն այդ ոլորտում: Ներկայումս Թուրքիայի և Ռուսաստանի միջև ռազմատեխնիկական համագործակցությունն իրականացվում է ռազմաարդյունաբերական բնագավառում ռազմատեխնիկական հարցերով համագործակցության միջկառավարական համամայնագրի շրջանակներում: Այդ փաստաթուղթը կարգավորում է ռազմական արտադրանքի մշակման, արտադրման և մատակարարման հետ կապված երկրվում շփումները: Թուրքիայի ռազմատեխնիկական համագործակցության ծավալներում վերջին 10 տարիներին ռուսական արտադրության ռազմական տեխնիկայի ընդհանուր մասնաբաժինը կազմում է 1%, որը համապատասխանում է 190 մլն դոլարին: Թուրքիան Ռուսաստանից գնել է հիմնականում 240 զրահամեքենա, 20 միավոր Mi-17 ուղղաթիռ, ավելի քան 14 հազար միավոր իրազեն, զինամթերք և այլն⁵³:

Ռազմատեխնիկական համագործակցությունն ավելի կայուն և երկարաժամկետ դարձնելու նպատակով 2001 թ.-ի մայիսին ստեղծվեց ռազմատեխնիկական հարցերով ռուս-թուրքական խառը հանձնաժողով, իսկ 2002 թ.-ի սեպտեմբերին և 2003 թ.-ի նոյեմբերին Անկարայում և Մոսկվայում

անցկացվեցին հանձնաժողովի նիստերը: 2004 թ.-ի դեկտեմբերին Ռուսաստանի նախագահի Թուրքիա կատարած առաջին պաշտոնական այցի ընթացքում ստորագրվեցին ևս 2 կարևոր փաստաթուղթեր, որոնց կոչված էին ամրապնդելու ռազմատեխնիկական ոլորտում համատեղ արտադրության և մատակարարման համար իրավապայմանագրային հիմք⁵⁴:

Թուրքիան մտադիր է հիմնովին արդիականացնել երկրի հակաօդային պաշտպանության (<ՕՊ) համակարգը և զարգացնել ռազմական գործողությունների սեփական հակաօդային պաշտպանությունը (<<ՕՊ): Դա շատ բանով կապված է սպառազինությունների աճող մրցակազմի և զանգվածային ոչնչացման զենքի (ՋՌՁ) ու հրթիռային տեխնոլոգիաների տարածման խնդիրների հետ Սերժավոր Արևելքում⁵⁵:

Մասնավորապես 2006 թ.-ի հունիսին Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեի նիստում պաշտոնապես որոշվեց սկսել <<ՕՊ և <ՕՊ լայնածավալ ծրագրի իրագործումը⁵⁶:

2006 թ.-ի սկզբին վարչապետ Էդրոզանի գլխավորությամբ պաշտպանական արդյունաբերության քարտեզագրության գործադիր կոմիտեն որոշում կայացրեց մրցույթ հայտարարել հեռահար <ՕՊ համակարգերի ձեռքբերման համար և հանձնարարեց պատրաստել հայտամրցույթի տեխնիկական տեսական հիմնավորումը: Հայտամրցույթի հավակնունում էին մասնակցել ամերիկյան (Patriot)-ը, ռուսական (C-300PMY-2 Фаворит)-ը և ամերիկա-իսրայելյան համատեղ արտադրության (Arrow-2)-ը: Թուրքիան պլանավորում է 2006-2009 թթ-ի ընթացքում գնել մեծ հեռահարության 4 համակարգ՝ 800 մլն դոլար ընդհանուր արժողությամբ, իսկ 2010-2014 թթ-ին գրեթե նույն արժողությամբ ձեռք բերել հակահրթիռային պաշտպանության հեռակարգային 4 համակարգեր: Ռուսական կողմի հետ Թուրքիայի ռազմական ներկայացուցիչները ռուսական գործարան կատարած այցի ընթացքում քննարկել են նաև պաշտպանական տեխնոլոգիաների ոլորտում երկրորդ համագործակցությանը վերաբերող հարցեր⁵⁷:

2006 թ-ի օգոստոսին Թուրքիայի պաշտպանության նախարար Վեդդի Գյոնուլը հայտարարեց, որ պատրաստվում են օտարերկրյա ռազմական գնումների ուղիներով ԱՄՆ-ից 139 մլն դոլար արժողությամբ SLAM-ER տիպի 50 հրթիռներ գնել: Ըստ պայրերների՝ Գյոնուլը հաստատել է Թուրքիային այդ քանակի հրթիռներ վաճառելու հարցով ԱՄՆ պաշտպանության և անվտանգության համագործակցության վարչության կողմից ԱՄՆ կոնգրես ղեկավար գործողության և օդից ցամաք հարվածներ հասցնելու համար⁵⁸:

Դեռևս ապրիլի վերջին Պենտագոնը տեղեկացրել էր ԱՄՆ Կոնգրեսին, որ ծրագրել է ընդհանուր արժանի 162 մլն դոլար արժողությամբ 50 հարթ «AGM-84K SLAM-ER Cruise» կոչված հրթիռներ, դրանց սպասարկման համար ռազմական բաղադրամասեր և ծառայություններ վաճառել Թուրքիային, որոնց F-16 ինքնաթիռների միջոցով կարող են հարված հասցնել ցանկացած օբյեկտի⁵⁹:

2006 թ. օգոստոսին հրապարակված տեղեկատվության համաձայն՝ ԱՄՆ-ը բանակցություններ էր վարում Թուրքիայի հետ՝ «Patriot Advanced Capability-3» մակնիշի կատարելագործված 6 զենիթահրթիռային կայանքների վաճառքի շուրջ, որի արժեքը կազմում է շուրջ 1 մլրդ դոլար⁶⁰:

Ամերիկյան առաջատար Lockheed Martin ընկերությունը բանակցու-

թյուններ էր վարում թուրքական Aselsan և Roketsan ընկերությունների հետ՝ տեխնոլոգիաների տրամադրման շուրջ: Սպախվում էր, որ Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության քարտուղարությունը կիրառականի փոքր հեռահարության հրթիռային պաշտպանության համակարգերի ծրագրի վերաբերյալ իր պայման-առաջարկությունները՝ նախագծին հետաքրքրություն դրսևորող օտարերկրյա ընկերությունների համար: Անխատեսվում էր, որ Թուրքիան այդ հրթիռային համակարգերի առաջին գործարքից հետո կզին երկրորդ համակարգը: Պաշտպանական արդյունաբերության քարտուղարությունն այժմ փորձում էր պարզել, թե որտեղ և ինչպես կարող են տեղական ընկերությունները աջակցել ծրագրին, քանի որ նախատեսվում էր արտադրության մեջ զգալի մասնաբաժին հատկացնել տեղական ռազմական արդյունաբերության ընկերություններին: «Patriot»-ը նախատեսվում է ինքնաթիռների և թևավոր հրթիռների դեմ օդ-տագործելու համար, բայց կարող է վնասագործել նաև հեռահար բախտակի հրթիռները: Ըստ ռազմական վերլուծաբանների՝ վերոնշյալ համակարգը կարող է մրցել ռուսական S-300 և S-400 <ՕՊ համակարգերի հետ: PAC-3 համակարգն ամերիկյան խոշոր հրթիռաշինական Raytheon ընկերության MIM-104 Patriot միջին հեռահարության «ցամաք-օր» հրթիռների արդիականացված տարբերակն է: Այն դրամավ աշխարհի ռազմական առումով երաշխավորված միակ հակաբախտակի հրթիռային պաշտպանության համակարգը 1991 թ. Պարսից ծոցի պատերազմի ժամանակ⁶¹:

Թուրքիայի հրթիռային համակարգերի արդիականացման ծրագրի շրջանակներում 2006 թ. վերջին պաշտպանական արդյունաբերության քարտուղարությանը առաջարկ-փաթեթ ներկայացվեց հարավաֆրիկյան Denel ընկերության կողմից, որն առաջարկում էր «երկիր-երկինք» դասի Mmkhonto կոչվող հրթիռներ վաճառել այդ երկրին: Նման առաջադի հետ կապված տխնոլոգիական հնարավորություններն ու պայմաններն ուսումնասիրվել են Roketsan ընկերության մասնագետների կողմից Հարավաֆրիկյան հանրապետություն կատարած այն ընթացքում: Շուրջ 130 կգ ընդհանուր քաշով, 23 կգ ծանրության մասը կրող և 12 կմ հեռահարության այդ հրթիռը կարող է միաժամանակ 8 թիրախների հարվածել⁶²:

Գրեթե նույն ժամանակահատվածում տեղեկատվություն եղավ, որ ամերիկյան Textron Systems ընկերությունը, որն ակտիվորեն հնագործակցում է ԱՄՆ ռազմաօդային ուժերի հետ, Թուրքիային է վաճառելու ցամաքային և հատկապես ծովային ռազմական գործողությունների համար «անկրկնելի» CBU-105 տիպի կատավարվող հրթիռներ այդ երկրի ռազմաօդային ուժերի F-16 տնրակոծիչների վրա տեղադրելու համար⁶³:

2007 թ.-ի հունվարին Պաշտպանական արդյունաբերության քարտուղարությունը ցամաքային ուժերի հրամանատարության սպառազինության ուժեղացման շրջանակներում 80 հատ միջին հեռահարության հակատանկային հրթիռային համակարգերի (յուրաքանչյուր այդ զենքի համակարգի գլխին 10 արձակվող հրթիռ, ընդհանուր առմամբ 800 հրթիռ) (OMTAS) ձեռքբերման նպատակով մրցույթ հայտարարեց, որին հավակնում են մասնակցել ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան ընկերությունները: Նախատեսվում է, որ համակարգերի ձեռքբերման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները կտրամադրվեն Պաշտպանական արդյունաբերության հիմնադրամի արջյուրներին⁶⁴:

2005 թ.-ի նոյեմբերի թուրքական մամուլի տեղեկատվության համաձայն՝ Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեն որոշել է ուժեղացնել երկրի թիկունքային ենթակառուցվածքները, ինչի համար մտադիր է առաջիկա 10 տարվա ընթացքում 50 մլրդ դոլարի ներդրումներ ապահովել այդ ոլորտում: Հիմնականում պաշտպանական հիմնադրամի հաշվին կատարվելիք այդ ներդրումների շարքում են ապագայի ռազմական ուղղաթիռներ համարվող Atak կոչված 50 միավոր տակտիկական-հարձակողական ռազմական ուղղաթիռների և վերջին տարիներին տրամադրված Awacs կոչված ինքնաթիռների ձեռքբերում⁶⁵:

Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության կապալառուական ծրագրերում տեղ են գտել հետևյալ նախագծերը. ապագայի ռազմական ինքնաթիռների ձեռքբերում; 50 միավոր տակտիկական-հարձակողական ուղղաթիռների ձեռքբերում, զինված ուժերի համար 50 միավոր ընդհանուր օգտագործման ուղղաթիռների ձեռքբերում; Leopard1 տիպի տանկերի արդիականացում; Sar-35 ռազմական նավերի արդիականացում; ստորջրյա և վերջրյա հսկողության և սահմանման համակարգերի ներդրում, ինչպես նաև առանց օդային օդացնացների, նոր տեսակի սուրիկանական, ստորջրյա պաշտպանական, մարտական, հետախուզական ոստիկանական և ափամերձ տարածքների անվտանգության պահովման և որոնողական փրկարարական նավերի ձեռքբերման նախագծերը⁶⁶:

Արդեն 2006 թ.-ի հուլիսին հաստատվեց Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության քարտուղարության շրջանակներում ստանձնած 2007-2016 թթ.-ին իրականացվելիք «արտադրության և ապահովման 24 կարևոր նախագծերի» 10-ամյա ծրագիրը, ինչը նպատակ ունի էլ ավելի ուժեղացնել երկրի պաշտպանականությունը: Իրականացված, շարունակվող կամ կատարվելիք նախագծերով հանդերձ, թուրքական պաշտպանական արդյունաբերության բազան և ենթակառուցվածքները ավելի ուժեղ հիմքերի վրա դնելու նպատակ է առաջադրված: Պաշտպանական արդյունաբերության քարտուղարության ստանձնած քայլերի շրջանակում տարբեր նախագծերը, ազգային պաշտպանական կարիքները առաջնային պլան մղելով, Թուրքիայի գոյություն ունեցող արդյունաբերության հնարավորությունների արժևորմամբ նախատեսվում է ռազմական արդյունաբերության մեջ տեղական մասնավոր սեկտորի առավելագույն չափով մասնակցության ապահովում և թուրքական ԶՈՒ-ի կարիքների բավարարում ոչ թե դրսից, այլ երկրի ներսում: 10-ամյա այդ ծրագրի շրջանակներում իրականացվելիք ծրագրերից կարևոր են հատկապես Avacs ինքնաթիռների, նոր սերնդի մարտական ինքնաթիռների, ապագայի մեծ ինքնաթիռների, մարտավարական-հարձակողական Atak ուղղաթիռների նախագծերը, Leopard-1 տանկերի արդիականացման, ազգային տակտիկ արտադրության, փրկարարական (MOSHIP), ծովափնյա անվտանգության որոնողական և փրկարարական, ստորջրյա պաշտպանական- ռազմական և հետախուզական-ոստիկանական նավերի նախագծերը, SAR-35 ափամերձ հսկողության նավերի արդիականացման ծրագիրը, «GOK-TURK» տիեզերական հետախուզական համակարգի ստեղծում և այլն⁶⁷:

Թուրքիայի ռազմական ոլորտի պատասխանատուները ներկայումս առաջնային են համարում ԶՈՒ-ի ռազմաօդային ուժերի սպառազինության, ռազմաօդային միջոցների կատարելագործմանն ու ավելի նոր մի-

զոցների ձեռքբերմանը խնդիրները: Դեռևս 1997 թ.-ին պաշտպանական քարտուղարության գործադիր կոմիտեն հայտարարեց բանակի համար 145 ազգմական, հարվածային-հետախուզական ուղղաթիռների համաձայն արտադրության և ձեռքբերման նախագծի (ATAK) մասին, որի ընդհանուր արժեքը կազմում էր շուրջ 2 մլրդ դոլար: Հայտամրցույթին մասնակցելու հայտեր ներկայացրեցին ամերիկյան Bell Textron ընկերությունն իր Super Cobra և ռուսական «Ռուսորոնդեքարդու»-ն ու «Կամուլ» գործարանը՝ իսրայելական բորտ նավիզացիոն համակարգով զինված Ka-50-2 Erdogan ուղղաթիռներով: Ի դեպ ռուսական կողմն առաջարկել էր ավելի նպաստավոր պայմաններ այլ երկրներ արտահանման նպատակով Թուրքիայում նման ուղղաթիռների արտադրություն հիմնելու համար: Չնայած առաջարկված նպաստավոր պայմաններին՝ 2004 թ.-ի մայիսին բորջական կողմը դադարեցրեց մրցույթն առանց հաղթող կողմին ասիմանելու⁶⁸: Ամենայն հավանականությամբ թուրքական կողմը ենթարկվել է ամերիկյան կողմի ճնշմանը՝ թույլ չտալով ռուսական ռազմաարդյունաբերական ընկերությունների ներգրավել նման խոշոր ռազմական նախագծու:

Ելնելով ամերիկյան ընկերությունների ներդրումների համար Թուրքիայի նպաստավոր պայմաններից՝ Թուրք-ամերիկյան խորհրդի (ATC) վարչական խորհրդի նախագահ Բրենթ Սկոուրոֆտը 2005 թ.-ի հոկտեմբերին հայտարարեց, որ ցանկանում են Թուրքիան դարձնել ամերիկյան Sikorsky ընկերության ուղղաթիռները տարածաշրջանի երկրներին վաճառելու հինգերկուս: Թուրքիայի արտաքին գործերի նախարար Աբդուլա Գյուլի հետ Անկարայում տեղի ունեցած հանդիպումից հետո, Սկոուրոֆտը լրագրողների հետ զրույցում նշել էր, որ եթե թուրքական կողմը լուծի բյուրոկրատական դժվարություններն, ապա ԱՄՆ օդազնացության և ուղղաթիռային հսկա Sikorsky ընկերությունը Թուրքիան կգրանցի ուղղաթիռներ արտադրող և դրանք տարածաշրջանի երկրներ արտահանող հանգրվան⁶⁹:

Ամերիկյան Sikorsky ընկերության հետ պայմանագրի շրջանակներում Թուրքիան ծրագրել է իր ռազմածովային ուժերի համար գնել այդ ընկերության արտադրության 17 S-70B SEAHAWK ռազմական ուղղաթիռներ, որոնք նախատեսվում են բանակին մատակարարել 2009 թ-ից: Թուրքիան այդ պայմանագրի շրջանակներում նախկինում արդեն ձեռք է բերել հիշյալ տիպի 7 և 100 միավոր BLACKHAWK տեսակի ուղղաթիռներ⁷⁰:

Թուրքական բանակի համար սպասազինության ձեռքբերման առաջնային նախագծերի շարքում այդ երկրի պաշտպանական արդյունաբերության քարտուղարությունը շուրջ 50 մարտական ուղղաթիռների ձեռքբերման մրցույթ հայտարարեց, որին մասնակցում էին ռուսական, հարավաֆրիկյան, իտալական և ֆրանս-գերմանական ընկերությունները: Երկար ձգձգումներից հետո ֆրանս-գերմանական EADS Eurocopter (Tiger)-ը և ռուսական (Ka-50-2)-ը դուրս մնացին մրցույթից⁷¹:

Թուրքիայի պաշտպանության նախարար Կեչդի Գյոնուլը 2006 թ.-ի օգոստոսին կայացած պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեի նիստում հայտարարեց, որ ցամաքային ուժերի հրամանատարության մարտավարական հետախուզության և հարձակողական ուղղաթիռների (Atak) նախագծի շուրջ կշարունակվեն բանակցությունները հարավաֆրիկյան Denel Aviation ընկերության առաջարկած Roovalk CSH-2 և իտալական Agusta Westland ընկերության A-129 Mangusta ուղղաթիռները:

րի շուրջ: Նախատեսվում է մրցույթի արդյունքում սկզբնական շրջանում գնել 30 ուղղաթիռներ, հետագայում գնելու ևս 20-ը: Կարևորություն է ներկայացնում այն, որ երկու ընկերություններն էլ պատրաստակամություն են հայտնել Թուրքիայի հետ հիմնել համատեղ արտադրություն, իսկ իտալական ընկերությունը նույնպիսի շահագրգռություն է հայտնել իր գործարանը տեղափոխել Թուրքիա⁷²:

Ապասխանելով, որ ուղղաթիռների հայտամրցույթի վերջնական արդյունքները կիրառարկվեն 2006 թ.-ի վերջին, սակայն ղեկավարելի 12-ին կայացած պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեի նիստում այդ հարցով ոչ մի որոշում չկայացվեց: Որոշ տեղեկությունների համաձայն՝ նիստի ընթացքում կառավարության ներկայացուցիչները առաջարկել են հաղթող ճանաչել կամ հարավաֆրիկյան, կամ էլ իտալական ընկերություններից որևէ մեկին, սակայն զինվորականները պնդել են երկու կողմին էլ նախագծում ներգրավելու անհրաժեշտության մասին: Ուազմական դուրսի վերլուծաբանների կարծիքով այդ ընկերությունների ծախսուման դեպքում կարող է շահել ամերիկյան Boeing ընկերությունը՝ Արտաքին ռազմական վաճառքի (FMS) պայմանագրի շրջանակներում Թուրքիային վաճառել իր AH-64D Apache Longbow ռազմական ուղղաթիռները⁷³:

Երկար ձգձգումներից հետո՝ 2007 թ.-ի հունվարին Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեն պաշտոնապես հայտարարեց ցամաքային ուժերի համար 10 բեռնատար ուղղաթիռների գնման մրցույթի վերաբերյալ: Գործարքի արժեքը գնահատվում է շուրջ 500 մլն. դոլար: Ենթադրվում է, որ մրցույթի հիմնական հավակնորդները ամերիկյան և ռուսական ընկերություններն են լինելու՝ հատկապես Boeing ընկերությունն իր CH-47 Chinook, Sikorsky ընկերությունը՝ CH-53 Super Stallion և ռուսական ուղղաթիռաշինական ընկերությունն իր Mi-26 Helo ուղղաթիռներով: Նշենք, որ դեռևս մրցույթի պաշտոնական հայտարարումը, Boeing ընկերությունն արդեն նախնական կապեր էր հաստատել թուրքական իշխանությունների հետ՝ 10 ուղղաթիռների վաճառքի հետ կապված⁷⁴:

Հակապակաս միջոցներ են հատկացվում Թուրքիայի ռազմաօդային ուժերի ռմակոծիչների արդիականացման և հատկապես նորագույն ռազմական ինքնաթիռների ձեռքբերման ուղղությամբ: Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության քարտուղարությունը երկրի պատմության մեջ ամենամեծ պաշտպանական նախագիծը հանդիսացող ռազմաօդային ուժերում նոր սերնդի ինքնաթիռների կարիքի համար ավելի քան 10 մլրդ դոլար արժողությամբ առաջիկա 20 տարիների ընթացքում 100 կործանիչներ գնելու ծրագրով առաջարկեց: Չեքերելվիչը նոր սերնդի ռազմական ինքնաթիռները պետք է փոխարինեն թուրքական զինված ուժերի կողմից մինչև օրս օգտագործվող F-16 և F-4 ռազմական ինքնաթիռներին: Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության քարտուղարության ղեկավարի ելույթը Թուրք-ամերիկյան խորհրդում⁷⁵:

Թուրքիայի այդ հսկա պաշտպանական նախագծում տեղ գտնելու համար մրցակցությունն ընթանում էր հատկապես ամերիկյան Lockheed Martin ընկերության Joint Strike Fighter F-35 ռմակոծիչի (ավելի քան 200 մլրդ դոլար արժողությամբ այդ ռմակոծիչների արտադրություն նախագծին մասնակցում են ԱՄՆ-ն, Մեծ Բրիտանիան, Իտալիան, Նիդերլանդները, Դանիան, Նորվեգիան, Թուրքիան, Կանադան և Ավստրալիան: Արտադր-

վելու է 2400 ռմբակոծիչ և նախատեսվում է դրանք երկրներին հանձնել 2012 թ.-ին) և Եվրամիության անդամ որոշ երկրների կողմից համատեղ արտադրության մեջ գտնվող Eurofighter Typhoon ինքնաթիռի միջև: Ենթադրվում է, որ նախագծի ամբողջությամբ իրագործման համար կպահանջվի մոտ 20 տարի և նախագծի հետ կապված աշխատանքների 50 տոկոսը կիրառվի թուրքական TUSAS, ASELSAN, HAVELSAN, ROKETSAN ընկերությունների և Թուրքիայի օդազնագության և տիեզերազնագության արդյունաբերության ընկերության պաշտպանական գործարաններում⁷⁶:

Eurofighter Typhoon ինքնաթիռներ արտադրող եվրոպական կոնսորցիումը⁷⁷ ցանկանում էր, որ Թուրքիան ևս դառնա ինքնաթիռների արտադրության իր արդյունաբերական բաղկացուցիչ մասը: Եթե Թուրքիան ընդունի այդ առաջարկությունը, ապա Eurofighter-ի որոշ պահեստամասեր կարտադրվեն նրա տարածքում: Կոնսորցիումի առաջատար իտալական Alenia Aeronautica կորպորացիան Թուրքիային առաջարկեց միանալ եվրոպական այդ նախագծին՝ պատրաստակամություն հայտնելով արտոնյալ պայմաններ տրամադրել այդ երկրին: Կոնսորցիումի ղեկավարության առաջարկի համաձայն 120, 80 կամ 40 ինքնաթիռների գնման պարագայում թուրքական ռազմաարդյունաբերական ընկերություններին կհատկացվեն համապատասխանաբար 9, 6 կամ էլ 3.2 մլրդ դոլարի արտադրական պատվերներ: Առաջարկությունը տարածվելու էր թուրքական ավիացիոն արդյունաբերության բոլոր ձեռնարկությունների վրա, որոնք հետագայում իրականացնելու էին նաև ինքնաթիռների վերանորոգման և տեխնիկական սպասարկման աշխատանքները⁷⁸:

Երկար ժամանակ պաշտպանական արդյունաբերության քարտուղարության նիստերում ձեռքբերվելից ինքնաթիռների ընտրության հարցում վերջնական որոշում չէր կայացվում: Թուրքական մամուլի տեղեկությունների համաձայն՝ երկրի կառավարությունը կողմնակից էր կոմերցիոնալ (ուժեղ մասնավաճառարությանը) այն է՝ գործընկերություն զարգացնել F-35 JSF կործանիչների արտադրության ծրագրի շրջանակներում և միանալ եվրոպական Eurofighter կոնսորցիումի եվրամիության անդամակցության ճանապարհին՝ ռազմավարական լծակ՝ ձեռք բերելու համար: Կլինիչ, զինվորական բարձրագույն հրամանատարությունը պաշտպանական արդյունաբերության նիստում հայտարարեց միայն F-35 ինքնաթիռների ձեռքբերման նպատակահարմարության մասին: Չհիմնողականության համար հիմնավորումն այն էր, որ Թուրքիայի ռազմաօդային ուժերը հիմնականում համալրված են ամերիկյան ինքնաթիռներով և ռազմական օդաչուների պատրաստման ծրագիրը հիմնված է ԱՄՆ-ի համապատասխան համակարգի վրա: Նման ընտրությունը պայմանավորված էր նաև ֆինանսական առավել մեծ ծախսերից խուսափելու անհրաժեշտությամբ, որը կարող էր ծագել տարբեր արտադրության ինքնաթիռների ձեռքբերման դեպքում⁷⁹:

2006 թ.-ի դեկտեմբերի 12-ին կայացած պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեի նիստում հատկապես զինվորականության կողմից հավանության արժանացավ F-35 JSF կործանիչների ձեռքբերման և արտադրությանը մասնակցելու որոշումը⁸⁰: Թուրքիան միացավ աշխարհի ամենամեծ պաշտպանական նախագծին՝ ինքնաթիռաշինական հսկայական ծրագրին: ԱՄՆ-ի Lockheed Martin ընկերության Տեխասի նահանգի

Ֆորտ Կոքսի ինքնաթիռաշինական գործարանում արտադրության պատրաստվող F-35 տիպի ուղիղահայաց վերելք և վայրէջք կատարող ինքնաթիռների ստեղծման նախագծին մաս է կազմել նաև Թուրքիան, և այդ ինքնաթիռների վաճառքից մասնաբաժին պետք է հատկացվի նաև այդ երկրին: F-35 ինքնաթիռների ստեղծման նախագծի արժեքը 276 մլրդ դոլար է կազմում և նախագծի իրագործման համար Թուրքիան 10 մլրդ դոլար է հատկացրել, որի 3.5 մլրդ մասի վերադարձն այդ երկրին երաշխավորված է Թուրքիային 100 ինքնաթիռներ վաճառելու ակնկալիքով⁸¹:

2007 թ.-ի սկզբին թուրքական TAI ավիացիոն ընկերությունը Lockheed Martin ընկերության F-35 Lightning II ռազմական ինքնաթիռի արտադրության խմբի արաջատար Northrop Grumman ISS International ընկերության (ընկերությունը ռմբակոծիչների կենտրոնական ֆյուզելաժների նախագծման և արտադրության առաջատարն է) հետ ստորագրեց պաշտպանական փաստաթուղթը, որով Թուրքիան դարձավ այդ ինքնաթիռների արտադրության մեջ ներգրավված երկրներից մեկը: 3 մլրդ դոլար արժողությամբ այդ պայմանագրի համաձայն TAI ընկերությունն ստանձնելու է արտադրվելից կործանիչների համար ավելի քան 400 կենտրոնական ֆյուզելաժների արտադրության գործընթացը⁸²:

Թուրքական կողմն ամեն գնով փորձում էր ապահովել շուրջ 6 մլրդ դոլար արժողությամբ տեղական արտադրության իր մասնաբաժինը, ինչն այնքան էլ իրատեսական չէր, քանի որ արտադրության մեջ ներգրավված մյուս երկրները թույլ չէին տան մեկ երկրին ստանձնելու արտադրության զերակշռող տեղական մասնաբաժին:

Եր սերերի այդ ռմբակոծիչները Թուրքիայի ռազմաօդային ուժերին կհանձնվեն 2014 թ.-ին, որոնք կվիոլադին օդուժի ներկայումս ուղտագործման մեջ գտնվող հնացած F-16 և վիետնամական պատերազմի շրջանի F-4E ռմբակոծիչներին:

2006 թ.-ի վերջին Թուրքիան ռազմաօդային ուժերի զարգացման նպատակով ԱՄՆ-ից շուրջ 2.9 մլրդ. դոլար արժողության 30 միավոր F-16 տիպի ռազմական ինքնաթիռներ և անհրաժեշտ այլ սարքավորումներ ու ծառայություններ գնելու որոշում կայացրեց: Գնվելից ռազմական ինքնաթիռ պատվերում է F-16 Block 52 Plus մոդելին, որն ավելի կատարելագործված և տեխնոլոգիապես նոր տարբերակն է: Այդ գործարքի հիմնական կապալառուն ամերիկյան Lockheed Martin ընկերությունն է, սակայն նախատեսված է նաև թուրքական տեղական արդյունաբերության աջակցությունը⁸³:

Ամենայն հավանականությամբ հենց այդ 30 միավոր F-16 ինքնաթիռներ գնելու նպատակահարմարությունից ելնելով Թուրքիան հրավարվեց Խուրայեի մասնակցությամբ թուրքական օդուժի 50 F-4 Phantom ռազմական ինքնաթիռների 500 մլն. դոլար արժողությամբ արդիականացման արդեն գործող ծրագրից⁸⁴:

Թուրքիայի ռազմաօդային ուժերում ներկայումս F-16 ռմբակոծիչների թիվը հասնում է մոտ 215-ի, որոնք 1980-90-ական թթ-ին արտադրվել են Անկարայի մոտ գտնվող TAI ընկերության գործարանում՝ Lockheed Martin-ի հետ կնքված երկու պայմանագրերի հիմքի վրա⁸⁵:

Ներկայումս դրված է ռազմաօդային ուժերի F-16 ռմբակոծիչների արդիականացման և վերանորոգման խնդիրը: Ուղտաօդային հրամանատարության ենթակայության տակ գտնվող 200 միավորից ավել F-16C և F-16D

ինքնաթիռների արդիականացման աշխատանքներն իրականացնելու է ամերիկյան Lockheed Martin ընկերությունը՝ շուրջ 635 մլն. դոլար արժողությամբ պայմանագրի շրջանակներում: Արդիականացման աշխատանքներն իրականացվելու են հիմնականում ամերիկյան ընկերության Ֆորթ Վորթի գործարանում և թուրքական TAI ընկերության ձեռնարկություններում: Արժատեսույցում է աշխատանքներն ավարտել 2016 թ. -ին⁶⁸:

Թուրքիան հանդես էր եկել իսլամական երկրների D-8 կազմակերպության շրջանակում թուրքական օդազնացության ընկերության կողմից մշակված «Իսլամական ինքնաթիռ» կոչված ինքնաթիռի արտադրություն կազմակերպելու նախաձեռնությամբ, ինչը սակայն չստացավ իրանական կողմի աջակցությունը: Ըստ թուրքական արդյունքների, Իրանը սեփական ինքնաթիռի մշակման պատճառով հրաժարվել է այդ ինքնաթիռի արտադրության հետ կապված ֆինանսական աջակցությունից: Նախագծի իրանական՝ ամենամեծ ֆինանսական աջակցությունից զրկված Թուրքիան ինքնաթիռի արտադրական ծախսերը հոգալու համար պատրաստվում է դիմել Իսլամական կոնֆերանս կազմակերպության անդամ երկրների աջակցությանը⁶⁷:

Թուրքական ԶՈՒ-ի արդիականացման լայնածավալ ծրագրի համալսնքստու և ռազմավարական կարևորություն է ներկայացնում տիեզերական հետազոտությունների ազգային հավակնոտ նախագիծը, որը նախատեսում է տիեզերքի ուսումնասիրման համար անհրաժեշտ ենթակառուցվածքի ստեղծում: Թուրքական «Տիեզերական նախագիծը» առաջարկել է այդ երկրի Ազգային անվտանգության խորհուրդը (թուրք. Millî Güvenlik Kurulu), մշակվել Թուրքիայի գիտության և տեխնոլոգիայի բարձրագույն խորհրդի կողմից և հետագայում լայնորեն ուսումնասիրության ենթարկվել պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեի նիստերում: Ծրագրի իրականացումը դրված է Թուրքիայի գիտական և տեխնոլոգիական հետազոտությունների խորհրդի (TUBITAK) վրա, որը պետք է համագործակցի ԶՈՒ-ի գլխավոր շտաբի, ռազմաօդային ուժերի, տրանսպորտի նախարարության, ինչպես նաև համայնաբանների հետ: 2006 թ.-ին Թուրքիան ձեռնամուխ է լինում մուլտիակենտի շարժումների և տիեզերական գործընթացների մշտական ուսումնասիրմանը⁶⁸:

Ծրագրի առաջին գործնական քայլը եղավ 2001 թ-ին նախարարների խորհրդի որոշմամբ Թուրքական տիեզերական շրջակալության (թուրք. Turk Uzay Kurulu) ստեղծումը, իսկ 2002 թ-ին ընդլայնվեց «Ազգային տիեզերական գործակալության մասին» օրենքը: Նույն օվակակնին այլ նպատակներով հատկացվեց շուրջ 250 մլն դոլար:

Թուրքիայի պատմության մեջ առաջին անգամ ակտիվ քայլեր են ձեռնարկվում սեփական արբանյակային համակարգի ստեղծման ուղղությամբ: Հավակնոտ այդ ծրագիրը նախատեսված է ավարտին հասցնել 2015 թ-ին: Ծրագրով, մասնավորապես, պլանավորվում է մինչև 2010 թվականը թուրքական ռազմաօդային ուժերի սպաներից պատրաստել վեց տիեզերագնացներից բաղկացած ջոկատ և մինչև 2012 թվականը կառուցել ազգային տիեզերակայան: 2012 թվականին Թուրքիան միանալու է Եվրասիական տիեզերական ծրագրին, սակայն հիմնական շեշտը դրվելու է Լուսինի վրա տիեզերական բազային ստեղծման և այնտեղ տեղակայվելիք համակարգերի օգնությամբ սահմանակից Հյուսիսային Իրաքում ջուրը զինյալների տեղաշարժերի մասին տվյալներ ստանալու վրա: Տիե-

զերական հետախուզության տեղեկատվության շնորհիվ թուրքական բանակը կանխիչ միջոցներ է ձեռնարկելու երկիր գրոհայինների ներթափանցում թույլ չտալու համար, ինչպես նաև ապահովելու է տարանցիկ նավթամուղների ու գազամուղների անվտանգությունը⁶⁹:

Տիեզերականի շինարարության իրականացվելու է Հյուսիսում (ԱՄՆ) NASA-ի և Բայկոնուրում (Ղազախստան) Ռուսաստանի տիեզերական գործակալության տիեզերանավերի արձանագծով գործող կենտրոնների վործի հաշվառմամբ: Մինչև 2012 թ. նախատեսված է ավարտել մկ-նարկային համակարգի շինարարությունը, որի նպատակով Անկարայի, Մերսինի, Անթալիայի և Իզմիրի վիլայեթներում ուսումնասիրվում են հարմար տեղանքները⁷⁰:

Այլ Թուրքիայի կողմից դիտվում է որպես ռազմավարական կարևորության նախագիծ, ինչն առնչվում է քաղաքական, ռազմական, անվտանգության, գիտության ու տնտեսության ոլորտներին: Այն ենթադրում է ինչպես քաղաքացիական, այնպես էլ ռազմական քաղադիրներ: Ընդհանուր առմամբ այդ նախագիծը նախատեսում է քաղաքացիական-ռազմական կիրառում՝ ներառելով նաև օդային-տիեզերական պաշտպանության համակարգ⁷¹:

Տիեզերական նախագծով նախատեսվում է միասն Եվրոպական տիեզերական ծրագրին, 2008 թ-ին՝ քարծի հեռախոսության տիեզերանավերի նախագծում և մշակում, տիեզերագնացների պատրաստման ուսումնական ծրագրերի իրականացում, 2009 թ-ին՝ արձակման համակարգի նոր հորիզոնների և հետախուզական արբանյակների արտադրություն, 2010 թ-ին՝ հատուկ հեռադիտակների ձեռքբերում, 2012 թ-ին՝ ազգային տիեզերակայանի կառուցում և 2014 թ-ին՝ «Ազգային հետազոտությունների արբանյակի» արձակում տիեզերք⁷²:

Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության խորհուրդը ամերիկյան արբանյակային ծառայություններից հրաժարվելու նպատակով սկսել է հետախուզության և հսկողության սեփական արբանյակային համակարգի ստեղծման աշխատանքները շուրջ 200 մլն դոլար ընդհանուր արժեքով: Ենթադրվում է, որ 2007 թ-ին գործարկվելիք այդ համակարգը ռազմավարական դերակատարություն կունենա, հատկապես, Քրդական աշխատակողական կուսակցություն կազմակերպության (PKK) գործունեության հարցում հետախուզություն ապահովելու գործում⁶⁹:

Առաջին թուրքական պետության անունով կոչված «Gokturk RFP» տիեզերական համակարգը կազմված կլինի էլեկտրասպտիկական հսկիչ ուղեծրային արբանյակից և մեկական անշարժ ու շարժական երկրային կայաններից: Արտասահմանյան ընկերությունների հետ միասին մրցույթին որպես հիմնական ընկերություն իրավիվել է նաև Թուրքիայի օդազնացության և տիեզերագնացության ընկերությունը (TAI): Ենթադրվում է, որ քարծի հստակությամբ նկարներ երկիր ուղարկելու համար նախատեսված արբանյակի ծրագրի իրագործմանը կմասնակցեն թուրքական տեղական TAI, ASELSAN ընկերություններն ու Թուրքիայի գիտական և տեխնոլոգիական հետազոտությունների խորհուրդը: Թուրքիայի ռազմաօդային ուժերի կողմից «առաջնային ծրագրով» հռչակված արբանյակի ստեղծման հայտամրցույթում պատրաստվում են հարյուր արբանյակային արտադրության մեջ մասնագիտացված ամերիկյան, ֆրանսիական, իտալական, իսրայելական, ձապոնական, կորեական և այլ ռազմաարդյունաբերական

ընկերություններ: 600-650 կմ բարձրության ուղեծրում տեղակայվելիք այդ արբանյակը բուրջական ՋՌՏ-ին կծառայի 4-6 տարի⁹⁴:

Թուրքիայի պաշտպանության նախարարության 2007 թ.-ի բյուջեն նախորդ տարվա համեմատ ավելացել է 12 տոկոսով՝ կազմելով 13,2 մլրդ. ԼԹԼ (չուրջ 10.15 մլրդ. դոլար)⁹⁵: 2005 թ.-ին այն կազմել է 10.9 մլրդ, 2006 թ.՝ 11.87 մլրդ. ԼԹԼ /1 դոլարն արժե 1.380 ԼԹԼ/: Ինչպես մի քանի տարի առաջ, այնպես էլ առաջիկա տարիներին ռազմական տեխնիկայի և սպառազինության ձեռքբերման ու ապահովման ուղղությամբ Թուրքիան կծախսի չուրջ 3,5-4 մլրդ դոլար: Սակայն իրականությունից հեռու էլ նաև այն, որ երկրում խորացող տնտեսական ճգնաժամի պայմաններում Թուրքիան ստիպված կլինի հրաժարվել մի շարք նախագծերից, ինչպես 2001 թ.-ին չկալ հայտարարվեցին շուրջ 30 պատվերներ⁹⁶: 20 մլրդ դոլար ընդհանուր արժողությամբ⁹⁶:

Թուրքիան Հյուսիսատլանտյան դաշինքի անդամ մյուս երկրներից ավելի շատ միջոցներ է ծախսում ռազմական տեխնիկայի գնման նպատակով՝ առաջ անցնելով նույնիսկ ԱՄՆ-ից: ՆԱՏՕ-ի հատուկ գեկուցի համաձայն՝ 2004 թ.-ի դրությամբ Թուրքիան դաշինքի անդամ մյուս երկրներից ավելի շատ միջոցներ է հատկացրել ռազմական տեխնիկայի և սպառազինության ձեռքբերման նպատակով, որը կազմել է ազգային պաշտպանական բյուջեի շուրջ 34.4 տոկոսը: Ռազմական բյուջեի ծավալով ՆԱՏՕ-ի անդամ երկրների շարքում Թուրքիան գրավում է երկրորդ տեղը՝ ԱՄՆ-ից հետո՝ համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) 3 տոկոս ցուցանիշով⁹⁷:

Պաշտպանական ծախսերի ծավալի առումով Թուրքիան Մեքսիկոյի և Լիբանոնի 20 երկրների շարքում 4-րդ, իսկ Եվրոպայում՝ 5-րդ երկիրն է: Մեքսիկոյի Լիբանոնում միջին հաշվով 37,1 մլրդ դոլարի ամենամեծ պաշտպանական ծախսերը կատարում է Իրանը⁹⁸:

Թուրքիայի ՋՌՏ-ի սպառազինության, արդիականացման և ռազմական արդյունաբերության զարգացումը նպատակ ունի նախ երկիրը տարածաշրջանում հասցնել ռազմական բացարձակ գերակայության և առաջնորդության, ինչպես նաև դարձնել սպառազինության արտադրության կարևոր կենտրոն, ինչը շարունակ հիմնավորվում է ինչպես քաղաքական, այնպես էլ ռազմական ոլորտի ներկայացուցիչների կողմից:

Թուրքիայում, ինչպես նաև տարածաշրջանում քրդական հիմնախնդրի առկայությունը, մերձավորարևելյան տարածաշրջանում վտանգավոր է անկախատեսելի զարգացումները, թուրք-իռանական լարված հարաբերությունները, Կիպրոսի հիմնախնդիրը, որոնք որպես հավանական մարտահրավերներ նշված են անցյալ տարի աշնան ընդունված «Ազգային անվտանգության քաղաքականության փաստաթղթում», այդ երկրի համար առաջնահերթ են դարձնում տարածաշրջանում ռազմական գերակայության ապահովումը: Թուրքիան ուշադրություն ուղղել է սեփական ռազմական ոլորտում «յուրօրինակ ժամանակակից տեխնոլոգիաներ» զարգացնելուն, այն դեպքում, երբ մնացած երկրներն իրենց պաշտպանական ոլորտը հագեցնում են հիմնականում այլ զարգացած երկրներից ռազմական տեխնիկա գնելու միջոցով:

1 Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության քարտուղարության հիմնադրման 20-ամյակին նվիրված կոնֆերանսի նյութեր. Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության քարտուղարության պաշտպանական կայքէջ, <http://www.ssm.gov.tr>.

2 Թուրքիայի ազգային պաշտպանության նախարարության պաշտոնական կայքէջ: <http://www.msb.gov.tr>.

3 Yeni Şafak, 10.08.2006.

4 Гурьев А.А., Турция-Израиль: по пути укрепления военного сотрудничества; <http://www.iimes.ru/rus/stat/2006/24-01-06.htm>.

5 Erdal İpekese, Yeni savunma sanayi profili; http://www.tempodergisi.com.tr/kose/erdal_ipekesen/05665/.

6 Elliot Hen-Tov, The Political Economy of Turkish Military Modernization, Middle East Review of International Affairs, Vol.8, No 4, (December 2004), p 50.

7 А.С.Косиков, Военно-политический потенциал Турции, <http://www.iimes.ru>.

8 <http://www.globalsecurity.org/military/world/europe/tu-ssm>.

9 Savunma Havacilik ve Uzay Sanayii Paneli On Raporu/Ek-4, Vizyon 2023 Projesi; <http://www.vizyon2023.tubitak.gov.tr>.

10 Türk Savunma Sanayii Politikası ve Stratejisi,

11 <http://www.vizyon2023.tubitak.gov.tr/teknolojiongorusu/paneller/savunmauzayvehava-cilik/raporlar/son/EK-12.pdf>.

12 Vizyon 2023 Projesi. Savunma, Havacilik ve Uzay Paneli. İ. ÖN RAPORU. Ek-4. Savunma Sanayii Hedefleri http://www.vizyon2023.tubitak.gov.tr/teknolojiongorusu/paneller/savunmauzayvehava-cilik/raporlar/SHU_EK4.pdf.

13 FNSS ընկերության գլխավոր տնօրենի զեկուցը Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության քարտուղարության հիմնադրման 20-ամյակին նվիրված միջազգային կոնֆերանսում, <http://www.ssm.gov.tr>.

14 Elliot Hen-Tov, The Political Economy of Turkish Military Modernization, p.54

15 Defence Industry; <http://www.turkey-now.org/db%5Cdocs%5C%5CDefense06.doc>.

16 Roketsan ընկերության տեխնիկական գլխավոր տնօրենի օգնական Սելուկ Յաշարի զեկուցը Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության քարտուղարության հիմնադրման 20-ամյակին նվիրված միջազգային կոնֆերանսում, <http://www.ssm.gov.tr>.

17 Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության քարտուղարի ելույթը Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության քարտուղարության հիմնադրման 20-ամյակին նվիրված միջազգային կոնֆերանսում, <http://www.ssm.gov.tr>.

18 Defence Industry, <http://www.turkey-now.org/db%5Cdocs%5C%5CDefense06.doc>.

19 Լույս տեղում:

20 Военная промышленность Турции активно развивается, <http://www.news.turkey.su>.

21 Ազգային պաշտպանության նախարարության պաշտոնական կայքէջ, <http://www.msb.gov.tr/birimler/>.

22 Լույս տեղում:

23 Լույս տեղում:

24 1963 թ. հիմնադրված այդ պետական գործակալությունը հիմնականում տնտեսական եւ տեխնոլոգիական զարգացման ուղղված ծրագրեր է իրականացնում եւ գործում է որպես թուրքական կառավարությանը կից խորհրդակցական մարմին

գիտական-տեխնոլոգիական ոլորտում: Խորհրդին պատկանող 15 տարբեր հետազոտական ինստիտուտներում աշխատում են շուրջ 1000 մասնագետներ:

Տե՛ս Թուրքիայի գիտական և տեխնոլոգիական հետազոտությունների խորհուրդի կայքէջ: <http://www.tubitak.gov.tr>.

25 Defence Industry, <http://www.turkey-now.org/db%5Cdocs%5C%5CDefense06.doc>.

26 Savunma Sanayii Mustesarligi, <http://www.globalsecurity.org/military/world/europe/tu-ssm>.

27Yeni Safak, 23.11.2006.

28<http://www.gbulen.ssm.gov.tr>, 08.02.2007.

29 Вооруженные силы и военная кономика стран Азии, информационно-аналитический справочник, Москва, 2000, с.77.

30 Roketsan ընկերության կայքէջ, <http://www.roketsan.com.tr/havaeng.html>.

31 <http://www.roketsan.com.tr/122eng.html>.

32 Yeni Safak, 03.10.2005.

33 <http://www.gbulen.ssm.gov.tr>, 04.10.2006.

34 Aselsan ընկերության կայքէջ: <http://www.aselsan.com.tr>.

35 Eugene Kogan, Cooperation in the Israeli-Turkish Defence Industry, Conflict Studies Research Centre; Middle East Series 05/43; [http://www.da.mod.uk/CSRC/documents/middle_east/05\(43\)-EK](http://www.da.mod.uk/CSRC/documents/middle_east/05(43)-EK), p. 10-11.

36С.А.Сардановский, Аспекты политическоы безопасности Черноморья, <http://www.bsarg.crimeainfo.com/03-Sardanovsky.rf>.

37 <http://www.gbulen.ssm.gov.tr>, 17.09.2006.

38 <http://www.gbulen.ssm.gov.tr>, 18.12.2006.

39 <http://www.savaskarsitlari.org>.

40 Havelsan ընկերության կայքէջ, <http://www.havelsan.com.tr/eng/about/financial.php>.

41 МКЕК ընկերության կայքէջ, <http://www.mkek.gov.tr/english/hakkimizda.aspx>.

42 Вооруженные силы и военная экономика стран Азии, с.77-78.

43 FNSS ընկերության կայքէջ: <http://www.fnss.com.tr/>.

44 <http://www.gbulen.ssm.gov.tr>, 31.01.2007.

45 Milliyet, 18.07.2006; <http://www.regnum.ru>, 28.08.2006.

46 1999 թվականին Թուրքիա սպառազինության արտահանման հնարավորության շուրջ ծագած վեճը ծանրագույն ճգնաժամի հանգեցրեց Քերմանիայի սոցիալ-դեմոկրատների և «Կանայների» կառավարող կուսիցիայում: Այն ժամանակ մտտ 7 մլրդ եվրո գումարի «Leopard -2» շուրջ 1000 տանկերի ծրագրված մատակարարումները ձախողվեցին «Կանայների» դիմադրության պատճառով: Տե՛ս Anadolu ajansi.

48 Hürriyet, 23.11.2005.

49 Eugene Kogan, Cooperation in the Israeli-Turkish Defence Industry, pp.10-15

50 Гурьев А.А.; Турция-Израиль: по пути укрепления военного сотрудничества. 51 Խույն տեղում:

52 <http://www.regnum.ru>, 16.08.2006.

53 Մինչեւ 1976 թ. ԱՄՆ-ը և Թուրքիան միմյանց միջեւ ռազմական պատվիրակություններ չեն փոխանակել: Թուրքիայի ՋՈՒ ԳԵ տեսի տեղակալի առաջին պաշտոնական այցը ԱՄՆ կատարվել է 1976 թ.: ԱՄՆ-ը ՋՈՒ ԳԵ պետը փոխադարձ այց կատարեց Թուրքիա 1978 թ.: 1979 թ. մշակվել և թուրքական կողմի հետ համաձայնեցվել է 1980-81 թթ. լազմական գծով շփումների առաջին պլանը, սակայն թուրքական կողմի հրաժարման պատճառով նախատեսված միջոցառումները չեն կատարվում: Դետապարման ռազմական ոլորտի երկկողմ շփումները կատարվել են երկամյա պլանների (1988-1989թթ., 1990-1991 թթ., 1992-1993 թթ.) համաձայն: 1994 թ. կողմերն ստորագրեցին ռազմատեխնիկական և ռազմաարդյունաբերական ոլորտում

համագործակցության վերաբերյալ համաձայնագիր, իսկ 1998 թ.՝ Ռուսաստանի և Թուրքիայի ՋՈՒ Գլխավոր շտաբների միջե փոխընթանակ հուշագիր: Տե՛ս B.B.Kudales, О визите в Россию министра обороны Турции, <http://www.kurdistan.ru>, 02.10.2006.

54 Гурьев А.А.; О новом вертолетном тендере в Турции, ИИИ и БВ, 11.03.05.

55 Սերգեյ Մինայան, Իրալեյա-թուրքական ռազմադադարական համագործակցությունը քրդական հիմնախնդրի համատեքստում, «21-րդ դար», N 4, Երևան, 2006, էջ 86.

56 Turkish Daily News, 01.04.2007.

57 Правительство Турции приняло решение о проведении тендера на закупку средств ПВО большой дальности; <http://www.arms-tass.su>; 21.02.2006.

58 Milliyet, 10.08.2006.

59 Թուրքական մամուլի հաղորդմանը՝ ամերիկյան հավակնական և հունական լրքիները ձեռնարկումներ էին սկսել ռազմական այդ գործարքը խոչընդոտելու համար: Երանք նմանակ էին հղել կոնգրեսի ռազմական ծառայությունների և միջազգային հարաբերությունների համընթացողների և առանձին կոնգրեսականներին, որոնք պակում է, որ գեներլի վաճառող ռազմական հավասարակշռությունը Կիպրոսում կխախտվի, և որ այդ գեներլի հնարավոր է Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցում Ադրբեյջանին աջակցող Թուրքիան սպառնա Դայաստանին: Սակում էր, որ այդ վաճառքը չի կարող ծառայել ԱՄՆ շահերին և արժեքներին, և որ հրթիռների վաճառքի հետ կապված ծրագիրը պետք է վերանայվի: Տե՛ս Milliyet, 15.05.2006.

60 Ազատություն ռադիոկայան, 26.08.2006.

61 Turkish Daily News, 01.04.2007.

62 <http://www.gbulen.ssm.gov.tr>, 10.10.2006.

63 <http://www.gbulen.ssm.gov.tr>, 05.11.2006.

64 <http://www.gbulen.ssm.gov.tr>, 05.02.2007.

65 Akşam, 21.11.2005.

66 Խույն տեղում:

67 Haber7, 20.08.2006.

68 Гурьев А.А.; О новом вертолетном тендере в Турции, ИИИ и БВ, 11.03.05.

69 Hürriyet, 21.10.2005.

70 Anadolu ajansi, 14.11.2006.

71 Turkey Shortlists 2 Attack Helicopter, <http://www.defenceindustrydaily.com/2006/07/turkey-shortlists-2-attack-helicopters/index.php>.

72 <http://www.turkishpress.com>, 04.07.2006.

73 <http://www.gbulen.ssm.gov.tr>, 14.12.2006.

74 Turkish Daily News, 09.01.2007.

75 Joint ATC-TAIK Annual Conference, 2006, http://www.turkey-now.com/db/docs/murad_bayar.pdf.

76 Akşam, 29.03.2006.

77 «Eurofighter-2000»-ը դարձավ ամենամեծ համատեղ եվրոպական նախագիծը Լե՛ծ Բրիտանիայի, Իտալիայի, Գերմանիայի և Իսպանիայի միջե ռազմական տեխնիկայի արտադրության բնագավառում: 1998 թ. հունվարին որոշում կայացվեց մինչեւ 2015թ. ընդհանուր առմամբ 620 ինքնաթիռների ձեռքբերման շուրջ (Լե՛ծ Բրիտանիան պատվիրել է 232, Իտալիան՝ 121, Գերմանիան՝ 180, Իսպանիան՝ 87 ինքնաթիռներ): Նախագծի մշակումն սկսվել է դեռևս 1975 թ.: Իր առաջին թռիչքը՝ "Typhoon"-ն իրականացրել է 1994թ. մարտին: Турция может присоединиться к проекту "Еврофайтер-2000", <http://www.arms-tass.su>, 07.06.2006.

78 Zaman, 03.12.2006.

79 Turkish Daily News, 27.10.2006.

80 <http://www.gbulen.ssm.gov.tr>, 13.12.2006.

- 81 Լոր սերմնի գերծայնային F-35 ինքնաթիռն ունի 11 տարրեր տեսակի գեներերի համակարգեր: Ինքնաթիռներից յուրաքանչյուրի արժեքը 46 մլն դոլար է կազմում, որի 5 մասից բաղկացած շարժիչի հզորությունը 20 հազար ծիաուժ է: Այն կարող է հեշտությամբ քանդվել եւ հավաքվել: Ենթադրվում է, որ F-35 ինքնաթիռների կարտադրվի մոտ 4-5 հազար հատ: Լորագույն տեխնիկայով գերհագեցած այդ ինքնաթիռի յուրաքանչյուր վաճառքից Թուրքիան մասնաբաժին կունենա՝ նախագծին իր մասնակցության չափին համարժեք: Sbu Milliyet, 11.04.2006.
82 <http://www.gbulen.ssm.gov.tr>, 08.02.2007.
83 Hürriyet, 13.12.2006, <http://www.defenceindustrydaily.com>, 02.10.2006.
84 Zaman, 08.08.2006.
85 Turkish Daily News, 02.08.2006.
86 <http://www.gbulen.ssm.gov.tr>, 28.12.2006.
87 Hürriyet, 15.05.2006.
88 <http://www.regnum.ru>, 06.11.2006.
89 Yeni Şafak, 08.01.2007.
90 <http://www.regnum.ru>, 06.11.2006.
91 Savunma Havacılık ve Uzay Sanayii Panel Raporu/EK-5, (Türk Uzay Sektörüne İlişkin Değerlendirme), <http://www.vizyon2023.tubitak.gov.tr>.
92 IDEF 05, <http://www.thenewatolian.com>.
93 Akşam, 20.07.2006.
94 Լույս տեղում:
95 <http://www.gbulen.ssm.gov.tr>, 14.10.2006.
96 <http://www.noravank.am>, 04.05.2006.
97 <http://www.regnum.ru>, 04.01.2007.
98 Milliyet, 17.07.2006.

**ԻՄՐԱՅԵԿԱ-ԹՈՒՐԿԻԱԿԱՆ ՈՒՋՄԱԿԱՐԱԿԱՆ
ՀՆԱՎՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՃՂԵՑՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱՎՈՐԾՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՀՐԱՄԽՆՆԴԻՐՆԵՐԻ ԿՐԱ**

Սերգեյ Մինայան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Իսրայելա-թուրքական ռազմա-քաղաքական համագործակցությունն ունի մի քանի մակարդակներ, և պետք է դիտարկվի ինչպես բուն ռազմական ոլորտում /ինչն անկասկած կարևորություն ունի երկու երկրների համար/, այնպես էլ քաղաքական ու աշխարհաքաղաքական ոլորտներում, ինչը ևս կարևոր նշանակություն ունի այդ երկրների հարաբերությունների դիմադրման համար: Ընդ որում, ինչպես թուրքական ռազմա-քաղաքական շրջանակների ներկայացուցիչները, այնպես էլ տարածաշրջանային անվտանգության ու արտաքին քաղաքականության հարցերով փորձագետները միակարծիք են այն հարցում, որ Իսրայելի հետ ռազմա-քաղաքական դաշինքի կարևորությունը մեծամասամբ պայմանավորված էր նաև քրդական կազմակերպությունների դեմ պայքարում թուրքական բանակի ու հատուկ ծառայությունների ունակությունների ուժեղացմամբ: Միևնույն ժամանակ, այդ դաշինքը Անկարային հնարավորություն տվեց թուրքական քրդերի դեմ պայքարում Իսրայելի կողմից ստանալ իր գործողությունների համար անհրաժեշտ քաղաքական ու բարոյական աջակցությունը՝ ինչպես տարածաշրջանային մակարդակում, այնպես էլ միջազգային արեանյում: Չնայած այն բանին, որ այդ ռազմա-քաղաքական համագործակցությունը հակադեղեցություն է ստանում գործնականում Իսրայելի ու Թուրքիայի բոլոր հարևանների կողմից, անվտանգության ոլորտում երկու պետությունների հրամայականները ստիպում են նրանց այն շարունակել, հատկապես այնպիսի կենսական կարևոր հարցում, ինչպիսին է համառոտ պայքարը, այսպես կոչված, «ախաբեկչական կազմակերպությունների» դեմ: Դրա հետ մեկտեղ, համագործակցության համար կարևորագույն խոչընդոտ են շարունակում մնալ թուրքական հասարակությանը հատուկ ավանդական խորը և վատ քողարկված հակաեմիթական տրամադրությունները, իսլամական համերաշխության գործոնը, որը դրսևորվում է Պաղեստինում Իսրայելի կողմից տարվող մարտական գործողությունների /վերջին շրջանում նաև Լիբանանում/ նկատմամբ Թուրքիայում աճող դժգոհություններով, ինչպես նաև թուրք-ամերիկյան հարաբերությունների աստիճանական վատացումը և Թուրքիայում հակաամերիկանիզմի ուժեղացումը: Սակայն, Թուրքիայի ազգային շահերի ու աշխարհաքաղաքական նպատակների տեսանկյունից, իսրայելա-թուրքական ռազմավարական հարաբերությունների գործունե կայացման համար կարևորագույն հիմնախնդիր է շարունակում մնալ քրդական հարցը՝ իր բոլոր դրսևորումներով:

Ինչ վերաբերում է Իսրայելին, ապա Թել-Ավիվը չափազանց չափազորված էր Թուրքիայի հետ մերձեցման մեջ, հատկապես իր ՈՒՀ-ի շահերի, երկրի շուրջ ստեղծված մահմեդական թշնամական շրջափակ-

ման ճեղքման հնարավորության հաշվառումով, ինչպես նաև ելնելով ԱՄՆ-ի հետ գործընկերային հարաբերությունների շահերից, որոնք 1990-ական թվականներին խիստ շահագրգռված էին Թուրքիայի ու Իսրայելի միջև ռազմավարական հարաբերությունների հաստատման մեջ: Սակայն այստեղ և Իսրայելի համար կարևոր խղճընդուտ հանդիսացավ քրդական հարցը, քանի որ Իսրայելի ազգային անվտանգության շահերը հերո դա հնարավոր էր/ միշտ գերակա են համարել օգնությունը քրդերին /հատկապես Իրաքում և մասամբ նաև Սիրիայում/ իր առավել վտանգավոր ու սկզբունքային արարական հակառակորդներին՝ Սիրիային և Իրաքին քուլացնելու համար: Միևնույն ժամանակ, Իսրայելը միշտ դիվերսիֆիկացնում էր իր վերաբերմունքը Մերձավոր Արևելքի երկրներում ապրող տարբեր քրդական համայնքների նկատմամբ, և Իսրայելի քաղաքականության էվոլյուցիան թուրքական քրդերի նկատմամբ ունի բավական բարդ ու տևական պատմություն:

**ԵՐԿՐԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՈՒՋԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԱՍՏԱՆՈՒՄԿԱՑՈՒՄԸ ԵՐԿՐԱԿԱՆ
ՎԻՍՄԱՆՈՐԻ ՀԱՄԱՏԵՍՈՒՄ**

1948թ.-ին Իսրայել պետության ստեղծումից հետո՝ չնայած այս հիմնախնդրի զարգացման բավական տևական ու հետաքրքիր փուլերին, ներկայիս իրավիճակի ճիշտ գնահատման համար քրդական հարցում իսրայելա-թուրքական հարաբերությունների վերլուծման համար որպես ելակետ պետք է ընդունել 1990-ական թվականները:

Ինչպես ժամանակին իսրայելական մամուլը նշում էր, իր պատմական արժեքով բացառիկ նշանակություն ունեցող, 1994 թ.-ի Իսրայելի նախագահ Էզեր Վեյցմանի Թուրքիա կատարած այցի արդյունքների մասին, չնայած դիվանագիտական վերելքներն ու անկումները, իսրայելական ու թուրքական հատուկ ծառայությունների միջև շփումները 1958 թ.-ից շարունակվում էին բավական սերտ մնալ /այսինքն, Դավիթ Բեն-Գուրիոնի Թուրքիա կատարած նշանավոր գաղտնի այցից սկսած/: Վեյցմանի այցի ընթացքում, բացի Իրանի «միջուկային ծրագրի» քարոզման ու Սիրիայի նկատմամբ քաղաքականության հեռանկարները, քննարկվել է նաև քրդական հիմնախնդրի՝ այսպես կոչված «ահաբեկչության ու թրմադրության դեմ պայքարի» համատեքստում: Հատկաբնական է, որ այդ այցի ընթացքում թուրքական ՉՄԱ-ների բոլոր իշխանամետ ներկայացուցիչները քացառապես անտեսեցին պաղեստինյան հարցն ու Իսրայելի քաղաքականությունը գրավյալ տարածքներում: Փոխարենը հարցեր հիմնեցվեցին պաղեստինցիների մասին, թուրք լրագրողները առաջին հերթին հետաքրքրվում էին քրդերի հետ կապված խնդիրներով: Այցի ավարտից հետո թուրքական մամուլը հաղորդեց, որ Իսրայելը հրաժարվեց հստակորեն սատարել Թուրքիային բուրդ արտադրողների դեմ պայքարում: Իր հերթին իսրայելական մամուլի կարծիքով, Իսրայելի հրաժարումը պայմանավորված էր թուրքական քրդերի հանդեպ ինչ-որ համակրանքով: «Հակառակը, այդ ժամանակ կարելի էր ասել Իսրայելը արդեն շատ թշնամաբար էր տրամադրված թուրքական քրդերի նկատմամբ: Այն ժամանակ այդ հրաժարումը հիմնականում պայմանավորված էր Դամասկոսի հետ 1990-ականներին նշմարվող

չվումները վտանգելու մտավախությամբ: Ըստ որում, իսրայելական ՉՄԱ-ները բազմիցս նշում էին, որ Իսրայելը կոնֆերանսներում ու տարբեր բնույթի քննարկումների ժամանակ մշտապես սինտեսում էր կամ նույնիսկ կասեցնում էր քրդական, ինչպես նաև հայկական հարցերի հետ կապված քննարկումները, Եթե նույնիսկ դրանք վերաբերում էին մարդու իրավունք-ների կամ շոշափում էին քացառապես պատմական թեմաները:

1997 թ.-ի դեկտեմբերի վերջին, երբ թուրք վարչապետ Մ. Յըլմազը այցելեց Սպիտակ Տուն, իրավապաշտպան խմբերի ու պաշտօնագիտության տրամաֆերտների նկատմամբ վերահսկողություն սահմանած կազմակերպությունների լայն կոալիցիան Բ. Զինտոնի վարչակազմի վրա ճնշման ակտիվ միջոցառումներ ձեռնարկեց՝ կապված Թուրքիայում մարդու իրավունքների խախտումների ու քրդերի նկատմամբ շարունակվող բռնությունների հետ: Սակայն ոչ բոլոր ամերիկյան կազմակերպություններն էին այդ աստիճան քննադատորեն տրամադրված: Հակասեմիթիզմի ու դիսլոյիմիացիայի այլ ձևերի դեմ պայքարի նպատակով ստեղծված Anti-Defamation League (ADL) հայտնի հրեական կազմակերպությունը դեկտեմբերի 17-ին Մ. Յըլմազին հրավիրեց տոնական խնջույքի, որին մասնակցում էին ամերիկյան մի քանի հիմնական հրեական կազմակերպությունների առաջնորդները: Դրա ընթացքում ADL-ի սուրբն Աբրահամ Ֆոքսմանը նշեց, որ Թուրքիան տարածաշրջանի համար հանդիսանում է ժողովրդավարության ու հանրաժողովրդակամության օրինակ: Սակայն, ԱՄՆ-ի Պետքարտուղարության, ամերիկյան ու միջուկային կազմակերպությունների ամենամյա հաշվետվություններում նշուապես նշվում էր Թուրքիայում մարդու իրավունքների խախտումների մասին: Բնական է, որ նման հիմնադրավորի վրա ADL-ի և այլ հրեական կազմակերպությունների առաջնորդների կողմից արված նման սինտեսումների հիմնական պատճառը Թուրքիայի ու Իսրայելի միջև 1996 թ.-ից ռազմա-քաղաքական համագործակցության խորացումն էր: Իսրայելի կողմից Թուրքիային սպառազնույթյան վաճառքը վերջինիս հնարավորություն էր տալիս հաջողությամբ շրջանցել իրավապաշտպան կազմակերպությունների /օրինակ, Amnesty International/ ուժեղ ճնշման տակ գտնվող ԱՄՆ-ի կողմից ստեղծված էմբարգոն:

1990-ական թվականների երկրորդ կեսից Թուրքիայի ու Իսրայելի միջև ռազմա-քաղաքական համագործակցության խորացումը նոր իմպուլս հաղորդեց այդ երկրների այն ուժերին, որոնք հանդես էին գալիս ներքին բախումների ռազմական լուծման դիրքերից և դրանք դիտարկում էին այսպես կոչված «ահաբեկչության դեմ պայքարի» համատեքստում: Բավական շատ նմանություններ կան Իսրայելի ու Թուրքիայի հակահաբեկչական գործողություններում: Երկու երկրներն էլ խախտել են հարևան պետությունների ինքնավարությունները PKK-KADEK-ի և «Հեզբոլլահ»-ի գրոհախնդերի դեմ պայքարում: Իրացի հյուսիսում թուրքերը ժամանակին Իրացի սահմանի ամբողջ երկարությամբ և 9 կմ խորությամբ սահմանել են «անվտանգության գոտի», որտեղից թուրքական բանակը մշտապես իրականացրել և իրականացնում է գործողությունները PKK-KADEK-ի դեմ: 1982 թ.-ին Իսրայելի կողմից Լիբանանի հարավի օկուպացումից հետո և ընդհուպ մինչև իսրայելական զորքերի դուրս բերումը այնտեղից, իսրայելցիները այնտեղ հաստատել էին Հեզբոլլահի դեմ պայքարի «անվտանգության գո-

են ամբողջ Մերձավոր Արևելքի առավել մարտունակներն ու վարժվածները, գործնականում նման բարդ լեռնային պայմաններում մարտական գործողություններ վարելու փորձ չունեն: Իսրայելական բանակի ու հատուկ ծառայությունների հակահարձակական գործողությունների կանակները ավելի հարմարեցված են քաղաքային ու ավանային պայմաններին, և հենց նման փորձի փոխանակման մեջ էլ կայանում է օգնությունը թուրք գործընկերների: Էլ ավելի մեծ նշանակություն ունի Իսրայելի կողմից Թուրքիային ցուցաբերվող տեխնիկական օգնությունը, մասնավորապես էլեկտրոնային ու ռադիոտեխնիկական հետախուզության միջոցներով:

Իհարկե, ընդհանուր առմամբ կարելի է պնդել, որ Իսրայելի կողմից Թուրքիային առաջված ժամանակակից ռազմական տեխնիկայի ու սպառազինության գործնականում բոլոր տեսակները թուրքական զորքերի կողմից կարող են օգտագործվել քրդերի դեմ մարտերում: Սակայն հարկ է նշել, որ Թեյ-Ալիլիի ու Անկարայի ռազմա-տեխնիկական համագործակցության ոչ ամբողջ սպեկտրը կարող է էական ազդեցություն ունենալ PKK-ի դեմ թուրքական բանակի կողմից տարվող մարտական գործողությունների հաջող ընթացքի վրա: Բնական է, որ նման պարագայում անհիմատ է խոսել երկու երկրների ռազմա-ծովային ուղղորդի համագործակցության, ՀՀ-ի տարածաշրջանային համակարգերի ստեղծման և կիրառման, /քանի որ, քրդական արստամբների ձեռքում “երկիր-երկիր” 4<2 կամ 2<2 տեսակի հրթիռների հայտնվելու հավանականությունը, որոնց դեմ նախատեսված են “Էրրուու” և “Էրրուու-2” հակահրթիռային համակարգերը, գործնականում հավասար է զրոյի՝, “Ղալիլա” հրթիռների համատեղ արտադրության և այլնի մասին:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ քրդերի դեմ թուրքական բանակի կոնկրետ գործողությունների համար առավելագույնս կարող են ծառայել իսրայելա-թուրքական ռազմական համագործակցության հետևյալ տարրերը.

1. Ռուսական “Ռոսոբրոնտեքսպորտ”-ի, ուկրաինական “Մտորո-Սիչ”-ի և իսրայելական IAI-ի կազմով միջազգային կոնսորցիումի կողմից ռուսական արտադրության Ka-50-2 “Էրոդրալ” ուղղաթիռների առաջարկությունը, որոնք համարված են իսրայելական ավիոնիկայով ու նավակողային սարքավորմամբ, որոնց արդիականացված են թուրքական զինված ուժերի համար: Ծրագրի արժեքը կազմում է 3,5 մլրդ. դոլար: Առանձնահատուկ նշվում էր, որ սույալ նախագիծը շահավետորեն տարբերվում է ամերիկյան “Բեյլլ Շելիկոպտեր Տեքստրոն” ընկերության առաջարկից ոչ միայն իր զնով ու նրանով, որ ամերիկացիները հրաժարվեցին Թուրքիային փոխանցել AH-12 “Super Cobra” ուղղաթիռների արտադրության տեխնիկական փաստաթղթերի ամբողջ փաթեթը, այլև նրանով, որ ռուսական ու իսրայելական կողմերը ոչ մի պայման առաջ չէին քաշում քուրդ արստամբների դեմ այդ ուղղաթիռների հավանական օգտագործման մասին: Այն դեպքում, երբ իրավապաշտպան կազմակերպությունների ճնշմամբ պայմանավորված, ամերիկացիների հիմնական պահանջներից մեկը հանդիսանում էր այն, որ նրանք պահանջում էին, որպեսզի թուրքական բանակին տրամադրված AH-12 ուղղաթիռները մարտական պայմաններում օգտագործվեն միայն ՆԱՏՕ-ի նկատմամբ Թուրքիայի դաշնակից պարտավորությունների շրջանակներում¹¹: Միևնույն ժամանակ առկա են էական քաղաքական խոչընդոտներ նշված իսրայելա-ռուսական-թուրքական համատեղ նախագծի իրականացման համար:

2. Իսրայելա-թուրքական ռազմա-տեխնիկական համագործակցության ծրագրերի թվում նախատեսվում է քրդերի դեմ պայքարի ընթացքում թուրքական բանակի կողմից օգտագործվող ուղղաթիռների համար տրամադրել “Գիտար” համակարգը, որը նախատեսված է Ca-7 և Stinger տեղափոխվող զենիթային հրթիռային համակարգերից /S2<<</ պաշտպանության համար: Ավելի վաղ այդ ուղղաթիռները համարվել էին զինեղային տեսողության համակարգով: Այդ որոշումը կայացվել էր այն բանից հետո, երբ քրդաբնակ շրջաններում խվիվել էին 2 մարտական ուղղաթիռներ՝ AH-1W Super Cobra և AS-532 Cougar, ինչպես նաև 17 զինծառայողներով մեկ բազմանպատակ S-70A Black Hawk ուղղաթիռ¹²: Այս միջոցառումները հնարավորություն կտան ուժեղացնել թուրքական բանակային /թթթ/ ավիացիայի ու աէրոմոբիլային դեսանտա-գրոհային ստորաբաժանումների մարտական հնարավորությունները:

3. Թուրքական բանակային ավիացիայի ուղղաթիռների համարումը տեպլավիդրոներով և հետախուզության ու փրկախնդրի հայտնաբերման այլ ժամանակակից համակարգերով՝ լեռնային տեղանքի գիշերային ու բարդ եղանակային պայմաններում արդյունավետ գործողությունների իրականացման համար: Բացի այդ, 2002 թ. հուլիսի 24-ին SSM-ը /Turkey’s Defense Industries Undersecretariat/ և իսրայելական IAI ընկերությունը ստորագրեցին 11,5 մլն. դոլար արժողությամբ պայմանագիր, որը ենթադրում է թուրքական 7 տրանսպորտային-դեսանտային C-130E ինքնաթիռների արդիականացումը, մասնավորապես այդ ինքնաթիռների ավիոնիկայի ու նավակողային նավիգացիոն համակարգերի փոխարինումը: Աշխատանքները պետք է տարվեն Կայսերիի /Կենտրոնական Անատոլիա/ թուրքական գործարանում, սակայն դրանք հետաձգվել էին ֆինանսական խնդիրներով ու երկկողմանի հարաբերությունների ճգնաժամով պայմանավորված: Իսրայելական այլ ընկերություն “Elbit System” թուրքական “Turkish Aerospace Industries”-ի /TAI/ հետ 2002 թ.-ի հուլիսի 30-ին ստորագրել է 14 մլն. դոլար արժողությամբ պայմանագիր S-70A Black Hawk բազմանպատակ ուղղաթիռների վերանորոգման ու սարքավորման փոխադրման համար: Իսրայելական ընկերությունների կողմից տրանսպորտային ինքնաթիռների ու բազմանպատակ ուղղաթիռների արդիականացման այս պայմանագրերը նույնպես կնպաստեն թուրքական բանակի հատուկ նշանակության զորամասերի հնարավորությունների բարձրացմանը՝ ուղղված դեպի քրդաբնակ շրջաններ գործերի տեղափոխմանն ու վայելքին¹³:

4. Ուղիտեխնիկական, էլեկտրոնային միջոցներ, իսկ հեռանկարում նաև տիեզերական հետախուզության միջոցներ /Ofeg-3 հետախույզ-արբանյակներ/, որոնք կարող են տրամադրվել իսրայելական կողմից¹⁴: Այդ միջոցները, մասնավորապես թուրքական հրամանատարությանը կարող են օգնել ժամանակի իրական մասշտաբում ստանալ հետախուզական տեղեկատվություն քուրդ արստամբների գործունեության մասին, նրանց հենակետերի, զինավորական ձամբարների տեղակայման մասին և այլն, այդ թվում՝ նաև հարակից պետությունների տարածքում զուգվող:

5. Իսրայելական Popeye-112 /ASM/ “օդ-մակերես” հրթիռների տրամադրումը, որոնք հնարավորություն են տալիս վերցնելուց նշանակության դեմ առավել ակտիվորեն օգտագործել թուրքական ՌՈՒԻ-ի ինքնաթիռները¹⁵:

6. Անօդաչու ինքնաթիռների տրամադրումը Իսրայելի կողմից: Համաչ-

խարհային փորձը ցույց է տալիս, որ այդ միջոցները վերջին շրջանում վճարողը տեղ են գրավում արստամբների դեմ պայքարում: Դժվար թե գենդի կամ մարտական տեխնիկայի որևէ նոր տեսակներ նման ակտիվությանը ու արդյունավետությանը կկարողանան գործի արստամբների դեմ, քան անօդաչու հետախույզ-ինքնաթիռները, իսկ վերջերս՝ նաև դրանց հարվածային տարբերակները՝ Predator և Global Hayk: Եռնային պայմաններում դրանց հաջողակի օգտագործման վառ օրինակ կարող են հանդիսանալ 2001 թ.-ի աշնանից Աֆղանստանում ամերիկյան զորքերի կողմից թալիբների դեմ գործողությունները¹⁶: Չնայած ԱՄՆ-ն ներկայումս ունի ԱՕԻ-ների համեմատե՛լ պարկը, այնուամենայնիվ համարվում է, որ այդ միջոցների արտադրությանը Իսրայելը՝ «հավանաբար գրավում է առաջին տեղն աշխարհում»¹⁷: Կարելի է թերևս հիշել իսրայելցիների կողմից դրանց ակտիվ ու հաջողված կիրառումը 1982 թ.-ին Նաջին Լիբանանյան պատերազմի ժամանակ, երբ համաշխարհային պրակտիկայում առաջին անգամ զինված պայքարի նշված միջոցները լայնածավալ կիրառում գտան: Իսրայելի ռազմաարդյունաբերական համալիրը թողարկում է ԱՕԻ-ների տարբեր տեսակները, այդ թվում նաև հետախույզական /Heron, Hermes, Searcher Mk 11/, ու հարվածային /MOAB, Harpy/18: 1998 թ.-ի դեկտեմբերին Թուրքիայի ռազմաարտա քաղաքականության հարցերով խորհրդակցական աշխատակազմը առաջարկ ստացավ «Ջեներալ Ատոմիկ» /ԱՄՆ/, IAI «Իսրայել» /և CATIC /Չինաստան/ ընկերությունների կողմից՝ ուղղված Թուրքիայում 37 անօդաչու թռչող ապարատների համատեղ արտադրությանը: Փոքր Բա-ռավդով գործողության – 14 միավոր, միջին՝ 8 միավոր և հեռախար՝ 15 միավոր: Թուրքական կողմից պայմանագրի համատեղ կատարողներ էին հանդես գալիս TAI և «Անելսան» ընկերությունները¹⁹:

ԻՐԱՆԱՅԵԱ-ԹՈՒՐԵԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՀԱՐԱՎ-ԱՐԵՎԱՏՅԱՆ ԹՈՒՐԵՔԻՅԻ ՌԷ ՀՅՈՒՄԱՍԱՅԻՆ ԻՐԱՔԻ
ՔՐԴԱՆԱԿԵՐՑԱՆՆԵՐԻ ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱՆԻՐՆԵՐԸ

Իսրայելին հետաքրքրող քրդական հարցի կարևորագույն կողմերից մեկը հանդիսանում է Հարավ-Արևելյան Թուրքիայի ու Հյուսիսային Իրաքի ջրային ռեսուրսների օգտագործման հիմնախնդիրները: Միևնույն ժամանակ ջրային ռեսուրսների հիմնախնդիրը, որը հանդիսանում է առավել բարդեղին մեկը Թուրքիայի, Սիրիայի ու Իրաքի հարաբերություններում, սերտորեն կապված է քրդերի հիմնահարցի հետ, քանի որ ջրային ռեսուրսների մեծամասնությունը գործնականում հոսում է այն տարածքներով, որում բնակվում են քրդերը:

Մերձավոր Արևելքի հիմնական ջրային ռեսուրսների աշխարհագրական տեղակայման առանձնահատկությունը կայանում է նրանում, որ դրանց հիմնական աղբյուրները գտնվում են տարածաշրջանի հյուսիսային հատվածում /Թուրքիայի արևելքում, Իրանի և Իրաքի հյուսիսային հատվածներում/՝ հիմնականում քրդաբնակ տարածքներում/ և գետային ու ստորգետնյա համակարգերի միջոցով տեղաշարժվում են մեծ տարածություններ՝ դեպի ջրի սակավության գոտիներ: Մերձավոր Արևելքում ջրային ռեսուրսների նման քաշվածության վառ օրինակ է հանդիսանում Սիջա-

գետի գետերի համակարգը, Տիգրիս և Եփրատ գետերի ավազանները տեղափոխում են Կենտրոնական ու Հարավ-Արևելյան Անատոլիայի /ազգային-աշխարհագրական տեսակետից/ Հյուսիսային Թուրքիստան/ և Միջագետքի հյուսիս-արևելքի /իրաքյան Թուրքիստանի արևմուտքը/ ջրային ռեսուրսները դեպի հարավ՝ դեպի արաբներով բնակեցված անապատներ: Այս առանձնահատկությունն է բնութագրում է քրդական հարցի ջրային ասպեկտը՝ տարածաշրջանի հյուսիսի /թուրքական ու մասամբ նաև իրաքյան Թուրքիստանի/ ջրային ռեսուրսների դեպի հարավ քաշվածան հիմնախնդիրը, իսկ ակելի ստույգ, քաղաքական ու աշխարհատեսական իմաստով այս հիմնախնդիրը դրսևորվում է հիմնականում քրդերով բնակեցված տարածքի ջրային ռեսուրսներում արաբական երկրների կենսական շահագրգռվածությամբ, և դրանից ելնելով, Թուրքիայի կողմից այդ ջրի օգտագործման հնարավորությանը՝ որպես աշխարհաքաղաքական լծակ Սիրիայի ու Իրաքի դեմ, և բնականաբար, արաբական երկրների կողմից քրդական գործնի կիրառմամբ Թուրքիայի հետ աշխարհատեսական հակամարտության մեջ, որն արտահայտվում է Թուրքիայում քրդական շարժմանը աջակցությամբ:

Այս տարածաշրջանի ջրային ռեսուրսները դարեր շարունակ հիմնականում օգտագործվել են միայն Թուրքիայի հարավային հարևանների՝ արաբների կողմից, և միայն 1961 թ.-ից թուրքական կառավարությունը նախապատրաստական աշխատանքներ սկսեց իր հարավ-արևմտյան /հիմնականում քրդաբնակ/ նահանգներում խոշոր հիդրոտեխնիկական ու ռոզման մի ամբողջ ցանցի կառուցման նախագծի մասշտաբային իրականացման ուղղությամբ: Տվյալ տարածքների ջրային ռեսուրսների օգտագործման Թուրքիայի հավակնոտ պլանները ենթադրում են 22 ջրամբարների կառուցումը /որոնցից առավել մեծը պետք է կրի Աբաթուրի անունը/, որոնք գումարային առումով պետք է ավաիովեն մոտ 1,7 մլն հա տարածքի ռոզումը /Թուրքիայի ռոզգելի տարածքների 20 տոկոսը/, ինչպես նաև Տիգրիսի և Եփրատի վրա19 հիդրոէլեկտրակայանների կառուցումը²⁰:

Տիգրիսի և Եփրատի ջրօգտագործման պատմական առանձնահատկությունը կայանում է նրանում, որ մինչև 1968 թ.-ը ռոզումներ իրականացնում էին միայն այն պետությունները, որոնք գտնվում են այդ գետերի ստորին հատվածներում /Իրաքը և Սիրիան, իսկ մինչև 1950 թ.-ը՝ միայն Իրաքը/, և միայն 1970-ական թվականներին այդ գետերի ակունք հանդիսացող պետությունը՝ Թուրքիան սկսեց Տիգրիսի և Եփրատի յուրացում ու օգտագործումը: 1980թ.-ից Թուրքիան սկսեց իրականացնել «Հարավ-Արևելյան Անատոլիա» խոշոր նախագիծը /Guneydogu Anadolu Projesi – GAP/, որն ընդգրկում է 73 863 ք.կմ տարածք /թուրքական Թուրքիստանի հարավ-արևմտյան ու կենտրոնական հատվածները՝ ներառելով Ադիլայա-ման, Դիարբեկի, Գազիանթեփի, Մարդին, Սիիրտ, Ուրֆու, Շիրնակ և Բաթման նահանգները/, որը կազմում է ամբողջ Թուրքիայի տարածքի 9,4 տոկոսը, և քացի տնտեսական նպատակները այն իրենից ներկայացնում է, ինչպես գտնում են որոշ քուրդ հեղինակներ, տարածքի սոցիալ-տնտեսական ու ժողովրդագրական պատկերի փոփոխման համալիր ծրագիր, քանի որ դրա արդյունքում տվյալ շրջաններում կարող է կտրուկ նվազել քուրդ բնակչության քանակը²¹:

Թուրքիայի վարչապետ Թուրգուտ Օզալի կողմից 1987 թ.-ին Ուզգան-

վարական ու Միջազգային հետազոտությունների Վաշինգտոնյան կենտրոնում /CSIS/ առաջ քաշված գաղափարը՝ «ջրատարի» կամ «խաղաղության խողովակաշարի» /Peace Pipeline Project/ կառուցման մասին՝ բուրքական Քուրդիստանի խոնավ շրջաններից դեպի Սերձավոր Արևելքի չոր երկրները /Սիրիա, Հորդանան, Իսրայել և Պարսից ծոցի երկրներ/ ջրի ավելցուկների տեղափոխմանն ուղղված, արաբական երկրները ոչ առանց հիմնավորման դիտարկում են տնտեսական ու քաղաքական գերակայության միջոցով տարածաշրջանում գերիշխանության ձեռքբերման «Թուրքիայի երազանքի» համատեքստում, որը այդ երկրները կախվածություն մեջ կզգի «թուրքական ջրից»։ Բացի այդ, Սիրիան հիշեցնում է, որ Թուրքիան, մշտապես հայտարարելով ջրային ռեսուրսների սակավության մասին, առաջարկում է արտահանել ջուրը։ Ի հավելումն դրա, Թուրքիան պլանավորում է Միջերկրական ծովի հատակով 80-կիլոմետրանոց խողովակաշար անցկացնել դեպի Հյուսիսային Կիպրոսի թուրքական անկախ՝ Կիպրոսի իունական հատվածին ջրի հետազգա հավանական վաճառքի ակնկալիքով²²։

Թուրքիայի քրդաբնակ տարածքներից ջրային ռեսուրսների տեղափոխման հիմնախնդիրը աստիճանաբար էլ ավելի կարևոր տեղ է զբաղում Սիրիայի արտաքին քաղաքական նախագծերում։ Թուրքիայի կողմից առաջարկվող «խաղաղության մինի-խողովակաշար»՝ Մանակզաթ գետից Սիրիային, Հորդանանին, Իսրայելին ու Պաղեստինին տարին 180 մլրդ խոր. մետր ջուր վաճառելու համար /այդ թվում նաև Միջերկրական ծովի հատակով/ Սիրիայի տարածքային ջրերի սահմաններում, նույնպես արժանանում է Սիրիայի հակազդեցությանը²³։

Թերևս հազվել թե Թուրքիայից դեպի Իսրայել խողովակաշարով ջրի մատակարարումը կարելի է անվանել «խաղաղության խողովակաշար»։ Մասնավոր աղբյուր տեղեկություններ են հայտնվել, որ այս հարցը ուղղակիորեն կապված է թուրքական բանակին Իսրայելի կողմից ժամանակակից սպառազինության այն տեսակների տրամադրման հետ, որը Անկարային առաջին հերթին անհրաժեշտ է ջրոցի դեմ պայքարում։ Այսպես, 2002 թ. հուլիսի 26-ին Defense News-ը հաղորդում է, որ ի պատասխան ԱՄՆ-ի կողմից տրամադրվող սպառազինության, մասնավորապես մարտական ուղղաթիռների /որոնք Թուրքիայի կողմից կարող են օգտագործվել PKK-KADEK-ի դեմ/, տրամադրման դեմ ուղղված ամերիկյան իրավապաշտպան կազմակերպությունների գործողությունների, թուրքական պաշտոնատար ամենք կրկին վերսկսել են բանակցությունները ռուս-իսրայելական ընկերությունների հետ՝ Ka-50-2 ուղղաթիռների ձեռքբերման ուղղությամբ։ Բացի այդ, Թուրքիան բանակցություններ է սկսել նաև Բվով 108 միավոր սնուցաչու հարվածային ինքնաթիռների /Manned Combat Air Vehicles - UCAV/ գնման կապակցությամբ։ Ինչպես հաղորդում է Jerusalem Post-ը, փոխարենը Իսրայելը պարտավորվել է Թուրքիայից գնել տարեկան 50 մլն. խոր. մետր ջուր²⁴։

Հայտնի է, որ ջրային հիմնախնդիրը հանդիսանում է արաբ-իսրայելական հարաբերությունների հիմնական մասը։ Իսրայելի ու արաբների միջև Օչլոյում և մեկ համաձայնության մեջ նշված է իրեական պետության և նրա արաբական հարևանների միջև Հորդանան գետի ջրային ռեսուրսների բաշխման մասին²⁵։

Քրդական դիտորդները ևս նկատում են, որ քրդաբնակ տարածքների ջրային ռեսուրսների նկատմամբ Իսրայելի հետազոտությունը պետք է դիտարկել իսրայելա-արաբական հակամարտության խաղաղ կարգավորման հեռանկարների տեսանկյունից։ «Ամերիկայի Միացյալ Նահանգները և Իսրայելը մերձավորարևելյան կարգավորման գործընթացում դիտարկում են նաև Եփրատ գետի ջրային ռեսուրսները։ Եփրատի առումով Թուրքիայի գիշերը Սիրիային կնպաստի Գոլանի բարձրունքից իսրայելական գործերի դուրսբերմանը, քանի որ Սիրիան՝ ստանալով «հավելում» Եփրատի առումով, ավելի գիշոր կգտնվի Իսրայելի նկատմամբ, որը կենսականորեն շահագրգռված է Գոլանի ջրային ռեսուրսներով, ինչը ևս մեկ խոչընդոտ կլինի այդ շրջանից իսրայելական զինուժի դուրսբերման ճանապարհից։ Չնայած Թուրքիան հայտարարում է, որ «թուրքական ջուրը» մերձավորարևելյան խաղաղ գործընթացում չի կարող գործարքի առարկա հանդիսանալ, այնուամենայնիվ բանակցությունների սկզբից ի վեր, ԱՄՆ-ն, որպես այդ գործընթացի գլխավոր գործող դեմք, Եփրատի հարցը անփոփոխ կերպով ներառում են այդ գործընթացում։ Ոնց որում, Իսրայելը Թուրքիային խոստանում է բանակցություններում հաշվի առնել Սիրիայի ջրային շահերը։ Սակայն բացառված չէ, որ՝ չնայած ջրային ռեսուրսների ու ռոտզման բնագավառում իսրայելա-թուրքական համագործակցության զարգացմանը /ընդհուպ մինչև այսպես կոչված՝ ջրային ռեսուրսների բորայի/ ստեղծման համատեղ նախագծերը, համաձայն որոնց Տիգրիսի և Եփրատի ջրերը պետք է բաշխվեն տարածաշրջանի բոլոր երկրների միջև, այդ թվում և Իսրայելի/, ինչը արաբների խոր մտահոգություն է առաջացնում, Թուրքիայի ջրային շահերը կդրվեն մերձավորարևելյան խաղաղ գործընթացի գոհատեղանին։ Մյուս կողմից, «թուրքական ջրից» արաբների կախված լինելու վախը կարող է նպաստել նրանց հաշտեցմանը Իսրայելի հետ»²⁶։

Պետք է նշել, որ Սիրիայի ու Թուրքիայի միջև 1998 թ.-ին հարաբերությունների սրացման պատճառներից մեկը, որը պայմանավորված էր Սիրիայում ԶԼԿ-ի հենակետերի փակման Անկարայի պահանջներով, հանդիսանում էր նաև սպառնալիքի ամը Թուրքիայի հարավ-արևելքում ջրուր արևտամբների գործողություններով պայմանավորված GAP նախագծի հիդրոտեխնիկական կառույցների։ Այդ հակամարտության մեջ ևս, ինչպես նախորդ է, ըստ շատ վերլուծաբանների կարծիքի, ոչ պակաս կարևոր դեր խաղաց Թուրքիայի ու Իսրայելի միջև արդեն ձևավորված ռազմա-քաղաքական դաշինքի առկայության վախաղը։

2001 թ.-ի մարտի 21-ին կայացած հանդիպմանը արաբական երկրների արտգործնախարարները քննարկեցին տարածաշրջանի անվտանգության ու կայունության վրա թուրք-իսրայելական ռազմական համագործակցության ազդեցությանը նվիրված մանրակրկիտ զեկույցը։ Չեկույցում նշվում էր, որ թուրք-իսրայելական հարաբերություններում նկատվում է որոշակի սառեցում, որը պայմանավորված է ինչպես արաբական երկրների կողմից ճնշմամբ, այնպես էլ /հատկապես/ շարունակվող պաղեստինյան ինտիֆադայով։

Համաձայն զեկույցի դա դրսևորվել է Թուրքիայի մի շարք գործողություններում՝

1. Իսրայելական ընկերությունների կողմից թուրքական տանկերի արդիականացման պայմանագրի անվավեր ճանաչումը,

2. Իսրայելական բանակի գլխավոր հրամանատար Շաուլ Մոֆազի 2000 թ.-ի հոկտեմբերին Թուրքիա կատարվելիք այցի կատեցում: Սուրբ հողում իսրայելցիների կողմից պաղեստինցիների դեմ շարունակվող բռնությունները Թուրքիայի ԱԳՆ-ն անվանեց որպես "մարտահրավեր Թուրքիայի և ամբողջ աշխարհի մահմեդականների զգացմունքներին": Թուրքական ՋԼՄ-ներում տեղական հրապարակումներ եղան Պաղեստինում իսրայելցիների բռնությունների դեմ:

3. Չեղյալ հայտարարվեցին թուրքական բանակի երկու բարձրաստիճան գեներալականների 2000 թ.-ի նոյեմբերին ու դեկտեմբերին թուրքական ՈՇՈՒ-ի և ՈՐՈՒ-ի գլխավոր հրամանատարների սպասվելիք կարևոր այցելությունները Իսրայել:

4. Թուրքական ՈՇՈՒ-ն հետազոցեց ԱՄՆ-ի և Իսրայելի մասնակցությամբ 2000 թ.-ի դեկտեմբերին նախատեսված ռազմա-ծովային "The Bride of the Sea" վարժությունները:

Համաձայն գեկույցի, միևնույն ժամանակ՝ չնայած թուրք-իսրայելական հարաբերությունների որոշ աստեցմանը, ուժի մեջ է մտնում թուրքական դիրքորոշումը Իսրայելի հետ հարաբերությունների խորացման ուղղությամբ: Չեկույցում նաև նշվում էր, որ Թուրքիան մի շարք արաբական երկրների հետ ունի "սահմանների, ջրի ու քրոշերի" հետ կապված չլուծված խնդիրներ: Մյուս կողմից, Արաբական երկրների Լիգայի համար նախապատրաստված Տիգրիսի ու Եփրատի ջրային ռեսուրսների խնդիրների նվիրված մեկ այլ վերլուծական գեկույցը նշում է այդ ոլորտում Թուրքիայի ու Իսրայելի աճող համագործակցության մասին: Թուրքիայի ու Իսրայելի ռոզգման ու գյուտնետեսության ոլորտի համատեղ նախագծերը "al Ghab" գեհատուում էին 1 մլրդ դոլար²⁷:

Այսպիսով, քրոշերի նկատմամբ Իսրայելի քաղաքականության կարևորագույն տարրերից մեկը հանդիսանում է Հարավային Թուրքիայի և Հյուսիսային Իրաքի քրդաբնակ տարածքներով հոսող ջրային ռեսուրսների բաշխման խնդիրը, և շատ առումներով դա կախված կլինի այն բանից, թե որքանով քրդերը կկարողանան վերահսկել այդ ռեսուրսները: Միևնույն ժամանակ, սովյալ գործոնը իր ազդեցությունը կունենա նաև իսրայելա-թուրքական հարաբերությունների վրա, իսկ ընդհանուր առմամբ՝ նաև արաբ-իսրայելական հակամարտության խաղաղ կարգավորման հեռանկարների վրա:

ԻՐԱՆԵԱ-ԲՐԱՆԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԹՈՒՐԻԱՅԻ ՀՈՒՐԵՐՈՐՈՒՄԸ 2003թ. ԻՐԱԿԻ ՊԵՏՏՐԱԿՆԻ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ

Իրաքի դեմ ԱՄՆ-ի գործողությունների ավարտից հետո, որի արդյունքում հավանաբար առավել շահավետ հիդրում հայտնվեցին քրդերը, թուրքական մամուլում տեղեկություններ հայտնվեցին այն մասին, որ քուրդ լիդերներից մեկը ծագումով հանդիսանում է հրեա, և որպես արդյունք շուտով Իսրայելը սերտ կապեր կստեղծի Իրաքի հյուսիսում դե-ֆակտո ծակտրոլված քրդական պետության հետ: Նման սցենարը ակտիվորեն քննարկվում էր թուրքական մամուլում մի քանի շաբաթ շարունակ: Դեռևս 2003 թ.-ի փետրվարի 19-ին Hurriyet-ում հոդված էր հրապարակվել, որում նշվում էր, որ KDP-ի լիդեր Մասուդ Բարզանին թեթև կհրեա է և սերուն է

քուրդ ռաբինների հնագույն տոհմից: Տվյալ հոդվածը հղում էր կատարում դեռևս 1982 թ.-ին հրատարակված հայտնի "Folk Literature of the Kurdistan Jews" աշխատության վրա, ինչպես նաև թուրք պատմաբան Ահմեդ Ուջա-րի հետազոտությունների արդյունքների վրա: Ա. Ուջարը թուրքական 19-րդ դարի արխիվային նյութերում տեղեկություններ է գտել Բարզանի ազգանունով քրդական ռաբինի գործունեության մասին: Թուրքական մամուլում Մ. Բարզանիին համարում էին հրեաների ժառանգ, որն իր պետք է գլխավորի բիրիլական "Երկիր Ալեյույաց" տարածքում տեղակայված իսրայելա-քուրդ-հրեական պետությունը, որը սփռվում է Ներսիսյան մինչև Եփրատ՝ իր մեջ ներառելով նաև Հյուսիսային Իրաքի քրդաբնակ տարածությունները:

Սակայն "Folk Literature of the Kurdistan Jews"-ի հեղինակ պրոֆեսոր Յոնա Սաբարը թուրքական հրապարակումների առթիվ արված իր մեկնաբանություններում նշում է, որ դրանք հիմնված են քրդական հրեաների պատմության ոչ ճիշտ ընկալման վրա: Համաձայն Սաբարի, 16-րդ դարի քրդական ռաբին Շամուել Ադոնին նույնպես կրում էր "Բարզանի" անունը ինչը նշանակում էր, որ նա Բարզան քաղաքից է: Նա հանդիսացել է Բարզանի ռաբինների քաջ հայտնի տոհմի հիմնադիրը, որի ներկայացուցիչ էր հանդիսանում նաև կին-ռաբինը՝ Ասեմա Բարզանին /17-րդ դար/: Իսրայելի հետազոտողի կարծիքով քիչ հավանական է, որ Մ. Բարզանին պատկանի այդ տոհմին, քանի որ Բարզանին ընդհանրապես տարածված քրդական ազգանուն է, և քաջի այդ Հյուսիսային Իրաքի այդ շրջանում հրեաները խիստ փոքրաթիվ են: Ներկայումս հրեաների ընդհանուր քանակը Իրանում, Իրաքում և Թուրքիայում կազմում է մոտ 25000 մարդ, քանի որ նրանց հիմնական հատվածը տեղափոխվել է Իսրայել 1948 թ. այսպես կոչված "անկախության պատերազմից" հետո:

Ստամբուլի հրեա պատմաբան Ռիֆատ Բալին նշում է, որ Մ. Բարզանիի հավանական հրեական ծագման մասին ամբողջ այս պատմությունը մաս է կազմում մի ծավալուն վարկածի, որը վերջին շրջանում լայն տարածում է գտել թուրքական պաշտամողական-ազգայնական ու իսլամադավան շրջանակներում, և շատ համբավման է Թուրքիայի հասարակության մեջ: Նրա խոսքերով, "Իսլամիստները պնդում են, որ Իսրայելն ուզում է օգտագործել "քրդական քարտը" և ստեղծել նոր հրեական պետություն, որը սփռվում է Նեղոսից մինչև Եփրատ ու ներառում է Հյուսիսային Իրաքի և Հարավ-Արևելյան Թուրքիայի քրդաբնակ շրջանները: Դա կապվում է թուրքերի ավանդական մտավախությունների հետ՝ կապված Թուրքիայի մասնատման պլանների հետ": Հավելեց նաև, որ ընդամենը մի քանի տարի առաջ Թուրքիայում հրատարակվել էր Գարուն Յայալի "Իսրայելի քրդական քարտը" վերնագրով գիրքը "Israel's Kurdish Card", որում խոսվում էր քրդերի հետ դաշինքի պայմաններում Իրաքի ու Թուրքիայի հաշվին Իսրայելի սահմանների ընդլայնման պլանների մասին²⁸:

Իսկապես, չի կարելի միանշանակորեն պնդել, որ Թուրքիայում շատերն են կիսում Իսրայելի հետ ռազմա-քաղաքական համագործակցության զարգացման անհրաժեշտության տեսակետը: Թուրքական հասարակության ընդերքում կան բավական լուրջ նախադրյալներ, որոնց Իսրայելի հետ դաշինքը դիտարկում են որպես Թուրքիայի ազգային շահերի և ընդհանրապես իսլամական գաղափարների դավաճանություն: Միաժամա-

նակ այդ դրսևորումները սերտորեն կապվում են հակասանձիթական ու պա-
սոսմաներյան /տեվանշիստական/ կարծիատիպերի հետ, որոնք խոր ար-
մատներ ունեն թուրքական քաղաքական վերնախավի ու մտավորական-
ության մեջ: Չայան վերջին տարիներին լույս տեսած քազմաթիվ հա-
կախորայեական հրապարակումների հեղինակ է: Այս առումով առավել
հաստիքաչափակ է նրա "Իսրայելի քրդական քարտը" անվանումով աշխա-
տությունը, որը լույս է տեսել մի քանի տարի առաջ Թուրքիայում²⁹:

Սակայն, չնայած այն բանին, որ հակասիրեական տրամադրությունները
լայն աջակցություն են ստանում թուրքական հասարակության զգալի հատ-
վածի կողմից, դրանք որոշիչ չեն Իսրայելի նկատմամբ թուրքական քաղա-
քականության ձևավորման մեջ: Իրաքի հետ պատերազմի գլխավոր արդ-
յունքներից մեկը հավանաբար կդառնա Իսրայելի ու Թուրքիայի ռազմա-
տեխնիկական համագործակցության ուժեղացումը: Թուրքիայի ու ԱՄՆ-ի
հարաբերությունների սառեցման հիմնապատկերի վրա, չնայած թուրքա-
կան գեներալիտետի հակազդեցությանը, կանխատեսվում է Թուրքիայի ու
ԱՄՆ-ի միմյանցից հեռացումը մինչև այն մակարդակը, որը չի վնասի Թուր-
քիայի անդամակցությանը ՆԱՏՕ-ին, իսկ ԱՄՆ-ի նշանակությունը Թուրքի-
այի անվտանգության ապահովման մեջ և կնվազի: Միաժամանակ աճում է
և նոր ռազմական հակամարտությունների մեջ տարածաշրջանի երկրների
ներքաշման հավանականությունը, ինչը ավելացնում է թուրք-իսրայելական
ռազմատեխնիկական հարաբերությունների խորացման խթանները:

Միևնույն ժամանակ ենթադրվում է, որ Իսրայելը այն ժամանակահատ-
վածում, քանի դեռ ԱՄՆ-ն զբաղված կլինի Իրաքի հետպատերազմյան
հիմնախնդիրների լուծմամբ, կփորձի ինքնուրույն կերպով իր հերթին լու-
ծել իր հիմնախնդիրները պաղեստինցիների հետ³⁰: Եվ հատկապես զո-
կարող է մեծ խոչընդոտ հանդիսանալ Անկարայի ու Թեյ-Ալիվի համադր-
ժակցության ձևապարհին /ինչն էլ դեպ արդեն հիմնական պատճառ հան-
դիսացել է երկու երկրների հարաբերությունների սառեցման համար 1970-
ականների սկզբից մինչև 1990-ականների սկիզբը/, քան նույնիսկ արաբա-
կան երկրների հակազդեցությունը³¹:

Այսպես, 2000 թ.-ի ամռանը ավելի քան 400 թուրք սպաներ ուղերձ ստո-
րագրեցին, որը կոչ էր անում խզել հարաբերությունները Թուրքիայի ու Իս-
րայելի միջև, իսկ մյուս կողմից՝ խորացնել հարաբերությունները արաբա-
կան երկրների հետ: Բացի այդ, անկախ արդյունաբերողների ու ձեռնար-
կատերերի միության ղեկավար Ալի Օլյուն կոչ արեց վերանայել հարաբե-
րությունները Իսրայելի հետ, հատկապես al Aqsa մզկիթում Ա. Շարոնի
հետ կապված միջադեպից հետո, որը անվանվեց մարտահրավեր՝ ուղը-
ված ոչ միայն պաղեստինցիների, այլև բոլոր մահմեդականների կրոնա-
կան զգացմունքների դեմ³²:

2002 թ. ապրիլի 2-ին Թուրքիայի վարչապետ Ռ.Թ. Էդոզյանը պաղես-
տինցիների դեմ ուղղված իսրայելցիների գործողություններն անվանեց ոչ
այլ կերպ, քան "ցեղասպանություն" և խիստ քննադատության ենթարկեց
Իսրայելի վարչապետ Ա. Շարոնին: Սակայն, արդեն իսկ հաջորդ օրը նա
ուղղեց իր խոսքերը, նշելով, որ դրանք սխալ են մեկնաբանվել, իսկ որոշ
թուրք զինվորականներ նույնիսկ պաշտպանեցին պաղեստինցիների դեմ
ուղղված իսրայելական գործողությունները: Անվտանգության ոլորտում
երկկողմանի փոխհարաբերություններին վերագրվող կարևորությունը

չառ շուտով ստիպեց տվյալ միջադեպը սպառված համարել³³:

Սակայն, արդեն 2000 թ.-ից որոշ վերլուծաբաններ նկատեցին, որ այն
բանից հետո, երբ թուրքական հաստիքային ծառայությունները ձեռքակալեցին
Ա. Օչալանին և PKK-KADEK-ի կողմից Թուրքիայի նկատմամբ իրական-
ացվող մարտական գործողությունները թուլացան, ինչպես նաև Թուրքի-
այի ու Սիրիայի միջև հարաբերությունների ջերմացման միտումից հետո,
Անկարայի ու Թեյ-Ալիվիի ռազմավարական հարաբերություններում
նկատվում է որոշակի հեռացում: Ղա հատկապես դրսևորվեց 2000 թ.-ին
Թուրքիայում կայացած քվեարկության ընթացքում՝ ի ստատարումն ՄԱԿ-ի
Գլխավոր ասամբլեայի կողմից գրավյալ տարածքներում պաղեստինցինե-
րի դեմ Իսրայելի հակաօրինական գործողությունների մեղադրմանը: Իսկ
հաջորդ օրը Թուրքիայի նախագահ Ա. Սեզերը Ստամբուլում Իսլամական
Կոնֆերանս Կազմակերպության առևտրի կոմիտեի նիստի ընթացքում իր
հերթին նույնպես քննադատության ենթարկեց Իսրայելի քաղաքականու-
թյունը գրավյալ տարածքներում, ինչը նորից ստպեց խոսել թուրք-իսրայել-
ական հարաբերությունների սառեցման մասին³⁴: Իսրայելի արտգործնա-
խարարության քարտուղար /Վոլխմախարաթ/ Ալլոին Լեյլը հայտարարեց,
որ իր կառավարությունը համաձայն է Թուրքիայի դիրքորոշման հետ՝ Ղա-
ղեստինում իրադրությունների զարգացման առումով, հատկապես
UNGA-ում թուրքական քվեարկության հետ: Նա Թուրքիայի քվեարկու-
թյունն անվանեց անսպասելի Իսրայելի համար, իսկ դրան հաջորդած Ա.
Լեզերի ելույթը, որը դատապարտում էր Իսրայելական ահաբեկչությունը
և պաշտպանում էր պաղեստինցիների իրավունքները, մեկնաբաններն
անվանեցին Իսրայելին հասցված "երկրորդ հարված": Եվս մեկ շաբաթ
առաջ, Թուրքիա կատարած այցի ընթացքում Ա. Լեյլը թուրքական կողմից
կոչ արեց չպաշտպանել Գլխավոր ասամբլեայի հակաիսրայելական բա-
նածեղ և "չգնալ այն նույն սխալ ճանապարհով, որով նա գնում էր 1960-ա-
կան և 1970-ական թվականներին"՝ ինքնաբերաբար քվեարկելով արաբա-
կան երկրների հետ համատեղ³⁵:

Սակայն, իրականում, ինչպես նշում է Վաշինգտոնյան Սերժավո-
րաբեկյան քաղաքականության ինստիտուտի առաջատար վերլուծաբան
Ալան Մակոլկվին (Alan Makovsky), թե՛ թուրքական, թե՛ իսրայելական
պաշտոնատար անձինք դեռևս սերտ հարաբերությունների հաստատման
սկզբից /1990-ականների կեսերին/ ձեռնպահ չին մնում հրապարակա-
ված միմյանց պաշտպանելուց միջազգային ու տարածաշրջանային քաղաքա-
կանության վիճելի հարցերի քննարկման ժամանակ, հատկապես հաշվի
առնելով իրենց երկրների ներսում տվյալ հարցերի նկատմամբ ասկա բա-
ցասակալ դիրքորոշումները: Թուրքիան, նույնիսկ Իսրայելի հետ 1991 թ.
դեկտեմբերին լիարժեք ու դեսպանների մակարդակով դիվանագիտական
հարաբերությունների հաստատվելուց հետո, պաղեստինցիներին վերա-
բերվող ՄԱԿ-ի քանաձևերի աթոթի գրեթե միշտ հետևողականորեն քվե-
արկել է արաբական երկրների հետ համատեղ: UNGA-ի մտավորապես
179 քանաձևերից 170-ի դեպքում Թուրքիան քվեարկել է Իսրայելի դեմ:
Միևնույն ժամանակ Իսրայելն իր հերթին՝ "չցանկանալով սրել հարաբե-
րությունները քրդերի հետ և ձեռք բերել նոր թշնամիներ", հազվադեպ է
PKK-ն անվանել ահաբեկչական խմբավորում և ջանում էր չպաշտպանել
քրդերի նկատմամբ վարվող թուրքական քաղաքականությունը³⁶:

Վերջին շրջանում երկու երկրների հարաբերությունների վերլուծությունը միանշանակորեն ցույց է տալիս, որ Իսրայելը ընդիմանուր ամռանը կողմնորոշվել է թուրքական քրդերի նկատմամբ իր քաղաքականության մեջ: Երկու պետությունների բարձրաստիճան պաշտոնատար անձանց 2003-2005 թթ.-ին կայացած փոխադարձ այցելությունների արդյունքները թույլ են տալիս ենթադրել, որ և՛ Թուրքիան, և՛ Իսրայելը լի են վճռակամությամբ շարունակելու համագործակցությունը պաշտպանության ու անվտանգության ոլորտներում, ընդ որում հատկապես այսպես կոչված «միջազգային անաբեկության դեմ պայքարի» համատեղստում: Օրինակ, Թուրքիայի պաշտպանության նախարար Վեջդի Գունուլի և իր իսրայելական գործընկեր Շաուլ Առֆազի միջև Անկարայում տեղի ունեցած քանակությունների ընթացքում՝ բացի ժազմարդուներաբերական ոլորտում համագործակցությունը, ընձարվել է նաև միջազգային ահաբեկչական կազմակերպությունների դեմ տարվող պայքարում փոխհամագործակցության խնդիրների մի ամբողջ համալիր: Իսկ 2003 թ.-ի սեպտեմբերին, թուրքական հատուկ ծառայությունների բարձրաստիճան աշխատակիցների հետ մեկտեղ, Իսրայել ժամանեց Թուրքիայի ներքին գործերի նախարար Աբդուլբազիդ Աբուսև: Ղա իլյանամետ Նոր թուրքական կառավարության կազմից նախարարի առաջին այցն էր Իսրայել: Թուրքական ՆԱՏՈ-ի ղեկավարի Իսրայել կատարած այցի հիմնական նպատակը երկու երկրների համապատասխան զերատեպությունների միջև համագործակցության լրիվ ծավալի վերականգնումն էր անվտանգության ոլորտում տեղեկատվության փոխանակման առումով, հատկապես տարբեր ահաբեկչական խմբավորումների և կազմակերպությունների առնչությամբ: Տվյալ հիմնախնդիրը Թուրքիայի համար կրկին առանձնահատուկ նշանակություն ձեռք բերեց, քանի որ, չնայած թուրքական կառավարության կողմից համաներման հայտարարությունը PKK-KADEK-ի անդամների համար, վերջինս հայտարարել էր Թուրքիայի հետ հաշտության ռեժիմի գործողության դադարեցման մասին³⁷:

Երկու երկրների սերտ համագործակցության նոր հաստատումը եղավ ահաբեկչության դեմ պայքարում, ինչպես նաև հակաահաբեկչական գործողությունների համար տեխնիկական միջոցների գաղափարն ուղղորտում փոխադարձ համագործակցության համաձայնագիրը, այդ թվում նաև թուրքական իլամիստական արմատական կազմակերպությունների դեմ, որը ստորագրվեց Իսրայելի հասարակական անվտանգության նախարարի 2003 թ. դեկտեմբերին Անկարա կատարած այցի ժամանակ: Տվյալ համաձայնագիրը մեծ մասամբ պայմանավորված էր մի շարք աղմուկ ահաբեկչական գործողություններով, որոնք այդ շրջանում տեղի էին ունեցել Թուրքիայում և ունեին հատուկ հակաիսրայելական բնույթ³⁸:

Չնայած բոլոր ղեկավարությունների ու հիմնախնդիրներին /օրինակ, նրանց հարաբերությունների մշտական ոլորանները, որոնք հիմնականում պայմանավորված են երկու երկրների կառավարությունների վրա ներքաղաքական ու արտաքին քաղաքական համալիր ճնշմամբ/, իսրայելա-թուրքական դաշինքը շարունակում է մնալ տարածաշրջանի աշխարհաքաղաքական գործընթացների կարևոր տարրը, քանի որ երկու երկրների գլխավոր հրամայականը հանդիսանում է քաղաքականությունը անվտանգության ոլորտում³⁹: Ընդ որում, եթե իրենց Թուրքիայի ու Իսրայելի, ինչպես նաև ԱՄՆ-ի համար այդ դաշինքը պատկերացվում էր որպես տարա-

ծաշրջանային անվտանգության համակարգի կորիզ, ապա նրանց ընդդիմախոսների կարծիքով, դա առաջացնում էր այլընտրանքային դաշինքների համակարգի շեղակով ծակործանը, հանգեցնում էր պատասխնության նոր մրցակազմի ու կարվածության, ինչն արդյունքում բացասականորեն է անդադարադնում ամբողջ Սիջին ու Մերձավոր Արևելքի /ՄԵժ Մերձավոր անվտանգության հեռանկարների վրա:

Այսպիսով, ընդհանրացնելով կարելի է պնդել, որ Անկարայի ու Թեյ-Ան-Կիվի ռազմա-քաղաքական համագործակցության հավանական հետագա կողմնորոշվել է թուրքական քրդերի նկատմամբ իր քաղաքականության մեջ, և այդ քաղաքականությունը, ըստ ամենայնի, անսոցյալ կիսմոլիսանա թուրք-իսրայելական համագործակցության ընդհանուր մակարդակից: Ընդ որում, հարկ է նշել, որ վերոշարադրյալն առաջին հերթին վերաբերվում է թուրքական քրդերին ու իրենց կազմակերպություններին՝ PKK-KADEK-ին /ներկայումս կան տեղեկություններ, որ նոր պատակտման հետևանքով սովալ քրդական կազմակերպությունը կրկին փոխել է իր անվանումը/, սակայն՝ ոչ իրաքյան քրդերին, որի նկատմամբ իսրայելի քաղաքականությունը պետք է առանձին դիտարկել:

ԻՍՐԱՅԵԼԱ-ԹՈՒՐԿԻԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԸՈՒՄԱՏԵՆՆԻՎԿԱՆ ՈՒՈՐՏՈՒՄ

Քրդական պետության ստեղծման նկատմամբ մտավայտությունը, ինչպես նաև մի շարք տարածաշրջանային հիմնախնդիրների /հատկապես պառեստիցյան ու քրդական/ նկատմամբ Իսրայելի դիրքորոշման պատճառով թուրք-իսրայելական հարաբերությունների ճգնաժամ, վերջին տարիներին ստիպեցին Թուրքիային ակտիվացնել իր գործողությունները ՄԵժ Մերձավոր Արևելքի տարածքում՝ առանց նայելու իր արևմտյան գործընկերների, ինչպես նաև Իսրայելի դիրքորոշմանը: Թուրքիայի նոր ղեկավարությունը վերջնականապես կատարեց իր ընտրությունը դեպի առավել ակտիվ տարածաշրջանային քաղաքականությունը, որը ենթադրում է Թուրքիայի դերի վերածնունդ Մերձավոր Արևելքում, ինչը բարդեցնում է հավասարակշռության պահպանումը Իսրայելի ու արաբական երկրների միջև հարաբերություններում, քանի որ Թուրքիայի ու Իսրայելի միջև սերտ անգամավարական հարաբերությունները Անկարայի շփումների համար լուրջ հիմնախնդիրներ էին առաջացնում ոչ միայն արաբական, այլև մահմեդական երկրների հետ ընդհանրապես:

Թուրք-իսրայելական հարաբերությունները էապես սրվեցին 2004 թ.-ի մայիսին, երբ Թուրքիայի վարչապետ Ռ. Էրդողանը կարևոր հայտարարություններով հանդես եկավ մերձավորարևելյան կարգավորման գործընթացում Իսրայելի ուժային մեթոդների առնչությամբ, իսկ իսրայելական հատուկ ծառայությունների կողմից ՀԱՄԱ-ի առաջնորդներ Յասիրին ու Աբդուլազիզ Ռանթալիի վերացումից հետո, Իսրայելի քաղաքականությունը նա անվանեց «Ռոտ պետական ահաբեկությանը»: Էրդողանը մեղադրեց նաև Ա. Շարոնին Մերձավոր Արևելքի խաղաղ գործընթացի սաբոտաժի մեջ: Այդ կոչտ հայտարարությունները, ըստ էության, ի չիք արեցին այդ պահի Իս-

րայելի բոլոր ջանքերը՝ ուղղված Անկարայի հետ հարաբերությունների շուկմանը, որը, 2002 թ.-ի նոյեմբերի խորհրդարանական ընտրություններում Արդարության ու զարգացման կուսակցության համոզիչ հաղթանակից և վերջին տարիներին Թուրքիայում առաջին անգամ միակուսակցական կառավարության ձևավորումից հետո, գտնվում է խորը ճգնաժամում: Այնուամենայնիվ, 2003 թ.-ի դեկտեմբերի 24-ին Թուրքիան և Իսրայելը Համաձայնագիր ստորագրեցին ահաբեկչության դեմ համատեղ պայքարի մասին: Փաստաթուղթը նախատեսում էր հետախուզական տեղեկատվության փոխանակում Թուրքիայի ու Իսրայելի միջև, հակաահաբեկչական եղանակների համատեղ մշակումներ և ահմատային ստորաբաժանումների համատեղ գիտնախոսություններ: Սակայն այդ Համաձայնագիրը կտրուկ քայքայվեց զեհատականի արժանացավ մի շարք մահմեդական երկրների կողմից և առիթ հանդիսացավ Թուրքիայում պատմիչ գործողությունների իրականացման համար, հատկապես քրդերի դեմ⁴⁰:

Իրաքյան իրադարձությունների ազդեցության տակ, 2004 թ.-ի ապրիլից իսրայելա-թուրքական հարաբերություններում սկսեցին դրսևորվել սառեցման հստակ տարրեր: Որոշ փորձագետներ, վերլուծելով այդ ժամանակահատվածում թուրք-իսրայելական հարաբերություններում ստեղծված իրավիճակը, շտապեցին եզրահանգումներ կատարել երկու երկրների գործընկերության սպառնացող լրջագույն վտանգի մասին, հատկապես ելնելով նրանից, որ հենց այդ ժամանակաշրջանում տարբեր դրդապատճառներով չեղյալ հայտարարվեցին կամ հետաձգվեցին ռազմա-տեխնիկական համագործակցության ոլորտի որոշ կարևորագույն նախագծերը: Այնուամենայնիվ, կոլիս ելնելով անվտանգության ոլորտի գերակայություններից, թուրքական ղեկավարությունը /կրելով մեծ ճնշում գինկորակների կողմից/ գնաց Իսրայելի հետ հարաբերությունների նոր ակտիվացմանը: Երկկողմանի հարաբերությունների նոր փուլի ելակետ հանդիսացավ թուրքական կողմից նախաձեռնված Ռ. Էրդողանի այցը Իսրայել 2005 թ.-ի մայիսին: Մայիսի 1-ին Էրդողանը ժամանեց Իսրայել և, ի բավարարում կողմերի, անմիջապես սկսեց բանակցությունները ռազմական համագործակցության շարունակման մասին: Արդյունքում հաստատվեց Իսրայելի կողմից Թուրքիային հեռահար շտապվով ազդեցության "հստուն" անօդաչու հետախուզ-ինքնաթիռների վաճառքի պայմանագիրը՝ 200 մլն. դոլար ընդհանուր արժողությամբ: "Պաշտպանության նախարար Վեջդի Գյունուլը և նրա տեղակալները Իսրայելի ռազմական գերատեսչության և "Տասախյա-ավիրիտ" ռազմա-ավիացիոն կոնցեռնի տնօրինության հետ համատեղ սկսեցին պատրաստել գործարքի փաստաթղթերը, որի իրականացման ընթացքում իսրայելցիները պետք է արդիականացնեն քուրբաական ՌՕՌՈ-ի 30 F-4 Phantom կործանիչներ, որոնք համար ստանալով 500 մլն. դոլար /ինչպես հայտնի է, նախկինում՝ 2001-2002 թթ.-ին, Իսրայելի ավիացիոն արդյունաբերությունն արդեն արդիականացրել էր նույն դասի 54 թուրքական ինքնաթիռներ⁴¹: Քննարկումներ սկսվեցին իսրայելական "Ահգարի" և "Մերկավա" գրահամեքենների հնարավոր գնման մասին, որոնք իրենց լավ էին դրսևորել անապատում մարտական գործողությունների կործան պայմաններում⁴²:

Պատահական չէ այն փաստը, որ իսրայելա-թուրքական հարաբերությունների նոր փուլի կայացման մեջ հատկապես ռազմա-տեխնիկական

բաղկացուցիչը կարևոր դերակատարություն ունեցավ: 2000-2004 թթ.-ին Թուրքիայի հետ ռազմա-տեխնիկական համագործակցությունը /ըստ 1990-ական թվականների կեսերից կնքված պայմանագրերի/ կազմել է Իսրայելական ՌԱՀ-ի արտադրանքի ընդհանուր արտահանման մոտավորապես 20-35 տոկոսը: Հիմնականում դրանք նախագծեր էին, որոնք կապված էին Թուրքիայի ՌՕՌՈ-ի ավիացիոն տեխնիկայի արդիականացման հետ /F-4 և F-5 ինքնաթիռներ/, ավիացիոն հրթիռային սպառազինության գնման և այլնի հետ: Իր առաջարկի բարձր մրցույթայինության շնորհիվ Իսրայելը կարողացավ նաև ստանալ M-60 տանկերի արդիականացման պայմանագիրը: Չնայած որ այդ պայմանագիրը կնքվել էր դեռևս 2002 թ.-ին, սակայն տարբեր պատճառներով /Թուրքիայում ֆինանսական խնդիրներ և կառավարության փոփոխում, երկկողմանի հարաբերությունների ընդհանուր սառեցում/ դրա իրականացումը ձգձգվում էր: Միայն 2005 թ.-ի վերջից իսրայելական ինժեներները ձեռնամուխ եան թուրքական բանակի տանկային պարկի ծավալում արդիականացման իրականացմանը: Արդիականացման արդյունքում ամերիկյան արտադրության M-60 տանկերը մի շարք բնութագրերով կհամապատասխանեն իսրայելական վերջին սերնդի "Մերկավա-4" տանկերին: Սասնավորապես, "Մերկավա"-ից թուրքական տանկերին անցան կրակի կառավարման համակարգը, գմբեթի շրջման մեխանիզմը, կախույկի գրահի հավաքակազմերը, ուժային համասարքը և 120-միլիմետրանոց թնդանոցը: M-60 տանկերի արդիականացման ծրագիրը Թուրքիայի համար հատուկ նախապատրաստել էին Israel Military Industries /IMI/ և Elbit Systems իսրայելական ընկերությունների ինժեներները: Ծրագրի արժողությունը կազմում էր 688 մլն. դոլար: Ընդհանրապես պետք է արդիականացվեն 170 տանկեր: Այսպես արդիականացվող տանկերի որոշ բաղադրամասերի արտադրությունը սկսվում էր 2006 թ.-ի երկրորդ կեսից, իսկ նոր մեքենաների արտադրությունը՝ 2007 թ.-ի սկզբից: Թուրքական ցամային զորքերը թուր 170 արդիականացված M-60 տանկերը պետք է ստանան մինչև 2009 թ.-ը: Ներկայումս Թուրքիայում ընթանում են ապագա տանկի նմանակի փորձարկումները: Իսրայելցիների կողմից պատրաստված երկրորդ փորձնական նմուշը փորձարկումներ է անցնում Իսրայելի փորձադաշտում: Առկա տեղեկությունների համաձայն, այս փուլում հաջողակի բանակցություններ են ընթանում նաև իսրայելական "Ահգարի" գրահամեքենների գնման ուղղությամբ⁴³: Համաձայն այդ տեղեկատվության, սույվա նախագծի հաջող իրականացման դեպքում, ապագայում հնարավոր է նաև ևս թուրքական զինված ուժերի 1000 միավոր M-60 տանկերի արդիականացում իսրայելական ընկերությունների կողմից⁴⁴:

2005 թ.-ի ապրիլին կողմերը պայմանագիր ստորագրեցին Թուրքիային իսրայելական հեռահար ազդեցության շտապվող անօդաչու հետախուզ-ինքնաթիռների վաճառքի մասին: Ինքնաթիռները կտրամադրեն իսրայելական ավիացիոն արդյունաբերության ձեռնարկությունները, իսկ կապի և մոնիտորինգի միջոցները՝ Elbit ընկերությունը: Գործարքը գնահատվում է 200 մլն. դոլար: Նույն ժամանակահատվածում տեղի ունեցավ երկու երկրների պաշտպանության նախարարությունների և ՋՌՈ-ի Գլխավոր շտաբերի ներկայացուցչական պատվիրակությունների փոխանակում: Սասնագետներն այդ բանակցությունները գնահատեցին 1,5 մլրդ. դոլար: Հենց այդպիսի գույնար կազմեցին սկզբունքորեն համաձայնեցված երկկողմանի

նախագծերը ռազմա-տեխնիկական համագործակցության ոլորտում: Բացի ռազմա-տեխնիկական ոլորտի մի շարք նախագծերի իրականացման պլանի համաձայնեցումը, վերջերս Թուրքիան և Իսրայելը պայմանավորվել են "Reliant Mermaid" անվան տեխնոլոգիական արբանյակների կիրառումով համատեղ գորավարժությունների շարունակման մասին⁴⁵:

ժամանակին բավական հետաձևարային էր դիտարկվում իսրայելական IAI ընկերության կողմից թուրքական ՌՕՌ-ի 7 միավոր C-130E ռազմա-տրանսպորտային ինքնաթիռների արդիականացման նախագիծը: 2002-2003 թթ.-ին ակտիվ բանակցություններ էին ընթանում կողմերի միջև այդ պայմանագրի իրացման շուրջ. որի արժեքն էր 12 մլն. դոլար, սակայն դրանք ձայնողումով ավարտվեցին. համարվում է, որ դրա պատճառը քաղաքական հարաբերությունների ընդհանուր ստեղծումն էր, ինչպես նաև ֆինանսական դժվարությունները: Ավելի հաջողակ կարող է լինել նոր, արդեն երկրորդ նախագծի իրականացման ծրագիրը /առաջինը իրացվել է 1990-ականների երկրորդ կեսին/, որը նախատեսում է F-4 Phantom կործանիչների արդիականացում և իսրայելական մասնագետների կողմից դրանց զարգացում մինչև "Phantom-2020"-ի մակարդակը: Համարվում է, որ իսրայելական նոր ավիոնիկայով և սարքավորումով կործանիչների համալրման հաշվին այդ ինքնաթիռների շահագործման ռեսուրսը թուրքական ՌՕՌ-ում նվազագույնը կերկարացվի մինչև 2020 թվականը, ընդ որում նախագիծը ենթադրում է աշխատանքների զգալի հատվածի իրականացումը թուրքական ձեռնարկություններում և թուրքական ընկերությունների հետ համագործակցությամբ⁴⁶:

Իսրայելը շահագործված է նաև թուրքական T-34 և T-38 ուսումնական ինքնաթիռների արդիականացման մեջ: Ներկայումս Թուրքիայի ՌՕՌ-ի հրամանատարությունը մշակում է այդ ծրագրի հայեցակարգը՝ այդ ինքնաթիռների շահագործման ժամկետը մինչև 2015 թ.-ը երկարաձգելու նպատակով⁴⁷:

Թուրքիայի և Իսրայելի ռազմա-տեխնիկական համագործակցության կարևոր կողմերից մեկը հանդիսանում է համագործակցությունը ՀՕՊ-ի և մարտավարական ՀՀՊ-ի ոլորտում: Հայտնի է, որ վերջին տարիներին Թուրքիան մտադիր է խոր արդիականացման ենթարկել իր ՀՕՊ-ի համակարգը և զարգացնել սեփական մարտական գործողությունների բեմասարքակի /ՄԳՄ/ ՀՀՊ-ն: Շատ առումներով դա կապված է Մեծ Մերձավոր Արևելքի տարածաշրջանում սպառազինությունների մրցակազմի ուժեղացմամբ ու ՋՌՁ-ի և իրթիռային տեխնոլոգիաների տարածման հիմնախնդիրներով: 1999 թ.-ին Թուրքիան ստացավ ամերիկյան բանակային երկրորդ մոդիֆիկացիայի /PAC-2/ "Փեբրիթ" ՋՀՀ-ի առաջին բաւարդյան իր գնիված ուժերի ՀՕՊ/ՀՀՊ խմբավորումների և երկրի կարևոր ռազմական օբյեկտների ուժեղացման համար: Ժամանակակից ՀՀՊ ՄԳՄ համակարգերի ստեղծման շրջանակներում ԱՄՆ-ի գլխավոր գործընկերը հանդիսանում է Իսրայելը: Ներկայումս Իսրայելը հանդիսանում է աշխարհի միակ պետությունը, որն ունի իր երկրի ամբողջ տարածքն ընդգրկող ՀՀՊ համակարգ: Իսրայելում են մշակվել "Էրրուու" ՀՀՊ համակարգերը և դրան կատարելագործված "Էրրուու-2" տարբերակները, որոնք նախատեսվում է տրամադրել նաև Թուրքիային: 1999 թ.-ից Թուրքիան մասնակցում է այդ նախագծում, և նրա ցանկությունները ստանալ այդ կատարելա-

գործված ՀՕՊ/ՀՀՊ համակարգերը պայմանավորված է /բացի իր երկրի պաշտպանությունը իրթիռային համակարգերի հավանական արձակումից/ "սկզբային" տեխնոլոգիաների կիրառմամբ/ նաև Կրեւտ կղզում տեղակայված ռուսական արտադրության ՋՍ C-300 ՌՄՄ-1 համակարգերին հավասարակշռելու ձգտմամբ⁴⁸: Միևնույն ժամանակ Իսրայելի ու ԱՄՆ-ի հետ համագործակցությանը ՀՀՊ-ի զարգացման ծրագիրը բաղաձևում է նախագծի իրականացման բավական բարձր գնով: Նույնիսկ շատ սահմանափակված ՀՀՊ համակարգը՝ "Էրրուու" համասարքերի նվազագույն քանակով, Թուրքիայի համար կարծես 5 մլրդ. դոլար, ըստ որում, չապահովելով երկրի ամբողջ տարածքի պաշտպանությունը⁴⁹:

Երկու երկրների ռազմա-տեխնիկական համագործակցությունը այնուամենայնիվ, ունի իր օբյեկտիվ սահմանափակիչները և ընդունակ է հետազայում ծառայել որպես հիմք իրենց քաղաքական հարաբերությունների խորացման և "ռազմավարական դաշինքի" մակարդակի դրանց բարձրացման համար: Բնական է, որ անվտանգության ոլորտի իրամականները կնպաստեն միջմասնակի հետաձևարում կայուն գործընկերության պահպանմանը, սակայն արդեն ի վիճակի չեն լինի դրանց հասցնել դաշնակցային: Դրան չեն նպաստում ոչ քաղաքական պայմանները, ոչ էլ Թուրքիայում խորացող հակաիսրայելական տրամադրությունները: Բացառությամբ զինվորական հրամանատարության և թուրքական քաղաքական վերնախաւի որոշ հատվածի, Թուրքիայի բնակչությունը և լայն հասարակականությունը խիստ բացասաբար են վերաբերվում Իսրայելի հետ հետազայ համագործակցության հետազայ որակական խորացմանը:

Երկկողմանի հարաբերությունների համար լուրջ փորձություն եղան 2006 թ.-ի ամռանը Լիբանանի շուրջ տեղի ունեցող իրադարձությունները, որոնք իրադրված էին իսրայելական բանակի կողմից "Հեզբոլլահի" դեմ ուղղված մարտական գործողություններով և Իսրայելի ներխուժմամբ Լիբանանի հարավային շրջանները: Թուրքիայում Իսրայելի այդ գործողությունները անմիջապես առաջադրին հակաիսրայելական ու հակասեմիթական տրամադրությունների կտրուկ վերելք, որը աջակցություն ստացավ երկրի իշխող վերնախաւի մի զգալի հատվածի կողմից:

Արդեն 2006 թ.-ի օգոստոսի 1-ին Ստամբուլում Անկարայի առաջարկությամբ տեղի ունեցավ Իսլամական Կոնֆերանս Կազմակերպության ԻԿԿ/շտապ նիստ փորձագետների մակարդակով՝ քննարկելու համար Լիբանանին մարդասիրական օգնություն ցուցաբերելու հարցը: Իսկ արդեն օգոստոսի 3-ին Թուրքիայի և մի շարք արաբական երկրների նախաձեռնությամբ Կուալա-Լումպուրում ԻԿԿ-ի Գործադիր կոմիտեի իրատապ նիստում մասնակից-երկրները քննարկեցին Մերձավոր Արևելքի ճգնաժամային իրավիճակը և համատեղ Հայտարարություն ընդունեցին: Փաստաբուրդը պարունակում էր Լիբանանում մարտական գործողությունները անմիջապես և անվերապահ դադարեցման կոչ, Իսկ Իսրայելի գործողությունները դրանում բնորոշվեցին որպես հանցագործ և ագրեսիվ, որի քննությամբ պետք է զբաղվի ՄԱԿ-ի Անվտանգության կոմիտեի: Մալազիայում ԻԿԿ-ի համդիպման ժամանակ Թուրքիայի պատվիրակությունը գլխավորում էր վարչապետ Ռեջեփ Թայյիբի Էրդողանը, որն իր ելույթում խիստ քննադատության ենթարկեց Իսրայելի գործողությունները՝ դրանք անվանելով "անարդարացի և անօրինական": Բացի այդ, Թուրքիան հանդես

ելակ ԻԿԿ-ի և որոշ արևմտաեվրոպական միությունների արտաքին քաղաքականության համաձայնագրերով հաստատված ծրագրերի շրջանակներում Թուրքիայի «Արդարություն և զարգացում» իշխող կուսակցության ղոլոր պատվիրակները դուրս եկան Իսրայելի հետ բարեկամության միջխորհրդարանական խմբի կազմից՝ որպես բողոք Լիբանանում մարտական գործողությունների դեմ: Նախօրյակին թուրք-իսրայելական բարեկամության միջխորհրդարանական խմբից դուրս գալու մասին էին հայտարարել նաև հիմնական ընդդիմադիր կուսակցության՝ ժողովրդահանրապետական կուսակցության պատմավարները: Թուրքիայի խորհրդարանի մարդու իրավունքների հանձնաժողովը իր արտաքինքն նկատմամբ Իսրայելի գործողությունները Լիբանանում որակեց որպես պետական ահաբեկչություն և ցեղասպանություն և կոչ արեց ռազմական հանցագործությունների համար դատի տալ նրան միջազգային դատարանում: Լիբանանի իրադարձությունների կապակցությամբ թուրքական փորձագետները նույնպես արձանագրեցին հակաիսրայելական ու հակաամերիկյան տրամադրությունների վերելք Թուրքիայում, քանի որ Վաշինգտոնը միաբեկչորեն զնախապում էր որպես Իսրայելի գործողությունների հրահրող և մասնակից⁵⁰:

2006 թ.-ի ամռանը Իսրայելի կողմից Լիբանանում ռազմական գործողությունների հիմնապատկերի վրա թուրքական հասարակության կողմից թուրք-իսրայելական հարաբերությունների ընկալման բավական հետաքրքիր դրսևորում հանդիսացան այն իրադարձությունները, որոնք կապված էին Թուրքիայի Ջիբված ուժերի զիլավի նոր պետի Յաշար Բյույուքանըթի նշանակման հետ: Քանի որ Յ. Բյույուքանըթը ուներ Ա. Սեզեթի աստորումը և ավելի կոշտ դիրք էր գրավում քրդական հարցի, ԵՄ-ն ինտեգրման հիմնախնդիրների և այլնի վերաբերյալ, բազմաթիվ փորձեր էին արվում նրան հեղինակագրելու համար: Այդ նպատակով նույնիսկ փորձեր էին արվում օգտագործել նրա պապու գերեզմանի գտնվելու իրական փաստը, որը եղել է Օսմանյան բանակի սպա և զոհվել Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, Իսրայելի տարածքում: Իսրայելական Ղվեթափոր շտաբը, որպես քառի կամքի դրսևորում, պարզել է գերեզմանի գտնվելու վայրը, այն քարեկարգել է և թուրք գեներալին հրավիրել է այցելելու պապի գերեզմանին: Այս միջոցառման նախաձեռնողների կարծիքով, Լիբանանում հակամարտության հետ կապված Թուրքիայում հակաիսրայելական տրամադրությունների աճի այլիքի հիմնապատկերի վրա, այս փաստը պետք է ի վնաս գնահատվեր Յ. Բյույուքանըթին⁵¹:

Թուրք-իսրայելական հարաբերություններում ներկայումս տեղի ունեցող փոփոխությունները պայմանավորված են նաև Թուրքիայի եվրոպական ինտեգրման գործընթացներով: Անկախախնդրից ելնելով ԵՄ կողմնորոշված արտաքին քաղաքականությունը նրան ստիպում է որոշակի շտկումներ մտցնել Իսրայելի հետ հարաբերություններում, քանի որ Եվրամիության դիրքորոշումը Իսրայելի նկատմամբ միշտ ավելի կոշտ է եղել, իսկ արաբների նկատմամբ թերևս առկա է համակրանք /չնայած այն հստակորեն չի դրսևորվում/: Իսկ Անկարան հավակնում է Մեծ Մերձավոր Արևելքում ԵՄ-ի քաղաքականության կողող լինելու դերակատարությանը, որը նշանակում է Իսրայելի հետ հարաբերությունների մակարդակի աստիճանական նվազում: Իսրայելի հետ հարաբերությունների համար նման բացասական նշանակություն ունի նաև Թուրքիայում հակաամերիկյան տրամադրությունների ուժեղա-

ցումը և Իրաքի շուրջ քրդական գործոնի ուժեղացման հետ կապված գործընթացները: Ակնհայտ է նաև մեկ այլ, Թուրքիայի ներքաղաքական գործունը, որից կախված է թուրք-իսրայելական հարաբերությունների որակը: Թուրքիայի ներկայիս քաղաքական վերնախավը տևական պայքար է մղում թուրքական պետության կանթում զինվորականության դեմ և ազդեցության նվազման համար: Հայտնի է, որ հատկապես թուրքական զինվորականությունը է սկսած 1990-ական թվականներից հանդիսացել իսրայել-թուրքական հարաբերությունների զարգացման գաղափարախոսը և կողմնակիցը: Ուստի, Թուրքիայի քաղաքական կանթում զինվորական վերնախավի դերի հետագա նվազման պայքարայում, Իսրայելի հետ հարաբերությունները ևս օբյեկտիվորեն կբուլանան: Դա, իհարևել, չի հանգեցնի իսրայել-թուրքական հարաբերությունների լրիվ խզմանը, երկու երկրների անվտանգության ոլորտի հրամայականները թույլ չեն տա որանց նվազումը նույնիսկ մինչև կրիտիկական մակարդակ, սակայն տարածաշրջանի քաղաքական գործընթացներում դրանց նշանակությունը էականորեն կտուրկվի:

- 1 Stbu' Minasian S. The Turkish-Israeli Military and Political Co-operation and Regional Security Issues // Iran and Caucasus, Vol VII, №1-2, 2003; Minasyan С. Израиль - Турция: Военно-политическое и военно-техническое сотрудничество (в аспекте проблем региональной безопасности) // Центральная Азия и Кавказ, №1, 2004.
- 2 Washburn J. Power Bloc: Turkey and Israel Lock Arms // The Progressive Magazine, December 1998.
- 3 Peterson S. Kurd Extremists Train in Lebanon // The Christian Science Monitor, 13.08.1991.
- 4 Washburn J. Power Bloc: Turkey and Israel Lock Arms // The Progressive Magazine, December 1998.
- 5 Bir С. Turkey's Role in the New World Order: New Challenges // Strategic Forum, INSS, №135, February 1998.
- 6 Ахмедов В. Противостояние // Азия и Африка сегодня, №1, 2000. С. 14.
- 7 Спиридонова Н. Курды вновь готовятся к войне: Впервые после ареста их лидера Оджалана объявлена мобилизация среди курдской молодежи Турции // Независимое военное обозрение, 18.01.2001.
- 8 General Hilmi Ozkok. Interview // Jane's Defense Weekly, 22.01.2001. P.32.
- 9 Sariibrahimoglu L. Iraq: The Turkish Factor // Jane's Defense Weekly, 02.04.2003. P. 18.
- 10 The Military Balance 2002/2003. IISS: London, 2002. P.58.
- 11 Короченко И. Российское оружие в Турции: Вертолет Ка-50-2 «Эрдоган» продолжает борьбу за контракт стоимостью 3,5 миллиарда долларов // Независимое военное обозрение, 28.09.2001.
- 12 Sariibrahimoglu L. Turkey Places Helicopter Electronic Warfare Contracts // Jane's Defense Weekly, 16.01.2002. P.15.
- 13 Sariibrahimoglu L., Redan S. Turkey Announces C-130 and Black Hawk Upgrades // Jane's Defense Weekly, 07.08.2002. P.10.
- 14 Марьясис Д.А. ВПК Израиля на рубеже веков // Востоковедный сборник. Вып.3 / Отв. ред. Федорченко А.В., Филоник А.О. ИИИБВ: М. 2002. С.230-238.
- 15 Маратов М.М. Военно-экономическая политика Турецкой Республики и ее сотрудничество с зарубежными странами // Армия и власть на Ближнем Востоке: от авторитаризма к демократии / Отв. ред. Ахмедов В.М., ИИИБВ: М.2002. С.388.

- 16 Cobrin M. Honing the Sword: Strategy and Forces After 9/11. CDI: Washington, 2003. P.95-97.
- 17 O'Sullivan A. Turkish F-16s Use Israeli Base to Practice Evading S-300 Missiles // Jerusalem Post, 17.07.1998.
- 18 Rodman D. Israel's National Security Doctrine: An Introductory Overview // Middle East Review of International Affairs. Vol.5, №3, September 2001. P.80.
- 19 Маратов М.М. Военно-экономическая политика Турецкой Республики и ее сотрудничество с зарубежными странами. С.373-376.
- 20 Lorenz F.M., Erickson E.J. The Euphrates Triangle: Security Implications of the Southeastern Anatolia Project. NDU: Washington, 1999. P.1-6.
- 21 Мосаки Н.З. Гидростратегические аспекты курдского вопроса // Ближний Восток и современность. Вып.11 / Отв. ред. Исаев В.А., Филоник А.О. ИИИБВ: М.,2001. С.199-201.
- 22 Kinzer S. A Fierce Struggle for Water Drives All the Players in the Kurdish Conflict. // International Herald Tribune, 02.03.1999.
- 23 Мосаки Н.З. Гидростратегические аспекты курдского вопроса // Ближний Восток и современность. Вып.11 / Отв. ред. Исаев В.А., Филоник А.О. ИИИБВ: М.,2001. С.206.
- 24 Turkey Seeks Attack Helicopters – As Soon As Possible // Weekly Defense Monitor, CDI, Vol.6, Is. 30, 12.09.2002.
- 25 Lorenz F.M., Erickson E.J. The Euphrates Triangle: Security Implications of the Southeastern Anatolia Project. P.44.
- 26 Мосаки Н.З. Гидростратегические аспекты курдского вопроса // Ближний Восток и современность. Вып.11 / Отв. ред. Исаев В.А., Филоник А.О. ИИИБВ: М.,2001. С.207.
- 27 A Report on the Turkish-Israeli Military Cooperation. Turkey-Israel, Politics, 03.05.2001, (www.arabicnews.com/ansub/Daily/Day/010305/2001030508.html).
- 28 Schleifer Y. Jewish Telegraph Agency (JTA), 07.04.2003.
- 29 Yahya H. Israel'in Kurd Kart. Israel'in Ortadogu Stratejisi Ve Kurt Devleti Senaryolari, (Israel's Kurdish Card: The Middle East Strategy of Israel and "Kurdish State" Scenarios). Ankara, 1993.
- 30 Terrill A.W. Strategic Effects of the Conflict with Iraq: The Middle East, North Africa, and Turkey. U.S. Army War College, SSI: Carlisle, March 2003. P.11-13.
- 31 Larrabee F.S., Lesser I.O. Turkish Foreign Policy in an Age of Uncertainty. RAND: Santa-Monica, 2003. P.144.
- 32 Turkish Officers Call for Boycotting Relations with Israel. Turkey-Israel Politics, 10.27.2000, (www.arabicnews.com/ansub/Daily/Day/010227/2001022706.html).
- 33 Migdalovitz C. Turkey: Issues for U.S. Policy. CRS: The Library of Congress, Washington, 22.05.2002. P.16-17.
- 34 Makovsky A. Turkish - Israeli Ties in the Context of Israeli – Arab Tension // WINEP, Policywatch №502, 10.10.2000, (www.washingtoninstitute.org).
- 35 Turkish Backing to Israel Deteriorated Turkey-Israel Politics, 10.27.2000, (www.arabicnews.com/ansub/Daily/Day/010227/2001022706.html).
- 36 Makovsky A. Turkish - Israeli Ties in the Context of Israeli – Arab Tension.
- 37 The Observer. A Quarterly Review of Cooperation: U.S., Turkey and Israel. JINSA - ATAA: Washington, №4, October 2003. P.3-4.
- 38 Israel, Turkey Sign "War on Terror" Cooperation Pact // Ha'aretz, 27.12.2003.
- 39 Makovsky A. Israel-Turkey: Strategic Relationship or Temporary Alliance? // The Middle East in 2015: The Impact of Regional Trends on U.S. Strategic Planning / Ed. by Yaphe J.S. NDU: Washington 2002. P.231-235.
- 40 Гурьев А.А. О турецко-израильских отношениях // ИИИБВ, 13.05.2005.

- 41 Sbu' Минасян С. Израиль - Турция: Военно-политическое и военно-техническое сотрудничество (в аспекте проблем региональной безопасности) // Центральная Азия и Кавказ, №1, 2004.
- 42 Гурьев А.А. О турецко-израильских отношениях // ИИИБВ, 13.05.2005.
- 43 Гурьев А.А. Турция – Израиль: по пути укрепления военного сотрудничества // ИИИБВ, 24.01.2006.
- 44 Kogan E. Cooperation in the Israeli-Turkish Defence Industry. CSRC, September 2005. P.4-5.
- 45 Гурьев А.А. Турция – Израиль: по пути укрепления военного сотрудничества // ИИИБВ, 24.01.2006.
- 46 Kogan E. Cooperation in the Israeli-Turkish Defence Industry. CSRC, September 2005. P.3-4.
- 47 Хмелинец С.М. О деятельности авиационно-промышленного комплекса Турции в период с 1998 по 2004 гг. // Ближний Восток и современность, Вып.23 / Отв. ред. Арунова А.Р., Филоник А.О. ИИИБВ, М.,2004. С.174.
- 48 Баскаков В. Горшков А. ПРО на европейском театре // Независимое военное обозрение, 31.10.2003.
- 49 Udum S. Missile Proliferation in the Middle East: Turkey and Missile Defense // Turkish Studies, Vol.4, N.3, Autumn 2003. P.83-94.
- 50 Гурьев А.А. Ситуация в Турции: август 2006 г. // ИИИБВ, 04.09.2006.
- 51 Гурьев А.А. О кадровых перестановках в высшем руководстве вооруженных сил // ИИИБВ, 14.08.2006.

ԻՐԱՆՅԵԼԻ ԵՎ ԹՈՒՐԿԻԱՅԻ ՈԱԶՄԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ. ՊԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԵՌԱՎԱՐՆԵՐԸ

Սերգեյ Մինսայան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերջին տասնամյակի կարևորագույն իրադարձություններից մեկը, որը մեծ ազդեցություն գործեց Մերձավոր և Միջին Արևելքի տարածաշրջանի աշխարհաքաղաքական գործընթացների զարգացման վրա, հանդիսացավ իսրայելա-թուրքական ռազմավարական համագործակցության ձևավորումն ու զարգացումը: Դրա հետև մեկտեղ, այդ հարաբերությունների կայացման ու զարգացման դիմադիման ցույց է տալիս, որ դրանք կախված են բավական շատ արտաքին ու ներքին գործոններից, չեն կարող Անկարայի ու Թեյ-Ավիլի կողմից դիտվել որպես ստատիկ և տարբեր աստիճանի գերակա երևույթներ: Եվ եթե նշված ամբողջ ժամանակահատվածում հարաբերությունների զարգացման ու խորացման նախաձեռնողը հիմնականում հանդիսանում էր Իսրայելը /ոչ առանց ԱՄՆ-ի ակտիվ աստիճանի/ , ապա Թուրքիան, կախված արտաքին քաղաքական կոնյունկտուրայից կամ ներքաղաքական իրավիճակից, հանդես էր գալիս որպես ավելի զուսպ գործընկեր: Բնականաբար դա բացատրվում էր Իսրայելի ու Թուրքիայի քաղաքականության մեջ երկկողմանի համագործակցության տարբեր աստիճանի արժեքվողմանը:

Հրեական պետությունը ազգային անվտանգության ապահովման իր ռազմավարության մեջ ավանդաբար ելնում էր երկու կարևորագույն դրույթներից: Առաջինը՝ «դետերմինիզմը» էր, որը ենթադրում էր առաջատար գերտերություններից մեկի կողմից աստարումը Իսրայելին /սկզբում որպես այդպիսի երկիր էր Ֆրանսիան, իսկ ավելի ուշ՝ ԱՄՆ-ը/, որն ուղղված է նորագույն ռազմական տեխնոլոգիաներով ու համաշխարհային մակարդակով քաղաքական աջակցությանը Իսրայելին՝ վերջինիս կողմից իր անվտանգության ապահովման ու պահպանման հիմնական տարրի՝ զսպման քաղաքականության համար անհրաժեշտ տարրեր բնույթի կանխարգելիչ ու ժայռի միջոցառումների իրականացման ամսադրակ: Երկրորդ կարևորագույն դրույթը հանդիսանում էր «ծայրամասային ռազմավարությունը», որը նախատեսում էր անվտանգության ոլորտում համագործակցություն տարածաշրջանի ոչ արաբական երկրների հետ: Դրան որպես հիմք հանդիսացան Իսրայելի գաղտնի կապերը քրիստոնյա Եթովպիայի և շահական Իրանի հետ: Քաղաքական ու ռազմա-տեխնիկական համագործակցության, այդ պետությունների հետ հետախուզական տեղեկատվության փոխանակման հետևանքով «ծայրամասային ռազմավարության» բաղաձայնից մասն էր հանդիսանում նաև արաբական երկրներում ազգային ու կրոնական փոքրամասնությունների աստարումը Իսրայելի կողմից, օրինակ՝ քրիստոնյաներին Լիբանանում կամ սալաամքներին Սուդանի հարավում: Սակայն, այդ բնույթի առավել ամբիջիոզ օրինակը համագործակցությունն էր շահական Իրանի հետ՝ Իրաքի հյուսիսում քրդական ընդդիմության աստարման գործում, որը շարունակվեց մինչև 1975 թ.-ը, երբ

չափը որոշեց բարելավել հարաբերությունները Իրաքի հետ և Իսրայելի համար փակեց մուտքը դեպի Իրաքի քրդաբնակ տարածքները: 1950-ական թվականների վերջի արմատական փոփոխությունները Միջին Արևելքում, որոնք կապված էին տարածաշրջանում խորհրդային Միության ազդեցության ուժեղացման հետ, ինչպես նաև Իրաքում գնդապետ Քասսեմի կողմից իրականացված հեղաշրջման արդյունքում Բաղդադյան պակտի կազմից այդ երկրի դուրս բերմանը պայմանավորված այդ արմատաձեռն փոփոխության փաստացի կործանման հետ, Անկարային ստիպեցին միանալ Իսրայելին՝ իր հակաարաբական միության ձևավորման գործողություններում: Դա սկիզբ հանդիսացավ երկու երկրների միջև սերտ ու բազմակողմ հարաբերությունների համար, առաջին հերթին՝ ռազմա-քաղաքական ոլորտում: Չնայած վերելքի ու անկման, նույնիսկ սառեցման շրջանները, այդ հարաբերությունները 20-րդ դարի 1990-ականների միջամասում սկսեցին ձեռք բերել առավել կոնկրետություն ու լիարժեք ռազմավարական գործընկերության բնույթ՝ Միջին Արևելքի անվտանգության հիմնախնդիրներով զբաղվող մի շարք փորձագետներին առիթ տալով խոսելու Թուրքիայի ու Իսրայելի միջև ռազմա-քաղաքական դաշինքի ձևավորման մասին: Վերջին տասնամյակի ընթացքում դա վճարող գործոն հանդիսացավ տարածաշրջանային անվտանգության համար:

Երկու պետությունների միջև դաշինքի ձևավորման պատճառներին, ինչպես և թուրք-իսրայելական համագործակցության զարգացման էվոլյուցիային նվիրված է բավական ծավալուն գրականությունը, ուստի և այս աշխատանքում կլուսարանվեն այն հարցերը, որոնք ուղղակիորեն կապված են երկու երկրների ռազմա-քաղաքական գործընկերության, ինչպես նաև դրա ազդեցության հետ տարածաշրջանային անվտանգության հիմնախնդիրներին:

ՊԱՇԽՆՔԻ ԳԱՆԱԿՈՐ ԲԱՆԿԱՑՈՒՑԻՉ ԸՆԴՄԱՆՍԵՆՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ Է

«Սառը պատերազմի» ավարտը երկու կողմերին /առաջին հերթին Թուրքիային/ սեփական անվտանգության ապահովման տեսակետից կանխորոշեց նոր մարտահրավերներ երկու ու սալաամքիցների առջև: Ինչպես 1993 թ.-ին դիպուկ նկատել է Թուրքիայի նախկին արտգործնախարար Հ. Չեթինը, ԽՍՀՄ-ի փլուզումը և Միջին Արևելքում ազդեցության արտատարածաշրջանային «ուժի կենտրոնների» վակուումը Թուրքիան «կողային պետությունից» վերածեցին «հարձակատային երկրի», որը իր սահմաններում բախվեց բազմաթիվ «ձակատներ» հետ: Թուրքիայի և Իսրայելի միջև նոր սերտ փոխմտերի կայացման մեջ հիմնական դերը կատարեցին թուրքական գեներալները: Իսրայելի հետ հարաբերությունների զարգացման համար թուրքական կողմի գլխավոր գաղափարախոսներն էին նախկին փոխարտգործնախարար Օնուր Օյմենը և Գլխավոր շտաբի պետի նախկին տեղակալ Չևիկ Բիլիզ: Նրանց կարծիքով Թուրքիայի ազգային անվտանգության ռազմավարական սպառնալիցները 1990-ականների արդեն կողմ են այլ բնույթ, քան «սառը պատերազմի» ժամանակահատվածում, ինչը պահանջում է անվտանգության ապահովման նոր մոտեցումներ, որում հիմնական տարրերից մեկը պետք է հանդիսանա Իսրայելի հետ

ռազմա-քաղաքական համագործակցությունը, որը Մերձավոր Արևելքի միակ աշխարհիկ պետությունն է, և որը հավանք է արևմտամետ դիրքորոշման, արևմտյան արժեքների ու ժողովրդավարական սկզբունքների⁶:

Ուազմական համագործակցության մասին թուրք-խորալեյական առաջին համաձայնությունը ստորագրվել է Թեյ-Ավիլում 1996 թ.-ի փետրվարի 23-ին Թուրքիայի Գլխավոր շտաբի պետի տեղակալ Չևիկ Բորի և Իսրայելի պաշտպանության նախարարության ղեկավարության կողմից՝ լիարժեք գաղտնիության պայմաններում: Այն երկու երկրների հարաբերություններում առաջին անգամ նախատեսում էր երկու երկրների զինված ուժերի միջև համագործակցություն ռազմական ուսուցանման ծրագրերի իրականացման մեջ, համատեղ ցամաքային, ռազմա-ծովային, ռազմա-օդային գործողություններ, ռազմա-ստրատեգիական հետազոտությունների միացյալ խմբի ստեղծում, հետախուզական տեղեկատվության փոխանակում, թուրքական ինքնաթիռների վարժական թռիչքներ խորալեյական օդային տարածքում և խորալեյական ինքնաթիռների՝ թուրքական տարածքում, թուրք օդաչուների հրահանգավորում, տեղեկատվության փոխանակում, հատկապես, այսպես կոչված, ահաբեկչության դեմ պայքարի ոլորտում /ինչը նախատեսում է Սիրիայի, Իրանի և Իրաքի հետ սահմանաձեռնող տարածքներում համատեղ հետախուզական մոնիտորինգ/: Բացի այդ, այս փաստաթղթի համաձայն, Իսրայելն իր վրա պարտավորություն էր վերցնում օգնություն ցուցաբերել Թուրքիային Իրանի, Սիրիայի ու Իրաքի հետ սահմանի ամրապնդման ու վերագինման համար՝ թուրք ապստամբներից պաշտպանելու նպատակով:

Ավելի ուշ միայն սկսեց տեղեկատվություն հայտնվել այս փաստաթղթի մանրամասների վերաբերյալ⁶: Առաջին հերթին պարզվեց, որ քանի որ և Թուրքիան և Իսրայելը համալրված են միևնույն ամերիկյան մարտական ինքնաթիռներով /տարբեր մոդիֆիկացիայի F-16 և F-14 ինքնաթիռներ/, ապա դրանք շահագործման ոլորտում երկու երկրների ՌՕՌ-ի տեխնոլոգիական համագործակցությունը անհրաժեշտ է և օգտակար: Համաձայնագիրը նախատեսում էր, որ Իսրայելի ու Թուրքիայի օդային տարածքներում պետք է իրականացվեն ուսումնական թռիչքներ՝ նախապես առանց մարտական տեխնիկայի, զինամթերքի և էլեկտրոնա-հետախուզական սարքավորման կիրառման⁷: Ստորագրված համաձայնագրերին համապատասխան, խորալեյական մարտական ինքնաթիռներին հնարավորություն էր տրվում մարտական նախապատրաստության իրականացման համար օգտվել Թուրքիայի օդային տարածքից և հենակայաններից: Մասնավորապես, Աքիսի թուրքական օդային հենակայանում պարբերաբար կայանում են խորալեյական F-16 ինքնաթիռները: Նախատեսվում է կապերի ընդլայնում երկու երկրների ՌՕՌ-ի առումով: Չեռք է բերվել պայմանավորվածություն հետախուզական տեղեկատվության փոխանակման ու տարածաշրջանում իրավիճակի ռազմավարական գնահատականների մասին: Ուազմական տեղեկատվության փոխանակման ոլորտում երկու երկրների համագործակցության օրինակ կարող է ծառայել Իսրայելի կողմից Թուրքիային ՄիԳ-29 կործանիչները, առավել ժամանակակից մարտական ինքնաթիռների վերաբերյալ տեխնիկական տեղեկատվության տրամադրումը, որոնց տարբեր մոդիֆիկացիաները գտնվում են Սիրիայի, Իրանի և տարածաշրջանի այլ երկրների սպառազինության մեջ, որոնց

հետ Անկարան գտնվում է բավական լարված հարաբերություններում: Իսրայելական կողմը այդ տեղեկատվությունը ստացել էր ԳՅՀ-ի կողմից 3 ՄիԳ-29 ինքնաթիռների փոխանցումից հետո, որին այդ խորհրդային արտադրության արևելագերմանական կործանիչները բաժին էին ընկել Գերմանիայի վերամիավորումից հետո⁸: Իսրայելցիները պետք է օգնություն ցուցաբերեին Թուրքիային հարևան արաբական երկրների ու Իրանի հետ նրա սահմանների ամրապնդման գործում, ներառյալ սահմանամերձ շրջաններում ռադիոտեխնիկական հետախուզության ցանցի կառարելագործումը: Արդեն 1996 թ.-ի օգոստոսի 28-ին Իսրայելի պաշտպանության նախարարության ղեկավարներից մեկը՝ գեներալ Դավիթ Իովին ժամանեց Անկարա, որպեսզի ստորագրի ավելի քան 600 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ պայմանագրեր, որոնք նախատեսում էին թուրքական 54 F-4 Phantom ինքնաթիռների արդիականացումը և նպատակ էին հետապնդում երկու պետական ավիացիոն ձեռնարկությունների միջև ռազմական համագործակցության կառուցիչ ստեղծումը:

Այդ ժամանակահատվածում իսլամիստների իշխանության գալը Թուրքիայում խոչնդոտներ չկարողացավ ստեղծել հարաբերությունների հետազգ բարգաճման համար, քանի որ երկրի քաղաքական կյանքում ավանդաբար մեծ ազդեցություն ունեցող թուրքական գեներալիտետը կոշտ ճնշում գործադրեց կառավարության վրա՝ Իսրայելի հետ հարաբերությունների խորացման նպատակով: Որպեսզի աշխարհին ցուցադրեն այն, որ իրր զինվորականները համոզել են թուրքական վարչապետին, Գլխավոր շտաբի պետ գեներալ Իսմայիլ Քարադային 1997 թ. փետրվարի մեկնել Թեյ-Ավիլ և նորից հաստատեց Թուրքիայի վճռականությունը Իսրայելի հետ ռազմական համագործակցության շարունակման հարցում: Այդ այցի ընթացքում արդեն քննարկվեց նոր հարց. ամերիկյան ծովուժի 6 նավերի մասնակցությամբ համատեղ ռազմա-ծովային գործողությունների իրականացման մասին: Իսրայելի հետ ռազմական համագործակցության հեռանկարների մասին խոսելիս Թուրքիայի Գլխավոր շտաբի պետը իսրայելցիներին հայտարարել է, որ Իսրայելի կողմից տրամադրված ռազմա-տեղեկատվությունը և խորալեյական ռազմական տեխնոլոգիաները Թուրքիան չի կսի և չի փոխանցի այլ երկրներին⁹:

Տարածաշրջանի երկու երկրների միջև ռազմական համագործակցության համաձայնությունը 1997 թ. հոկտեմբերին հարստացավ և մեկ պայմանավորվածությամբ. հրթիռների վերաբերյալ համաձայնագրով: Դա հնարավոր դարձավ այդ ամսվա ընթացքում Իսրայելի Գլխավոր շտաբի պետ գեներալ Ամնոն Լիպկին-Շահաթի Թուրքիա կատարած այցի շնորհիվ, որը հետզհետե ոչ միայն երկրի զինվորական ղեկավարության հետ, այլ նաև ընդունվեց նախագահ Ս. Դեմիրելի ու վարչապետ Մ. Յըլմազի կողմից: Թուրքական զինվորական արջուրներըց հայտնի դարձավ, որ "մի քանի ամիսների ընթացքում Թուրքիան և Իսրայելը քննարկել են նեռախար ազդեցության հիթիռների արտադրության հարցը"¹⁰: Ա. Շահաթի այցի ընթացքում կողմից իմնական ուշադրություն կենտրոնացրել էին 500 կմ շառավիղով ազդեցությամբ "Ռելիա" հրթիռների արտադրության վրա, որը կապված էր ռուսական արտադրության С-300 հրթիռների Կիպրոս առաքմանը պայմանավորված անհանգստության աճով, Իրաքից, Սիրիայից ու Իրանից հրթիռային հարվածների "վտանգավոր մակարդակի" հասած

սպառնալիքների հետ, ինչպես նաև տեղեկատվության հուսալի ուղիների պաշտպանման կապի արբանյակային համակարգի ստեղծման հետ: Թուրքիայի ՌՈՒՄ-ն «օդ-օդ» դասի Python-2 հրթիռների վաճառքի պատրաստակամություն հայտնեց նաև իսրայելական «Ռաֆայել» ընկերությունը¹⁰:

Որպես առավել կարևոր երկկողմանի ծրագրերից մեկը նախատեսվում էր ՀՀ-ի Մակահրթիռային պաշտպանության/ համակարգերի համատեղ արտադրության իրականացումը, որը կապված էր Միջին Արևելքի մի շարք երկրներում հրթիռային համակարգերի ի հայտ գալու առթիվ երկու երկրների ամհանգստության հետ: 1988 թ. ամերիկյան «Ռազմավարական պաշտպանական նախաձեռնություն» /ՌՊՆ/ ծրագրի աշխատանքների շրջանակներում IAI (Israel Aircraft Industries) ընկերությունը ԱՄՆ պաշտպանության նախարարությունից պատվեր ստացավ հրթիռա-զենիթային համակիրի մշակման, արտադրության ու թռիչքային փորձարկումների, մարտավարական քալիստիկ հրթիռների ոչնչացման ունակության փորձարկման համար, որը կրում էր Arrow անվանումը /իր հնարավորություններով այն առավել մոտ էր խորհրդային/ռուսական արտադրության C-300B հրթիռա-զենիթային համակիրին/, որը նախատեսվում էր Իսրայելում տեղադրել 1998 թ.-ից: Հետագայում Իսրայելը պլանավորում էր՝ Վաշինգտոնի համաձայնության պարագայում, Arrow հրթիռները կամ դրա կառուցելագործված Arrow-2 տարբերակը առաքել նաև Թուրքիա¹¹: Arrow հրթիռների առաջին համատեղ թռիչքը հաջողությամբ իրականացվեց 2001 թ. հունիսին՝ Թուրքիայի հարավ-արևելքում կայացած ամերիկա-իսրայելա-թուրքական եռակողմ Anatolian Eagle ռազմական զինավարժությունների ընթացքում¹²:

1997 թ.-ի սկզբին Թուրքիայի նախագահի հաստատումից հետո ուժի մեջ մտավ 670 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ /կարկի տոկոսների հաշվարկով՝ 800 մլն/ պայմանագիր, որը նախատեսում էր Phantom-2000 ծրագրով պլանավորված IAI ընկերության կողմից F-4E 54 ինքնաթիռների արդիականացումը: Բացի դրանց շահագործումը 20 տարով երկարաձեռն գործողությունները, նախատեսվում էր նաև բորտային սարքավորման փոխարինումը, իսրայելական արտադրության նոր EL/M-2032 ՈՒԿ-ի և Ե-դիտելեկտրոնային պայթարի սարքավորման տեղադրումը¹³, ինչպես նաև դրանց հազեցումը՝ «օդ-երկիր» AGM-142 «Popoye-1» հրթիռներով: Ծրագրի բարեհաջող իրականացման համար իսրայելական պաշտպանության նույնիսկ որոշում ընդունեց 430 մլն դոլար վարկի տրամադրման մասին: 1996 թ. զարմանք մի խումբ թուրք օդաչուներ նախապատրաստում անցան Իսրայելում նոր մադիլոկացիոն կայանների շահագործման վերաբերյալ, որոնք նույնատիպ են իսրայելական F-4-2000-երի վրա տեղադրվածների հետ¹⁴:

F-4E ինքնաթիռների արդիականացման 80 մլն դոլար արժողությամբ պայմանագրի շրջանակներում Իսրայելից գնվում են «Ռաֆայել» ընկերության արտադրության 46 Popoye-1 հրթիռներ՝ վերահազեցված F-4E ինքնաթիռների վրա տեղադրելու համար: 1999 թ.-ի հունվարին ուժի մեջ մտավ 130 մլն. արժողությամբ պայմանագիր սինգապուրա-իսրայելական կոնսորցիումի հետ՝ կազմված «Սինգապուրե Աեռուսիյա», IAI և «Էլբիտ» ընկերություններից, որը նախատեսում էր թուրքական F-5A/B 48 ինքնաթիռների արդիականացումը: Արդիականացման նախնական աշխատանքները կատարվում էին իսրայելական IAI ընկերության «Նախավ» ձեռնարկությունում: Նախագիծն ավարտվեց 2004 թ.-ին: F-5A ինքնաթիռներից առա-

ջին 4-ի արդիականացումը ինքնաթիռների նորոգման ու սպասարկման 1-ին կենտրոնում սկսվեց 2000 թ.-ի առաջին եռամսյակում: Իսրայելը շահագործված է նաև թուրքական T-34 և T-38 ուսումնական ինքնաթիռների արդիականացման մեջ: Ներկայումս Թուրքիայի ՌՈՒՄ-ի հրամանատարությունը մշակումը այդ ծրագրի հայեցակարգը՝ այդ ինքնաթիռների շահագործումը մինչև 2015 թ.-ը երկարաձեռն նախատեսվում է:

1998 թ.-ի դեկտեմբերին Թուրքիայի արտաքին քաղաքականության հարցերով խորհրդականի աշխատակազմը «Ջեներալ Ատոմիկ» /ԱՄՆ, IAI /Իսրայել/ և CATIC /Չինաստան/ ընկերություններից առաջարկ ստացավ առանց օդաչու թռչող երեք տիպի 37 սարքերի Թուրքիայում համատեղ արտադրության մասին՝ մոտակա շառավիղով ազդեցությամբ - 14 միավոր, միջին - 8 միավոր և հեռավոր - 15 միավոր: Ապագա պայմանագրի թուրքական կողմի համակատարողներն էին TAI և «Սեսլան» ընկերությունները: Սպասվում էր, որ 750 մլն. դոլար արժողությամբ այս նախագիծը կիրականացվի 2000 թ.-ից 7 տարվա ընթացքում¹⁵: Իսրայելական «SimiGon» ընկերության կողմից մշակվել է կրծանալիքների օդաչուների ուսուցման վարժական համակիր, որի արտադրության պատվեր իսրայելական ընկերությունը ստացել է նաև Թուրքիայի ՌՈՒՄ-ի կողմից¹⁶:

Իսրայելական «Ռաֆայել» ընկերության հետ համատեղ թուրքական «Միկես» և ՌուկետՍան» ընկերությունները նախատեսում են F-16 և F-4 ինքնաթիռների համար արտադրել 100 հատ «օդ-երկիր» դասի (ASM) Popoye-2 հեռահար շառավիղով ազդեցության /150 կմ/ կառավարվող հրթիռներ: 200 մլն. դոլար արժեքով համապատասխան պայմանագիրը ստորագրվել է 1999 թ.-ի հունիսին¹⁷:

2000 թ.-ի մարտ-հունիս ամիսներին Թուրքիայի պաշտպանության նախարարությունը իսրայելական IMI ընկերության հետ նախնական պայմանավորվածություն ձեռք բերեց /առանց տեղեղի հայտարարման/ 170 մլն. դոլար արժողությամբ M-60 160 տանկերի արդիականացման վերաբերյալ: Համաձայնագրով նախատեսվում էր Իսրայելի կողմից թուրքական կողմին փոխանցել բոլոր անհրաժեշտ տեխնոլոգիաները: Մինչև 2003 թ. պլանավորվում էր արդիականացնել ընդամենը 600 տանկ: Սակայն, ԱՄՆ կառավարության և մի շարք ընկերությունների ճնշման տակ այդ որոշումը փոփոխվեց՝ հայտարարվեց M-60 տանկերի արդիականացման միջազգային տեղերը: Սպասվում էր, որ այս տեղեղնում հաղթանակ կտանի ամերիկա-թուրքական FNSS ընկերությունը¹⁸:

Պաղեստինյան Ինքնավարությունում Իսրայելի գործողությունների նկատմամբ համաշխարհային հանրության բացասական վերաբերմունքը, ռազմական պայմանագրերի կատարման տեսակետից անհարմար դեպ կորուստների կամ հետաձգումների պատճառ հանդիսացավ Իսրայելի համար.

1. 2001 թ.-ի հուլիսին ժամանակակից ուղղաթիռների գնման 4,5 մլրդ արժողությամբ տեղերը Թուրքիան հանձնեց «Bell Textron» ընկերությանը՝ մերժելով Ka-50/52 ուղղաթիռների համատեղ առաջարկը IAI /Իսրայել/ և «Կամով» /Ռուսաստան/ ընկերությունների կողմից:

2. Չիլիելով ԱՄՆ քողոքներին, Անկարան փոխեց իր որոշումը IMI (Israel Military Industries) ընկերությանը թուրքական M-60 տանկերի նորացման ծրագրով՝ ամերիկյան ընկերությունները շրջանցելով, 1 մլրդ դո-

լարի տրամադրման մասին:

3. 2001 թ.-ի օգոստոսին Թուրքիան վերականգնեց միջազգային առաջարկությունների տեմդերը, համաձայն որի IAI-ը Թուրքիային պետք է վաճառեր Ofeq-3 լուսեսարքայակներ՝ 274 մլն. դոլար արժողությամբ¹⁹:

Սակայն, 2002 թ.-ին նորից տեղեկություններ հայտնվեցին, որ Թուրքիայի կառավարությունը՝ չնայած պաղեստինցիների հետ կապված հացերով Իսրայելի հետ համագործակցության դեմ ուղղված խլամիստների բողոքներին, որոշել է շարունակել իսրայելական ընկերությունների կողմից բուրքական M-60A1 տանկերի արդիականացման ծրագրերը՝ 688 մլն. դոլար արժողությամբ²⁰:

Իսրայելա-բուրքական ռազմատեխնիկական համագործակցության ծրագրերի շարքում պահանջարկում է ուղղաթիռների ձեռքբերում, որոնք բուրքական բանակի կողմից օգտագործվում են քրդերի դեմ պայքարում, ինչպես նաև CA-7 և Stinger հրթիռների դեմ պաշտպանության «Գիտար» համակարգի ձեռքբերում: Նախկինում այդ ուղղաթիռները համարված էին զիջելային տեսողության համակարգերով: Այս որոշումն ընդունվել է այն բանից հետո, երբ քրդաբնակ շրջաններում ոչնչացվել էին AH-1W Super Cobra և AS-532 Cougar տիպի երկու ուղղաթիռներ, ինչպես նաև 17 բուրք զինծառայողներով 1 S-70A ուղղաթիռ²¹:

Բացի այդ, Իսրայելը մրցակցում է թուրքական բանակում ներկայումս օգտագործվող G-3 հրացանները նոր հրազենով /5,56 մմ կալիբրի/ փոխարինելու պայմանագրի համար: Թուրքիան վարուց էր պահանջարկում ձեռք բերել հեռահար ռադիոլուկացիոն հայտնաբերման ինքնաթիռներ /ՀՆՀ/: Այս առթիվ բացված աճուրդի ժամանակ Իսրայելը ներկայացրել է ինքնաթիռ, որը համարված է Phalcon համակարգով, ընդ որում, նման 4 ինքնաթիռների համար տրամադրվում է 800 մլն. դոլար:

Առանձնահատուկ նշանակություն ունի նաև ռազմա-տրադեզիական հետազոտությունների համատեղ իրականացումը: "Սպառնալիքի գնահատում" հասկացությունը երկկողմանի համագործակցության կարևորագույն տարրն է: Սպառնալիքների գնահատման աշխատանքները միավորվել են "Սպառնալիքի հայեցակարգ - 2000" ընդհանուր անվան տակ: Երկու կողմն էլ տվյալ աշխատանքները վարում են Միջին Արևելքում փոփոխվող իրախճակին համապատասխան, կազմակերպված բրիֆինգների ժամանակ հիմնական ուշադրությունը իրավիճակում է Միջին Արևելքում: Երկու երկրների վերաբերվող հետախուզական տեղեկատվության փոխանակումը շարունակվում է ամենաբարձր մակարդակով: Բացի այդ, տարվում են մշտական ու սերտ շփումներ առաջատար վերլուծական և հետազոտական կազմակերպությունների միջև, որոնք զբաղվում են տարածաշրջանային անվտանգության և արտաքին քաղաքականության խնդիրներով, մասնավորապես իսրայելական Բեզիե-Սադաթ Ռազմավարական Հետազոտությունների Կենտրոնի /The Begin - Sadat Center for Strategic Studies - BESA/, ԱՄՆ-ում գտնվող Ազգային Անվտանգության Հիմնախնդիրների Հրեական Ինստիտուտի /Jewish Institute for National Security Affairs - JINSA/, Անկարայում գտնվող թուրքական Եվրասիական Ռազմավարական հետազոտությունների կենտրոնի /Center for Eurasian Strategic Studies- ASAM/ միջև: Այդ շփումներում առանձնահատուկ կարևոր նշանակություն ունի նաև Սերբավորարևելյան քաղաքականության Կաշինգուոնի

Ինստիտուտը, որը մեծ ազդեցություն ունի այդ տարածաշրջանի հիմնախնդիրների շուրջ քաղաքականության ու հասարակական կարծիքի ձևավորման ու լուսարձանման վրա ինչպես ԱՄՆ-ում, այնպես էլ դրա սահմաններից դուրս²²:

ԱԶԵՐՅՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱԾԱԵՐԳԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀՐԱՆԱՆԻՐՈՒՄԵՐԻ ԿՐԱ

Երկկողմանի համագործակցության ձևավորման զագաթնակետին ինչպես պաշտոնատար անձինք, այնպես էլ վերլուծաբանները Թուրքիայում և Իսրայելում նշում էին, որ երկու երկրների միջև հարաբերությունները չեն հանդիսանում ռազմական միություն՝ իր ավանդական հասկացությամբ. չեն պարունակում casus foederis, այսինքն դրույթներ այն մասին, թե կողմերից մեկի նկատմամբ մարտական գործողությունները պարտադիր պայման չեն հանդիսանում մյուս կողմի համար պատերազմի կամ մարտական գործողությունների մեջ ներգրավվելու համար: Ինչպես նշվում էր թուրքական և իսրայելական հետազոտողների կողմից, Իսրայելի և Թուրքիայի միջև հարաբերությունները հանդիսանում էին ռազմավարական գործընկերություն, սակայն, միևնույն ժամանակ այդ ռազմավարական գործընկերությունը, իրենց կարծիքով, ծառայում էր ոչ միայն ուժերի հավասարակշռության պահպանմանը, քանի որ կողմերից յուրաքանչյուր օժտված էր այն անհրաժեշտ ռազմական հզորությամբ, որպեսզի տարածաշրջանում միայնակ ապահովի սեփական անվտանգությունը: Դրանք "status quo powers" բնույթի հարաբերություններ էին, որոնք չէին ցանկանում արմատական աշխարհաքաղաքական փոփոխություններ տարածաշրջանում²³:

1990-ականների վերջերին Իսրայելի պաշտպանության նախարար Իցխակ Սորոբիխայն անվանեց իսրայելա-թուրքական այսանի պոտենցիալ հակառակորդներին և այսպեսներին՝ "Եթե Իրանի, Իրաքի ու Սիրիայի նման երկրները մտածում են, թե իրանց ուժերը կարող են օգտագործել Թուրքիայի դեմ, ապա նրանք պետք է ի նկատի ունենան, որ Թուրքիայի թիկունքին կանգնած են միացյալ ուժեր: Այդ ուժերի աստարման պարագայում ոչ ոք և ոչինչ չի կարող անել Թուրքիայի հետ: Ռազմավարական իրավիճակը ես քննարկել եմ ԱՄՆ պաշտպանության նախարար Ու. Կոն-նի հետ: Նույն ռազմավարական խնդիրները մենք դիտարկել ենք պետքարտուղար Օլբրայթի և ԱՄՆ Սիացյալ շտաբի պետի հետ: Մենք ի վիճակ ենք միասին աշխատելու այդ տարածաշրջանում ցանկացած պատեսալիքի դեմ..."²⁴: Դետք է նշել, որ թե՛ իսրայելցիները, և թե՛ թուրքերը երկու երկրների ռազմավարական գործընկերության ռազմական առումով գլխավոր նպատակը համարում էին այն, որ իրենց դաշինքը զսպիչ դերակատարություն ունի երկու երկրներից յուրաքանչյուրի նկատմամբ պատերազմի սանձահարման ժամանակ:

Գործնականում ամբողջ արաբական աշխարհը մտահոգված էր Թուրքիայի և Իսրայելի միջև ռազմաքաղաքական դաշինքն ձևավորմամբ: Սակայն, յուրաքանչյուր արաբական երկրի մտահոգության աստիճանը տատանվում էր՝ կախված Անկարայի ու Թել-Ավիվի հետ այդ երկրի հարաբերությունների լարվածության մակարդակից: Ընդունված է համարել, որ 1990-ականների վերջից Թուրքիայի և Իսրայելի միջև ռազմաքաղաքական

համագործակցությունը առաջին հերթին ուղղված էր Սիրիայի դեմ /և միայն վերջին տարիներին՝ իրանական միջուկային ծրագրի զարգացման հետ համընթաց, երկու երկրների միջև համագործակցության վրա ավելի մեծ ազդեցություն սկսեց գործել Իրանի գործոնը/։ Չխորանալով թուրք-սիրիական հարաբերությունների պատմական անցյալի մեջ, նշենք միայն, որ հատկապես Իսրայելի հետ դաշինքը, ինչպես ենթադրում են շատ վերլուծաբաններ, գլխավոր փաստարկ հանդիսացավ Սիրիայի վրա կոչու ու հաջողված ճնշման ժամանակ 1998 թ.-in, երբ սիրիական նախագահ Հաֆեզ Ասադը ստիպված էր առանց այդ էլ թուրքականին զիջող իր սեփական գործերը պահել երկու ճակատում, և արդյունքում կատարել թուրքական պահանջները՝ արտաքսել քրդական առաջնորդ Աբդուլլա Օջալանին և փակել Սիրիայի տարածքում գտնվող նրա կազմակերպության հենակայանները /Kurdistan Workers Party – PKK²⁵։ Այս ճգնաժամը ցույց տվեց, որ սիրիական բանակի և վիճակի չէ լուրջ ուժ առաջ քաշել ոչ թուրքական, ոչ էլ իսրայելական բանակին դիմակայելու համար և հիմքեր տվեց թուրքական զինվորականներին հուսալու, որ նրանք հետագայում ևս ուժային դիրքերից կարող են լուծել Սիրիայի հետ կապված խնդիրները²⁶։ Սակայն, ինչ վերաբերվում է Սիրիայի և Իսրայելի միջև խաղաղության հաստատման հեռանկարներին /թեկուզ և խիստ հեռահար/, ապա Թուրքիան անհամաձայնացած էր նրանով, որ Սիրիայի ու Իսրայելի միջև խաղաղության հաստատումը հակասում էր իր շահերին և կարող էր ստիպել ԱՄՆ-ին Սիրիան բացառել ախաբեկությունը սատարող երկրների ցանկից չնայած վերջինիս շարունակվող շփումները PKK-ի հետ /ըստ թուրքերի/²⁷։ Սակայն, ինչպես հայտնի է, 2003 թ.-ին Իրաքի պատերազմը և դրան հաջորդած իրադարձությունները զգալիորեն փոխեցին մերձավորարևելյան քաղաքականության ամբողջ պատկերը, ինչի հետ կապված էլ անիրական դարձավ իսրայել-սիրիական հիպոթետիկ հաշտության հավանականությունը։

Ըստ արաբական փորձագետների պնդումների, 2002 թ. գարնանը և ամռանը Իսրայելի և Թուրքիայի Ղլխավոր շտաբերը մշակել են Սիրիայի դեմ համատեղ մարտական գործողությունների նախագիծ՝ Իրաքի դեմ ԱՄՆ-ի մարտական գործողությունների շրջանում Սիրիայի և Իրանի հավանական ակտիվացման դեպքում, որոնք կարող էին սպառնալիքի տակ դնել Թուրքիայի և Իսրայելի անվտանգությունը։ Միևնույն ժամանակ նշենք, որ իրաքյան պատերազմի նկատմամբ Թուրքիայի առավել զսպված դիրքորոշումը ստիպեց նրան այդ պահին գնալ որոշակի մերձեցման Սիրիայի հետ հարաբերություններում։ Որպես օրինակ ծառայեց մի իրադարձություն, որը կարծես թե կարող էր շուկուններ մտցնել Թուրքիայի ու Իսրայելի համագործակցության և տարածաշրջանային անվտանգության հեռանկարներում։ 2002 թ.-ի հունիսի 19-ին Սիրիայի Ղլխավոր շտաբի պետ գեներալ Հասան ալ Թուրքմունդին առաջին պաշտոնական այցը ատարեց Թուրքիա։ Իսկ արդեն 2002 թ.-ի նոյեմբերին Թուրքիան և Սիրիան արաբ-թուրքական հարաբերությունների պատմության մեջ առաջին անգամ /թեք չհաշվենք 1955 թ. Բաղդադի պակտը/ պայմանագիր ստորագրեցին ռազմական համագործակցության մասին։ Գտնում են, որ այդ պայմանագրի ստորագրման մեջ ոչ պակաս կարևոր դեր է ունեցել ԱՄՆ-ի դիրքորոշումը, որը Իրաքում նախատեսվող գործողության նախօրինի շահագրգռված էր երկու երկրների միջև հարաբերությունների մեղմման մեջ։

Սակայն, սույալ համաձայնագիրը չի կրում ոչ միայն ռազմավարական գործընկերության բնույթ, այլ նույնիսկ չի ենթադրում լուրջ ռազմա-տեխնիկական համագործակցություն և ունակ չէ ցուցաբերել որևէ լուրջ ազդեցություն տարածաշրջանի ռազմա-քաղաքական իրավիճակի ու անվտանգության հեռանկարների վրա, չնայած ընդհանուր առմամբ նպաստում է երկու երկրների միջև լարվածության որոշակի մեղմմանը²⁸։ Միաժամանակ կարծիքներ հնչեցին այն մասին, որ դա կարող է անդրադառնալ Թուրքիայի և Իսրայելի միջև հարաբերությունների մակարդակի վրա։

Արաբական մնացած երկրները, մասնավորապես Եգիպտոսը, Լիբիան, Լիբանանը, Սաուդյան Արաբիան և այլքը, նույնպես լրջորեն մտահոգված էին թուրք-իսրայելական դաշինքով, և այդ երկրների առաջնորդները բազմիցս հանդես էին գալիս այդ դաշինքի դատապարտումներով և դրան հակազդող միավորման ստեղծման կոչերով։ Առանձնապես ակտիվորեն իր դիրքորոշումն արտահայտում էր սաուդյան Իրաքը, որը մի կողմից փորձում էր դրանով լուծել սեփական անվտանգության խնդիրները, իսկ մյուս կողմից, նշված դաշինքի ստեղծման հնարավորությունը օգտագործել միջազգային մեկուսացումից դուրս գալու նպատակով։ Սակայն, մինչ օրս այլ ընտրանքային դաշինքի ստեղծման, ինչպես արաբական երկրների, այնպես էլ թուրք-իսրայելական դաշինքով մտահոգված տարածաշրջանային այլ պետությունների թվով փորձերը հաջողությամբ չեն պսակվել։ Իրաքի դեմ ԱՄՆ-ի և դաշնակիցների կողմից տարվող ռազմական գործողություններով պայմանավորված արմատական փոփոխությունները Սիրիայի Արևելքում դեռևս հնարավորություն չեն տալիս որոշակիությամբ խոսել նման դաշինքի ձևավորման հեռանկարների մասին։

Արաբական երկրների թվում առանձնանում է Հորդանանի դիրքորոշումը։ Հաշիմիտների թագավորությունը, Իսրայելի հետ իր առանձնահատուկ հարաբերություններով, բազմիցս ցանկություն է հայտնել համագործակցելու պաշտպանության ոլորտում ինչպես Թեյ-Ավիվի, այնպես էլ Անկարայի հետ։ Մշակվում են երեք երկրների ռազմա-տեխնիկական համագործակցության նախագծեր, ինչպես նաև տարվում են խորիրոգավորություններ անվտանգության հիմնախնդիրների շուրջ, ինչը հավանաբար կարող է թուրք-իսրայելական դաշինքի ձևաչափի փոփոխման հիմք հանդիսանալ։ Հնարավոր է, որ տարածաշրջանային անվտանգության հիմնախնդիրների վրա թուրք-իսրայելական դաշինքի ազդեցությունը վճռորոշ տարրերից մեկը հանդիսանում է Իրանի նկատմամբ երկու երկրների կողմից համատեղ վարվող քաղաքականությունը։ Դա ուղակիորեն կապված է ինչպես տարածաշրջանում միջուկային զենքի չտարածման հիմնախնդրի, այնպես էլ Իսրայելի կողմից կանխարգելիչ միջուկային հարվածի հավանականության հետ, եթե Իրանի մոտ ի հայտ գա նման զենքի ստեղծման ներուժը²⁹։ Ինչպես նշում են փորձագետները, նման պարագայում առավել հնարավոր է Իսրայելի կողմից ՌՕՌ-ի օգտագործումը, որոնք Սիջին Արևելքում համարվում են առավել հզորը, հատկապես ամերիկյան արտադրության F-151 նոր ինքնաթիռներով համալրումից հետո։

Այս ենթատեսքտում հատուկ նշանակություն ունի Իսրայելի և Թուրքիայի ռազմա-քաղաքական համագործակցությունը, մասնավորապես կողմերի ՌՕՌ-ի զորավարությունների իրականացումը, այդ թվում Թուրքիայի ու Իսրայելի օդային տարածքներում երկու երկրների ինքնաթիռների

համատեղ վարձակաճ թռիչքները, որոնց հաճախականությունը կազմում է տարին 4 անգամ՝ 1-ական շաբաթ տևողությամբ: Չունենալով են, որ նման զորավարությունների իրականացումը թուրք օդաչուներին հնարավորություն կտա ծանոթանալ մարտական վարձակաճների և ժամանակակից պայմաններում մարտական գործողությունների կառավարման իսրայելական համակարգի հետ: Իր հերթին, իսրայելցի օդաչուները փորձ ձեռք կբերեն ցածր բարձրության վրա լեռնային պայմաններում հետադարձ չվերթներ կատարելու տեսակետից: Որոշ արևմտյան հետազոտողներ նույնիսկ 2000-ականների սկզբին պնդում էին /մի գուցե նաև որոշ գերազնահատմամբ/, որ Իսրայելը դեպի Թուրքիա ավելի շատ հնարավորություններ ունուկ ունի, քան ՆԱՏՕ-ի Անկարայի դաշնակիցները³⁰:

Ենթադրվում է, որ տվյալ փորձը հաշվի է առնվելու իսրայելական օդաչուների կողմից /ընդ որում, իսրայելցիների կողմից առավել հավանական է F-16C/D/1 և հատկապես նորագույն F-151 ինքնաթիռների օգտագործումը/ Իրանի տարբեր օբյեկտները հրթիռակոծելու ժամանակ՝ թուրքական օդային տարածքի օգտագործմամբ³¹:

Քայի այդ, առանձնահատուկ նշանք, որ նման զորավարությունները Թուրքիայի երկնքում վերջերս արդեն կրում են եռակողմ բնույթ՝ ԱՄՆ-ի ՈՕՈՒ-ի ինքնաթիռների մասնակցությամբ: Թուրքիայի հարավ-արևելքում կայացած «Anatolian Eagle» անվանումով այդ զորավարություններում միայն 2001 թ.-ի ապրիլ, հունիս և սեպտեմբեր ամիսներին մասնակցել են ավելի քան 90 մարտական ինքնաթիռներ³²: Լյնպես որ, պետք է հաշվի առնել նաև ԱՄՆ-ի կողմից իսրայելցիներին ցուցաբերվող տեխնիկական և տեղեկատվական աջակցության հնարավորությունը, եթե ԱՄՆ-ի Իրանի վրա օդային հարձակում գործի՝ օգտագործելով Թուրքիայի օդային տարածքը:

Լյս հանգամանքի իրատեսության մասին է վկայում այն, որ դեռևս 1998 թ.-ին Իրաքի դեմ օդային գործողությունների ժամանակ ԱՄՆ-ում թուրքական դեսպանը հայտարարել է, որ Թուրքիան քննարկել է պատասխան «հատուցման» հարված հասցնելու համար Իսրայելին թուրքական օդային տարածք տրամադրելու հարցը՝ Իսրայելի վրա իրաքյան հրթիռներ արձակելու դեպքում: Բնական է, որ Իրանի պարագայում խոսքը կարող է գնալ ոչ միայն «հատուցման» մասին, այլ նաև կանխարգելիչ հարվածի մասին: Ընդ որում, իսրայելցիները կարող են հարվածներ հասցնել ոչ միայն Իրանի միջուկային ենթակառուցվածքների օբյեկտներին, որոնք, ըստ իրենց կարծիքի, անմիջականորեն առնչվում են մեծիարհի կողմից ՉՈԶ-ի /գանգվածային ոչնչացման գեներ/ մշակմանը, այլև հրթիռային ու այլ դիրքերին: Իսրայելցիները, օգտագործելով թուրքական տարածքը, կարող են նաև Իրանի տարածքից հրթիռների արձակման մասին վաղ տեղեկացում ապահովել: Իսրայելի համար կարևոր է նաև այն, որ Թուրքիայի օդային տարածքը կարող է օգտագործվել ոչնչացված ինքնաթիռների օդաչուներին որոնման ու փրկման համար, վնասված իսրայելական ինքնաթիռների վայրէջքի համար և Իրանի դեմ գործող հատուկ նշանակության զորախմբերի տեղակայման համար³³:

Թեհրանի տեսանկյունից իսրայելա-թուրքական ռազմավարական համագործակցությունը սպառնալից է ներկայացնում Իրանի անվտանգության համար նաև այն առումով, որ դա թուլացնում է տարածաշրջանում

իրանյան միակ լուրջ գործընկերոջ՝ Սիրիայի դիրքերը և էապես խախտում է ուժերի առկա հարաբերակցությունը Մերձավոր Արևելքում³⁴:

Ինչպես նշում է դաշինքի գաղափարախոսներից մեկը՝ թուրք գեներալ Չ. Բիրը, դաշինքի կարևոր բաղկացուցիչներից մեկը՝ քաղի ՉՈԶ-ի տարածման հիմնախնդիրը, հանդիսանում է ահաբեկչության դեմ պայքարը, որի տակ Թուրքիան հասկանում է ջրդրի դեմ տարվող պատիչ գործողությունները³⁵: Այդ հարցում կողմերի շահերը ոչ ամբողջությամբ են համընկնում, քանի որ Իսրայելը երկար ժամանակ աջակցում էր Հյուսիսային Իրաքի քրդերին՝ իրաքյան իշխանությունների դեմ պայքարում: Սակայն Իսրայելի անվտանգության քաղաքականության փոփոխվող գերակայությունները ստիպեցին նրան վերանայել վերաբերմունքը քրդերի նկատմամբ: Դա վառ կերպով դրսևորվեց Լիբանանի Բեքաա հարթավայրի հյուսիսում PKK-ի դեմ իսրայելական ՈՕՈՒ-ի «Ցառումի ողկույզներ» գործողության ընթացքում, ինչպես նաև քրդերի առաջնորդ Ա. Օջալանի գործվելու վայրի պարզաբանման ու նրա ձերբակալման հարցում իսրայելական հետախուզության կողմից ցուցաբերված աջակցության մեջ: Իրավիճակը կրկին փոփոխվեց 2003-2004 թթ.-ին Իրաքի հյուսիսում քրդական կայանավայր ինքնավարության ձևավորումից հետո, որը օգտվում է Իսրայելի ուղղակի աջակցությունից:

Մեր կողմից ուսումնասիրվող հիմնախնդրի կարևոր կողմերից մեկը հանդիսանում է Թուրքիայի ու Իսրայելի դաշինքի նկատմամբ Հունաստանի վերաբերմունքը: Դեռևս 1994 թ.-ի դեկտեմբերին Իսրայելի և Հունաստանի միջև համաձայնագիր է ստորագրվել ռազմական համագործակցության մասին, իսկ արդեն 1997 թ.-ի հունվարին համաձայնություն է ձեռք բերվել իսրայելական «Էլբիթ» ընկերության կողմից հունական 39 F-4E ինքնաթիռների արդիականացման մասին /նոր սարքավորումների տեղադրում, մասնավորապես APG-65 ՈՒՎ-րի/³⁶: Սակայն երկու երկրների միջև ռազմա-քաղաքական հարաբերությունների հետագա խորացումը կասեցվեց Իսրայելի ու Թուրքիայի միջև ռազմաքաղաքական համագործակցության զարգացմամբ, ինչն անմիջապես առաջ բերեց Լյնքնի դժգոհությունը: Ինչպես նշել է Հունաստանի արտգործնախարար Պանգալուրը. «Դա սխալ դաշինք է, որը մեզ վերադարձնում է սառը պատերազմի ժամանակաշրջան... Մենք չենք ուզում, որ այդ երկու երկրների միջև համագործակցությունը ներգործի Իսրայելի, Հունաստանի և Կիպրոսի միջև հարաբերությունների վրա»: Որպես թուրք-իսրայելական դաշինքին հավակնչու կազմված Հունաստանի և Եգիպտոսի միջև պակտին ի պատասխան՝ Թել-Ավիվը Հունաստանին առաջարկեց Միջերկրական ծովում իրականացնել համատեղ ռազմա-ծովային զորավարություններ /իսրայելա-թուրքական ու եռակողմ համատեղ գործողություններ/՝ հորդանանյան դիտողների մասնակցությամբ, կամ թուրք-իսրայելա-ամերիկյան Reliant Mermaid զորավարությունների օրինակներով: Սակայն, ավելի ուշ Իսրայելը ետ կանգնեց այդ մտադրությունից, որպեսզի չառաջացնի թուրք գործընկերների դժգոհությունը: Սակայն հույները չեն ցանկանում սրել իրավիճակը: Հունաստանի փոխարտգործնախարար Կրանիդիոտիսը նույնիսկ նշել է, որ պաշտպանության ոլորտում հարաբերությունները Իսրայելի հետ զարգանում են, և այն ներառում է հետախուզական տեղեկատվության փոխանակումը: Հունաստանը հետաքրքրություն է ցուցաբերում նաև իսրայելա-

կան սպառազինության նկատմամբ, սակայն դրանց գները դեռևս շահավետ են հունական կողմի համար³⁷:

Սակայն փորձագետները գտնում են, որ ռազմավարական առումով խրայելա-թուրքական ռազմատեսենիկական համագործակցությունը էական սպառազին չէ ներկայացնում Հունաստանի և Կիպրոսի անվտանգության համար: Դրա օրինակ է հանդիսանում մասնավորապես դեպի Թուրքիա իրայելական սպառազինության առաքման հավանական նախագծերից մեկը՝ անօդաչու օդային միջոցները, որոնց արտադրության հարցում Խրայելը՝ հավանաբար աշխարհում գրավում է առաջին տեղը³⁸: Դրանց կիրառումը կբարձրացնի թուրքական զինված ուժերի հնարավորությունները Թուրքիայի հարավ-արևելյան սահմանի երկայնքով, ինչպես նաև Արևելյան Միջերկրածովյան գոտում: Բազմից տեղեկություններ են հայտնվել նաև այն մասին, որ թուրքական օդաչուներն իրենց ունակությունները կատարելագործել են Հունաստանի և Կիպրոսի սպառազինության մեջ գտնվող ՀՕՊ-ի /հակաօդային պաշտպանության/ համակարգերի դեմ պայքարի ոլորտում՝ օգտագործելով իրենց իսրայելցի գործընկերների փորձը և Խրայելի տարածքում գտնվող օդակայաններն ու հենակայանները³⁹:

Թուրքիան ավելացրել է Խրայելից ձեռք բերվող «օդ-երկիր» դասի Poyeye-1 իրթիների քանակը 100-ից մինչև 200 միավոր: Այդ մոդելի զարգացած տարբերակը՝ Poyeye-2-ը առանձնահատուկ արդյունավետ է, ինչպես գտնում են փորձագետները, Կիպրոսի կողմից ձեռքբերված ՀՀՀ C-300-ի դեմ: Նախագծի ընդհանուր արժեքն է 500 մլն. դոլար: Եվս մեկ համատեղ գործարք է հանդիսանում «Դելիլա» հեռահար իրթիների արտադրությունը /ըստ իսրայելական լիցենզիայի/, որոնք անհրաժեշտ են Թուրքիային Իրանի և Միդիայի աճող իրթիառյան սպառնալիքի՝ հետ կապված, սակայն դրանք ակտիվորեն կարող են օգտագործվել նաև Հունաստանի դեմ գործողություններում³⁹:

Աճում է Խրայելի և Թուրքիայի միջև ռազմածովային համագործակցության ազդեցությունը Միջերկրական ծովի գոտում տարածաշրջանային անվտանգության հեռանկարների վրա: Չնայած մինչև վերջերս իսրայելական ՌՕՌ-ն հանդիսանում էր երկրորդական նշանակության զորատեսակ, սակայն ապագայում դրանց նշանակությունը կաճի, առաջին հերթին սպառազինության մեջ Dolphin դասի դիզելային սուզանավերի ներառման հետ կապված /գերմանական 212 նախագիծ/, որոնք նախատեսվում է հագծելու ծովային հենակայանան քաղհատիկ իրթիներով: Արևելյան Միջերկրածովյան գոտում ամենաուժեղ թուրքական ՌՕՌ-ն կարող է իրականացնել այդ սուզանավերի պաշտպանությունը, իսկ Թուրքիայի նավահանգիստները կարող են ծառայել որպես լրացուցիչ հենակայաններ, ինչը, ի նկատի ունենալով Խրայելի սահմանափակ տարածքները, թույլ կտա մեծացնել դրանց կենտրոնակայանները և հնարավոր կդարձնի երաշխավորված պատասխան հարվածի իրականացումը՝ Խրայելի նկատմամբ միջուկային կամ զանգվածային ուղեւազման այլ զենքի կիրառման պարագայում⁴⁰:

Բացի այդ, հավանական են Միդիայի ծովային շրջափակման ուղղված գործողությունները /ինչը լիովին հնարավոր է՝ հաշվի առնելով սիրիական ՌՕՌ-ի սահմանափակ ներուժը/, ինչպես նաև Խրայելի ծովային հաղորդակցական ուղիների անվտանգության ապահովումը թուրքական և իսրայելական նավատորմերի համատեղ ջանքերով: Ընդ որում, նշված գործո-

ղությունները պարտադիր չէ, որ կրեն Խրայելի ու Թուրքիայի ուղղակի մարտական համատեղ գործողությունների բնույթ, սակայն կմեծացնեն հավանական թշնամիների դեմ զայից գործողությունների հնարավորությունները: Այդ ամենը հատկապես կմեծացնի Խրայելի ռազմավարական զսպման ներուժն ու ձկուտությունը, որը, բնականաբար, էական ազդեցություն կունենա տարածաշրջանային անվտանգության վրա:

1990-ականների երկրորդ կեսից աճում էր Խրայելի ու Թուրքիայի դեղը հետխորհրդային տարածքում: Ընդ որում, երկու երկրներն ունեն խաչվող շահեր, կայ թվում նաև Իրանի ազդեցության ուժեղացման անուղյալորելիությունը, հատկապես էներգոնետիկայի տեղափոխման հարցում, կենտրոնահավակն երկրներում իսլամական ֆունդամենտալիզմի գաղափարների տարածման և այլ հարցերում: Անվտանգության ոլորտում Թուրքիայի ու Խրայելի շահերի շատ առումներով համընկնում են նաև ԱՄՆ-ի հետ:

Սակայն, եթե նախկինում գտնում էին, որ Խրայելն օգտագործում է Թուրքիային Կենտրոնական Ասիայի երկրներում ու Ադրբեջանում իր շահերի ուժեղացման համար, ապա վերջին տարիներին դիտվում է տարածաշրջանում իսրայելական ինքնուրույն քաղաքականության ակտիվացում, այդ թվում նաև ռազմա-քաղաքական ոլորտում: Դաշինքի վճռորոշ նշանակությունը տարածաշրջանում այսօրնավորված է նրանով, որ Խրայելը ակտիվորեն աջակցում էր Ադրբեջանին Լեռնային Ղարաբաղի պատերազմում, ինչը դրսևորվում էր հետախուզական հատուկ ծառայությունների ամրապնդմամբ, արդեբջանական բանակին սպառազինության տրամադրմամբ⁴¹: Բնական է, որ Թուրքիան և իրականացնում է խիստ սերտ ռազմա-քաղաքական համագործակցություն Ադրբեջանի հետ ամենատարբեր ոլորտներում՝ սկսած ուսուցումից և համատեղ զորավարություններից, մինչև սպառազինության ու մարտական տեխնիկայի տրամադրումը: Սամնավորապես արդեն հաստատվում է Թուրքիայի ու Խրայելի կողմից Ադրբեջանին «Ստիճգե» ՀՀՀ-ի և այլ սպառազինության տրամադրման հանգամանքը, որոնց համար Ադրբեջանը ամենաուսույն գործընկերն էր հետխորհրդային տարածքում⁴²:

Ինչպես նշում են արդեբջանական հետազոտողները, Թուրքիայի, Խրայելի և Ադրբեջանի մասնակցությամբ ետակի ռազմաքաղաքական միության ստեղծման գաղափարը, որի հետևում, իրենց իսկ խոստովանմամբ, նկատվում է «Կաշինգտոնի սովելը», առանձնահատուկ ընդունման է արժանանում արդեբջանական հասարակության կողմից: Գտնում են, որ այս հարցը առավել արդիականություն ստացավ 1999 թ.-ի սկզբից, երբ Բաքու այցելեց Խրայելի պաշտպանության փոխնախարար գեներալ էֆրաիմ Սենելը, որը միաժամանակ հանդիսանում է ամերիկա-արդեբջանական-իսրայելական միջխորհրդարանական բարեխաղաղության խմբի իսրայելական կողմի նախագահը, որը ստեղծվել է դեռևս 1998 թ.-ի Ի. Ալիևի ԱՄՆ կատարած այցի ժամանակ: Էֆրաիմ Սենել մի շարք հանդիպումներ ունեցավ Ադրբեջանի պաշտոնատար անձանց հետ, այդ թվում նաև նախագահ Շեյդադ Ալիևի հետ, որոնց ընթացքում քննարկվել են երկկողմանի համագործակցության ու տարածաշրջանային հիմնախնդիրների անցվող տարբեր հարցեր: Ավելի ուշ կայացան այլ այցելություններ, հանդիպումներ ու խորհրդատվություններ Խրայելի ու Ադրբեջանի պաշտոնյաների միջև:

Կնուտանեայնով, մոտ ապագայում երեք պետությունների ռազմա-քա-

ղաքական ռազմավարական դաշինքի ձևավորված ստեղծման իրատեսությունը մեծ կապվածներ է առաջացնում՝ նույնիսկ նման միության առավել խանդուղտ կողմնակիցների շրջանակում Ադրբեջանի ներսում: Ղրա վրա ազդեցություն ունեն ինչպես Ադրբեջանին հարևան Ռուսաստանի ու Իրանի դիրքորոշումները, այնպես էլ մահմեդական երկրների մեծամասնության դիրքորոշումները, որոնք Բաքվի վրա գործունե ազդեցության լծակներ ունեն՝ թույլ չտալու համար ստեղծել ռազմա-քաղաքական միություն: Բացի այդ, Իսրայելի ու Ադրբեջանի միջև հարաբերությունների մակարդակը բոլոր ոլորտներում ամնամատուցելի է Ադրբեջանի ու Թուրքիայի միջև փոխհարաբերությունների մակարդակի հետ, որոնց, այդոց շարքում, միավորում է նաև ազգային, լեզվական ու կրոնական ընդհանրությունը: Չնայած ակտիվ քաղաքական շփումներին, Իսրայելի ու Ադրբեջանի միջև առկա են շատ լայն տնտեսական կապեր: Օրինակ, Ադրբեջանի ու Իսրայելի միջև արտահանման ու ներկրման ծավալները 1996-ից 19998 թթ.-ի ժամանակահատվածում կազմել է ընդամենը 23,1 մլն. դոլար /ընդ որում, առյուծի բաժինը կազմել են նավթային արտահանումները Ադրբեջանից և հետադարձաբաժինը/կացին սարքավորումները Իսրայելից/, այն դեպքում, երբ նույն ժամանակահատվածում ապրանքափոխանակությունը Թուրքիայի ու Ադրբեջանի միջև /գործնականում բոլոր ոլորտներում/ կազմել է ավելի քան 832,2 մլն. դոլար⁴³: Նշված գործոնները դեռևս հնարավորություն չեն տալիս խոսել տարածաշրջանում թուրք-ադրբեջանա-իսրայելական ռազմա-քաղաքական ձևավորված դաշինքի ի հայտ գալու հրատեսության մասին, երբ նույնիսկ դրա ստեղծմանը հավանություն տա և ակտիվորեն աջակցի 4աշինգտոնը:

Ամեն դեպքում, այս հանգամանքը էպպես չի ազդում Թուրքիայի ու Իսրայելի կողմից Ադրբեջանին ռազմատեխնիկական օգնություն արձանագրման գործընթացի վրա, որն իրականացվում է անկախ տնտեսական ու քաղաքական կապերի մակարդակից կամ որևէ դաշինքի կամ այլ կառուցվածքի շրջանակներում նրանց հարաբերությունների ձևավորվածությունից: Համաձայն տարբեր գնահատականների, բացի զենքերից, Իսրայելը Ադրբեջան է ուղարկում նաև կապի տեխնիկա, մոտ 140 զինվորական մասնագետներ ու անվտանգության հարցերով խորհրդակցանքեր: Թուրք-իսրայելական դաշինքի տարածաշրջանային նշանակությունը կայանում է նոր նրանում, որ ԱՄՆ-ի հրեական լոբբին ակտիվորեն աստարում է Լեռ-գակիների տեղափոխման թուրքական ուղիներին, առաջին հերթին Բաքու-Թբիլիսի-Տեյհանին:

Ինչպես նշում են շատ փորձագետներ, ԱՄՆ-ի հրեական լոբբիի գործունեության և մեկ ոլորտ հանդիսանում է հակազդեցությունը հունական ու հայկական ազդեցության խմբերին, մասնավորապես ամերիկյան Կոնգրեսի կողմից Հայոց Ցեղասպանության ձանաչման հարցում: Իսրայելը, որի ժողովուրդը վերապրել է Հոլոքոստը, և որի մասին հիշողությունը ապրում է յուրաքանչյուր հրեայի մեջ, այնուամենայնիվ կտրուկ մերժողական դիրքորոշում է գրավում Օսմանյան կայսրության մեջ Հայոց Ցեղասպանության ձանաչման հարցում, քանի որ դա կապակցվում է իր անվտանգության վճարող տարրերից մեկի՝ Թուրքիայի հետ փոխհարաբերությունների խնդրին: Ինչպես նշել է 2001 թ.-ին Թուրքիա կատարած պաշտոնական այցից ամառը Իսրայելի արտգործնախարար Շիմոն Պերեսը. “անհմատ է պնդել, որ հայերը հրեաների պես ենթարկվել են ցեղասպանության: Սրաասպա-

նության հարցում հայերի ու հրեաների նույնացումն անթույլատրելի է”⁴⁴: Կապված նրա հետ, որ Հայաստանը՝ Թուրքիայի հետ վիոխհարաբերություններում առկա հիմնախնդիրների պարզապույմ, վերջինիս ընկալում է որպես իր ազգային անվտանգության իրական սպառնալից, ապա ինչպես Թուրքիայի, այնպես էլ նրա ռազմավարական գործընկեր՝ Իսրայելի ազդեցության ուժեղացումը, մինչև երևան ու Անկարայի միջև փժեղի հարցերի լուծումը, բնականաբար չեն մնալատի Հարավային Կովկասի տարածաշրջանային անվտանգության հեռանկարներին:

Հարև է նկատել, որ Թուրքիան ինչ-որ առումով հանդիսացավ իսրայելական քաղաքականության հարողից Կեներոնական Ասիայի հարակից տարածաշրջանում, մասնավորապես, Աֆղանստանում⁴⁵: “Թալիբան շարժման” ի հայտ գալու սկզբնական շրջանում, Թել-Ավիվը, ոչ տանց ԱՄՆ-ի ցուցման, թալիբներին դիտարկում էր որպես վառ արտահայտված հակաիրանյան ուժ, որը կարող է Աֆղանստանում թուլացնել Իրանի ազդեցությունն ու դիրքերը: Իսրայելական “Մոսսադ” հետախուզությունը նույնիսկ Պակիստանի ու ամերիկյան նավթային ընկերությունների միջոցով /որոնք շահագրգռված էին Աֆղանստանով խողովակաշարերի անցկացման մեջ/ կապեր ստեղծեց “Թալիբան շարժման” հետ: Ընդ որում նշենք, որ չնայած Պակիստանը չի ձանաչում Իսրայել պետությունը և վերջինիս հետ չունի դիվանագիտական հարաբերություններ, սակայն դեռևս Աֆղանստանում խորհրդային զորքերի դեմ պատերազմի ժամանակ պակիստանյան հետախուզությունը ISI /Inter Service Intelligence/ Կենտրոնական Հեռախոսակապային 4արջության /4C4/ միջոցով կապեր էր հաստատել “Մոսսադի” հետ: Սակայն “Թալիբանի” նկատմամբ ԱՄՆ-ի դիրքորոշման փոփոխման հետևանքում կապված էր իսլամական Ֆունդամենտալիզմի ուժեղացման, Աֆղանստանում մարդու իրավունքների ռումահարման, քմրանությունի պակտիվ առևտրի և ամերիկյան նավթային ընկերությունների /օրինակ, Unocal-ի/ ու թալիբների միջև բանակցությունների անարդյունավետ ելքի հետ, Իսրայելը և կտրուկ փոխեց իր վերաբերմունքը թալիբների նկատմամբ: Ղրան որոշ առումով նպաստեց նաև Անկարայի քաղաքականությունը աֆղանստանի հիմնախնդրում, որտեղ Թուրքիան բացառապետրեն աստարում էր թալիբներին ընդդիմադիր ուժերի գեներալ Ռ. Ղոստումին: Ինչպես նշում է Աֆղանստանի հարցերով հայտնի մասնագետ Ահմեդ Ռաշիդը, քանի որ Սոցալ նախագիծը զարգանում էր, և Իսրայելը հասկացավ, որ իր դաշնակիցները Կենտրոնական Ասիայում և Թուրքիան չեն ընդունում թալիբներին, ապա “Մոսսադը” չփուծներ հաստատել հակաթալիբյան դաշինքի հետ⁴⁶:

1990-ականներին Իսրայելի արտաքին քաղաքականության ճոր ուղիություններից դարձավ հարաբերությունները Հնդկաստանի հետ: 1992 թ. հունվարին Հնդկաստանի կողմից հրեական պետության ձանաչումից հետո, նրանց միջև արագորեն հաստատվեցին սերտ ռազմա-քաղաքական շփումներ ռազմական տեխնոլոգիաների, հետախուզական տեղեկատվության փոխանակման ու ախաբեկության դեմ պայքարի ոլորտում: Վերջին ժամանակներս տարածաշրջանային անվտանգության հիմնախնդիրներով զբաղվող փորձագետների շրջանում կարծիք է ձևավորվում տարածաշրջանում իսրայելական արտաքին քաղաքականության մեջ այսպես կոչված “երկակի ծայրամասի” տարրի ձևավորման հնարավորության մասին՝ Թուրքիայի, Հնդկաստանի ու Իսրայելի մասնակցությամբ:

Հնդկաստան-Իսրայել-Թուրքիա եռանկյունում փոխհարաբերությունների հեռանկարների մասին խոսելիս հարկ է նշել, որ այն իր հիմքում ունի այնպիսի օբյեկտիվ նախադրյալներ, ինչպիսիք են ահաբեկչությունն ու անջատողականությունը /քրոնդ, պաղեստինցիներ, քամիլական ու քաշմիրական անջատողականները Հնդկաստանում և այլն/։ Այնուամենայնիվ, այս հարցը չի կարելի դիտարկել որպես տարածաշրջանում նոր եռակի ռազմավարական միության ստեղծում՝ հաշվի առնելով Իսլամաբադի հետ Անկարայի սերտ ռազմա-քաղաքական կապերը /քաշմիրյան հարցում Թուրքիայի ավանդական սատարումը Պակիստանին, զինվորականների ուսուցման համատեղ ծրագրերը, տեղեկատվության փոխանակումը/⁴⁷ և Թեհրանի հետ Դելիի ջերմ հարաբերությունները /ընդհանուր առմամբ քաղաքական դիրքորոշումները աֆղանական հիմնախնդրի, Կետրոնական Ասիայում վարվող քաղաքականության, Արևմուտքի պետությունների հետ հարաբերությունների, առաջին հերթին՝ ԱՄՆ-ի շուրջ, ինչպես նաև տարածաշրջանում Պակիստանի հզորությունը ինչ-որ չափով հավասարակշռելու նպատակով/⁴⁸։ Ասկայն բոլոր երեք կողմերը շահագրգռված են ռազմա-տեխնիկական ոլորտում փոխհամակետ համագործակցության կազմակերպման մեջ։ 1992 թ.-ից Իսրայելը դեպի հնդկական շուկա ռազմական նշանակության մթերքի առաքման ծավալներով դուրս եկավ երրորդ /Ռուսաստանից և Ֆրանսիայից հետո/, իսկ որոշ տվյալների համաձայն՝ Ռուսաստանից հետո երկրորդ տեղը։ Հնդկաստանն իր հերթին Իսրայելի համար իր մեծությամբ դարձավ երկրորդ արտասահմանյան գործընկերը /ԱՄՆ-ից հետո/ ռազմական բիզնեսի ոլորտում⁴⁹։

Իսրայելի ու Հնդկաստանի միջև հարաբերությունները բացի զուտ ռազմա-տեխնիկական համագործակցությունը, բնորոշվում են նաև որոշակի աշխարհաքաղաքական ուղղվածությամբ, քանի որ կողմերը պայմանավորվածություն ունեն իսրայելական զինված ուժերի կողմից հնդկական պոլիգոնների օգտագործման մասին՝ ուսումնական հրաձգությունների ու հրթիռային զենքի փորձարկումների իրականացման նպատակով։ Այսպես, 2000 թ.-ի մայիսին Բալատոր քաղաքի մերձակայքի ծովային հրթիռային պոլիգոնում /Հնդկաստան, ճափանգ Օբիսաս/ իսրայելական սուզանավից իրականացվեց Dolphin դասի թևավոր հրթիռի արձակում։ Հրթիռը, որը փորձագետների կարծիքով կարող է համարված լինել միջուկային մարտազենի կրակ, ոչնչացրեց 1250 կմ հեռավորության վրա գտնվող թիրախը⁵⁰։ Տվյալ փաստը խափես փոխեց ուժերի ամբողջ ռազմաստրատեգիական հավասարակշռությունը Միջին Արևելքում։ Եթե նախկինում Իսրայելի միջուկային ուժերը կազմված էին հիմնականում վերգետնյա քաղաղորչից /Jericho-1/2 քայլափոխ հրթիռների միջուկային մարտազենի կրակ, որանքավոր հրետանի և միջուկային ակնաններ/, ինչպես նաև օդային քաղաղորչից /առաջին հերթին միջուկային զենքով F-16 ինքնաթիռներ/, ապա թևավոր միջուկային հրթիռներով համարված տվյալ սուզանավերով սպառազինված Իսրայելը դարձնում է Միջուկային ակնան կոր աղակով, որի ռազմավարական միջուկային ուժերը կազմում են օդային վերգետնյա ծովային դասական եռամիասնություն⁵¹։

ԹՈՒՐԻ-ԻՍՐԱԵՆԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԱՐԱԶՎԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՏԻ ՓՈՒԼՈՒՄ

ԱՄՆ-ի կողմից 2003 թ.-ին Իրաք ներխուժման կարևոր արդյունքներից մեկը հանդիսացավ Թուրքիայի ու Իսրայելի հարաբերությունների առաջացումը։ Չնայած թուրքական գեներալիտետի հակազդեցությանը, սակայնվում է Թուրքիայի և ԱՄՆ-ի հետագա հեռացում մինչև հարաբերությունների այն մակարդակը, որը չի խանգարի Թուրքիայի անդամակցությանը ՆԱՏՕ-ին, որպես հետ մեկտեղ կնվազի նաև ԱՄՆ-ի դերը Թուրքիայի անվտանգության ապահովման գործում⁵²։ Միաժամանակ աճում է տարածաշրջանի պետությունների ներքաշման հնարավորությունը նոր ռազմական քաղաքականության մեջ։ Սակայն, քանի դեռ ԱՄՆ-ն զբաղված էր Իրաքի հետպատերազմյան բարեկարգման հիմնախնդիրներով, Իսրայելն այդ ժամանակահատվածում փորձեց լուծել մի շարք խնդիրներ պաղեստինցիների հետ։ Եվ հատկապես դա հեռանկարում կարող է ավելի լուրջ խոչընդոտ հանդիսանալ Անկարայի ու Թեյ-Ալիլիի համագործակցության ճանապարհին /ինչն էլ դեպ հանդիսացել է երկու երկրների միջև հարաբերությունների առեցցման հիմնական պատճառներից մեկը 1970-ականների վերջից մինչև 1990-ականների սկիզբը/, քան Նույնիսկ արաբական երկրների հակազդեցությունը⁵³։ Չի կարելի բացառել նաև այն, որ աշխարհիկ, սակայն մահմեդական Թուրքիայի դիրքերի վրա ազդում են նաև "կրոնական-սակարակ ու պատմական" բնույթի դատողությունները /օրինակ, Թուրքիայում սիրում են հիշեցնել, որ հրեաների կողմից որպես իսրայելական պետության մայրաքաղաք հռչակված Երուսաղեմը 400 տարիներ շարունակ՝ 1517-ից մինչև 1917 թթ.-ը գտնվել է Օսմանյան կայսրության իշխանության ներքո/։

Պրա հետ մեկտեղ, պետք է ի կատարի ունենալ այն, որ Թուրքիայում շատերը չեն կիսում այն կարծիքը, որ Իսրայելը չէ զարգացնել ռազմա-քաղաքական համագործակցությունը հարաբելի հետ։ Արաբական հասարակության խորքերում խիստ էական են Իսրայելի հետ դաշինքի նկատմամբ, որպես Թուրքիայի ազգային շահերի և իսլամական գաղափարների դավաճանության սաղմերը։ Միաժամանակ այդ դատողությունները սերտորեն կապված են հեկասեմիթական ու պանօսմանիստական /ոսանջիստական/ կարծրատիպերի հետ, որոնք արմատավորված են թուրքական քաղաքական վերնախավի ու մտավորականության շրջանում։ Դեռևս 2000 թ.-ին որոշ վերլուծաբաններ մատնանշում էին, որ այն բանից հետո, երբ թուրքական հատուկ ծառայությունները ծեղրակալեցին Ա. Օշալանին և PKK-KADEK-ի կողմից Թուրքիայի նկատմամբ մարտական գործողությունները թուլացան, ինչպես նաև դիտվեց Թուրքիայի ու Սիրիայի միջև հարաբերությունների ջերմացման նկատելի փոփոխում, Անկարայի ու Թեյ-Ալիլիի ռազմավարական գործընկերության մեջ զգացվում է որոշակի հեռացում։ Դա մասնավորապես դրսևորվեց Իսրայելի կողմից օկուպացված տարածքներում պաղեստինցիների դեմ հակաօրինական գործողությունները 2000 թ.-ին ԱՄԿ-ի զլխավոր Ասամբլեայում դատապարտման կողմ Թուրքիայի շեփարկության ընթացքում։ Իսկ հաջորդ օրը Թուրքիայի նախագահ Սևեդ Սեզերը, Ստամբուլում կայացած Իսլամական Կոնֆերանս Կազմակերպության առևտրի կոմիտեի նիստի ժամանակ, իր հերթին քննադատու-

թյան ենթարկեց Իսրայելի քաղաքականությունը օկուպացված տարածքներում, ինչը առիթ հանդիսացավ վերլուծաբանների համար կրկին խոսելու թուրք-իսրայելական հարաբերությունների առեցցման մասին⁵⁴։ Ի պատասխան, իսրայելական արտգործնախարարության քարտուղար Ալունու Լեյը հայտարարեց, որ իր կառավարությունը համաձայն չէ Պաղատինոսում իրադարձությունների զարգացման վերաբերյալ Թուրքիայի դիրքորոշման հետ, հատկապես ՄԱԿ-ում թուրքերի քվեարկության հետ։ Թուրքիայի քվեարկությունը նա անվանեց «անակնկալ» Իսրայելի համար, իսկ Ա. Սեդրի հետագա ելույթը, որը դատապարտում էր անաբեկչությունը Իսրայելի կողմից և սատարում էր պաղեստինցիների իրավունքները, մեկնաբաններն անվանեցին Իսրայելին ուղղված «երկրորդ հարված»⁵⁵։

Դրանք մեկ շարքի առաջ Թուրքիա կատարած այցի ժամանակ Լեյը թուրքական կողմին կոչ արեց չպաշտպանել Գլխավոր Ասամբլեայի հակա-իսրայելական բանաձևը և «չգնալ այն նույն սխալ ճանապարհով, որով նա ընթացում էր 1960-1970-ականներին»⁵⁶ ինքնաբուխ կերպով քվեարկելով արաբական պետությունների հետ համատեղ⁵⁷։ Սակայն իրականում, ինչպես նկատում է Վաշինգտոնի Մեթափորաբուխեյան քաղաքականության ինստիտուտի /The Washington Institute for Near East Policy/ առաջատար վերլուծաբան Ական Մակուլսկին, թե՛ թուրքական և թե՛ իսրայելական պաշտոնատար անձինք, դեռևս 1990-ականներին սերտ հարաբերությունների հաստատման սկզբից մշտապես ձեռնպահ էին մնում իրապարակալ միմյանց սատարելուց միջազգային ու տարածաշրջանային տարբեր վիճարկելի հարցերի շուրջ՝ հատկապես ի նկատի ունենալով այդ երկրների ներսում այդ հիմնախնդիրների շուրջ առկա բացասական դիրքորոշումները։ Նույնիսկ 1991 թ.-ի դեկտեմբերին Իսրայելի հետ արտակարգ և լիազոր դեսպանների փոխանակման մակարդակով դիվանագիտական հարաբերություններ հաստատելուց հետո Թուրքիան պաղեստինցիներին առջև դր ՄԱԿ-ի բանաձևերում գրեթե միշտ հենուղակամորեն քվեարկում էր արաբական երկրների հետ համատեղ։ ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի մոտավորապես 179 բանաձևերից, բացառությամբ 9 դեպքերի, Թուրքիան բոլոր դեպքերում քվեարկել է Իսրայելին դեմ։ Սակայն, ինչպես նշում է Ա. Մակուլսկին, դրանք հիմնականում վերաբերվում էին զուտ հումանիտար հարցերին, ինչպես նաև պաղեստինյան փախուսականների իրավունքների պաշտպանությանը։ Այն դեպքում, երբ Իսրայելն իր հերթին «չցանկանալով սրել հարաբերությունները քրդերի հետ և ծեցք բերել նոր թշնամիներ», իստ հազվադեպ է PKK-ն անվանել անաբեկչական խմբավորում և ջանում էր չպաշտպանել թուրքական քաղաքականությունը քրդերի նկատմամբ⁵⁸։

2003 թ.-ի ընթացքում տեղի ունեցած երկու երկրների բարձրաստիճան պաշտոնյաների մի շարք փոխադարձ այցելությունների արդյունքները որոշ փորձագետների մոտ հույսեր առաջացրեցին ենթադրելու, որ Թուրքիան և Իսրայելը դեռևս լի են վճռակետային շարունակելու համագործակցությունը պաշտպանության ու անվտանգության ոլորտում, ընդ որում, այսպես կոչված «միջազգային անաբեկչության դեմ պայքարի» ենթադրություններ։ Օրինակ, Անկարայում Թուրքիայի պաշտպանության նախարար Վեջի Գյունուլի և նրա իսրայելական գործընկեր Շաուլ Մոֆազի բանակցությունների ընթացքում, բացի ռազմ-արդյունաբերական ոլորտում համագործակցությունը /2002 թ.-ի իսրայելական սպառազինության դեպի Թուրքիա արտա-

հանձնան մակարդակը կազմել է ավելի քան 1 մլրդ. դոլար/, ցնճարկվել է նաև երկու երկրների միջև փոխհամագործակցության խնդիրների ամբողջ համալիրը՝ կապված միջազգային անաբեկչական կազմակերպությունների դեմ պայքարին։ 2003 թ.-ի սեպտեմբերին թուրքական հատուկ ծառայությունների մի շարք բարձրաստիճան աշխատակիցների հետ Իսրայել ժամանեց Թուրքիայի ներքին գործերի նախարար Աբդուլքադիր Ալունու։ Պա թուրքական նոր իսլամական կառավարության կազմի նախարարի առաջին այցելությունն էր Իսրայել։ Թուրքական ՆԱԿ-ի ղեկավարի Իսրայել կատարած այցի հիմնական նպատակը երկու երկրների համապատասխան գերատեսչությունների միջև համագործակցության լիարժեք վերականգնումն էր անվտանգության ոլորտում տեղեկատվության փոխանակման համար։ Այս խնդիրը կրկին հատուկ նշանակություն է ձեռք բերել Թուրքիայի համար, քանի որ, չնայած թուրքական կառավարության հայտարարությանը PKK-KADEK անդամներին համաճեղմելու մտրուկում մասին, վերջինս հայտարարել է Թուրքիայի հետ զինադադարի թեմիմի գործողության դադարեցման մասին։ Ուստի, ինչպես նշված է անվտանգության հարցերով զբաղվող ամերիկա-իսրայելական հեղինակավոր կենտրոններից մեկի /JINSA - Jewish Institute for National Security Affairs/ և Ամերիկայի Թուրքական Անցիացիաների Ասամբլեայի /Assembly of Turkish American Associations/ համատեղ պարբերական հրատարակման մեջ, «PKK-ի գործունեության կասեցմանն ուղղված Թուրքիայի ջանքերում Իսրայելի աջակցությունը բացառիկ նշանակություն ունի։ Իսրայելական հետախուզությունը ավելի քան 3 տասնամյակ գործում է Հյուսիսային Իրաքում և սերտ շփումներ ունի տարածաշրջանի քրդական կազմակերպությունների հետ»⁵⁹։

Երկու երկրների սերտ համագործակցության նոր հաստատումը հանդիսացավ համաձայնագիրը անաբեկչության դեմ պայքարի ոլորտում, ինչպես նաև հակաանաբեկչական գործողությունների համար տեխնիկական միջոցների զարգացման մասին, այդ թվում նաև թուրքական իսլամիստական արմատական կազմակերպությունների դեմ պայքարում, որը ստորագրվեց 2003 թ.-ի դեկտեմբերին Իսրայելի հասարակական անվտանգության նախարար Յ. Ֆանեզգիի Անկարա կատարած այցի շրջանակներում։ Սեյալ համաձայնագիրը հիմնականում պայմանավորված էր Թուրքիայում տեղի ունեցած աղմկուտ անաբեկչական գործողություններով, որոնք ունեին հստակ հակաիսրայելական բնույթ⁶⁰։

Այնուամենայնիվ, 2003 թ.-ի Իրաքի դեմ պատերազմի սկզբից Սերժանկո և Միջին Արևելքի տարածաշրջանում տեղի ունեցած փոփոխությունների ընդհանուր տրամաբանությունը հանգեցրեց աշխարհաքաղաքական իրավիճակի փոփոխմանը, այդ թվում նաև իսրայելա-թուրքական հարաբերություններում։

Քրդական պետության առաջացման նկատմամբ վախը, հատկապես քրդական ու պաղեստինյան մի շարք տարածաշրջանային հիմնախնդիրների նկատմամբ, Իսրայելի գրաված դիրքորոշման հետևանքով առաջացած ձգձգմամբ թուրք-իսրայելական հարաբերություններում, ստիպեցին Թուրքիային վերջին տարիներին ակտիվացնել իր գործողությունները Մեծ Մերձավոր Արևելքի տարածքում՝ առանց սայելու իր արևմտյան գործընկերներին և Իսրայելին։ Թուրքիայի ղեկավարությունը որոշեց ակտիվացնել իր տարածաշրջանային քաղաքականությունը, որը ենթադրում էր

Թուրքիայի դերի վերածնունդը Մերձավոր Արևելքում: Ղա բարդացնում է Իսրայելի ու արաբական երկրների միջև հավասարակշռության պահպանումը, քանի որ Իսրայելի ու Թուրքիայի միջև 1990-ական թվականների կեսերից ձևավորված սերտ ռազմավարական հարաբերությունները լուրջ հիմնականիդրներ էին առաջացնում Անկարայի համար ոչ միայն արաբական, այլև ընդհանրապես մահմեդական երկրների հետ շփումներում:

Թուրք-իսրայելական հարաբերությունները նախնական սրվեցին արդեն 2004 թ.-ի մայիսին, երբ Թուրքիայի վարչապետ Ռ.Թ. Էրդողանը մի քանի կտրուկի հայտարարություններով ելույթ ունեցավ մերձավորարևելյան կարգավորման գործընթացում Իսրայելի ու մային մեթոդների կապակցությամբ, իսկ իսրայելական հատուկ ծառայությունների կողմից ՀԱՄԱՍ-ի առաջնորդներ շեյխ Յասինի ու Աբդուլազիզ Ռանթսիի ոչնչացումից հետո նա Իսրայելի քաղաքականությունը որակեց որպես "նման պետական անաբեկչությանը": Էրդողանը մեղադրեց նաև Ա. Շարոնին Մերձավոր Արևելքում խաղաղ գործընթացի սաբոտաժի մեջ: Այդ կոչտ հայտարարությունները, ըստ էության, ի չիք արեցին Իսրայելի բոլոր փորձերը բարելավել հարաբերությունները Անկարայի հետ, որը լուրջ ճգնաժամ էր ապրում 2002 թ.-ի խորհրդարանական ընտրություններում Արդարության ու զարգացման կուսակցության համոզիչ հաղթանակից ու երկար տարիներ անց Թուրքիայում առաջին անգամ միակուսակցական կառավարության ձևավորումից հետո: Այնուամենայնիվ, 2003 թ.-ի դեկտեմբերի 24-ին Թուրքիան ու Իսրայելը ստորագրեցին անաբեկչության դեմ համատեղ պայքարի համաձայնագիր: Փաստաթուղթը նախատեսում էր հետախուզական տեղեկատվության փոխանակում Թուրքիայի ու Իսրայելի միջև, հակաանաբեկչական ևանակների համատեղ մշակում և սահմանապահ գործառնակորումների համատեղ զինավարժությունների իրականացում: Սակայն այդ համաձայնագիրը խիստ բացասական գնահատականների արժանացավ մի շարք իլլամական երկրների կողմից, և անվանվեց որպես սառիբ Թուրքիայում ռեպրեսիվ գործողություններ իրականացնելու համար, հասկապես քրդերի դեմ⁵⁹:

Իրաքյան իրադարձությունների ազդեցության տակ 2004 թ.-ի ապրիլից իսրայելա-թուրքական հարաբերություններում էլ ավելի հստակորեն սկսեցին ի իայտ գալ սառեցման տարրեր: Որոշ փորձագետները, վերլուծելով այդ ժամանակահատվածում ստեղծված թուրք-իսրայելական հարաբերությունների իրավիճակը, շտապեցին եզրակացություններ անել երկու երկրների գործընկերությանը սպառնացող լուրջ վտանգների մասին, հատկապես ելնելով այն բանից, որ այդ ժամանակահատվածում տարբեր շարժառիթներով հետաձգվեցին կամ ընդհանրապես կասեցվեցին ռազմա-տեխնիկական ոլորտի որոշ կարևոր նախագծեր:

Այսպես թե այնպես, կրկին ելնելով անվտանգության ոլորտի գերակայություններից, թուրքական ղեկավարությունը /մեծ ճնշում կրելով զինվորականության կողմից/ զնաց Իսրայելի հետ հարաբերությունների նոր ակտիվացմանը: Երկկողմանի հարաբերությունների նոր փուլի ելակետ հանդիսացավ թուրքական կողմից նախաձեռնված Ռ.Թ. Էրդողանի այցը Իսրայել 2005 թ.-ի մայիսին: Սայիսի 1-ին Էրդողանը ժամանեց Իսրայել և, ի բավարարվածություն բոլոր կողմերի, անմիջապես բանակցություններ սկսեց ռազմական համագործակցության շարունակման թեմայով: Բանակցությունների արդյունքում հաստատվեց Թուրքիայի իսրայելական "Խա-

րոն" անօդաչու մեծ շառավղով գործողության հետախույզ-ինքնաբախների վաճառքի պայմանագիրը՝ 200 մլն. դոլար ընդհանուր արժողությամբ: Պաշտպանության նախարար Կեչրի Գյոնուլը և նրա տեղակալները Իսրայելի ռազմական գերատեսչության և "Տասսիա Ավիրտ" ռազմա-օդային կոնցեսիոն տնօրինության հետ համատեղ սկսեցին գործադիր նոր փաստաթուղթ պատրաստել, որի իրականացման համար իսրայելացիները պետք է արդիականացնեն թուրքական ՌՕՌ-ի 30 հատ F-4 Phantom կործանիչներ, դրա վրա աշխատելով 500 մլն. դոլար /ինչպես հայտնի է նախկինում՝ 2001-2002 թթ.-ին, Իսրայելի ավիացիոն արդյունաբերությունը արդեն արդիականացրել էր թուրքական նույն դասի 54 ինքնաբախներ⁶⁰: Սկսվեցին քննարկումներ իսրայելական "Ազգարի" զրահամեքենաների ու "Մերկավա" տանկերի հնարավոր գնման մասին, որոնք իրենց լավ էին դրսևրել անասպատային պայմաններում մարտական գործողությունների ընթացքում⁶¹:

Պատասխանալու էլ այն փաստը, որ իսրայելա-թուրքական հարաբերությունների նոր փուլի ձևավորման մեջ կարևորագույն դեր կատարեց հատկապես ռազմա-տեխնիկական բաղադրիչը: 2000-2004 թթ.-ին Թուրքիայի հետ ռազմա-տեխնիկական համագործակցությունը կազմել է իսրայելական ՌԱՀ-ի արտադրանքի արտահանման ընդհանուր ծավալի 20-35 տոկոսը /ըստ 1990-ական թվականների միջնամասից կնքված պայմանագրերի արդյունքների/: Հիմնականում դրանց նախագծեր էին՝ կապված Թուրքիայի ՌՕՌ-ի ավիացիոն տեխնիկայի արդիականացման /F-4 և F-5 ինքնաբախներ/, ավիացիոն իրթնախիյի սպարազինության գնման հետ: Իր առաջարկությունների բարձր մրցունակության շնորհիվ, Իսրայելը կարողացավ նաև ձեռք բերել պայմանագիր M-60 տանկերի արդիականացման վերաբերյալ: Չնայած այդ պայմանագիրը կնքվել էր դեռևս 2002 թ.-ին, սակայն տարբեր պատճառներով /Ֆինանսական խնդիրներ և կառավարության փոփոխում Թուրքիայում, երկկողմանի հարաբերությունների ընդհանուր սառեցում/ դրա իրականացումը հետաձգվում էր: Սիայի 2005 թ.-ի վերջից իսրայելական ինժեներները ձեռնամուխ ևս թուրքական բանակի տանկային պարկի ծավալում արդիականացման իրականացմանը: Ղրա արդյունքում ամբողջական արտադրության M-60 տանկերը մի շարք բնութագրիչներով կհամապատասխանեն "Մերկավա-4" իսրայելական տանկերի վերջին սերնդին: Սաանավորապես, "Մերկավա"-ից թուրքական տանկերին փոխանցվեցին կրակաեռի կառավարման համակարգը, աշտարակի պառույտի մեխանիզմը, կախվի զրահի հավաքակազմերը, ուժասարքը և 120-միլիմետրանոց թնդանոթը: M-60 տանկերի արդիականացման ծրագիրը Թուրքիայի համար հատուկ նախապատրաստել էին Israel Military Industries (IMI) և Elbit Systems ընկերությունների իսրայելցի ինժեներները: Ղրա արժեքը կազմում է 688 մլն. դոլար: Ընդհանուր առմամբ արդիականացվելու է 170 տանկ: Ապագա արդիականացվող տանկերի որոշ բաղադրիչների արտադրությունը սկսվելու էր 2006 թ.-ի երկրորդ կեսից, իսկ նոր մեքենաների արտադրությունը՝ 2007 թ.-ի սկզբից: Բոլոր 170 արդիականացված տանկերը Թուրքիայի ցամաքային զորքերը կստանան մինչև 2009 թ.-ը: Ներկայումս Թուրքիայում փորձարկվում է ապագա տանկի նմանակը: Իսրայելցիները կողմից պատրաստված երկրորդ փորձնական օրինակը փորձարկումներ է անցնում Իսրայելի ռազմա-

կան փորձարդաչուում: Ըստ առկա տեղեկությունների, ներկայումս հաջող քանակություններ են վարվում նաև իսրայելական "Միզրախ" գրահամեքենաների գնման շուրջ⁶²: Համաձայն այդ տեղեկատվության, նշված նախագծի հաջող ավարտի պարագայում հետագայում հնարավոր է նաև իսրայելական ընկերությունների օգնությամբ թուրքական զինված ուժերի M-60 և 1000 տանկերի արդիականացումը⁶³:

2005 թ.-ի ապրիլին կողմերը պայմանագիր ստորագրեցին նաև Թուրքիային իսրայելական հեռավոր շառավղով ազդեցության "սեբրոն" անօդաչու հետախույզ-ինքնաթիռների վաճառքի մասին: Ինքնաթիռները կառագեն իսրայելական ալիաժիհոն արդյունաբերության ձեռնարկությունները, իսկ վայախ ու մոնիտորինգի միջոցները՝ Elbit կորպորացիան: Գործարքը գնահատվում է 200 մլն. դոլար: Այդ նույն ժամանակ տեղի ունեցավ երկու երկրների պաշտպանության նախարարությունների և ՋՈՒ-ի Գլխավոր շտաբերի ներկայացուցչական պատվիրակությունների գլուխնախկին: Մասնագետները այդ քանակությունները գնահատեցին 1,5 մլրդ. դոլար: Հենց այդպիսի գուժար կազմեցին ռազմա-տեխնիկական ոլորտի երկկողմանի համագործակցության սկզբունքորեն համաձայնեցված նոր նախագծերը: Բացի ռազմա-տեխնիկական, վերջին շրջանում Թուրքիան և Իսրայելը պայմանավորվել են շարունակել "Reliant Mermaid" /Կատախ չչակ/՝ ավելանամար համատեղ գորավարությունները՝ հետախուզական արբանյակների կիրառումով⁶⁴:

Ժամանակին բավական հեռանկարային էր համարվում նաև իսրայելական IAI ընկերության կողմից թուրքական ՌՕՈՒ-ի C-130E ռազմա-տրանսպորտային 7 ինքնաթիռների արդիականացումը: 2002-2003 թթ.-ին կողմերի միջև ակտիվ բանակցություններ էին ընթանում 12 մլն. դոլար արժույթի վրա այդ պայմանագրի իրացման ուղղությամբ, որոնք ավարտվեցին ծախսումով՝ ինչպես գտնում են, կապված քաղաքական հարաբերությունների ընդհանուր ստեղծման, ինչպես նաև ֆինանսական դժվարությունների հետ: Ավելի հաջողակ կարող է լինել F-4 Phantom կործանիչների արդիականացման նոր, երկրորդ ծրագրի իրականացումը /առաջին իրականացվել էր 1990-ական թվականների երկրորդ կեսին/ և իսրայելական մասնագետների կողմից դրանց հասցումը՝ "Phantom-2020"-ի մակարդակին: Գտնում են, նոր իսրայելական ալիոնիկայով և սարքավորումներով կործանիչների համալրման հաշվին, թուրքական ՌՕՈՒ-ում այդ ինքնաթիռների շահագործման ռեսուրսը կերկարամեծ ընկազմովը մինչև 2020 թվականը, ընդ որում աշխատանքների զգալի մասը նախագծով ենթադրում է իրականացնել թուրքական ձեռնարկություններում և թուրքական ընկերությունների հետ համագործակցությամբ⁶⁵: Իսրայելը շահագրգռված է նաև թուրքական T-34 և T-38 ուսումնական ինքնաթիռների արդիականացման մեջ: Ներկայումս Թուրքիայի ՌՕՈՒ-ի հրամանատարությունը մշակում է այդ ծրագրի հայեցակարգը՝ այդ ինքնաթիռների շահագործման ժամկետը մինչև 2015 թ.-ը երկարաժեղելու նպատակով⁶⁶:

Թուրքիայի ու Իսրայելի ռազմա-տեխնիկական համագործակցության կարևոր կողմերից է հանդիսանում համագործակցությունը ՀՕՊ և մարտավարական ՀՀՊ ոլորտներում: Ինչպես հայտնի է, վերջին տարիներին Թուրքիան մտադրված է իրականացնել իր ՀՀՊ համակարգի խոր արդի-

ականացում և սեփական ՀՀՊ-ի ծավալումը: Դա հիմնականում կապված է սպառազինությունների արագացած մրցակազմով և ՋՈՒ-ի ու իրթեսային տեխնոլոգիաների տարածման սիմանալոգիաներով Մեծ Մերձավոր Արևելքի տարածաշրջանում: 1999 թ.-ին Թուրքիան ստացավ 2-րդ մոդիֆիկացիայի "Պլեթրիոտ" ամերիկյան ՋՀՀ-ի առաջին մարտկոչը՝ իր զինված ուժերի ՀՕՊ/ՀՀՊ խմբավորումների ուժեղացման ու երկրի կարևոր ռազմական օբյեկտների պաշտպանության համար: ՀՀՊ-ի ժամանակակից համակարգերի ստեղծման շրջանակներում ԱՄՆ-ի գլխավոր գործընկերը հանդիսանում է Իսրայելը: Ներկայումս Իսրայելը հանդիսանում է աշխարհի միակ պետությունը, որն ունի երկրի ամբողջ տարածքն ընդգրկող ՀՀՊ համակարգ: Իսրայելում մշակվել են "Էրոու" ՀՀՊ համակարգերը և դրանց արդիականացված "Էրոու-2" տարբերակները, որոնք պլանավորվում է առաջել նաև Թուրքիա: Թուրքիան 1999 թ.-ից մասնակցում է այդ նախագծում, և նրա ցանկությունը համարել իր սպառազինությունը տվյալ ՀՕՊ/ՀՀՊ կատարելագործված համակարգերով պայմանավորված է /թացի երկրի պաշտպանությունը՝ "սկալյան" տեխնոլոգիաների կիրառումով իրթեսային համակարգերի հավանական արձանագրման պայմաններում՝ նաև հունական Կրիտոս կղզում տեղակայված ռուսական արտադրության ՋՀՀ Ի-300 կՄՏ-1 համակարգերին հավասարակշռելու ձգտումներ⁶⁷: Միևնույն ժամանակ Իսրայելի ու ԱՄՆ-ի հետ համատեղ ՀՀՊ-ի ծավալման ծրագիրը բարդանում է նախագծի մեծ արժույթով: Նույնիսկ առավել սահմանափակված ՀՀՊ համակարգը՝ "Էրոու" սարքավորման նվազագույն քանակով, Թուրքիայի համար կարծես ավելի քան 5 մլրդ. դոլար՝ չապահովելով երկրի ամբողջ տարածքի պաշտպանության հնարավորությունը⁶⁸:

Երկու երկրների ռազմա-տեխնիկական համագործակցությունը, այնուամենայնիվ ունի իր օբյեկտիվ սիմանալոգիաները և չի կարող հետագայում հիմք ծառայել քաղաքական հարաբերությունների խորացման համար՝ դրանք հասցնելով "ռազմավարական միության" մակարդակին: Բնական է, որ անվտանգության ոլորտի հրամայականները միջնաժամկետ հեռանկարում միանշանակորեն կնպաստեն կայուն գործընկերության պահպանմանը, սակայն արդեն ի վիճակի չեն լինի դա հասցնել դաշնակցային մակարդակի: Դրան չեն նպաստում ոչ քաղաքական պայմանները, ոչ էլ Թուրքիայում խորացող հակաիսրայելական տրամադրությունները: Բացառությամբ թուրքական զինվորական և քաղաքական վերնախավի որոշակի հատվածի, Թուրքիայի բնակչությունը և լայն հասարակությունը խիստ բացասակամորեն են վերաբերվում Իսրայելի հետ հետագա համագործակցության որակական խորացմանը:

Թուրք-իսրայելական հարաբերությունների վրա բացասական ազդեցություն թողնող կարևոր գործոն հանդիսացավ 2003 թ.-ի ԱՄՆ-ի զինված օպերացիան Իրաքի դեմ: Մի կողմից, այդ պատերազմում Անկարայի գրասենյակում դիտորդումը, որն իր կոչումով սարք բուցե նույնիսկ գերազանցող ԱՄՆ-ի ռազմական պլաններին դիմակայելու արարական երկրների միջոցներին, Թուրքիայի նկատմամբ առաջ բերեց ամբողջ արբանյակ աշխարհի համակրանքն ու աջակցությունը: Մյուս կողմից, նույն 2003 թ.-ից՝ Անկարային կողմից աջակցության հրամարումը Ս. Հուսեյնի իրաքյան ռեժիմի դեմ Վաշինգտոնի ծավալած օպերացիային, հստակ դիմում է թուրք-ամերիկյան հարաբերությունների արագընթաց ստեղծում: Հաշվի

առնելով այն, որ ԱՄՆ-ն հանդիսանում էր թուրք-խորադեպերի հարաբերությունների բարելավման յուրաքանչյուր ակտիվ կրողը, Անկարայի հետ իր հարաբերությունների հիմնահարցերն ուղղակիորեն արտացոլվեցին նաև Թուրքիայի ու Իսրայելի հարաբերությունների վատթարացման վրա:

Երկխոսմանի հարաբերությունների համար լուրջ փորձություն էին 2006 թ.-ի ամռանը Լիբանանի շուրջ ծավալված իրադարձությունները: «Շեզրվախ»-ի դեմ խորադեպերի քանակի մարտական գործողությունները և Իսրայելի ներխուժումը Լիբանանի հարավային շրջանները: Իսրայելի այդ գործողությունները Թուրքիայում անմիջապես առաջացրին հակախորադեպերի և հակաանմիջապեական տրամադրությունների կտրուկ աճ, որոնք աջակցություն գտան նաև երկրի դեկալվարդ վերնախավի զգալի հատվածի մոտ:

Արդեն 2006 թ.-ի օգոստոսի 1-ին Անկարայի առաջարկով Լիբանանին մարդասիրական օգնության ցուցաբերման հարցի ընթացքում նպատակով Ատանթուրում տեղի ունեցավ «Իսլամական կոնֆերանս» կազմակերպության ԻԿԿ-ի փորձագետների արտակարգ նիստ: Իսկ օգոստոսի 3-ին Թուրքիայի և մի շարք արաբական երկրների նախաձեռնությամբ ԻԿԿ գործադիր կոմիտեի արտակարգ նիստում Կուալա-Լումպուրում մասնակից-երկրները ըննարկեցին իրավիճակը Մերձավոր Արևելքում և ընդունեցին համատեղ հայտարարություն: Փաստաթուղթը կոչ էր պարունակում Լիբանանում մարտական գործողությունները անմիջապես ու անվերապահորեն դադարեցնելու մասին, իսկ Իսրայելի գործողությունները ընթացավորված էին որպես ագրեսիվ և հանցագործ, որոնք հետաքննությանը պետք է զբաղվի ԱՄԿ-ի Անվտանգության խորհուրդը: Մալազիայում ԻԿԿ-ի հանդիպման ժամանակ թուրքական պատվիրակությունը զխավորում էր վարչապետ Ռեջեփ Թայիպ Էրդողանը, որն իր ելույթում խիստ ընդադաժություն է քննարկեց Իսրայելի գործողությունները, անվանելով դրանք «անօրինական և անարդարացի»: Բացի այդ, Թուրքիան հանդես եկավ նախաձեռնությամբ իրավիճակը ԻԿԿ-ի խորհրդարանական միության արտահերթ նիստ: Օգոստոսի 3-ին Թուրքիայի իշխող Արդարության և զարգացման կուսակցության բոլոր պատգամավորները, որպես Լիբանանում ռազմական գործողությունների նկատմամբ բողոքի նշան, դուրս եկան Իսրայելի հետ բարեկամության միջխորհրդարանական խմբի կազմից: Նախօրյակին թուրք-իսրայելական բարեկամության միջխորհրդարանական խմբի կազմից դուրս գալու մասին իրենց որոշումը հայտնել էին նաև հիմնական ընդդիմադիր կուսակցության՝ Ժողովրդա-հանրապետական կուսակցության պատգամավորները: Թուրքիայի խորհրդարանի մարդու իրավունքների հանձնաժողովն իր արտահերթ նիստում Լիբանանում Իսրայելի մարտական գործողությունները որակեց որպես պետական անարեթություն և ցեղասպանություն, և կոչ արեց ռազմական հանցագործությունների համար պատասխանատվության կանչել միջազգային դատական ասոյանություն: Լիբանանյան իրադարձությունների հետ կապված թուրքական փորձագետները ևս արձանագրեցին հակախորադեպերի և հակաանմիջապեական տրամադրությունների պիք Թուրքիայում, քանի որ Կաշիհգուտը միանշանակորեն զեմատվում էր որպես Իսրայելի գործողությունների մասնակից կամ նպատակը կողմը⁶⁹:

2006թ.-ի ամռանը Լիբանանում Իսրայելի ռազմական օպերացիայի հիմնապատկերի վրա թուրքական հարաբերության կողմից իսրայելա-

թուրքական հարաբերությունների ներկայիս ընկալման բավական հետաքրքիր պատկեր են հանդիսանում իրադարձությունները՝ կապված Թուրքիայի զինված ուժերի Ղլխավոր շտապի պետի պաշտոնում բանակային գեներալ Յաշար Բյույուկանըզին նշանակման հետ: Կապված նրա հետ, որ Յ. Բյույուկանը զբաղվում էր Ա. Սեզերի աջակցությունից և զբաղեցնում է ավելի կոշտ դիրքորոշում քրդական հարցում, ԵՄ-ին ինտեգրման և այլ խնդիրների շուրջ, նրա նկատմամբ հեղինակազրկման տարբեր փորձեր էին արվում: Այդ նպատակով նույնիսկ «փորձեր էին արվում օգտագործել նրա պապի» Օսմանյան բանակի սպայի, գերեզմանի՝ Իսրայելի տարածքում գտնվելու վայրի փաստը: Իսրայելական Ղլխավոր շտաբը որպես բարի կամքի դրսևորում պարզել է գերեզմանի գտնվելու վայրը, բարեկարգել է և հրավիրել է գեներալին այն այցելելու նպատակով: Այս գործի նախաձեռնողների կարծիքով, երկրում լիբանանյան պատերազմի հետ, կապված հակախորադեպերի տրամադրությունների պիքի վրա, նշված փաստը պետք է Յ. Բյույուկանը լիք կատ ծառայություն մատուցեր⁷⁰:

Թուրք-խորադեպերի հարաբերություններում ներկայումս տեղի ունեցող փոփոխությունները պայմանավորված են նաև Թուրքիայի եվրոպական ինտեգրման գործընթացներով: Դեպի ԵՄ կողմնորոշված Թուրքիայի արտաքին քաղաքականությունը նրան ստիպում է որոշակի փոփոխություններ մտցնել Իսրայելի հետ հարաբերություններում, քանի որ Իսրայելի նկատմամբ Եվրամիության դիրքորոշումը միշտ աչքի է ընկել որոշակի կոշտությամբ, իսկ համակարանը արաբների նկատմամբ չնայած հստակորեն չեն դրսևորվում, սակայն դրանք առկա են: Անկարան չի հավակնում Մեծ Մերձավոր Արևելքում ԵՄ-ի քաղաքականության վարձան հիմնական միջնորդի դերին, ինչը նշանակում է Իսրայելի հետ հարաբերությունների մակարդակի աստիճանական նվազում: Իսրայելի հետ հարաբերություններում նման բացասական նշանակություն ունեն նաև Թուրքիայում հակաանմիջապեական տրամադրությունների ուժեղացումը և Իրաքի շուրջ գործընթացներում քրդական գործոնի ուժեղացումը:

Բացահայտ է նաև մեկ այլ, Թուրքիայի ներքաղաքական գործոնի նշանակությունը, որից կախված է թուրք-խորադեպերի հարաբերությունների որակը: Թուրքիայի ներկայիս քաղաքական վերնախավը տեղական պաշար է մղում թուրքական պետության կյանքում զինվորականության դերի և ազդեցության նվազման համար: Հայտնի է, որ 1990-ականների սկզբներից հատկապես թուրք զինվորականներն էին հանդիսանում թուրք-խորադեպերի հարաբերությունների զարգացման հիմնական կողմնակիցներն ու զարակախարստները: Հետևաբար, Թուրքիայի քաղաքական կյանքում զինվորական վերնախավի դերի հետազոտ նվազման պարագայում, Իսրայելի հետ հարաբերությունները ևս օբյեկտիվորեն պետք է թուլանան: Դա ինքուրեք չի հանգեցնի իսրայելա-թուրքական հարաբերությունների լրիվ խզմանը՝ երկու երկրների անվտանգության դրսևորի հրամայականները թույլ չեն տա դրանք նվազումը մինչև կրիտիկական մակարդակ, սակայն դրանք նշանակությունը տարածաշրջանի քաղաքական գործընթացներում էապես կշտկվի:

- 1 Heller M.A. Continuity and Change in Israel Security Policy // Adelphi Paper 335, IISS: London, 2000. P.15.
- 2 Nachmani A. The Remarkable Turkish-Israeli Tie // Middle East Quarterly, Vol.5, N.2, Spring 1998; Waxman D. Turkey and Israel: A New Balance of Power in the Middle East // The Washington Quarterly, Winter 1999; Bengio O., Özcan G. Changing Relations: Turkish-Israeli-Arab Triangle // Perceptions, Vol.V, N.1, March-May 2000; Конович Ф.Е. Турецко-израильские отношения в 90-е годы (военно-политический аспект) // Востоковедный сборник. Вып. 4 / Отв. ред. Федорченко А.В., Филоник А.О. ИИИБВ: М., 2002; Киреев Н.Г. Турция и Израиль – стратегические союзники на Ближнем Востоке (хроника военно-политического сотрудничества в 1994-1997 гг.) // Ближний Восток и современность. Вып.5 / Отв. ред. Исаев В.А., Филоник А.О. ИИИБВ: М., 1998; Иванова И.И. Турецко-израильские отношения и проблемы региональной безопасности // Ближний Восток: проблемы региональной безопасности / Сост. Арунова М.Р. ИИИБВ: М., 2000; Минасян С. Израиль – Турция: военно-политическое и военно-техническое сотрудничество (в аспекте проблем региональной безопасности) // Центральная Азия и Кавказ, №1, 2004; Minasian S. The Turkish-Israeli Military and Political Cooperation and Regional Security Issues // Iran and Caucasus. Vol.VII, Brill, Leiden - Boston, 2003.
- 3 Cunn Sezer D.B. Turkey's Political and Security Interests in the New Geostrategic Environment of the Expanded Middle East // Stimson Center Occasional Paper, N.19, Washington, July 1994. P.25.
- 4 Hickok M.R. Hegemon Rising: The Gap Between Turkish Strategy and Military Modernization // Parameters, The US Army War College Quarterly, Summer 2000. P.106-111.
- 5 Киреев Н.Г. Турция и Израиль – стратегические союзники на Ближнем Востоке (хроника военно-политического сотрудничества в 1994-1997 гг.). С.105-113.
- 6 Force Projection in the Middle East // Strategic Survey 1998/99, IISS: London, 1999. P.164.
- 7 Киреев Н.Г. Турция и Израиль – стратегические союзники на Ближнем Востоке (хроника военно-политического сотрудничества в 1994-1997 гг.). С.105-113.
- 8 Pipes D. A New Axis: The Emerging Turkish-Israeli Entente // The National Interest, N.50, Winter 1997 - 1998.
- 9 Иванова И.И. Турецко-израильские отношения и проблемы региональной безопасности // Ближний Восток: проблемы региональной безопасности. С.86-90.
- 10 Киреев Н.Г. Турция и Израиль – стратегические союзники на Ближнем Востоке (хроника военно-политического сотрудничества в 1994-1997 гг.). С.161-162.
- 11 Козюлин В. ВТС: Российско-израильское противостояние // Ядерный контроль, Т.9, N.1, Весна 2003. С.33-34; Sarıbrahimoğlu L. Israel to Brief Turkey on Arrow-2 // Jane's Defense Weekly. 16 January 2002. P.4.
- 12 The Arrow Missile Interceptor Deployed In Israeli-Turkish-U.S. Air Exercise // Middle East News Line, 22.07.2001.
- 13 Основные текущие программы модернизации самолетов вооруженных сил зарубежных стран // Зарубежное военное обозрение, N.5, 1999. С.35.
- 14 Алексеев А. Сотрудничество Турции и Израиля в укреплении национальных ВВС // Зарубежное военное обозрение, N.4, 1997. С.30-32.
- 15 Маратов М.М. Военно-экономическая политика Турецкой Республики и ее сотрудничество с зарубежными странами // Армия и власть на Ближнем Востоке: от авторитаризма к демократии / Отв. ред. Ахмедов В.М., ИИИБВ: М.2002. С.373-376.
- 16 Симановский С.И. Оборонно-промышленный комплекс Израиля // Армия и власть на Ближнем Востоке: от авторитаризма к демократии / Отв. ред. Ахмедов В.М., ИИИБВ: М.2002. С.295-301.

- 17 Маратов М.М. Военно-экономическая политика Турецкой Республики и ее сотрудничество с зарубежными странами. С.388.
- 18 Маратов М.М. Военно-экономическая политика Турецкой Республики и ее сотрудничество с зарубежными странами. С.379.
- 19 Марьясис Д.А. ВПК Израиля на рубеже веков // Востоковедный сборник. Вып.3 / Отв. ред. Федорченко А.В., Филоник А.О. ИИИБВ: М. 2002. С.230-238.
- 20 Jane's Defense Weekly. 10 April 2002. P.4.
- 21 Sarıbrahimoğlu L. Turkey Places Helicopter Electronic Warfare Contracts // Jane's Defense Weekly. 16 January 2002. P.15.
- 22 Sbu' Мурадьян И. Проблемы безопасности в ближневосточной политике США, Ереван, 2003; Мурадьян И. Региональные проблемы турецко-американских отношений. Ереван, 2004.
- 23 Bir Ç., Sherman M. Formula for Stability: Turkey Plus Israel // Middle East Quarterly, Fall 2002. P.29.
- 24 Киреев Н.Г. Турция и Израиль – стратегические союзники на Ближнем Востоке (хроника военно-политического сотрудничества в 1994-1997 гг.). С.150-151.
- 25 Makovsky A., Eisenstadt M. Turkish-Syrian Relations: A Crisis Delayed? // WNEP, Policywatch N.345, 14 October 1998, (www.whashingtoninstitute.org).
- 26 Benett R.M. The Syrian Military: A Primer // Middle East Intelligence Bulletin, Vol.3, N.8, August/September 2001; Bir Ç. Reflections on Turkish-Israeli Relations and Turkish Security // WNEP, Policywatch N.422, 5 November 1999, (www.whashingtoninstitute.org).
- 27 Lorenz F.M., Erickson E.J. The Euphrates Triangle: Security Implications of the Southeastern Anatolia Project. NDU: Washington, 1999. P.17-28; Khalilzad Z., Lesser I.O., Larrabee F.S. The Future of Turkish-Western Relations: Toward A Strategic Plan. RAND: Santa-Monica, 2000. P.38-39.
- 28 Mufti M. Turkish-Syrian Rapprochement: Causes and Consequences // WNEP, Policywatch N.630, 21 June 2002, (www.whashingtoninstitute.org); Мурадьян И. Проблемы безопасности в ближневосточной политике США, Ереван, 2003.С.128-130.
- 29 Իրանական միջուկային-հրթիռային ծրագրի և Լառաբեաշտրեմային անվտանգության վրա որս ազդեցության մասին անրանասան տես՝ Minasian S. The Contemporary Status of Iran's Nuclear Missile Program and the Russian-Iranian Relations // Iran and Caucasus. Vol.VI, Brill, Leiden - Boston, 2002; Минасян С. Иран на пути к ядерной бомбе? (Анализ ракетно-ядерной программы страны) // Центральная Азия и Кавказ, N.3 (27), 2003; Минасян С. Ракетно-ядерная программа Ирана и проблемы региональной безопасности // Центральная Азия и Кавказ, N.4 (28), 2003.
- 30 Larrabee F.S., Lesser I.O. Turkish Foreign Policy in an Age of Uncertainty. RAND: Santa-Monica, 2003. P.141.
- 31 Jung D., Piccoli W. The Turkish-Israeli Alignment: Paranoia or Pragmatism? // Security Dialogue, March 2000, Vol.31, N.1. P.95-96.
- 32 Israel Center Stage: Country Briefing // Jane's Defense Weekly. 1 May 2002, p.25.
- 33 Inbar E. Regional Implications of the Israeli-Turkish Strategic Partnership // Middle East Review of International Affairs. Vol.5, N.2 (Summer 2001), p.51.
- 34 Aras B. Turkish-Israeli-Iranian Relations in the Nineties: Impact on the Middle East // Middle East Policy. Vol. VII, N.3, June 2000, p.152-155.
- 35 Bir Ç. Turkey's Role in the New World Order: New Challenges // Strategic Forum, INSS, N.135, February 1998.
- 36 Основные текущие программы модернизации самолетов вооруженных сил зарубежных стран // Зарубежное военное обозрение, N.5, 1999. С.35.
- 37 Abadi J. Constraints and Adjustments in Greece's Policy Toward Israel // Mediterranean Quarterly, Fall 2000, Vol.11, N.4, p.66-68.

- 38 O'Sullivan A. Turkish F-16s Use Israeli Base to Practice Evading S-300 Missiles // Jerusalem Post, 17.07.1998.
- 39 Киреев Н.Г. Турция и Израиль – стратегические союзники на Ближнем Востоке (хроника военно-политического сотрудничества в 1994-1997 гг.). С.165.
- 40 Inbar E. Regional Implications of the Israeli-Turkish Strategic Partnership // Middle East Review of International Affairs, Vol.5, N.2 (Summer 2001), P.51.
- 41 Larrabee F.S., Lesser I.O. Turkish Foreign Policy in an Age of Uncertainty. RAND: Santa-Monica, 2003. P.119.
- 42 Резаи А. Израиль в Центральной Азии // Аму-Дарья, N.1, 1999. С.103-104.
- 43 Велиев А. Треугольник Израиль-Турция-Азербайджан: реальность и перспективы // Центральная Азия и Кавказ, N.2 (8), 2000. С.105-111.
- 44 Сваранц А. Пантюркизм в геостратегии Турции на Кавказе. М., 2002. С.371-376.
- 45 Малеки М.-Р. Турецко-израильские отношения и их влияние на Центральную Азию и Кавказ // Аму-Дарья, N.2, 1999. С.44-50.
- 46 Rashid A. Taliban: Islam, Oil and the New Great Game in Central Asia. London, New York, 2002. P.154.
- 47 Berman I. Israel, India, and Turkey: Triple Entente? // Middle East Quarterly, Fall 2002, Vol.9, N.4; Kumaraswamy P.R., India and Israel: Evolving Partnership // BESA Mideast Security and Policy Studies, N. 40, Sept. 1998.
- 48 The Iranian Journal of International Affairs. Vol. XII, N1, Spring 2000. P.139-144.
- 49 Прокофьев А.В. Индийско-израильские отношения: десять лет // Ближний Восток и современность. Вып.14 / Отв. ред. Арунова М.Р. ИИИБВ, М. 2002. С.221-225.
- 50 Said M. K. Missile Proliferation in the Middle East: a Regional Perspective // Disarmament Forum, UNIDIR, N.2, 2001, P.58.
- 51 Farr W.D. The Third Temple's Holy of Holies: Israel's Nuclear Weapons // Counterproliferation Paper N2, USAF Counterproliferation Center, Air War College, Alabama, 1999. P.19-20.
- 52 Terrill A.W. Strategic Effects of the Conflict with Iraq: The Middle East, North Africa, and Turkey. U.S. Army War College, SSI: Carlisle, March 2003. P.11-13.
- 53 Larrabee F.S., Lesser I.O. Turkish Foreign Policy in an Age of Uncertainty. RAND: Santa-Monica, 2003. P.144.
- 54 Makovsky A. Turkish - Israeli Ties in the Context of Israeli – Arab Tension // WNEP, Policywatch N.502, 10 November 2000, (www.washingtoninstitute.org).
- 55 Turkish Backing to Israel Deteriorated // Turkey-Israel Politics, 10.27.2000, www.arabicnews.com/ansub/Daily/Day/010227/2001022706.html
- 56 Makovsky A. Turkish - Israeli Ties in the Context of Israeli – Arab Tension.
- 57 The Observer. A Quarterly Review of Cooperation: U.S., Turkey and Israel. JINSA, ATAA: Washington, N.4, October 2003. P.3-4.
- 58 Israel, Turkey Sign "War on Terror" Cooperation Pact // Ha'aretz, 27.12.2003.
- 59 Гурьев А.А. О турецко-израильских отношениях // ИИИБВ, 13.05.2005.
- 60 Sbu' Минасян С. Израиль - Турция: Военно-политическое и военно-техническое сотрудничество (в аспекте проблем региональной безопасности) // Центральная Азия и Кавказ, №1, 2004.
- 61 Гурьев А.А. О турецко-израильских отношениях // ИИИБВ, 13.05.2005.
- 62 Гурьев А.А. Турция – Израиль: по пути укрепления военного сотрудничества // ИИИБВ, 24.01.2006.
- 63 Kogan E. Cooperation in the Israeli-Turkish Defence Industry. CSRC, September 2005. P.4-5.
- 64 Гурьев А.А. Турция – Израиль: по пути укрепления военного сотрудничества // ИИИБВ, 24.01.2006.
- 65 Kogan E. Cooperation in the Israeli-Turkish Defence Industry. CSRC, September 2005. P.3-4.

- 66 Хмелинец С.М. О деятельности авиационно-промышленного комплекса Турции в период с 1998 по 2004 гг. // Ближний Восток и современность, Вып.23 / Отв. ред. Арунова А.Р., Филоник А.О. ИИИБВ, М., 2004. С.174.
- 67 Баскаков В. Горшков А. ПРО на европейском театре // Независимое военное обозрение, 31.10.2003.
- 68 Udum S. Missile Proliferation in the Middle East: Turkey and Missile Defense // Turkish Studies, Vol.4, N.3, Autumn 2003. P.93-94.
- 69 Гурьев А.А. Ситуация в Турции: август 2006 г. // ИИИБВ, 04.09.2006.
- 70 Гурьев А.А. О кадровых перестановках в высшем руководстве вооруженных сил // ИИИБВ, 14.08.2006.

ԹՈՒՐԿԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՏԵՂԾՄԱՆ ՊԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

Արսեն Հարությունյան

1. ՊԱՏՈՒԹՅՈՒՆ

Թուրքական գաղտնի ծառայությունները արժանանում են միջին դասեր, երբ օսմանյան կայսրության սուլթան Բայազիդի ժամանակ քեյ Քալսինը ստեղծեց ռազմական հետախուզությունը, իսկ մեծ վեզիր Մեհմեդ Զյուլիյուլուն կազմավորեց Գաղտնի ոստիկանության կաթինները:

20-րդ դարի առաջին տարիները օսմանյան գաղտնի ոստիկանությունը նշանակորեց հանրապետականների զանգվածային հալածանքներով, մայրամասներում ազգային շարժումների ահրեւելությամբ և Թուրքիայի հայերի Ցեղասպանությամբ: Հայերի կոտորածը շարունակեցին և երիտթուրքերը՝ իշխանությունը զավթելով սուլթան Աբդուլ-Համիդի կտարելուց հետո, որի համար հայ վրիժառու Մ. Թեհլեբյանը 1921թ. հետևեց և սպանեց Բեռլինում թաքնվող Գաղտնի ոստիկանության պետ և երիտթուրքերի կառավարության ներքին գործերի նախարար Մեհմեթ Թալեթ-Փաշային:

Երիտթուրքերի մյուս առաջնորդը, Էնվեր-Փաշան, որի վարույթում էր ռազմական հետախուզությունը, որը 1914-1916 թթ սատարում էր գերմանացիների գաղտնի գործողությունները Եվրոպայում, արտագաղթելուց հետո հայտնվեց իեդախոխական Ռուսաստանում, որտեղ միացավ Միջին Ասիայի քսանաչներին և զոհվեց կարմիրբանակայինների հետ մարտնչելիս:

Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի իշխանությամբ նոր Թուրքական հանրապետության սկիզբը դրվեց: Աթաթուրքը խզեց կապերը իսլամական իդոկրատիանության հետ և դեպի արևմուտք ու ԱՄՆ կողմնորոշված աշխարհի Թուրքիայի հիմքը դրեց:

Աթաթուրքի հետնորդ Իսմեթ Ինենյուկ և Գերմանիայի ղեկավար Հուլերի հետ կործանող խաղաղություններից հետո, 1943 թ.-ին Թուրքիան վերջնականապես անցավ Արևմուտքի դաշնակիցների համակարգ, իսկ պատերազմից հետո 1952 թ.-ին մտավ ՆԱՏՕ՝ երկար տարիների մեղմ իսլամական ղրիքորոշմամբ և նույնիսկ առաջինը մուսուլմանական պետություններից փորձեց լավ և դաշնային հարաբերություններ հաստատել Իսրայելի հետ: Թուրքական ռազմական հետախուզության ստեղծողներն ու կազմակերպիչները սուլթանյան բանակի զենքայններն ու սպաներն են, «Իթթիհադ վե բերաքքի» երիտթուրքական կուսակցության ղեկավարներն են, իսկ 1918 թ -ից քեմալական ազգային շարժման ներկայացուցիչները: Նոր ժամանակների թուրքական հետախուզությունը ձևավորվել է նախ որպես ռազմական հետախուզության մարմին, ինչը կապված է Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի նախապատրաստության և մասնակցության հետ, 1918-1920 թթ-ին Անդրկովկաս թուրքական ռազմական ներխուժման նախապատրաստության հետ, նաև Անտանտայի երկրների (Անգլիայի, ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Իտալիայի, Հունաստանի) դեմ ուղղված քեմալականների զինված պայքարի հետ:

Ռազմական հետախուզության վրա էր դրված նաև քաղաքական հետախուզության պարտականությունները, բանակային հետախուզության ստորաբաժանումների ղեկավարումը, հակահետախուզական խնդիրների կատարումը:

Քանի որ Օսմանյան կայսրությունը երկար ժամանակ (նախքան և Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին) դաշնակից էր և գտնվում էր Գերմանիայի ազդեցության ներքո, ուստի և հանրապետական Թուրքիան, որպես օրինակ, ընդունել է գերմանական հետախուզական ծառայությունը:

Գերմանական սպա հետախուզները գեներալ Լիման ֆոն Սանդերսի և ոչ անհայտ գնդապետ Վալտեր Նիկոլայի (առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում ղեկավարել է գերմանական հետախուզությունը) գլխավորությամբ 1908-1918 թթ-ին, այնուհետև 1925-1933 թթ - ին ակտիվորեն նպաստում էին թուրքական զինված ուժերի և հատուկ ծառայությունների ստեղծմանը, քեմալական հետախուզության հետագա զարգացմանը և կատարելագործմանը:

Գեներալ ֆոն Սանդերսի և գնդապետ Նիկոլայի անմիջական ղեկավարությամբ թուրքական ռազմական հետախուզությունը ձևավորվեց Թուրքիայի զինված ուժերի Գլխավոր շտաբի Հետախուզական բաժնի կազմի մեջ, այնուհետև (1949 թ.-ին) ծավալվելով մինչև Հետախուզական վարչություն:

1980-ական թթ.-ին թուրքական ռազմական հետախուզությունը ենթարկվեց հերթական կազմակերպական փոփոխությանը: 1983-1984 թթ.-ին ստեղծվեց Թուրքիայի զինված ուժերի Գլխավոր շտաբի Գլխավոր հետախուզական վարչությունը (ԹՅՈՒ ԳԿ ԳԿ):

ԹՅՈՒ ԳԿ ԳԿԿ – և հանդիսանում է որպես Թուրքիայի զինված ուժերի Գլխավոր շտաբի 4-րդ Գլխավոր վարչություն: Նրա ղեկավարի կոչումն է «կորպուսի գեներալ» կամ «ադմիրալ»: 1980-ականների վերջին ԳԿԿ-ի պետն էր ադմիրալ Ղոզրուզը:

Այժմ Թուրքիայում իրարից անկախ գործում են երեք հիմնական հատուկ ծառայություններ: Հատուկ ծառայությունների ապակենտրոնացման այս մեջ ընդունված է երրորդ աշխարհի երկրների մեծամասնության մոտ, ինչպես օրինակ, Իսրայելում և Իրաքում: Արտաքին հետախուզության համար Թուրքիայում պատասխանատու է MIT-ը (Milli İstihbarat Teskilati), Ազգային հետախուզական կազմակերպությունը, որը գտնվում է Անկարայում: Բացի սրանից, գոյություն ունեն Գլխավոր շտաբին կից Ռազմական հետախուզությունը (Թուրքիայի Գլխավոր շտաբի Գլխավոր հետախուզական վարչություն) և Ազգային ժանդարմերիան (Milli Gendarmerie), որը պատասխանատու է պետական անվտանգության, պետական պաշտպանության և սահմանապահ ծառայության համար:

Գաղտնի ծառայություններից յուրաքանչյուր ունի արագ արձագանքման իր հատուկ ստորաբաժանումները: MIT-ին է ենթարկվում « Դաշնագույն բերեներին» հատուկ նշանակության ջոկատը: Ժանդարմներն ունեն Ազգային ժանդարմերիայի հատուկ բաժնին կից «ժանդարմական կոմանդոները»: Ռազմական հետախույզները իրենց տրամադրության տակ ունեն APPK արագ արձագանքման կորպուսը, «Լեռնային կոմանդոս» խումբը, և «Յունուս» («Դեյֆին») մարտական լողորդների ջոկատը:

Երկրի պաշտոնապես ՆԱՏՕ մտնելուց առաջ, արդեն 1940-ականների

վերջից սկսած թուրքական հետախուզությունը ակտիվ համագործակցում էր ԱՄՆ-ի ԿԿԿ-ի և արևմտաեվրոպական հետախուզությունների հետ, հԱՄԿ-ի և Բալկաններում ու Արևելյան Եվրոպայում նրա դաշնակիցների դեմ ուղված գաղտնի գործողություններում: Թուրքական հատուկ ծառայությունների կցանքի բոլոր էջերը այս կամ այն կերպ կապված են երկրի ներսում ընդդիմության, ներառյալ քրդերի դեմ ուղված պատմիչ գործողությունների, մաֆիայի և ահաբեկիչների հետ կապերի, թուրք կամ թուրքամետ անշտառականների և օտարերկրյա գրոհայինների աստարման հետ:

2. MIT

MIT-ը Թուրքիայի արտաքին քաղաքական հետախուզության հիմնական համապետական կազմակերպությունն է: Կն ստեղծվել է 1965-1966 թթ.-ին, 1927թ-ից գործող Ազգային Անվտանգության Շառայության (Milli emniyet hizmeti – MEH) հիմքի վրա: 1965 թ. հուլիսի 22-ի թիվ 644 օրենքի համաձայն MIT-ը գործում է Թուրքիայի վարչապետին կից հիմնարկային կազմակերպության կարգավիճակով:

Թիվ 644 օրենքում նշվում էր միասնական կենտրոնացված մարմնի ստեղծման մասին, որը կապահովեր 1961 թ.-ի Ասիանախագրությանը ամրագրված բազմակուսակցական ժողովրդավարության պայմաններում ձևավորվող ազգային անվտանգության քաղաքականության մասին տեղեկատվությունը: Սույն օրենքով որոշվում էր, որ MIT-ի ղեկավարը ունենալու է առաջին փոխնախարարի կարգավիճակ և ենթարկվելու է անմիջապես վարչապետին: Որպես խորհրդատվական մարմին MIT-ի ղեկավարին կից նախատեսվում էր Ազգային համակարգող խորհրդի ստեղծումը, որին պիտի հանձնարարվեր հետախուզական նախապատվությունների մշակման և թուրքական հատուկ ծառայությունների պետական նշանակության հետախուզական աշխատանքների համակարգման խնդիրների լուծումը:

1980 թ.-ի սեպտեմբերին, հերթական զինված հեղաշրջումից հետո, Թուրքիայում տեղի ունեցավ ազգային հատուկ ծառայությունների և MIT-ի մասնակի վերակազմավորում: 1984 թ.-ի հունվարին երկրի պատանհանող (Թուրքիայի Գերագույն Ազգային Ժողով) ընդունեց «Պետական հետախուզական ծառայությունների կարգավիճակի և Թուրքիայի Ազգային հետախուզական կազմակերպության մասին» թիվ 2937 օրենքը, որտեղ առավել հստակ ձևակերպված են MIT-ի իրավունքները, պարտականությունները և իրավասությունները, նրա կարգավիճակը ինչպես ազգային հատուկ ծառայությունների ընդհանրության մեջ, այնպես և պետական այլ հաստատությունների համակարգում:

MIT-ը ապահովում է հետախուզական և հակահետախուզական ծառայությունների գործունեության ամբողջ համակարգի օպերատիվ կառավարումը, ենթարկվում է անմիջապես վարչապետին, գլխավորվում է վարչապետի խորհրդականի կողմից: Նրանում կուտակվում և վերլուծվում է հետախուզական գործունեության, արտաքին և ներքին քաղաքականության, ազգային անվտանգության խնդիրների հետ առնչվող թուրքական տարբեր գերատեսչություններից և կազմակերպություններից ստացվող տեղեկատվությունը: Հետախուզական տեղեկատվության մշակումից հետո նյութերը MIT-ից ուղարկվում են նախագահին, վարչապետին, գլխավոր շտաբի պետին, Ազգային Անվտանգության Շառայության պետին և Թուր-

քիայի այլ շահագրգիռ գերատեսչություններ ու կազմակերպություններ:

Նրա խնդիրները հետևյալն են՝ հետախուզական-տեղեկատվական գործունեության իրագործումը, մասնակցությունը հետախուզական ներգործության միջոցով Թուրքիայի արտաքինքաղաքական նպատակների իրագործմանը, «գաղտնի դիվանագիտության» միջոցառումների իրականացումը, «հոգեբանական պաշտպանությունը» ուղված հատուկ միջոցառումների նախապատրաստումը և իրականացումը, հետախուզական գործունեության ապահովումը, օտարերկրյա հատուկ ծառայությունների ու կազմակերպությունների հետախուզական, կամ այլ քայքայիչ գործունեությանը հակազդումը (քացահայտում, կանխազգուշացում և կասեցում), հետախուզական գործունեության համակարգման ապահովումը, Թուրքիայի հետախուզական համայնքի համար հիմնական (առաջնահերթ) խնդիրների մշակումը, ձեռքբերվող հետախուզական տվյալների հիման վրա Թուրքիայի անվտանգությանը և ազգային շահերին գոյություն ունեցող կամ հավանական սպառնալիքների որոշումը, հետախուզական և հակահետախուզական գործունեության ծրագրումը, ազգային անվտանգության հարցերով Ազգային Անվտանգության խորհրդի և Թուրքիայի վարչապետի համար խորհրդատվության մշակումը, օտարերկրյա հատուկ ծառայությունների հետ համագործակցությունը:

MIT-ը ինքնուրույն հետախուզական կազմակերպություն է, ենթարկվում է միայն երկրի վարչապետին: Ստեղծման օրից առ այսօր MIT-ի կառուցվածքը զգալի փոփոխությունների է ենթարկվել: Նրա հիմնական կառուցվածքային ստորաբաժանումներն են.

- Արտաքին հետախուզության գլխավոր վարչությունը կամ գործողությունների տնօրինությունը,
 - Ներքին հետախուզության (հակահետախուզության) գլխավոր վարչությունը
 - Հոգեբանական պաշտպանության գլխավոր վարչությունը
 - Տեղեկատվական վարչությունը
 - Կազմակերպված հանցագործության հետ պայքարի վարչությունը և այլն
- Հոգեբանական պաշտպանության գլխավոր վարչությունը լուծում է խնդիրներ, կապված Թուրքիայում և արտասահմանում քրոսական և այլ ազգային շարժումների վրա գաղափարա - հոգեբանական ներգործության կազմակերպման և իրականացման ուղղությամբ, Փոքր և Առաջավոր Ասիայի, Բալկանների և Կովկասի ոչ թուրք ժողովուրդների իրատեսական պատմության խեղաթյուրման ուղղությամբ, Թուրքիայի, թուրք և այլ թուրքական ժողովուրդների մասին կանխանապատակ գիտական և քաղաքական գրականության պատրաստման և տարածման ուղղությամբ, պանթուրքության և պանթուրանության գաղափարների քարոզման ուղղությամբ: պանթուրքության և Թուրքիայի շահերի լոբիստական գործունեության իրագործման ուղղությամբ՝ օգտագործելով արտասահմանյան պանթուրքական կազմակերպությունների, թուրքական աֆիուռքի, թուրքական լեքնիկ խմբերի, և նրանց լրատվական կենտրոնների (մամուլ, օադիո, հեռուստատեսություն) հնարավորությունները, Թուրքիայի բնակչության և բանակի վրա հոգեբանական և գաղափարախոսական աղեղնության դեմ կանխազգելիչ միջոցառումների իրագործման ուղղությամբ (հակաքաղաքական միջոցառումների իրականացում):

MIT-ին են ենթարկվում շրջանային (տարածքային) վարչությունները: MIT-ի տարածքային բոլոր ստորաբաժանումները համագործակցում են ապաստարկվող տարածքում տեղակայված զորամասերի հրամանատարությունների հետ, զորամասերի հակահետախուզական ստորաբաժանումների հետ, սուսիկանության, ԹԱԳՏ-ի և ժանդարմերիայի հետ:

MIT-ը խիստ զարտնիացված և ազդեցիկ պետական կազմակերպություն է: Նախքան 1990-ական թթ. այն կատարում էր հակահետախուզության դեր Թուրքիայի տարածքում: 1980-ականների վերջից, Թուրքիա Օզալի իշխանության գալուստ պես, MIT-ի վերակազմավորման միտում նկատվեց նրա կապերը երկրի զինվորական ղեկավարության հետ թուլացնելու նպատակով:

Թուրքիայի նախկին վարչապետ և նախագահ Թուրգուօ Օզալը MIT-ի վրա գլխավոր շտաբի և զինվորականների ազդեցության սահմանափակման կողմնակիցն էր: Նա լուրջ տարածայնություններ ուներ զինված ուժերի հրամանատարության հետ MIT-ի գործունեության վերահսկողության վերաբերյալ: Այդ կապակցությամբ նա փորձում էր վերանայնացնել MIT-ի դերն ու տեղը պետության քաղաքական համակարգում, թուլացնել MIT-ի զգալի կախվածությունը զինվորական ղեկավարությունից՝ միաժամանակ խստացնելով նրա գործունեության վերահսկողությունը քաղաքացիական կառավարության կողմից³:

1980-ականների վերջում Թուրգուօ Օզալի ցուցումով պատրաստվել էր օրինագիծ, որում մասնավորապես նախատեսված էր MIT-ի կազմում քաղաքացիական անձանց թվի ավելացում, MIT-ի մի շարք «ներքին» (հակահետախուզական) գործողությունների փոխանցում Թուրքիայի Անվտանգության Գլխավոր Տնօրինությանը և Ներքին Գործերի Նախարարության քաղաքական բաժիններին, MIT-ի ջանքերի կենտրոնացում արտասահմանում հետախուզական աշխատանքի վրա, MIT-ի արտասահմանյան հետախուզական և արտաքին հակահետախուզական աշխատանքների աշխուժացման նպատակներով լրացուցիչ միջոցառումների ընդունում: Թ. Օզալը նույնպես շահագրգռված էր MIT-ի խորհրդականի պաշտոնին նշանակել քաղաքացիական անձի և MIT-ի կազմի մեջ լրացուցիչ ընդգրկել քաղաքացիական անձանց:

«Ապառազմականացման» և Թուրքիայի պետական մարմինների համակարգում MIT-ի դերի բարձրացման բնորոշ արտահայտություններից է 1992 թ.-ի հոկտեմբերին MIT-ի ղեկավարի պաշտոնին կադրային դիվանագետ Սենմեզ Բեքալի նշանակումը:

Նա ձգտեց վերջ դնել հետախուզության հաստիքները կադրային զինվորականներով լրացնելու հնամենի պահողույթին, սկսեց աստիճանաբար MIT-ը վերածել քաղաքացիական գերատեսչության: MIT-ի նոր խորհրդականը լուրջ փոփոխություններ կատարեց, հիմնական ուշադրությունը կենտրոնացնելով իշխանությունների և երկրի կառավարման գերագույն մարմինների համար արտածվող հետախուզական տեղեկատվության ստացման և պատրաստման որակի վրա, ռադիոէլեկտրոնային հետախուզության հիմնական ստորաբաժանումների տեխնիկական վերազինմանը՝ ձգտելով հասցնել այն ԿԿԿ-ի և «Մոսադ»-ի մասնատիպ ստորաբաժանումների մակարդակին:

Նրան հաջողվեց ավելացնել MIT-ի ռադիոէլեկտրոնային հետախուզա-

թյան կարիքների համար ամերիկյան ժամանակակից բարձրակարգ հատուկ սարքավորումների ներկրումը, հասնել «ազդեակարական տեխնոլոգիաներ» կոչվող և ԱՄՆ-ից դուրս տանելու արգելքի ներքո գումկող գաղտնի հատուկ սարքավորումների պաշտոնական ճանապարհերով գնման արգելքների վերացմանը: Սակայն Թուրգուօ Օզալի մահը (որոշ թուրք փորձագետներ հավելված են մտածել, որ նախագահ Օզալը մահացել է հատուկ ծառայությունների միջամտությամբ) և Թուրքիայում իրադարձությունների հետագա զարգացումները հնարավորություն չենձեռնցին ավարտին հասցնել MIT-ի արդեն սկսված քաղաքական վերակառուցումը, և զինվորականների դիրքերը երկրի գլխավոր հետախուզական մարմնում շարունակում են մնալ ուժեղ⁴:

MIT-ի քաղաքական նպատակները և խնդիրները

Հիմնական նպատակն է՝ շահ պետության, հետախուզական և հակահետախուզական բնույթի տեղեկատվության հետախուզում: Մշակված հետախուզական տեղեկատվությունը ղեկավարում է նախագահին, Գլխավոր Շտաբի պետին, Թուրքիայի Ազգային Անվտանգության խորհրդի Գլխավոր քարտուղարին: MIT-ի պարտականությունների մեջ է նաև օտարերկրյա հատուկ ծառայությունների հակազդման ապահովումը՝ հակահետախուզական գործունեությունը:

Կազմակերպությունների և քաղաքացիների պարտականությունները

և պատասխանատվությունը MIT-ի առաջ
Նախարարությունների և գերատեսչությունների, հասարակական և այլ կազմակերպությունների պարտականությունների մեջ մտնում է հետախուզական բնույթի ցանկացած տեղեկատվության անհապաղ տրամադրումը MIT-ին, MIT-ի պահանջով անհրաժեշտ տեղեկատվության հայայթումը և մատուցումը, աջակցությունը հակահետախուզական գործունեությունը:

Բոլոր նախարարությունները և գերատեսչությունները, հասարակական կազմակերպությունները և ֆիրմաները, մասնավոր անմիջ, պարտավոր են հնարավորինս աջակցել MIT-ի աշխատակիցներին ըստ պահանջի: Այլապես նրանք ենթակա են դատական հետապնդման:

MIT-ի աշխատակիցների դատական հետապնդումը

MIT-ի աշխատակիցների դատական հետապնդումը հնարավոր է միայն վարչապետի թույլտվությամբ:

MIT-ի աշխատակիցների վկայությունները

MIT-ի աշխատակիցների վկայությունները զարտնիության պահպանման նպատակով կարող են թուլատրվել միայն MIT-ի խորհրդականի կողմից:

MIT-ը և հասարակությունը

MIT-ը ուշադիր հետևում է հասարակության իրավիճակին, աշխատում է ՋԼՄ-ների հետ անմիջական շփումներով: Թուրքիայի ազգային շահերի վերաբերյալ Թուրքիայի Զրեական Օրենսգրքի 159-րդ հոդվածի, թիվ 2937 Օրենքի 27-րդ հոդվածի, կամ թիվ 3713 Օրենքի 6-րդ հոդվածների խախտ-

ման դեպքում MIT-ը իրավասու է դիմել Արդարադատության Նախարարության համապատասխան մարմիններին՝ պահանջելով քրեական հետապնդում անձանց, կազմակերպությունների, կամ ՋԱՍ-ների այլ մարմինների նկատմամբ:

MIT-ը ՆԵՐԿԱՅՈՒՄ

Ներկայիս MIT-ը կազմավորվել է 1965 թ.-ի հուլիսի 22-ին: Այժմ այդ կառույցը եվրոպականացվել է, սերտ համագործակցում է ԱՄՆ-ի հատուկ ծառայությունների հետ: Այսօր MIT-ի պատասխանատվության շրջանակներում է պայքարը կոմունիստական և ծայրահեղ-աջ շարժումների, մաս անջատողական ջրղների (ինչպես երկրի ներսում, այնպես և դրսում) և հայերի հետ: Սակայն հին սովորույթները պահպանվում են: Շարունակում են համա՝ լուրեր շրջանառվել MIT-ի կապերի մասին ահաբեկչական կազմակերպությունների հետ, այդ թվում և «Գորշ գայլեր» ծայրահեղ աջ խմբավորման հետ: Դրանից զատ, զինվորականները ավանդաբար մեծ դեր են խաղում երկրի քաղաքական կյանքում: ԵՎ MIT-ի սպաները բոլորովին էլ բացառություն չեն կազմում: Նրանք իրենց համարում են առանձին գաղափարախոսության կրողներ – Օտտոմանյան կայսրության կարողի և աշխարհի հատուկ ծառայություններից ընդօրինակված կարգուկանոն հաստատելու մզման խառնուրդ: Արդյունքում երկրի ղեկավարությունը հարկարժված է անընդհատ հավասարակշռվել սեփական սպայության և իր հարևանների շահերի միջև:

MIT-ը վերակազմավորումից հետո, կազմակերպական կառուցվածքը և խնդիրները

MIT-ի կազմակերպական կառուցվածքը 1995 թ.-ից սկսած և 1996 թ.-ին շարունակված փոփոխությունների արդյունք է:


Սխեմա թիվ 1

Բացի տվյալ սխեմայում նշված մասնաճյուղերից, MIT-ի կազմի մեջ են նաև երկու առանձին կենտրոններ՝ «Ապահապեկչական (Kontra-Terror Merkezi) և Ուսումնական (Milli Istihbarat Teskilati Egitim Merkezi – MİTEM), որոնք առանձին ստորաբաժանումներ են⁵: Կառույցի մեջ առանձին տեղ են զբաղեցնում երկրի ներսում տեղեկատվություն հավաքող Մասնաճյուղը և MIT-ի արտասահմանյան ներկայացուցիչները : Ըստ 1998 թ.-ի տվյալների, MIT-ը կազմված էր 13 տարածքային վարչություններից, որոնք ենթարկվում էին MIT-ի տնօրենին: MIT-ի առանցքային մասնաճյուղերը ներկայացված են հետևյալ կերպ

Հետախուզության և տեղեկատվության հավաքման մասնաճյուղ. Բազմազան նյութեր է հավաքում բոլոր մատչելի աղբյուրներից, ինչպես երկրի ներսում, այնպես և դրսում: Տեղեկատվություն կուտակվում է տվյալների միացյալ բազաներում, այնուհետև վերլուծվում է համապատասխան վերլուծական ստորաբաժանումների կողմից: Մասնաճյուղի կազմի մեջ են մտնում երեք բաժիններ

- Կտանգների գնահատման (Tehditler)
- Հակահետախուզության
- Ուղղակարական հետախուզության

Սխեմա 1
MIT-ի կառուցվածքը 1998 թ.



Տեղեկատվության վերջնական մշակմամբ և վերլուծությամբ զբաղվում է ռազմավարական հետախուզության բաժինը, որը նույնպես կարող է մշակված տվյալները վերջնական հասցեագրելով հասցնելու համար⁶:

Օպերատիվ մասնաճյուղ. Պատասխանատու է MIT-ի տեսությունների հայտնված օբյեկտների, ինչպես նաև տրայեկտների դեմ ուղղված օպերատիվ և հատուկ միջոցառումների կատարման համար: Ցանկություն ունի տուկ ծառայության օպերատիվ ստորաբաժանման գործունեության խիստ գաղտնիացված է, և MIT-ի օպերատիվ մասնաճյուղը, արդյունքում

հատուկ ծառայություն է հատուկ ծառայության ներսում:

Հոգեբանական հետախուզության մասնաճյուղ MIT-ը կիրառում է հոգեբանական ներգործության հասկացությունը, որը հանրեկնում է ԱՄՆ-ի նմանատիպ հասկացության հետ: Հոգեբանական ներգործությունները ՋԱՄ-ների ծրագրած կիրառումն են և գործողությունների իրագործումը արտասահմանյան լատինական որոշակի տեղեկատվություն հասցնելու նպատակով⁷: Ներգործությունը նպատակ է հետապնդում ազդել արտասահմանյան կառավարությունների, կազմակերպությունների, անձանց խմբերի և անհատ անձանց վարքի և գիտակցության վրա՝ հատկապես ճգնաժամային իրավիճակներում հասնելով անհրաժեշտ արդյունքի: Ըստ ստանդիլդ արդյունքի, հոգեբանական ներգործությունը MIT-ի կողմից դասակարգվում է հետևյալ կերպ

- Ուզանվարական հոգեբանական ներգործություն
- Օպերատիվ հոգեբանական ներգործություն
- Մարտավարական հոգեբանական ներգործություն

Ուզանվարական հոգեբանական ներգործությունները երկարաժամկետ նպատակներ ունեն և կարող են իրա գործվել, ինչպես խաղաղ պայմաններում, այնպես և պատերազմի ժամանակ: Որպես անհրաժեշտ արդյունք, կարող են հանդես գալ, օրինակ, հակառակորդի մարտական ոգու խոցախորումը, վախի կամ խուճապի մթնոլորտի ստեղծումը, սոցիալական դժգոհության և հակապետական ելույթների իրահորումը, իշխանական շրջանակներում պատակտում սերմանելը և այլն:

Օպերատիվ հոգեբանական ներգործությունները մարտական գործողությունների անբնական մասն են կազմում և ուղված են, ինչպես զինված ուժերի, այնպես և քաղաքացիական բնակչության դեմ: Արդյունքում հանդես են գալիս մարտական ոգու անկում և անկազմակերպվածություն զինված ուժերում, պատակտում բանակի և երկրի քաղաքական ղեկավարության միջև, խուճապ քաղաքացիական հասարակության մեջ, ապատեղեկատվական միջոցառումների իրագործում և այլն:

Մարտավարական հոգեբանական ներգործությունները կիրառվում են անմիջական և կարճաժամկետ արդյունք ստանալու նպատակով և ուղված են, ինչպես զինված ուժերի, այնպես և քաղաքացիական հասարակության դեմ: Ներառում են հակառակորդի մարտական ոգու խոցումը, գեղի հանձնվելու իրահորումը, ապատեղեկատվությունը և այլն:

Թուրքիան միշտ հատուկ ուշադրություն է դարձրել հոգեբանական պատերազմի վրա և պսի-օպերացիաների իրագործման նպատակով ներդրվել են ոչ միայն MIT-ին, այլ նաև պետական այլ մարմիններ և ուժեր: Մ. Իլիադիսի կարծիքով, Թուրքիան միշտ մեծ ուշադրությամբ է վերաբերվել հակառակորդի հոգեբանական տրամադրվածությանը և բարդական ոգու վիճակին, հատկապես ռազմական ոլորտում: Իրենց ամբողջ պատմության ընթացքում թուրքական հատուկ ծառայությունները կազմակերպել և իրականացրել են պսի-օպերացիաներ: Դեռ նախքան MIT-ի ստեղծումը, Թուրքիայում գոյություն ուներ անկախ հոգեբանական պաշտպանության ծառայություն (Psikolojik Savunma Baskanligi), որը 1965 թ.-ին վերակազմավորվեց և որպես մի ստորաբաժանում, մտավ MIT-ի կազմի մեջ: 1996 թ.-ի նոյեմբերին Թուրքիայի Գլխավոր Շտաբի հոգեբանական գործողությունների Վարչությունը անկախրեց իր առաջին խորհրդակցու-

թյունը՝ նվիրված Թուրքիայի քաղաքականությանը հոգեբանական պատերազմի բնագավառում⁸:

Էլեկտրոնային և տեխնիկական հետախուզության մասնաճյուղ. Վերակազմավորման ընթացքում մասնաճյուղը լուրջ փոփոխությունների չի ենթարկվել, քանի որ տվյալ ճյուղի նպատակները և խնդիրները մնացել են անփոփոխ: Փոփոխությունները ուղված էին ստորաբաժանման հզորացմանը և հետախուզման էլեկտրոնային ու տեխնիկական միջոցներով տեղեկատվության հավաքման և մշակման գործնաչափ արդյունավետության բարձրացմանը: Մասնաճյուղի գործունեության հիմնական ուղղություններն են գրաբանական ծառայությունը, ռադիոհետախուզությունը, հետախուսապատմությունը, ռադիոէլեկտրոնային պայքարը, գաղտնագրերի հայտնաբերումը և գաղտնագրերում, հետախուզման մեջ բարձր տեխնոլոգիաների կիրառումը (որին հատուկ ուշադրություն է դարձվում):

Հավաստի տվյալներ կան ռադիոհետախուզության գերմանական և ամերիկյան հին սարքավորումների ամերիկյան և իսրայելյան արտադրուկան նորագայնով փոխարինման մասին (Rohde & Schwarz, Watkins & Jonson և այլն): Ռադիոհետախուզության ամերիկյան նոր սարքավորումների ներմուծումը, մեր տեղեկությամբ, սկսվել է 1995 թ.-ից, երբ ԱՄՆ-ն Թուրքիա ուղարկեց երկու փորձագետ մասնագետի, որոնք տվյալ սարքավորումների վերաբերյալ դասախոսությունների շարք կարդացին: Դրան հաջորդեց Թուրքիայի խնդրանքը տվյալ սարքավորումների գնման մասին, որը, սակայն, հենց ԱՄՆ-ի համար բյուրոկրատական խոչընդոտների հանդիպեց, քանի որ դրա թույլտվության համար անհրաժեշտ էր ստանալ որոշ կառույցների և կազմակերպությունների համաձայնությունը: Խնդիրը, վերջապես, լուծվեց ԿՀԿ տնօրենի անձնական միջամտությամբ, նրա թուրք կոլեգայի խնդրանքով: Ամերիկյան կողմի հետ պայմանավորվածություն մեջք բերելուց հետո նմանատիպ խնդրանք եղավ Իսրայելին, որը նույնպես առաջադիմել էր ռադիոհետախուզության հարցերում: Մասնաճյուղի հնարավորությունները անհրաժեշտ է գնահատել, հաշվի առնելով գաղտնապահման և կապի միջոցների հայտնաբերման ունակություններով օժտված թուրքական երկու TURKSAT 1B և TURKSAT 1C արբանյակների գործարկումը: Անշուշտ, այսօր MIT-ի տեխնիկական միջոցները արդեն տիեզերական նորացվել են, սակայն 1990-ական թթ.-ի կեսերի վերջ նշված պատմությունը որոշակի հետաքրքրություն է ներկայացնում թուրքական հետախուզության և նրա տեխնիկական սպասարկման, գոյություն ունեցող ուղիների հետ դաշնային կապերի տեսանկյունից:

Համակարգչային համակարգերի մասնաճյուղ. Ինչպես և ցանկացած այլ հատուկ ծառայություն, այնպես և MIT-ը լայն կիրառում է տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) հնարավորությունները: Հետախուզական տվյալների էլեկտրոնային մշակման միացյալ համակարգի ներդրումը MIT-ում իրականացվել է 1970-ական թթ.-ի վերջում արևմտագերմանական BND (Ֆեդերալ Հետախուզական ծառայություն) հատուկ ծառայության օգնությամբ, որի խորհրդով 1978 թ.-ին սկսվեց MIT-ի միասնական համակարգչային ցանցի ստեղծումը: Մեր կարծիքով, տասնյակ հազարավոր մեքրականությունները, որոնք իրականացվեցին Թուրքիայում 1980 թ.-ի դեկտեմբերի 12-ի հեղաշրջումից հետո, անհնարին կլինեին առանց MIT-ի համակարգչային տեղեկատվական միջոցների աջակցության:

MIT-ը մեծ ուշադրություն է դարձնում տվյալների բազաների և տեղեկատվական ճյուղավորված համակարգի զարգացմանը, որի մեջ են մտնում MIT-ի տարածքային բոլոր վարչությունները: 1998 թ.-ին MIT-ի համակարգչային ցանցը համարվում էր ամենամեծը: Ստույգ տեղեկություններ պետական այլ մարմինների տվյալների բազաների և տեղեկատվական համակարգերի հետ համագործակցության մասին չկան, սակայն, կամկատ չկա, որ այդպիսիք կան, և MIT-ի տեղեկատվական համակարգը կապված է, առնվազն ՆԳՆ-ի, ԱԳՆ-ի Տեղեկատվական Ծառայության, Գլխավոր Շտաբի Ուղեգնական Հետախուզության և Թուրքիայի ժանդարներիայի նմանատիպ համակարգերի հետ¹⁰:

Անճանաչվող – համարյուրը և պատրաստուրը. Շատ կանոնի, անճանաչվածի թիվը որոշում է MIT-ի ղեկավարությունը և կարող է տատանվել: MIT-ի թվաքանակը ստույգ հայտնի չէ, սակայն, կողմնակի տվյալներով, նաև թուրքական զանազան այլ աղբյուրների տեղեկատվությամբ, կարելի է ենթադրել, որ այն կազմում է 4500-5000 մարդ: Համեմատելով այլ հատուկ ծառայությունների թվաքանակի հետ (օրինակ, ԿՀԿ-ի կադրային աշխատակիցների թիվը 1998 թ.-ի տվյալներով մոտ 5000 մարդ էր)¹¹ կարելի է եզրակացնել, որ MIT-ի քանակը ուժեղացված է: Մեծ քանակը հնարավորություն է տալիս MIT-ին զբաղվել հետախուզական գործունեությամբ և տեղեկատվության հայթայթմամբ, ինչպես Թուրքիայից դուրս, այնպես և երկրի ներսում¹²: MIT-ի անճանաչվող բաղկացած է, հիմնականում սպաներից, նաև պայմանագրային աշխատակիցներից: Օգտագործվում է նաև զինվորականությունը:

Մեր տվյալներով, գոյություն ունեն տարբեր հավասարակա կարծիքներ MIT-ի սպայական կազմի քանակի մասին: Որոշ տվյալներով, նրանց կազմում են 10, այլ տվյալներով մոտ 20% ընդհանուր թվից: Օրինակ, թուրքական լրատվամիջոցների համաձայն, MIT-ում ծառայող գործող և պաշտոնաթող զինվորական սպաների թիվը հասնում է 20 տոկոսի, իսկ մնացած 80 տոկոսը կազմում է քաղաքացիական անճանաչվող: Եթե հավաստեցնույն աղբյուրին, ապա այս 20 տոկոսը զբաղեցնում են MIT-ի առանցքային և ղեկավար պաշտոնների 80 տոկոսը, որոնք պարտավոր են իրավասացնել ոչ միայն քաղաքացիական անճանաչվողի հսկողությունը, այլ և համապատասխան ազդեցություն ունենալ նրանց վրա, նրանց հետագա ծառայողական առաջադիմության նպատակով¹²:

MIT-ի աշխատակից դառնալու թեկնածուն պարտավոր է ունենալ համալսարանական (թուրքական կամ արտասահմանյան) դիպլոմ, օժտված լինել գերազանց գիտելիքներով, ամրակված մեկ օտար լեզվի իմացությամբ: Նախքան թեկնածուի մասնագիտական ունակությունները գնահատելը կատարվում է խիստ ստուգում ամփոփագրության մարմինների կողմից, որը կարող է տևել մինչև մեկ ու կես տարի և ավարտվում է հարցազրույցով MIT-ի սպաների հետ: Այդքանից հետո թեկնածուին թույլատրվում է հանձնել քննություններ լեզվից և քաղաքացիական մասնագիտությունից:

Ծառայության ընդունվելուց հետո նորակոչիկները ստորագրում են պայմանագիր 5 տարով և ուղարկվում են MIT-ի Ուսումնական կենտրոն (Milli Istihbarat Teskilati Egitim Merkezi – MITEM) 6-ամյա կյանքի, որտեղ դասավանդում են թուրքական համալսարանների լավագույն դասախոսները: Որպես դասավանդվող առարկաների օրինակ, կարելի է նշել ռազ-

մավարության տեսությունը, միջազգային հարաբերությունների պատմությունը, Թուրքիայի արդի խնդիրները: Ենթադրվում է, որ հենց այստեղ, կուրսը ավարտելուն պես, MIT-ի ապագա աշխատակիցները երդում են տալիս պետական գաղտնիքները չտարածելու մասին և ուղարկվում են հետագա ծառայության վայրեր¹³:

Թեև չկան տվյալներ թեկնածուներին ստի հայտնաբերելով ստուգելու մասին, այնուամենայնիվ, դա բոլոր հատուկ ծառայությունների համար ընդունված ճն է, որը լայն կիրառություն ունի ԿՀԿ-ում: MIT-ի հիմնական գործընկերոջ մոտ: Որպես դրա կողմնակի ապացույց, կարելի է համարել 1980-ական թթ.-ին Թուրքիայի կողմից համապատասխան սարքավորումների ձեռքբերման մասին տեղեկատվությունը:

Շատ զանազան աղբյուրների, MIT-ի նորակոչիկներին 4-5 տարի է անհրաժեշտ լիարժեք և փորձառու օպերատիվ աշխատակից դառնալու համար: MIT-ի աշխատակիցը չի կարող լքել ծառայությունը նախքան ստորագրված պայմանագրի ավարտը: Եթե այս կամ այն պատճառով պայմանագիրը խզվում է, ապա նորակոչիկին արգելվում է որևէ պաշտոն զբաղեցնել պետական կառույցներում 5 տարի ժամկետով: Այն աշխատակիցները, որոնք այդպես էլ չեն կարողանում հարմարվել MIT-ում ծառայելու յուրահատկությանը, կարող են տեղափոխվել պետական այլ կառույցներ վերադառնալով ղեկավարի համապատասխան միջնորդությամբ, MIT-ի տնօրենի առաջարկով և վարչապետի հավանությամբ:

Նորակոչիկների պատրաստումը Ուսումնական կենտրոնում չի համարվում վերջնական: Ծառայության ամբողջ ընթացքում, 3-4 տարին մեկ, MIT-ի յուրաքանչյուր աշխատակից անցնում է վերապատրաստման և որակավորման տարբեր կուրսեր, որոնք տևում են մի քանի շաբաթ կամ մասի: Կապված աշխատակիցի մասնագիտության հետ՝ ուսուցումը իրականացվում է այս կամ այն ստորաբաժանումներում: Հիմնական ուշադրությունը հատկացվում է նորակոչիկի հատուկ գիտելիքների ընդլայնման և խորացման վրա:

MIT-ի անճանաչվողի պատրաստման համակարգում կարևոր դեր են խաղում արտասահմանյան հատուկ ծառայությունների (ինչպիսիք են ԿՀԿ-ն և «Մոսսադ»-ը) մասնակցությամբ անընդհատ կազմակերպվող ֆորումները և սեմինարները¹⁴:

Բազային ուսումնական հաստատությունները, որտեղից հավաքագրվում են MIT-ի կադրերը, Անկարայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետն է, «Բիլքենդ» մասնավոր համալսարանն է, Միջինարևելյան տեխնիկական և Բոսֆորի համալսարաններն են: MIT-ում աշխատելու համար կադրերի ընտրության ժամանակ նախապատվությունը տրվում է նաև ԱՄՆ-ում, Անգլիայում, Ֆրանսիայում, ԳՖՀ-ում ԲՈՒՀ-եր ավարտած երիտասարդներին: MIT-ի կազմում ընդգրկվելու թեկնածուները պետք է ունենան նրա աշխատակիցների երկու գրավոր երաշխավորագիր, որոնցում, բնութագրվողների գործնական և անճանաչ հատկություններից գալու, պարտադիր նշվում է նրանց քաղաքական հուսալիությունը և նվիրվածությունը Թուրքիայի ազգային շահերին:

1990 թթ.-ին երիտասարդ աշխատակիցների հավաքագրման և ուսուցման համակարգում տեղի ունեցան որոշակի փոփոխություններ: Թեկնածուների ընտրության ժամանակ պարտադիր պայման է դարձել երկու

օտար լեզվի իմացությունը (նախկինում մեկի փոխարեն) և զինծառայությունը ավարտած լինելը: Եթե նախկինում MIT-ի աշխատակիցներին և ղեկավարներին արգելվում էր իրենց կազմակերպության անունից հանդես գալը, որևէ հայտարարություն անելը ՋԱՄ-ներում, ապա 1994-1996 թթ.-ին առաջին անգամ այդ հետախուզական ծառայության պատմության մեջ թուրքական մի շարք թերթերում հայտարարություններ հրապարակվեցին իրավաբանական ֆակուլտետների, իրավունքի և քաղաքագիտության, նաև երկրի տեխնիկական ԲՈՒՀ-երի շրջանավարտների՝ իրավունքի, քաղաքագիտության, համակարգչային տեխնիկայի, ռադիոէլեկտրոնիկայի, էլեկտրատեխնիկայի և մաթեմատիկայի բնագավառների մասնագետներին, MIT-ում լրացուցիչ աշխատանքի ընդունելության մասին:

MIT-ում աշխատանքի են հավաքագրվում սյունի-սլամ դավանող պանթրոնի և գաղափարակիր բարձրագույն կրթությամբ անձինք (առավելապես սպաներ): Թուրք հետախույզները գրված են ընտրություններին մասնակցելու իրավունքից ընդհանրապես: Օրենսդրական կարգով նրանց արգելվում է պետական ծառայության համատեղումը քաղաքական կուսակցություններում և կազմակերպություններում գործունեություն հետ:

MIT-ում աշխատելու թեկնածուները և աշխատակիցները պատրաստվում են, ինչպես ընդհանուր ակադեմիական ԲՈՒՀ-երում, այնպես և հատուկ ակադեմիաներում և դպրոցներում: MIT-ում նրանց աշխատանքի ընդլայնումը համապատասխան նրանք կարող են ուղարկվել ուսման, ինչպես Թուրքիայի, այնպես և արտասահմանյան բարձրագույն ուսումնական հաստատություններ (համալսարաններ, ակադեմիաներ, ինստիտուտներ, բարձրագույն դպրոցներ):

Օրինակ, Թուրքիայի կրթության նախարարության գծով 1999-2000 թթ.-ի ուս. տարում մի շարք թուրքական մասնագետներ ուղարկվել են Ամենկողմերը իրազեկում համալսարան հայոց լեզու ուսումնասիրելու, հետագայում Անկարայի համալսարանում հայոց լեզվի և զրականության ամբիոնի հիմնելու նպատակով: Նրա պրոֆեսոր Ալի Երկան Երկեյի խոսքերով, արդեն վեց ամսից (այսինքն, 2000-2001 թթ.-ի ուս. տարվա սկզբին) առաջինը ամբողջ պատմության ընթացքում հայալեզուության ամբիոնը կլվաի պատրաստել համալսարանիսան կադրեր¹⁵: Հասկանալի է, որ հայոց լեզուն և զրականությունը հազիվ թե Անկարայի համալսարանին հետաքրքրեին զուտ գիտական նկատառումներով: Կյստեղ հստակ նշմարվում են Թուրքիայի որոշակի քաղաքական և երկարաժամկետ հետախուզական նպատակները և խնդիրները, ուղղված, առաջին հերթին, Թուրքիայի տարածքում անջատողական գաղափարախոսության (Հայաստանի և հայ ժողովրդի պատմության մասին իրատեսական տեղեկատվության) տարածմանը խոչնդոտելուն, երկրորդը՝ Հայաստանի դեմ արդյունավետ հետախուզական գործունեություն ծավալելու նպատակով թուրքական հատուկ ծառայությունների ներկա և ապագա աշխատակիցներին ու գործակալներին լեզվագիտական և երկրագիտական պատրաստմանը: Առավել ևս, 2001 թ.-ին Թուրքիայում ստեղծվել է հայկական խնդիրների ուսումնասիրման Տեղեկատվական-վերլուծական կենտրոն:

Ասանազիտական վերապարտաստման համար MIT-ի աշխատակիցները ուղարկվում են ուսման ՆԱՏՕ-ի երկրների (առաջին հերթին ԱՄՆ, Անգլիա, ԳՅՀ) հատուկ դպրոցներ և ակադեմիաներ: Ջուզահե իրակա-

նացվում է նրանց ուսուցումը Թուրքիայում օտարերկրյա մասնագետներին օգնությամբ (հատկապես ամերիկյան):

MIT-ը իրավասու է օգտագործելու պետական և ոչպետական (առևտրական, հասարակական և այլ) կազմակերպությունները որպես հովանի իր ծառայողական գործողությունները իրականացնելիս: Ընդ որում, MIT-ին բնորոշ է ներստ համագործակցությունը ԱԳՆ-ի, ՋՈՒ ԳԸ ԳՀԿ-ի, ԹԱԳՏ-ի, ՆԳՆ-ի և Թուրքիայի այլ պետական և ոչպետական կազմակերպությունների հետ (հատկապես պանթրոնական ուղղվածության)¹⁶:

MIT-ի արդի կազմակերպական կառուցվածքը 1995 թ.-ին սկսված վերփոխությունների արդյունք է: Հետագա տարիներին MIT-ը պարզապես գործել է իր կառուցվածքը: Ըստ պաշտոնական աղբյուրների¹⁷, նրա կազմում հայտնվեցին տնօրինություններ, նոր մասնաճյուղեր, կենտրոններ և բաժիններ:

Սխեմա թիվ 2

MIT-ի ինտերնետ-կայքում տրված սխեմայից կարելի է եզրակացնել, որ նրա կառուցվածքում հայտնվել են առավել խոշոր կազմակերպական միավորներ՝ տնօրինություններ, որոնց աշխատանքի համակարգումը իրականացնում են MIT-ի Տնօրենի երեք առաջին տեղակալները հետախուզության գծով, օպերատիվ գծով և կառավարման գծով:

Տնօրենի հետախուզության գծով առաջին տեղակալին ենթարկվում են հետախուզության, հոգեբանական հետախուզության և համակարգչային համակարգերի տնօրինությունները: Տնօրենի օպերատիվ գծով առաջին տեղակալին ենթարկվում են օպերատիվ հետախուզության, որի կազմի մեջ են մտնում ուսումնական տնօրինությունն ու ներկայացուցիչները արտասահմանում և էլեկտրոնային ու տեխնիկական հետախուզության տնօրինությունը:


Կառավարման գծով Տնօրենի առաջին տեղակալին ենթարկվում են անմասկազմի, ադմինիստրատիվ կապերի տնօրինությունները, ինչպես նաև Ուսումնական կենտրոնը (MITEM), պաշտպանական կապերի Ալշխատասենյակը և ավիացիոն մասնաճյուղը: MIT-ի Տնօրենի անմիջական ենթարկվում են. տեղական բաժինը, ընդհանուր համակարգման մասնաճյուղը, պաշտոնական խորհրդակցանքերի աշխատասենյակը և ՋԱՄ-ների հետ կապերի աշխատասենյակը :

MIT-ի հարաբերությունները թուրքական այլ հատուկ ծառայությունների հետ: Այս կամ այն երկրի տարբեր հատուկ ծառայությունների և անվտանգության մարմինների միջև լարված հարաբերությունները ինչ-որ չափով օրինաչափ են համարվում, ինչը և խոչնդոտում է մեծ չափով իրական իշխանության կուտակմանը կառույցում: Դա առավել ևս արդարացի է Թուրքիայի համար, որտեղ զինված ուժերը (ՋՈՒ) և անվտանգության մարմինները ավանդաբար կողմնորոշիչ դիրքեր ունեն երկրի քաղաքական տարածության մեջ:

Հիմնարկման օրից կենտրոնական օղակ հանդիսանալով Թուրքիայի անվտանգության համակարգում՝ MIT-ը գիտակցում է իր պատասխանությունը և ներքին բոլոր ձգնաժամերում ձգտում է չեզոք դիրք գրավել՝ խուսափելով ընթացիկ քաղաքականությանը անմիջական մասնակցելուց: MIT-ը կարող է միջամտել քաղաքական գործընթացներին, եթե անմիջական

սպառնալիք է ծագում թուրքական պետականությանը : Չինվորականները, քաղաքական և այլ պետական մարմիններն ու կառույցները գիտակցում և ընդունում են MIT-ի «չեզոքությունը», ինչը և թույլ է տալիս նրան պահպանել կենտրոնական դիրքը Թուրքիայի անվտանգության ընդհանուր համակարգում, անկախ քաղաքական ոլորտում կատարվող իրադարձություններից, երկրի ուղղվածությունից, նրա քաղաքական կողմնորոշումից և այլն:

Սխեմա 2
MIT-ի կառուցվածքը 2007 թ.



MIT-ի հարաբերությունները Թուրքիայի առանցքային ժառայությունների և անվտանգության մարմինների հետ կարելի է դասակարգել հետևյալ կերպ

1. MIT-ի հարաբերությունները ՁՈւ-ի հետ
Համարվում են զգուշավոր: Ղա բխում է, ինչպես ռազմական մտածելակերպի յուրահատկություններից, այնպես և այն դերակատարությունից, որ ունեն գինված ուժերը երկրի քաղաքական կյանքում: Գիտակցելով MIT-ի հնարավորությունները, նրա ներքաղաքական գործնթացների վրա ազդելու կարողությունները, հատկապես ճգնաժամային իրավիճակներում, զինվորականները չեն կարող չզգուշանալ քաղաքական գործնթացներում MIT-ի անմիջական մասնակցությունից:

2. MIT-ի հարաբերությունները ազգային անվտանգության խորհրդի (ԱԱԽ) հետ
Բնութագրվում են որպես հավասար: ԱԱԽ-ն, որին անմիջապես է ենթարկվում MIT-ը, հանդիսանում է քաղաքական գործնթացների վրա ազդելու ՁՈւ-ի հնարավորությունները սահմանափակող կոլեգիալ մարմին: MIT-ի տնօրենը նշանակվում է ԱԱԽ-ում բանախոսություններից ու քննարկումներից հետո:

3. MIT-ի հարաբերությունները ՆԳՆ անվտանգության Գլխավոր վարչության (Emniyet Genel Mudurlugu) հետ
Բնութագրվում են որպես լարված: ՆԳՆ անվտանգության Գլխավոր վարչությունը (ԱԳՎ) հզոր կառույց է 167000 մարդ թվաքանակով, որոնցից 7000-ը ծառայում են հատուկ նշանակության ստորաբաժանումներում (Ozel Tim): ՆԳՆ ԱԳՎ -ն, որի կազմի մեջ է մտնում Տեղեկատվության Կարգապետը իր 4000 մարդ տեխնիկական միջոցներով տեղեկատվություն հավաքելու համար հատուկ պատրաստված անձնակազմով, չի կարող համակերպվել երկրի ներսում տեղեկատվություն հավաքելու մենաշնորհի կորցնելու փաստի հետ:

Հարկ է նշել նաև, որ ՆԳՆ ԱԳՎ-ն ավանդաբար գտնվում էր երկրի քաղաքական ղեկավարության հսկողության ներքո, միաժամանակ MIT-ը սերտ կապեր ուներ զինվորական շրջանակների հետ:

4. MIT-ի հարաբերությունները ժանդարմերիայի հետ (Jandarma)
Բնութագրվում են որպես նվազ լարված քան ՆԳՆ-ի հետ : Ղա բացատրվում է նրանով, որ, ժանդարմերիան ռազմականացված կառույց է, որի գործունեությունը և հետևաբար, մտածելակերպը բազմաթիվ ընդհանրություններ ունեն ՁՈւ-ի հետ: Գլխավորում է ժանդարմերիան Թուրքիայի Չինված Ուժերի գործող գեներալը:

Կլնուամենայնիվ, ըստ որոշ հեղինակների, MIT-ի ոչ միանշանակ հարաբերությունները Թուրքիայի այլ հատուկ ծառայությունների և ուժային կառույցների հետ չեն խանգարում նրանց համագործակցությանը և տեղեկատվության փոխանակումը: Թեև անվտանգությունը և մասնագիտական խանրը չեն կարող չանդրադառնալ նրանց աշխատանքի արդյունավետության և հավաքած տեղեկատվության որակի վրա¹⁸:

3. ԹՈՒՐԻԻՄԻՅԻ ՁՈՒ ԳՇ ԳԿԿ (Genelkurmay Istihbarat Dairesi – GİD)
Ջբաղեցնելով կենտրոնական դիրք ռազմական անվտանգության սպա-հովման համակարգում, ցանկացած երկրի Չինված Ուժերը հանդիսանում են հատուկ ծառայությունների տեղեկատվության հիմնական սպառողները: Ուազմական ոլորտի յուրահատկությունը բերում է նրան, որ ՁՈւ-ն ստեղծում է ռազմական հետախոզության իրենց սեփական կառույցները:

Մեծածորհնակ կառույցները կարող են ինքնուրույն կարգավիճակ ունենալ ԱՄՆ Պաշտպանության Նախարարության կազմի մեջ, ենթակա լինել ԶՈՒ-ի Գլխավոր Շտաբին (Ռուսաստան) կամ ունենալ խառը ենթակայություն (Իսրայել): Թուրքիայում ռազմական հետախուզությունը ենթարկվում է ԶՈՒ-ի Գլխավոր Շտաբին:

ԳՀՎ-ն, ինչպես աշխարհի բոլոր ռազմական հետախուզությունները, փակ կառույց է: Հայտնի է, որ ԳՀՎ-ն բաղկացած է երեք հիմնական վարչություններից: զորատեսակների տեղեկատվության հավաքման Կարչություն, արտասահմանում ռազմական փոխանորդների Ներկայացուցչություն և տեխնիկական միջոցներով տեղեկատվության հավաքման Կարչություն, ինչպես նաև հակահետախուզության ու անվտանգության Կարչություն:

ԳՀՎ-ն իրականացնում է ռազմավարական (ներառյալ գործակալական) ռազմական հետախուզությունը Թուրքիայի զինված ուժերի շահերից ելնելով: Օպերատիվ և մարտավարական (բանակային) հետախուզությունը կատարվում է ի շահ օպերատիվ միավորումների և կազմավորումների, այն կազմակերպվում է զինված ուժերի ռազմական հետախուզության ստորաբաժանումների (ըստ տեսակների) կողմից: ԳՀՎ-ն զբաղվում է օտարերկրյա պետությունների զինված ուժերի (հատկապես Ռուսաստանի, Հունաստանի, հունական Կիպրոսի, Բուլղարիայի, Սերբիայի, Իրանի, Սիրիայի, Հայաստանի, Կրաստանի) մասին հետախուզական տեղեկատվության հայթայթմամբ, վերլուծում և ամփոփում և երկրի բարձրագույն ռազմա-քաղաքական իշխանություններին ելքային տեղեկատվությամբ իրազեկելու գործով: Խաղաղ և պատերազմական պայմաններում հետախուզական գործունեության սկզբունքների և հիմնական (առաջնահերթ) ուղղությունների մշակմամբ: Երկրում և արտասահմանում հետախուզական միջոցառումների և գործողությունների ծրագրմամբ: Թուրքիայի զորատեսակների (Բանակ, Ռազմաօդային ուժեր, Ռազմածովային ուժեր) և արտասահմանյան ռազմական փոխանորդների աշխատակազմերի բոլոր ռազմական հետախուզական ծառայությունների ղեկավարմամբ: Ցաղիկ-ռազդիտեխնիկական, օդային և ծովային հետախուզության իրագործմամբ: հակառակորդի թիրախնում հատուկ, կիսառազմական և ռազմական գործողությունների իրագործման համար ղեկվերսինո-հետախուզական խմբերի պատրաստմամբ: Թուրքիայի զինված ուժերում անվտանգության հակահետախուզական ապահովմամբ: ռազմական հետախուզության համար կադրային քաղաքականության կողմնորոշմամբ: զինվորական հետախույզների պատրաստմամբ և վերապատրաստմամբ: ռազմական բնույթի հետախուզական տվյալների ստացման հարցերով ազգային այլ հատուկ ծառայությունների հետ համագործակցությամբ: հակազդեցությամբ և համագործակցությամբ օտարերկրյա պետությունների (գլխավորապես ԱՄՆ-ի ՊՆԿՀ-ի, Մեծ Բրիտանիայի MIG-ի, Գերմանիայի ԱԱԳ-ի, Իսրայելի «Աման», ԱՊՀ թյուրքալեզու երկրների զինվորական հետախուզությունների ստորաբաժանումների և այլոց) հետ:

ԳՀՎ-ն կազմված է վարչություններից, ծառայություններից, բաժիններից, հատվածներից, բյուրոներից: ԳՀՎ-ի յուրաքանչյուր վարչությունը գլխավորում է «բրիգադային գեներալ» կոչումով պետը: Հետախուզական վարչության պետը միաժամանակ հանդիսանում է ԳՀՎ պետի տեղակալ:

Թուրքիայի ԶՈՒ ԳՀՎ կազմի մեջ մտնում են¹⁹

Հետախուզական վարչությունը – կազմակերպում է օտարերկրյա պետությունների (առաջին հերթին հակառակորդի) զինված ուժերի մասին հետախուզական տեղեկատվության հավաքը, հայթայթումը, վերլուծումը, ամփոփումը և զեկույցը զինված ուժերի հրամանատարությանը և Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարությանը, կազմակերպում է ԳՀՎ-ի այլ ստորաբաժանումների հետախուզական գործունեության ընդհանուր ղեկավարումը:

Հակահետախուզական վարչությունը – ծրագրում և իրագործում է հակահետախուզական գործունեություն Թուրքիայի զինված ուժերում, զբաղվում է Թուրքիայի բանակի և նավատորմի դեմ ուղղված հետախուզական կամ այլ քայքայիչ գործունեության բացահայտմամբ, նախազգուշացմամբ և կանխարգելմամբ, մշակում և իրագործում է հակահետախուզական միջոցառումներ լրտեսության, սադրիչ գործունեության և սադրաժամի դեմ, սահմանում է հսկողություն ռազմական փոխանորդների գործունեության վրա և իրականացնում է զինվորական շախմատի գործունեություն (գեներալա):

Ծրագրման և համակարգման վարչությունը – իրագործում է ռազմական հետախուզության գործունեության համապետական ծրագրում և համակարգում, ապահովում է նրանք ռազմական պատրաստությունը և մարտիկացիոն պատրաստականությունը:

Ռադիոէլեկտրոնային հետախուզության վարչությունը – ռադիոտեխնիկական և ռադիոէլեկտրոնային հետախուզության խնդիրը համնաբարգված է էլեկտրոնային համակարգերի հրամանատարությանը, որը կառավարման իրավունքով ենթակա է ԳՀՎ-ին: Մատական տեխնիկայի շահագործման, տեխնիկական ապահովման հարցերով և կառավարման առումով էլեկտրոնային համակարգերի հրամանատարությունը ենթարկվում է Թուրքիայի զինված ուժերի Գլխավոր շտաբի կապի և էլեկտրոնիկայի վարչությանը: Հրամանատարությունը գլխավորում է «դիվիզիոնի գեներալ»-ը, որի ենթակայության ենթոք է գտնվում ռադիո և ռադիոտեխնիկական հետախուզության կենտրոնը: Այս կենտրոնը զբաղվում է հետախուզական էլեկտրոնային համակարգերի միջոցով ստացված տվյալների հավաքմամբ և մշակմամբ: Կենտրոնը հագեցված է ժամանակակից սարքավորումներով և էլեկտրոնային հաշվիչ տեխնիկայով: Նրան են ենթարկվում ռադիո և ռադիոտեխնիկական հետախուզության երեք գումարտակ, որոնցից յուրաքանչյուրը հետախուզական աշխատանք է կատարում ի շահ Թուրքիայի զինված ուժերի այս կամ այն զորատեսակի բանակ, ՌՕՈւ, ՌՃՈւ:

ԳՀՎ-ի կազմի մեջ կան նաև ինքնուրույն ստորաբաժանումներ (բաժիններ, ծառայություններ, հատվածներ, բյուրոներ): Թուրքական բանակի միավորումներում և կազմավորումներում կան շտաբերին կից հետախուզական բաժիններ: Թուրքական ռազմական հետախուզությունը հատկապես աշխույժ է աշխատում Կիպրոսի, Հունաստանի, Բուլղարիայի, Սիրիայի, Իրաքի, Իրանի և ԱՊՀ երկրների հետ սահմանամերձ գոտիներում:

MIT-ի և ԳՀՎ-ի արդի հիմնական խնդիրներն են Կովկասի սահմանամերձ շրջաններում հետախուզական տեղեկատվության հայթայթում ռազմաքաղաքական իրավիճակի մասին, Թուրքիայի իրավիճակի վրա զինված հակամարտությունների ազդեցության մասին, Կովկասի ուղղությամբ Ռուսաստանի ծրագրերի մասին, թուրքական շահերով տարածաշրջանների

սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին; հետախուզական ներագրեցության գործողությունների իրագործում հանուն թուրքական պետությունների ապագա համերաշխության հոգևոր, տնտեսական, հաղորդակցական, քաղաքական և ռազմական հիմքերի ձևավորման, թուրքալեզու երկրներում և ԱԿՀ թուրքամետ ու պանթուրքամետ տարածքներում ազգային-քաղաքական նոր վերնախավի դաստիարակության, հետխորհրդային տարածաշրջաններում տեղային միջէթնիկ և միջկրոնական բախումների հրահրման; ԱԿՀ երկրներում պանթուրքական (քաղաքական, տնտեսական, մարտական) կազմակերպությունների և լոբիիստական կառույցների ստեղծում Թուրքիայի արտաքին քաղաքական շահերի իրագործման համար; օպերատիվ դիրքերի ընդլայնում հարձակողական հետախուզական գործունեության վարման համար; համագործակցություն դաշնակից պետությունների հետ հետախուզական ներգործության գաղտնի միջոցառումների շրջանակներում ընդհանուր շահերի իրագործման համար²⁰:

Ձրորստեսակների ստեղծատվության հավաքման վարչությունը – Յուրաքանչյուր գործառնաի անձնակազմի մեջ մտնող (ներառյալ գունաբարտակ) անվտանգության Վարչության սպաները «հսկում են բոլոր այն գործողությունները, որոնք կարող են Թուրքիայում թեժմի տապալման նպատակ ունենալ» : Վարչությունը սերտ համագործակցում է ժամդարմերիայի և Թուրքիայի ափային պահպանության մնամատիվ վարչությունների հետ:

Թուրքիայի ռազմական, ռազմածովային և ռազմաօդային փոխանորդների ներկայացուցչությունները արտասահմանում: Թուրքիայի ռազմական փոխանորդները, բացի ռազմական տեղեկատվության հավաքման իրենց հիմնական պարտականությունների կատարումը հավատարմատար երկրներում, ծավալում են իրենց գործունեությունը նաև այլ ոլորտներում:

Տեխնիկական միջոցներով տեղեկատվության հավաքման վարչությունը ՉՀԿ-ի տեղեկատվական ամենակարևոր և վստահելի աղբյուրը: Ամենայն հավանականությամբ, կա ՉՀԿ-ի տեխնիկական հատուկ վարչություն, որը ապահովում է հատուկ միջոցների աշխատանքը: Տվյալ վարչության մեջ է նաև ռադիոհետախուզության ստորաբաժանումը, որին, ըստ ամենայնի, ենթարկվում են Թուրքիայի ՁՈՒ-ի ռադիոհետախուզական բոլոր տեխնիկական միջոցները²¹:

Տեղեկատվության մշակման կենտրոն (SIGINT): Տեղակայվում է Անկարայում, անձնակազմը մոտ 30000 մարդ է, ինչը, ըստ Իլիսիայի, փոքր ինչ ուսձացված թիվ է: Անձնակազմի մեծ մասը կազմում են պահեստի սպաները, նաև Թուրքիայի բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանակարտներից քաղաքացիական անձինք, էլեկտրոնիկայի, համակարգչային համակարգերի և այլ համապատասխան մասնագիտություններով:

Ինչպես տեխնիկական միջոցներով տեղեկատվության հավաքման վարչությունը ամբողջությամբ, այնպես և SIGINT-ը առանձին, համագործակցում են MIT-ի մնամատիվ վարչության հետ տեղեկատվության փոխանակության հարցերով: Տեխնիկական միջոցներով տեղեկատվության հավաքման Վարչության կայացման մեջ կարևոր դերակատարություն ունի 1954թ.-ի Խուլիսին երկկողմանի գաղտնի պայմանագրի ստորագրման հիման վրա Թուրքիայում ստեղծված ամերիկյան բազմաթիվ հետախուզական բազաների առկայությունը: Բազաները նախատեսված էին ԽՍՀՄ տարածքից տեղեկատվություն հավաքելու համար:

ՉՀԿ-ի տեխնիկական վարչության իրավասությունների և պարտականությունների մեջ է նաև թուրքական զինված ուժերի կապի միջոցների անվտանգության ապահովումը: Տեխնիկական վարչությունը պիտի սերտ համագործակցի էլեկտրոնիկայի և ծածկագրման ինստիտուտի հետ: 1995թ.-ի հուլիսին ստեղծված ինստիտուտը կատարում է զինված ուժերի և պետական այլ մարմինների ձեռագրաբանական ծառայության դերը:

Հակահետախուզության և անվտանգության վարչությունը: Վարչության նպատակն է անձնակազմի, ռազմական օբյեկտների անվտանգության ապահովումը, չափահսկողության սահմանումը և այլն: Ենթադրվում է, որ տվյալ վարչությունը սերտ համագործակցում է MIT-ի մնամատիվ վարչությունների և ՆԳՍ-ի ընդհանուր անվտանգության Վարչության հետ: Վարչության գործունեության մեջ մտնում է, օրինակ, Թուրքիայի զինված ուժերի իսլամական կազմակերպությունների ներթափանցմանը խոչընդոտելը: ՉՀԿ-ի և MIT-ի հարաբերությունների վերաբերյալ հայտնի է, որ MIT-ը իրավունք չունի գործելու զինված ուժերի դեմ և միջամտելու բանակի ներքին կյանքին: Ըստ որոշ փորձագետների ենթադրությունների, ՉՀԿ-ն առավել լավ է տեղեկացված MIT-ի գործունեությանը, քան հակառակը:

Ռազմական հետախուզության սպաների ուսուցումը և պատրաստումը իրականացվում է տարբեր մակարդակներով: Թուրքիայի ռազմական հետախուզության համար կարգերի պատրաստման միակ մասնագիտացված կենտրոնը Թուրքիայի Գլխավոր շտաբի ենթակայությամբ, զինված ուժերի Հետախուզական Ակադեմիան է Անկարայում: Ըստ տարբեր աղբյուրների, ունկնդիրների թիվը կազմում է 200-250 մարդ:

Հետախուզության սպաների ուսուցումը ընթանում է նաև Թուրքիայի գրասենյակների ռազմական ուսումնարաններում, որտեղ հետախուզական գործունեության հիմունքները դասավանդվում են ուսուցման ամբողջ 3-4 տարիների ընթացքում: Իրենց մասնագիտացումը թուրք ռազմական հետախուզության սպաները բարձրացնում են ԱՄՆ ռազմական հետախուզության Բոլեջում (Defence Intelligence College), Թուրքիային աներկյան ռազմական օգնության շրջանակներում: Դրանից զատ, թուրք սպաները ստղրում են նաև ԱՄՆ-ից ֆինանսավորվող IMET (International Military Education and Training) ծրագրի շրջանակներում²²: Վերը նշվածից կարելի է եզրակացնել, որ ՉՀԿ-ն հզոր հատուկ ծառայություն է, ինչպես իր կողմից հայթայթվող տեղեկատվության, այնպես և քանակային կազմի, կահավորմանության և այլ տեսանկյուններից:

4. ԹՈՒՐԿԱԿԱՆ ՀՆՏՈՒԿ ԾԱՆԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿ. ՕԶԱՆԱՆԻ ՀԱՓՏԱԿԱՆ ՕՊԵՐԱԿՑԻԱ

MIT-ի վերջին տարիների ամենահաջողված օպերացիան քրդական ազատագրական շարժման առաջնորդ, որին թուրքական հատուկ ծառայությունները որսահետելու են էին վերջին 14 տարիներին, Արդուլլահ Օջալանի հալիչտակումն էր:

1984 թ.-ից Արդուլլահ Օջալանը գտնվում էր Դամասկոսում, որտեղից ղեկավարում էր մարտական գործողությունները Թուրքիայի տարածքում: 1998 թ.-ի սեպտեմբերին, ներխուժման սպառնալիքով, Անկարան Սիրիա-

ից պահանջեց վտարել Օջալանին և նրա կողմնակիցներին իր տարածքից: Հուլիսի 9-ին Օջալանը Դամասկոսից թռավ Մոսկվա, ոչ մեծ կանգառ կատարելով Կիպրոսում: Ժամանելով Ռուսաստան՝ ՔԱԿ-ի առաջնորդը մի քանի այցեր կատարեց ԱԿՀ երկրներ (այցելելով, մասնավորապես, Հայաստան) և այնուհետև ինքնավարվեց մերձնսկովյան Օդին-ցովոյում: Սակայն իսրայելական հատուկ ծառայության կողմից նրա արբանյակային հետախույզ հետախույզարկիցները հայտնաբերելուց հետո Թուրքիան պահանջեց Ռուսաստանից վտարել Օջալանին: Քրդական առաջնորդը այնժամ քաղաքական ապաստարան խնդրեց Ռուսաստանից, սակայն մերժում ստացավ:

1998 թ.-ի նոյեմբերի 12-ին Օջալանը մեկնեց Մոսկվայից Հռոմ: Օդանավակայանում նրան ձերբակալեցին իտալական հատուկ ծառայությունների աշխատակիցները: Մինչ ՔԱԿ-ի առաջնորդին Իտալիայում ապաստան տրամադրելու հարցը կուծվեր, նա բնակվում էր Հռոմի մոտակայքում, Ինֆերնոտո տառանձնատանը: Այնուհետև Իտալիան խնդրեց Օջալանին հեռանալ երկրից (որպեսզի չսրել իտալա-թուրքական հարաբերությունները մինչև դատարանի կողմից Օջալանին քաղաքական գաղթական կարգավիճակ տրամադրելու հարցի լուծւմ, որի հերթը հաավվ Քենիայում Օջալանին ձերբակալելուց հետո, և նրան քաղաքական ապաստարան տրամադրելու խնդրանքը բավարարվեց) և 1999 թ.-ի հունվարի 16-ին նա վերադարձավ Ռուսաստան: ՔԱԿ-ի առաջնորդի հետագա տեղափոխությունները ծածկված են գաղտնիության շղարշով: Հունվարի վերջին Օջալանը, իբր, այցելել է Լեռնային Դարաբաղ (թեպետ բոլոր քրդական և հայկական աղբյուրները ժխտում են սույն փաստը), այնուհետև հայտնվել է Հունաստանում: Հունվարի 29-ին Հունգարիայի ինքնաթիռը փորձեց վայրէջք կատարել Ռոտտերդամի օդանավակայանում, սակայն հուլանդական իշխանությունները արգելեցին վայրէջքը: Փետրվարի 1-ին ինքնաթիռը խուժեց Բելգիայի օդային տարածք, սակայն թնդիակակա F-16 – ներք դուրս մղեցին նրան այնտեղից: Փետրվարի 2-ին Օջալանը մեկնեց Աթենքից Քենիա՝ այդ երկրում Հունաստանի դեսպանի անձնակազմի հրավերով և 12 օր հյուրընկալվեց նրա նստավայրում: Փետրվարի 15-ի ուշ գիշերին Քենիայի մայրաքաղաք Նայրոբիում Հունաստանի դեսպան Գեորգ Կոստոպոսի նստավայր անպաշտպան ներխուժեցին մի քանի տասնյակ թուրքական կոմանդոսներ: Նրանք ուղիղեցին այնտեղ գտնվող Աբդուլա Օջալանի ձեռքերը և մենտեցին արդեն սպասող ավտոմեքենան: Քենիայի մայրաքաղաքի օդանավակայանում Օջալանին նստեցրին ինքնաթիռ և բռնի կերպով տեղափոխեցին Թուրքիա: Հաջորդ օրը հայտնի ահաբեկչի հաշիտակման լուրը հայտնի դարձավ ամբողջ աշխարհին: Ընդհատելով սովորական հաղորդումները՝ թուրքական հեռուստատեսությունը հաղորդեց վարչապետ Բյուենթ Եթեվիլի ելույթը, որը հայտնեց, թե թուրք ազգին տված իր խոստումը կատարված է: «Առավոտյան ժամը 3-ից անջատողական Օջալանը գտնվում է երկրում»: Այնուհետև Եթեվիլիը կարճ շնորհակալություն հայտնեց «զինված ուժերին և MIT-ի անվտանգության ծառայությանը» հաջողությանը կատարված օպերացիայի համար: Ըստ նրա, Օջալանի համիշխանությունը նախապատրաստվում էր շաբաթներ արաջ և դրա մասին տեղյակ էին զինված ուժերի և MIT-ի սպաներից ոչ ավել, քան 10 հոգի: Ավելի ուշ պնդվում էր, որ դա Թուրքիայի, ԱՄՆ-ի և Իսրայելի հատուկ ծառայությունների հա-

մատեղ կատարված գործողություն էր:

Օջալանը հարցաքննությունների ժամանակ խոստովանեց, որ Հունաստանը նյութական օգնություն է ցուցաբերել իր գլխավորած Քրդստանի աշխատավորական կուսակցությանը, իսկ Դեռոդմայի աշխարաքաղաքականության կոմիտեն աջակցել է նրան Ռուսաստանում գտնվելիս: Օջալանը դատավարություն մտնելու, սակայն ԵՄ-ի ճնշման ներքո դատավճիթ չէրագործվեց և այժմ Օջալանը գտնվում է Մարմարե ծովի Իմրալի կղզու բանտում:

5. ԵՆՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Այսօր Թուրքիայի Ազգային հետախուզական կազմակերպությունը աշխարհի ամենահզոր հետախուզական հանրություններից մեկն է: Անհրաժեշտ է նշել նաև այն, որ MIT-ը սերտ համագործակցում է աշխարհի առաջատար երկրների բոլոր հետախուզությունների հետ: Թուրք քաղաքացիների համար MIT-ը նույնն է, ինչ որ խորհրդային Միության քաղաքացու համար ԿԳԲ-ն: Սակայն, ի տարբերություն ԿԳԲ-ի, որը վերջին տասնամյակի ընթացքում, փաստորեն, ոչնչացվել է բազմաթիվ փոփոխությունների շնորհիվ և կորցրել է իր նախկին հզորությունը, հնարավորությունները և բարձրակարգ կադրերը, MIT-ը, ընդհակառակը, գտնվում է իր հզորության գագաթնակետին և ունի բավական հզոր կադրեր: Ֆինանսական առումով նույնպես, այս կազմակերպությունում ամեն ինչ կարգին է:

Ելնելով սրանից՝ Հայաստանի հատուկ ծառայությունների առջև ծառայած են լուրջ խնդիրներ թուրքական հատուկ ծառայություններին դիմակայելու առումով, քանի որ քաղաքական հարաբերությունները Թուրքիայի հետ դեռ երկար ժամանակ չկարգավորված վիճակում կլինեն ելնելով նրանից, որ Թուրքիան դիտվում է Ադրբեջանի կողմից որպես կարևորագույն ռազմավարական դաշնակից:

1 Տես՝ Сваранс А. Пантюркизм в геостратегии Турции на Кавказе: Монография. – М.: Изд-во "Гуманитарий", 2002. С-470.
 2 Լույս տեղում՝ էջ 464,
 3 Լույս տեղում՝ էջ 466,
 4 Լույս տեղում՝ էջ 470,
 5 В новой организационно-штатной структуре MIT по состоянию на начало 2007 г. Антитеррористический центр отсутствует.
 6 Տես՝ ΜΑΝΟΣ ΗΛΙΑΔΗΣ ΟΙ ΤΟΥΡΚΙΚΕΣ ΜΥΣΤΙΚΕΣ ΥΠΗΡΕΣΙΕΣ ΚΑΙ Η MIT [Մ. Իլիադիս, Թուրքական հատուկ ծառայությունները և MIT-ը] /Պոնարեն լեզվ./ Աթենք, 1998, էջ-215.
 7 Լույս տեղում՝ էջ 226,
 8 Տես՝ ΜΑΝΟΣ ΗΛΙΑΔΗΣ ΟΙ ΤΟΥΡΚΙΚΕΣ ΜΥΣΤΙΚΕΣ ΥΠΗΡΕΣΙΕΣ ΚΑΙ Η MIT [Մ. Իլիադիս, Թուրքական հատուկ ծառայությունները և MIT-ը] /Պոնարեն լեզվ./ Աթենք, 1998, էջ -227.
 9 Լույս տեղում՝ էջ 228,
 10 Տես՝ ΜΑΝΟΣ ΗΛΙΑΔΗΣ ΟΙ ΤΟΥΡΚΙΚΕΣ ΜΥΣΤΙΚΕΣ ΥΠΗΡΕΣΙΕΣ ΚΑΙ Η MIT [Մ. Իլիադիս, Թուրքական հատուկ ծառայությունները և MIT-ը] /Պոնարեն լեզվ./ Աթենք, 1998, էջ -233.
 11 Լույս տեղում՝ էջ 237,
 12 Turkish Daily News, 06.08.1992.



- 13 Sbu՝ ΜΑΝΟΣ ΗΛΙΑΔΗΣ ΟΙ ΤΟΥΡΚΙΚΕΣ ΜΥΣΤΙΚΕΣ ΥΠΗΡΕΣΙΕΣ ΚΑΙ Η [J. Իլիադիս, Թուրքական հատուկ ծառայությունները և MIT-ը] / Դունարեն լեզվ./ Աթենք, 1998, էջ -239.
- 14 Sbu՝ ΜΑΝΟΣ ΗΛΙΑΔΗΣ ΟΙ ΤΟΥΡΚΙΚΕΣ ΜΥΣΤΙΚΕΣ ΥΠΗΡΕΣΙΕΣ ΚΑΙ Η MIT [J. Իլիադիս, Թուրքական հատուկ ծառայությունները և MIT-ը] / Դունարեն լեզվ./ Աթենք, 1998, էջ -243.
- 15 Sbu՝ Сваранц А. Пантюризм в геостратегии Турции на Кавказе: Монография. – М.: Изд-во "Гуманитарий", 2002. С-468.
- 16 Նույն տեղում՝ էջ 469.
- 17 MIT-ի փաշտոնական կայքը. <http://www.mit.gov.tr>, Январь 2007.
- 18 Sbu՝ ΜΑΝΟΣ ΗΛΙΑΔΗΣ ΟΙ ΤΟΥΡΚΙΚΕΣ ΜΥΣΤΙΚΕΣ ΥΠΗΡΕΣΙΕΣ ΚΑΙ Η MIT [J. Իլիադիս, Թուրքական հատուկ ծառայությունները և MIT-ը] / Դունարեն լեզվ./ Աթենք, 1998, էջ -276.
- 19 Sbu՝ Сваранц А. Пантюризм в геостратегии Турции на Кавказе: Монография. – М.: Изд-во "Гуманитарий", 2002. С-471.
- 20 Sbu՝ Сваранц А. Пантюризм в геостратегии Турции на Кавказе: Монография. – М.: Изд-во "Гуманитарий", 2002. С-468.
- 21 Defense & Foreign Affairs, April 1989 ամսագրում տվյալ վարչությունը հիշատակվում է որպես Radio Reconnaissance Directorate of the Turkish General Staff.
- 22 Sbu՝ ΜΑΝΟΣ ΗΛΙΑΔΗΣ ΟΙ ΤΟΥΡΚΙΚΕΣ ΜΥΣΤΙΚΕΣ ΥΠΗΡΕΣΙΕΣ ΚΑΙ Η MIT [J. Իլիադիս, Թուրքական հատուկ ծառայությունները և MIT-ը] / Դունարեն լեզվ./ Աթենք, 1998, էջ -496.

National Security of Turkey Concepts and Principles

by Michael Aghajanyan

Summary

The modern concepts of the national security of Turkey started to form at the beginning of the 1990s. At that time the country faced a vital task of a complex nature - to define and get down to the realization of its own priorities in the field of national security, which would overcome the rigid determination of the country in the system of the two-block opposition of the Cold war. Before the 1990s Turkey's national security and defense concepts were smoothly integrated to satisfy the geostrategic and military-political interests of the institutionally organized system of collective security of a 'transregional' nature - NATO. New aims and tasks emerged. As a result the experts' society characterized Turkey as a 'force-driven regional power', i.e. a subject ready to exercise force, threaten with force and trigger other confrontation strings of the foreign policy.

The concept of security has become more complicated. Along with the traditional threats to security, arising from other states, Turkey has faced the threats of the new kind: organized crime, illegal migration, illegal trade in arms, and money laundry.

Turkey's exceptional geostrategic position started to be used as a new terminology of arguments in favour of Turkey's special significance in the system of safeguarding regional and global security: "Turkey's significance is increasing day by day because of its geographic and economic strategic position in the centre of the Balkans, the Caucasus and the Near East triangle where new threats and risks are concentrating, and because of its position close to the regions rich in natural resources and its location at a crossroads of trade ways".

Besides, the highest political and military circles of the country realize that the concepts of safeguarding the national security of the country cannot be merely based on their own state priorities because of a number of various factors. Accordingly, they need to correlate their own political course with the officially declared ideological statements of their military-political allies. In the meantime, accentuation of their mediating, linking and adapting role in the realization of the given ideological statements is increasing. The above mentioned is particularly observed around the ideological component and the political realization initiated by the global external actor, the 'Big Near East' project.

The latest document on safeguarding the national security is the concept of the national security discussed and ratified at the National Security Council session in 1997.

The main tasks and goals of the modern concepts of the national security of Turkey are centred around the following priorities: securing internal stability of the country, strengthening positions in the regional alliances, consol-

ldating the political power in relations with partners and competitors, building up power and industrial capacities, enhancing the sales market of the national production, giving broad access to the outer sources of raw materials, lowering financial dependence on the West.

In the regional context the safeguarding of the national security of the country implies not only protection but also "projection" of its 'transit indispensability', power and influence beyond the borders of its territory. The following components underlie Turkey's foreign policy: 1) the EU membership, 2) retaining and consolidating its leading role in the southern flank of the NATO, 3) strengthening the Muslim communities in the Balkans and south-east Europe (Bosnia and Herzegovina, Albania, Kosovo, Macedonia, Romania, Bulgaria) and in Cyprus, 4) consistently increasing the 'ideological' pressure on the neighbouring countries and global actors and consolidating its image as a mediator in the field of prevention and settlement of the current and potential regional conflicts, 5) the 'material' capacity of the above mentioned ideological pressure in the form of increasing its political power, economic and military potential both on the regional and outer regional scale, 6) strengthening its influence on Turkic states and state formations in other regional and neighboring countries (Albania, Bosnia and Herzegovina, Azerbaijan, states of Central Asia, Adjaria, the Turkic communities of the Crimea and Gagausia, the Turkic republics of the Russian Federation), 7) establishing and developing regional institutional structures to secure Turkey's leading role in their functioning.

Despite Turkey's desire to "project" its influence and power there are considerable contradictions in the combination of the two principles of the political course - traditional understanding of the national security and European integration.

The combination of the current home and foreign policies on which the stability of the country depends, suppression of the separatism trends in some south-east regions and becoming a full member of the European Union are to a great extent contradictory. "Success" in the endeavours to suppress separatism lead to some losses on the way to eurointegration, and vice versa, additional points can be earned on the way to integration in the context of human rights adherence. However, in the latter case home policy priority component is affected (increase in realization and guarantee of the human rights at an individual level might mean an irreversible call for collective rights by the currently discriminated national minorities of the country).

One of the most important aspects of the political culture of Turkey, which has become an integral part of the politics of the country and which at the same time refers to Turkey's conceptual approach towards its own national security, is apprehension that the outer world is planning to weaken and divide the country. The perception of Turkey as a country surrounded by enemies that are very active and can make common cause together still exists. This phenomenon is often called "Sevrophobia". It fears lest the Sevre treatment should revive. "Sevrophobia" is closely associated with Turkey's vision of the world from the point of view of "realpolitik".

Turkey's Defense Policy and Strategy: Conceptual and Political Approaches

by Levon Hovsepyan

Summary

The article covers some issues of Turkey's defense strategy in the light of the conceptual and political approaches. After the Cold War, which brought forward some global changes, a number of countries, Turkey among them, faced new challenges and problems. As a result, it became necessary to reconsider the previous military doctrines.

Turkey's modern defense concept takes as a principle Turkey's readiness to lead the strategy of "1.5 wars" instead of "2.5 wars" as it was before. It means that Turkey should be able to be in war with some country and at the same time 'resist terrorism' within the country (the Kurd soldiers). Having assessed the surrounding countries and their threats, Turkey has come to the conclusion that it won't face fight on two fronts. Unlike the previous approaches, Turkey does not see any threat from either the Balkans or the Caucasus. At present Turkish-Greek relations have significantly improved and the likely danger for Turkey can only arise from the current situation in Northern Iraq.

The main declared goals of modern Turkey's official defense policy are to become a regional power, to maintain regional balance and to be a country contributing to the peace and stability in the region. According to some Turkish sources, Turkey's national security policy is aimed at easing tension in the region and at a peaceful settlement of the conflicts, as well as at deepening respect for law and democracy, and sustaining security and a stable situation.

However, there is a discrepancy between the declared principles underlying the official doctrine of Turkey and the latter's de-facto policy aimed at dominating in the region in a very aggressive fashion, which cannot lead to the regional security. It is actual for Armenia as well.

The National Security Council of Turkey

by Michael Aghajanyan and
Levon Hovsepian

Summary

The reforms in the military and national security spheres which are aimed at limiting the role of the military in various spheres of the social and political life of the country and establishing democratic control over the national security of the country are the most 'sensitive' in terms of safeguarding Turkey's national security.

Maintaining control over the security bodies of the country and in a broader context - reforming the connection between the political power and the military established after the 1960s are a priority among institutional reforms in the national security. These reforms first of all affected the most powerful military and political body of the state - Turkey's National Security Council.

The significant role of the National Security Council in the modern government system of Turkey is rooted in the postwar history of the country and it is one of the classic examples of the influence of the Turkish military establishment on its internal social and political processes.

Present attempts to 'optimize' the National Security Council and the functional adaptation of the latter to European standards face a problem typical of the modern Turkish system of relations between the political and military powers of the country. The institutional basis of the NSC set up in the early 1980s is to be changed. In those days the military milieu that came to power after the coup on September 12, 1980, reorganized the NSC in accordance with their needs. Since then the NSC has concentrated in its hands the state power and control. The corresponding constitutional and legal basis was adapted to the needs of the newly defined role of the NSC. The legal status of the NSC was altered according to the norms of the 1926 Turkish Constitution. Previously, the decisions of the NSC on the definition and implementation of the state policy in the field of national security used to be merely of an advisory nature; however, now they have become mandatory to perform. Article 118 of the Turkish Constitution of 1982 reads 'decisions on measures that the NSC shall consider necessary to take in order to sustain the existence and independence of the country, its integrity and indivisibility to safeguard peace and security of the nation will be considered by the government in the first place.'

At the NSC meetings, the supreme military government of Turkey, having previously discussed their position in the headquarters, before the reforms of 2003, enjoyed the right of not only expressing their viewpoint on the questions of foreign and home situation but also of demanding from the civil government to undertake measures to defend Turkey's foreign policy interests as well as to stabilize the situation within the country.

The fact that the military of Turkey had a considerable and decisive influence on the political system of the country through the NSC did not conform to the Copenhagen criteria of the EC and was in contradiction with them on the principles of 'stability of structures that guarantee democracy' and 'supremacy of law'. That is the reason why some reforms in the military and national security spheres were set as a prior condition for Turkey to become a full member of the EC.

On July 23, 2003, Turkey adopted 'the seventh package of reforms', which particularly concerned the issues of reforming the NSC. Apart from this, the innovations of the 'seventh package' of the legislative reforms made the appointment of a civilian as Secretary General of the NSC possible, which first happened in August, 2004, as well as reduced the access of the NSC to the civil institutions of the country. Reforms in the internal structure of the NSC lead to the reduction in a number of its departments.

Despite the considerable restrictions on the political influence on the internal processes of the country, especially compared to that of the period between the early 1980s and the late 1990s, the NSC retains its significant position in the state system of the Turkish Republic. Its role is especially important in the sphere of political control over the intelligence of the country. The NSC can be characterized as the central body exercising political control over the intelligence services of the country, the decisions on the national intelligence and counter-intelligence, the planning the priority directions of the intelligence services on the national scale, as well as general coordination and control over their activities. The main task of the NSC is to guarantee conformity of the strategies and tactics of the intelligence services to the political course of the national security.

The Armed Forces of the Turkish Republic

by *Sergey Minasyan*

Summary

The armed forces have always played an important role in the political life of the Turkish Republic. The exceptional role of the army is supported by the recurrent practice of the involvement of the army in the political processes within the country as well as the deciding vote of the military in defining the foreign policy priorities and their implementation in real politics. Turkish armed forces are a significant military-political factor of the regional importance.

Supreme commander-in-Chief of Turkish armed forces is the president of the republic. The supreme body of the operational regulation is General Staff, and their chief is their Commander-in-Chief. The head of General Staff is responsible for the control over and general administration of the armed forces, combat instruction and operations in the time of war and peace. General Staff works out the general policy of defense, national security, and battle use of the armed forces, forms the military doctrine, defines the needs for resources of the armed forces and perspectives of their development. In the wartime the Head of General Staff acts for Commander-in-Chief of the armed forces of Turkey on behalf of the president of the republic.

There are the following types of the armed forces in Turkey: the land forces, the air forces and the Navy. Their commanders are directly subordinate to head of General Staff. In the time of war not only the gendarmerie and the coastal guards (in the time of peace they make part of the Ministry of Internal Affairs) but also sub-units of the Office of Special Operations of Turkey become subordinate to General Staff. NGS is closely connected with the Ministry of Defense but it is accountable to the Prime Minister of the country and not the Minister of National Defense. The functions of the Ministry of National Defense involve call to military service and recruitment for the army, purchase of arms and military equipment, rear services, support for the war industry of the country.

The main source of recruitment of the non-commissioned officers and other ranks is the military service. The sources of call to military service depend on the category and the status of the draftees. The main source is the men liable for the call-up. Every citizen of Turkey at the age of twenty is drafted depending on the level of education and the social status. Turkish armed forces have a developed system of military training at all levels. The officers are also educated and trained at military schools in a number of foreign countries and the NATO academies. The developed system of the military training, the considerable demographic potential of the country and the mobilization abilities make it easy to man the armed forces with the great number and variety of the servicemen.

Before the 1990s the land forces of Turkey were conspicuously tremendous. Taking into account that the main goals and tasks of the land forces of

Turkey, after becoming the member of NATO and during the years following the Cold War, were mainly the safeguarding of the Black Sea straits as well as the defense of the possible invasion of the Soviet Union from the Transcaucasus, the land forces had a very complicated structure. The changes of priorities in the defense planning after the Cold War and the experience of a large scale deployment of numerous land forces in 1990-1991 in the period of the aggravation of the situation in bordering Iraq during the "Storm in Wilderness" operation required a considerable accumulation and fast movements of the military units of Turkish army to the south-east borders of Iraq and it has also proved that Turkish army was not adjusted to the mass movements of effectives and military equipment and it had an insufficient mobility. This and also the significant decline in the military threats from the neighbours have made the military implement a number of changes in the structure of the land forces since the mid-nineties.

Thus, great changes are going to be in the structure of the land forces. Large divisions will be converted into smaller brigade- or battalion-type sub-units. During this reform the Turkish and world experience of anti-rebellion military actions, little intensity conflicts and the asymmetric wars of the new generation will be used. Within the framework of the reorganization of the Turkish land forces great attention is paid to the technological and quantitative rearmament and modernization. Special attention is given to purchasing and updating weapons and equipping the land forces with modern artillery systems.

The air forces play a special role in the structure of the armed forces whose priority lies in the country's strategic defense planning. Its military potential and mobility are the strongest types of Turkish armed forces. This can be accounted by the fact that the air forces are equipped with modern devices and have great military potential and are highly operational. Turkish air forces successfully perform their tasks both in cooperation with other types of the armed forces and independently. According to the military experts, the professional training, the number of the flown hours (including flights at the low altitudes in the mountainous regions) and the morale of the Turkish pilots are the highest of those of other pilots from the NATO member-countries.

The Navy is an independent type of the armed forces. The military-political administration of Turkey plans to further develop and equip the Navy. The fleet will be enriched with new military ships, submarines and boats, and the sea patrol and anti-boat aviation will increase.

To sum up, we can assert that the armed forces of Turkey are highly efficient, large in number, have a disciplined professional army corps and satisfactory technical equipment. They can solve both large scale defense and local anti-rebellion tasks. They also have all the necessary potential for the offensive operations on the regional front with the involvement of all types of armed forces.

The Strategy of Modernization of the Armed Forces of Turkey and the Development of Its Defence Industry

by *Levon Hovsepian*

Summary

The article covers and analyses the programs and the strategy of development of the armed forces of Turkey, its full-scale modernization, and the problems of purchasing the state-of-the-art military equipment.

Turkey has seriously undertaken a large scale program of modernizing its armed forces and further development of its defence industry. These programs are important for Turkey from the point of view of the regional military-political problems and evolution tendencies.

Turkey, the second country in NATO by its overall strength of the army and armament, which does not have enough resources or an active defence industry to provide its army with military equipment and weapons, started to implement programs on the development of defence industry and modernization of the armed forces in the mid 1990s. The modernization plans relate more to the necessity for modernization of the armed forces, renewal of the arms and the necessity for the development of its own defence industry than to the changes in the army staff. In order to face the new challenges to the national security the armed forces of Turkey are in the process of adjusting to the needs and requirements of the new military-political and strategic conditions.

The modernization strategy to increase the fighting efficiency of the armed forces involves the use and development of the following abilities: control systems, computer and intelligence systems, mobile military might, high-tech weapons and military systems, ability to perform military actions in any condition by day and night, ability to quickly transfer from the peaceful conditions to the military ones, existence of anti-aircraft and anti-missile defense against mass destruction weapons, ability to fight against the asymmetric threats, ability to perform collaborative tasks with the allies.

There have been a number of steps towards the implementation of long-term large scale programs since the mid 1990s. Within the framework of these programs \$27 billion will be allocated to the Turkish army and the Secretariat of the defence industry of the Ministry of Defense. The implementation of this program by 2007 can be considered as a short-term action towards the modernization of the Turkish armed forces. In 1996 the Turkish government came up with a long-term and a quite pretentious program asserting that they would have spent \$150 billion on the modernization and the purchase of the new arms within thirty years. According to the information released by the Turkish press (November 2005), the executive committee of the defence industry of Turkey is planning to spend about \$50 billion on purchasing new arms and military equipment in the coming ten years.

Development of the defence industry plays the main role in the strategy of

modernization of the armed forces in the country. At a meeting held by the President of Turkey Suleyman Demirel with the representatives of the companies of the defence industry in 1996 further plans of development of the defence industry were closely reviewed and Ministry of Defence elaborated later a special document concerning the mentioned sphere.

The policy of the defense industry is aimed at developing a dynamic structure competitive in the international market and having all the chances of import, which will be adjusted to the modern technologies and equipped to produce technologies, thus updating its own capacities with the technological development, which will make it possible for Turkey to maintain stable military-political relations with allied countries and to resist power in various political situations. The fundamental tenets of the strategy of the defence industry are the constant satisfaction of the needs of the Turkish armed forces by producing its own high-tech military products and arms; creation of industrial basis and expansion of the national defence industry infrastructure, technological development on the basis of its own resources, development of the defence industry open to external and internal competition, the necessity to use "The National Military Strategy" and "The Decisions on Planning and Programming" of Turkey as a source in the assessment of the defense industry, etc. The main spheres of Turkey's defence industry are classified in the following way: missile, air- and spacecraft industries, production of electronic equipment, various shooting weapons, bullet-proof cars and artillery and military outfit, and construction of war ships. According to the official data, since 1990 Turkey has been spending \$ 3.5-5 billion a year on purchasing arms and military equipment. The defence industry of Turkey produces about 25% of the military equipment and arms. This fact is considered as an unsatisfactory indicator by the Secretariat of the defence industry, as according to the official information Turkey holds the 4th position in the world as an importer and the 28th position as an exporter of military equipment and arms.

The development of armament of Turkey, modernization and development of the defence industry are aimed at leading the country to the absolute military hegemony in the region as well as turning the country into the most important centre of arms production, which is constantly proved by the political and military representatives.

The Impact of the Israeli-Turkish Cooperation on the Problems of Regional Security

by Sergey Minasyan

Summary

The military-political cooperation between Israel and Turkey is multi-leveled and must be viewed both in the military sphere, which is undoubtedly very important for both countries, and in the political and geopolitical spheres, which is equally important for the dynamics of their relations. In the meantime, both the representatives of the Turkish military-political circles and the experts in the problems of regional security and foreign policy are unanimous in their opinion that the importance of the military-political alliance with Israel in the case of Turkey was mainly conditioned by the possibility of strengthening the abilities of the Turkish army and intelligence in the struggle against the Kurd organizations. In spite of the fact that this military-political cooperation faces confrontation from practically all the neighboring countries, the security imperatives of the both countries force them to maintain their relations.

The major obstacle for the cooperation is still the deep and unconcealed anti-Semitic public opinion, traditionally typical of the Turkish society, the factor of Islamic solidarity that manifested itself in Turkey during Israel's force actions in Palestine and lately again in Lebanon, as well as gradual deterioration of American-Turkish relations and the increasing anti-Americanism in Turkey. However, from the point of view of the national interests and geopolitical perspectives of Turkey the Kurd issue remains the most urgent problem for the effective regulation of the Israeli-Turkish strategic relations.

As far as Israel is concerned, Tel-Aviv was extremely interested in becoming closer with Turkey, in making a breach in their hostile Muslim surroundings, especially taking into account its war industry and its partnership with the USA that was very interested in maintaining strategic relations with Turkey and Israel in the 1990s. Even then the Kurd issue became a serious obstacle for Israel as the national security interests have always prioritized helping the Kurds (especially in Iraq and partly in Syria) in order to weaken their most dangerous Arab enemies - Syria and Iraq. Nevertheless, Israel has always diversified its attitude towards the Kurd communities in the Near East and the evolution of Israel's policy on the Turkish Kurds has a rather long and complicated history.

The military-technological cooperation between the countries has its own limitations. The security imperatives will contribute to the maintenance of stable partnership but are no longer able to bring them to the level of alliance.

The changes that are taking place in the Turkish-Israeli relations are caused by Turkey's integration into the European Union. Ankara's foreign policy directed toward the European Union makes it introduce some changes in its relations with Israel. There is also another foreign policy factor on which the quality of Turkish-Israeli relations depends. It is known that it was the

Turkish military that have been the main ideologists and proponents of the development of the Israeli-Turkish relations since the 1990s. In case the role of the military in Turkey declines, the relations with Israel will consequently weaken. It will certainly not lead to the breaking-off the Israeli-Turkish relations (the imperatives in the sphere of security of the two countries will prevent their relations from reaching the critical level), but their role in the political processes in the region will be significantly corrected.

The Dynamics and Perspectives of the Military-Political Cooperation between Israel and Turkey

by *Sergey Minasyan*

Summary

One of the most important events of the last decade, which had a great impact on the development of geopolitical processes in the Near and Middle East region, was the formation and development of the Israeli-Turkish cooperation. Besides, the establishment and maintenance of these relations show that they depend on lots of internal and external factors, and can't be considered static and they differ in their degree of priority both for Ankara and Tel-Aviv. Israel has been the initiator of the intensification and development of the relations, whereas Turkey depending on the foreign or home policy situation has acted as a more reserved partner. This fact was accounted for by the difference in priorities the countries gave to their cooperation. Consequently, the military and political relations between Israel and Turkey have been up and down.

The US invasion into Iraq in 2003 led to cooler relations between Turkey and the USA. In spite of the resistance of the Turkish generals there are certain predictions concerning further distancing between Turkey and the US up to the point which will not hinder Turkey's membership in NATO, however the role of the USA in supporting Turkey's security will still be declining. In the meantime, other countries of the region are likely to get involved in armed conflicts. While the United States was dealing with the postwar settlement of Iraq, Israel in its turn decided to solve many problems with the Palestinians. In perspective, this particular fact may have even a greater effect on the cooperation between Ankara and Tel-Aviv (this, by the way, was one of the main reasons for certain coolness between the two countries from the late 1970s till the early 1990s) than the confrontation of the Arab countries. Also, it should be noted that the position of secular but Muslim Turkey on Palestine is influenced by 'religious, sacral and historical' ideas (for example, in Turkey, people like to remind that Jerusalem that is declared by the Jewish to be their capital was under the dominion of the Osman Empire for four hundred years from 1517 till 1917).

Besides, many people in Turkey don't support the idea of the necessity of developing military and technical cooperation with Israel. Within the Turkish society there are considerable inclinations to consider the alliance with Israel a betrayal of the national interest of Turkey and Islamic ideas on the whole. In the meantime, these ideas are closely intertwined with anti-Semitic and panosmanic stereotypes, which are deeply rooted among the political and intellectual elite of Turkey.

Nevertheless, the general logic of the changes in the Near and Middle East regions brought forward by the war in Iraq led to changes in the geopolitical realia, as well as the Israeli-Turkish relations. The fear for the appear-

ance of the Kurd state as well as the crisis in Israeli-Turkish relations because of the position of Israel on a number of regional problems, especially Palestinian and Kurd issues, made Turkey activate its actions in the Near and Middle East without considering either their western partners or Israel. The Turkish government has decided to intensify its regional policy which implies the reestablishment of the role of Turkey in the Near East. It makes it difficult to maintain balance between Israel and the other Arab states, as close strategic relations between Israel and Turkey that were established in the second half of the 1990s caused serious problems in Ankara's contacts not only with the Arab but also other Muslim countries.

However, taking into account priorities in the sphere of security the Turkish government (highly pressurized by the military) undertook new activation of their relations with Israel. It is not surprising that the military-technical component played an important role in setting up a new phase of the relations between Turkey and Israel. The military-technical cooperation between the two countries, however, has its objective limitations and can't later serve as a basis for intensifying their political relations and bringing them to the level of 'the strategic alliance'. Naturally, the imperatives in the sphere of security will certainly contribute in the future to the stable partnership, but are already unable to get them to the alliance level. Neither the political conditions nor the deepening anti-Israeli attitudes in Turkey can contribute to it. The population of Turkey with the exception of the military top and a certain part of the Turkish political elite is extremely negative towards the further qualitative intensification of the collaboration with Israel.

The current changes in Turkish-Israeli relations are also conditioned by Turkey's European integration processes. Ankara's EU-orientated foreign policy makes it introduce certain changes in its relations with Israel, as the EU position regarding Israel has always been a bit stricter, whereas it has sympathy for the Arabs, though not very distinct. Anti-American state of public opinion in Turkey and the processes connected with the intensification of the Kurd factor in Iraq have similar negative implications for the relations with Israel.

There is another evident home policy factor in Turkey on which the quality of the Turkish - Israeli relations depends. The present day political elite of Turkey is struggling for diminishing the role and influence of the military on the life of Turkey. The Turkish military have been known the main ideologists and proponents of the development of Israeli-Turkish relations since 1990. Therefore, in case of the further decline in the role of the military top in the political life of Turkey the relations with Israel will be consequently weakening. It will certainly not lead to the breaking-off the Israeli-Turkish relations (the imperatives in the sphere of security of the two countries will prevent their relations from reaching the critical point), but their role in the political processes in the region will be significantly corrected.

The History of Creation of the Turkish Secret Services and Their Activities in the Modern Phase

by *Arsen Haroutyunyan*

Summary

The Turkish secret services date back from the middle ages. The founders and the organizers of the Turkish military intelligence were the generals and officers of the Sultan's army, the leaders of the Young Turks' party "Ittihad ve terraki" and since 1918 the representatives of the Kemalist national movement. The Turkish intelligence of the present day has been formed as a body of the military intelligence, which was connected with Turkey's preparation for and participation in the World War 1, the organization of Turkey's intervention into the Transcaucasus in 1918-1920 and the Kemalists' armed struggle with the Atlanta's member countries (Great Britain, France, the USA, Italy and Greece) in 1918-1922. The military intelligence was responsible for both the military and the political intelligence, the control over the subdivisions of the army intelligence as well as the completion of the counter-intelligence tasks. As the Osman Empire was the ally of Germany and was under its influence, the Republic of Turkey followed the example of the German intelligence.

Nowadays there are three independent intelligence agencies in Turkey. Such a system of decentralization of the intelligence agencies is common in the most Third World countries, such as Israel and Iraq. MIT (Milli Ishibarat Teshiklari), the National Intelligence Organization, is responsible for foreign intelligence. There is also Military Intelligence attached to General Staff (the Main Intelligence Administration of the General Staff of Turkey) and the National Gendarmerie (Milli Gendarmerie) which is responsible for the national security, national defense and frontier guards.

MIT is a State body of the foreign police intelligence of Turkey. It was established in 1965-1966 on the basis of the former National Security Service (Milli emmiyet hizmeti - MEH) active since 1927. According to Law # 644 dated July 22, 1965, MIT is an independent organization attached to the Prime Minister of Turkey.

Law #644 stipulated the necessity of establishing a centralized unit which would secure gathering information on all the issues related to the national security policy in the multi-party system declared by the Constitution in 1961. According to the same law, the leader of MIT shall be the First Deputy Minister and subordinate to the Head of the Government. As a consultancy body attached to the MIT administration it was stipulated to set up the National Coordinating Board which was to outline and develop recommendations on defining intelligence priorities and coordinating intelligence actions of the Turkish secret services within the state.

The main goal of MIT is to collect any intelligence and counter-intelligence information of national importance. The processed information is reported to the President, the Prime Minister, head of the General Staff and Secretary General of the National Security Council of Turkey. MIT is also responsible

for the counter-intelligence.

The armed forces of any country, playing a central role in the military safeguarding, are the main consumers of the information provided by the intelligence services. The peculiarities of the armed forces lead to the formation of their own system of the military intelligence. In Turkey the military intelligence is under General Staff of the Armed Forces. General Intelligence Agency carries on strategic military intelligence for General Headquarters of the armed forces of Turkey. The strategic and tactical intelligence is carried on in the interests of the strategic units. It is organized by the subdivisions of military intelligence according to the types of the armed forces. GIA gets, collects, analyses and summarizes the intelligence data on the armed forces of the foreign countries (especially Russia, Greece, Greek Cyprus, Bulgaria, Serbia, Iran, Syria, Armenia and Georgia) and brings it to the attention of the highest ranks of the military-political administration of the country; it also develops the principles and the prioritized directions of the intelligence services in peace and war time; it plans intelligence activities within the country and abroad; keeps control over all types of the military intelligence (that of the land forces, the air forces and the Navy); carrying on radio-, radio technical, air and naval intelligence; it prepares diversion and intelligence groups to carry out special military operations in the enemy's rear; it safeguards the armed forces of Turkey with the help of the counter-intelligence services; it defines the recruitment policy for the military intelligence, it also prepares and trains military spies; coordinates and cooperates with other national intelligence agencies to gain military type intelligence data; it cooperates with foreign intelligence agencies.

The major tasks of MIT and GIA are to collect intelligence data on the military and political situation in the neighboring regions of the Caucasus, on the impact of the armed conflicts in this region on the situation in Turkey, on Russia's plans regarding the Caucasus, on the social and economic situations in the regions which are of certain interest for Turkey; to carry on intelligence operations to create the moral, economic, communicative, political and military basis for the future consolidation of the Turkic states; to train a new national and political elite oriented towards Turkey and pan-Turkism in the Turkic-speaking countries and regions of the CIS; to initiate local ethnic and religious conflicts in the post-Soviet regions; creation of pan-Turkish (political, economic, military) organizations and lobbyist systems in the CIS countries to realize Turkey's political interests; to expand strategic positions for the intelligence operations; to cooperate with the intelligence agencies of the allied states for the realization of mutual interests.

The most successful recent operation carried out by MIT was the capture of Abdullah Ojalan, the leader of the Kurd liberation movement, after whom the Turkish intelligence services were for fourteen years. It was later said that it was a joint operation of the intelligence services of Turkey, the USA and Israel.

Today the National Intelligence Organization of Turkey is one of the most powerful intelligence agencies in the world. It should be noted that MIT is closely cooperating with the intelligence agencies of the world's leading countries. Hence, Armenian intelligence services face a serious task of resisting Turkish intelligence services.

ՎԵՐԼՈՒԹԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ
թողարկում 1

ԹՈՒՐՔԻԱ

ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

«Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ

Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 26
Թողարկման պատասխանատու՝ Ս. Սինայան

Ստորագրված է տպագրության 11.09.2007թ.:
Տպագրված է «ՀԱՅՐԱՊԵՏ Իրատ.» ՍՊԸ տպագրատանը:

Ֆորմատ 35x70 1/16:

Թուղթը՝ օֆսեթ:

Ծավալը՝ 12.25 տպ. մամուլ:

Տպաքանակը՝ 500 օրինակ: